






ՊԱՃՏՈՆԱՆ ԱՍՍԱԳԻՐ
 ՆԱՅՐԱՊԵՏԱՆԻ ԱԹՈՒՈՅ
 Ս. ԷԶՄԻՆՈՆԻ



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Մայրագույն Պատերազմի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի ողջույնի հեռագիրը ժողովուրդների մեծ առաջնույթ հենքերայիսմիմուս Ստալինին՝ Հոկտեմբերյան Ռեյոլուցիայի 30-ամյակի առթիվ	3
2. Համաժողովրդական ցեծության օրեր	11
3. ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Զ. — Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Հոգևոր Դասին, Արքագան Էպիսկոպոս Ի Քրիստոս	8
4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեյոլուցիայի 30-ամյակի տոնակատարությունը Հայաստանում	13
5. Սովետական Հայաստանի 27-րդ տարեկարծի տոնակատարությունը	16
6. Մայր Արոտ	19
7. Հայրապետական Արոտի Սպից էջմիածին փոխադրելու 500-ամյա հորելյանի նշումը Հոգևոր Ճեմարանում	21
8. Հ. ԱՐԱՄՅԱՆ. — Հանդիպում Ամենայն Հայոց Հայրապետի հետ	23
9. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռի մեջ	27
10. Ներգաղթը և մեր բեմական առաջնորդները	30
11. Հայրենադարձության ուղիով	33
12. Վ. — Հայկական ՍՍՌ-ի տեղական Սովետների ընտրությունները	36
13. ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ. — Գիտնական Մկրտիչ էմինի նամակները՝ հասցեագրված Սարգիս Խորասանյանին	42
14. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. — Բանաստեղծ Սմբատ Շահագիրզի անտիպ նամակներից	59
15. Օտարները հայերի և Հայաստանի մասին	75
16. Սովետական Հայաստանում	77
17. Գաղութանայ կյանք	86
18. «Էջմիածին» ամսագրում 1947 թվի ընթացքում տպագրված հուլիսի ցանկ	90

Խ Մ Բ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԳՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵՐ

• Խ Մ Բ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ Ը Յ Յ Ե Ն


ՀԱՅԵԱԿԱՆ ՈՍՈՒ

ԷՋՄԻԱԾԻՆ, «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
Redaction of the magazine „Etchmiadzin“, Armenia, USSR

Պատվեր № 311

ՀՍՍՌ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊՈԼԻԳՐԱՖԻ և ՀՐԱՄ. ԿԱՐԼՈՒՅԱՆ Ք 2 տպարան, Երևան



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԵՈՐԴԱՅ Զ

ՎԵՀԱՓԱՌԻ ՆԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՐԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ԶԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ
Ս Տ Ա Լ Ի Ն Ի Ն
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ՅՕ-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Մ Ո Ս Կ Վ Ս

Կ Ր Ե Ս Լ

Ի Ո Ս Ի Ֆ Վ Ի Ս Ս Ա Ր Ի Ո Ն Ո Վ Ի Զ Ս Տ Ա Լ Ի Ն Ի Ն

Հայ Եկեղեցու հավատացյալ ժողովուրդ, ողջ հոգեվորդասի եվ Մեր իսկ անունից ի խորոց սրտի շնորհավորում ենք Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլյուցիայի սկսածայի 30-ամյակը: Հոկտեմբերը սկիզբ դրեց համաշխարհային սլոտմության մեծագույն դարաշրջանի, ի լուր աշխարհի հայտարարեց եվ հերոսաբար կենսագործեց աշխատանքի լիակատար ազատագրման, ազգերի ինքնորոշման, ժողովուրդների եղբայրություն, արդարություն թագավորություն, գիտություն տիրապետություն, միջազգային խաղաղության եվ այլ վեհագույն գաղափարների:

Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլյուցիան հայտարարեց եվ հանդիսավոր օրինականացրեց նաեվ Հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը, ամրապնդեց ու սկստականացրեց սուվետական ազատ ու անկախ Հայկական պետականությունը, որ հավասարազոր ու յիբրուվ տնդամակիցն է սուվետական հզոր եղբայրակցության մեծ ընտանիքի:

Շնորհիվ ազատարեք Հոկտեմբերյան Ռեվոլյուցիայի, անձուկեր օգնությունը Ռուսական մեծ ու մարդասեր ժողովրդի եվ սուվետական այլ ազգերի եղբայրական աջակցությամբ, համառարած սուվետականներից ու գերեզմաններից գյուխ ըարժրացրեց եվ վերակենդանացավ երբեմնի նահատակ, իսկ ներկայիս արդեն իսկ ազատ ու կորուվի Հայ ժողովուրդը՝ ինքնիշխան տեքը իր ազգային պետություն, ծավալուն եվ ծաղկյալ ժողովրդական տնտեսությամբ եվ փարթում ու հոգեզմայլ ազգային մշակույթով:

Անցյալում այնքան անզոր, անկազմակերպ, սոքատիկ Հայ ժողովուրդը Սուվետական դարաշրջանում՝ իր նվիրական ընաշխարհում

եւլ հարստացող տնտեսական մեջ միջնաւ ծաղկեց ու զարգացաւ, որ ընդունակ հանդիսացաւ յայն ըստալ Հայրենիքի հյուրընկալ դռները աշխարհն ի տիրուտ վտարանդի եղբայրների առաջ: Մեծահոգի հովանավորութեամբ եւլ անմիջական օգնութեամբ Սովետական Մեծ Միութեան քարեխնամ կառավարութեան՝ սկիզբը դրվեց Հայ Սփյուռքի փրկարար եւլ սրտատուչ Մեծ Հայրենադարձի, որ պատմական ազնիւ կոչումն ունի մեկ ընդ միշտ ազատագրել ըսողահալած աստիճական եղբայրներին, թուրք վայրագութեան այդ անմեղ զոհերին, ծանօտարիների իրավագուրկ եւլ անհայրենիք տարագրի անպատկարհր վիճակից: Եւրջ հարյուր հազար հայրենադարձ հարազատներ սրդեն իսկ ժամանել են եւլ գալիս են Հայրենի Երկրի սուրբ հողը՝ սովետական ընկել եւլ նախարանակ եղբայրներին ձեռքն ու սիրտը տված — կոնյուկտիւր երջանիկ կյանքի հիմքերը:

Հայրենադարձի շնորհիւ իրականութիւն է դառնում Հայ ժողովրդի յաւագույն գաւազներ ղարափոր իղեայն, որի հաղթանակի համար նրանք հերոսաբար պայքարեցին եւլ ազատութեան մարտակոչը շրթունքներին ընկան Զեյթունի թե Սասնայ հայրենական քարծուրներում, Վասպուրականի թե Կարնո հերոսամարտերում, Սարդարապատի թե Բաշ-Ապարանի հաղթական կռիւներում:

Հայ ժողովրդի այդ դարափոր իղեայն էր ազատամարտ միտունական ազգ, միասնական ազատ Հայաստանում:

Հայ հինավուրց ազգի դարափոր ու նվիրական իլեռի իսկատար ու ամբողջական կենսագործման հաղթական ուղին Հոկտեմբերյան Մեծ Ռեւոլյուցիայի 30-ամյակի մեծագույն եւլ վեհագույն կոթողներին է:

Հնադարյան Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սրբազան կամարների տակ Մենք՝ Հայոց ալեգարդ Հայրապետ հանապազ ջերմեռանդ աղոթքներ ենք վերստաքում Ամենաքարճրային, Սովետական մեր Մեծ Հայրենիքի էլ ավելի ծաղկման, քարգաւաճման ու հզորացման համար:

Թող հզոր ու անստան միա Սովետական Մեծ Միութիւնը:

Արեւշատութիւն ենք մաղթում Սովետական ազնիւ եւլ իմաստուն կառավարութեան ղեկավարներին:

Իսկ Ձեզ, Գեներալիսիմուս Ստալին, մարդկութեան քարեկամիդ եւլ Սովետական Մեծ Եղբայրակցութեան հանձարեղ Առաջնորդիդ ցանկանում ենք երկար ու երջանիկ կյանք եւլ հաղթական ավարտ Ձեր զործին:

Գ Ե Վ Ո Ր Գ Զ

ՊԱՏՐԻԱՐԳ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ




Արտիս խորհում մի անհուն տենչ,
Ամուր գրկած էս պիտի գամ,
Նոր օրերիդ խոհով անկեղծ,
Հոգիս լցված էս պիտի գամ:

Պիտի սեղմեմ կարոտագին,
Ու համբուրեմ հողդ անգին.
Եվ կառուցման քա մեծ ելքի
Շնչով արբած ևս պիտի գամ:

ԱՐՇ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Քենեան)



ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՆԾՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ



այ ժողովուրդը. Սովետական Միության եղբայրական ժողովրդների հետ միասին, թոյեմբերի 7-ին անհուն ցնծությամբ ու մեծ հպարտությամբ տոնեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեւոլյուցիայի փառապանծ 30-ամյակը:

Հետամնաց ցարական Ռուսաստանը, շնորհիվ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեւոլյուցիայի, երեւ տասնամյակ կազմող համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կերպարանափոխվեց անհնաւաշխարհէն: Վերջ տրվեց նրա տնտեսական ու կուլտուրական հետամնացությանը և նա դարձավ գերեզուր արդյունաբերության ու մեքենայացված գյուղատնտեսության երկիր, առաջավոր գիտության ու կուլտուրայի երկիր, ազգերի անխորտակ դաշինքի, անխախտ բարեկամության ու եղբայրության երկիր:

Հայրենական Մեծ Պատերազմի օրերին սովետական կենսունակ, հզոր, անաստան ու միասնական ժողովուրդը և նրա անպարտելի բանակը անհողողող կերպով պատվար կանգնելով ֆաշիստական մոլեղնած հորդաների առջև, ոչ միայն իրենց ազատությունն ու անկախությունը պաշտպանեցին, վերջնական պարտության մատնելով բշտամուն, այլև համաշխարհային ֆաշիստականությունը փրկեցին վերահաս անխնայափնի կործանումից և ազատագրեցին նվազաթիվ ժողովուրդներին ֆաշիստական ստրկությունից:

Պատերազմից հետո էլ սովետական ստեղծագործ ժողովուրդը, հաղթահարելով պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները, աշխատանքային մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղավ հետպատերազմյան հնգամյակի աշխատանքներին: Եվ մինչդեռ պատերազմին մասնակցած ու պա-

տերազմի քատերաբեմ դարձած շատ երկրներ այսօր տնտեսական ծանր տագնապ են ապրում, Սովետական Միությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեւոլյուցիայի պանծալի 30-ամյակը դիմավորում է տրնտեսական ու կուլտուրական բնագավառներում ձեռք բերած հսկայական նվաճումներով:

Սովետական Միության միջազգային դիրքի օրեցօր էլ ավելի հզորացումը, նրա տնտեսական ու կուլտուրական առաջատու վերելքը ամբողջ կատաղություն է առաջացնում նրա բշտամիների համբարում, բշտամուներ, չունի աշխարհը անբաժան կերպով տիրելու ցնորամիտ մոլուցիկ բռնված մի նոր պատերազմ են նշարում Սովետական մեծագոր երկրի դէմ: Սակայն, Սովետական Միությունը, ժողովուրդների խաղաղության ու անվտանգության մեծ պաշտպանը, անշեղորեն ընդանում է խաղաղասեր ժողովուրդների ավանգարդում, անհաշտ պայքար մղելով պատերազմի բոլոր տիպի հրձիգներին: Համաշխարհային նոր սպանդի ջատագովներն ու կազմակերպիչների դեմ, փոխադրած անելով նրանց իմպերիալիստական, հրեշային պլանները և ստոր գավերը:

Սովետական բազմամիլիոն ժողովուրդը հալեւած փառքի հոյակապ ուղի է անցել այդ երեսուն բազմարժանախալից տարիներում ու այսօր արժանի հպարտությամբ նա մի հետադարձ հայացք է նետում իր անցած հաղթական ուղուն. այդ երեսուն տարիները հանդիսացել են անդու ու աննկուն պայքարի, աշխատանքային ու մարտական սխրագործությունների, մտավոր, կուլտուրական ու տնտեսական բոլոր աճի, աննախընթաց հախճաւն վերելի տարիներ:

Այսօր սովետական բազմազգ ժողովուրդը ջերմ սիրո, անհուն երախտագիտության բզգացմունքներով է համակված հանգեպ սովե-

տական իշխանություն, հանդես սովետական ժողովրդի համաշխարհային պատմական մեծագույն նախաձեռնությունների կազմակերպիչ ու ղեկընդուղ մեծահանճար Ստալինի:

Նախկին ցարական Ռուսաստանում բնակվող ազգությունների կյանքում Հոկտեմբերյան Ռեոլուցիան բախտոտ դեր է խաղացել: Հոկտեմբերյան Ռեոլուցիայի բուրբ արևի հառաջադրանքով շնորհաշատ և ուսման մեծ ժողովրդի շուրջը համախմբված, այժմ իրենց տնտեսական ու կուլտուրական զարգացման ոսկեդարն են ապրում նախկինում հետամնաց ու իրավազուրկ շատ ազգություններ:

Հոկտեմբերյան Ռեոլուցիան հատկապես խոշոր բախտոտ դեր է խաղացել հայ բազմաշարժ ժողովրդի կյանքում: Հայ ժողովուրդը և՛ իր ֆիզիկական գոյության և՛ այսուհետև երջանիկ կյանքի նամար պարտական է միայն ու միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիային, որը նրան և՛ խաղաղություն բերեց, և՛ ազգային վերածնության ննարավորություն:



Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիայի պանծալի 30-ամյակի տոնախմբությունները հաջորդեց Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնակատարությունը:

Նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ նշեց Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձը:

Ուղիղ 27 տարի առաջ, նախասովետական Հայաստանը իրենից բշտառության ու արյան ծով էր ներկայացնում: Իմպերիալիստական տերությունների վարած ֆաղափառությունն և այդ տերությունների հյուսկանակատար դաշնակների տխրահռչակ տիրապետության շնորհիվ Հայաստանում գարնունի զոռխային կացություն էր ստեղծվել. լիակատար ֆալսյվել էր երկրի տնտեսությունը և բուրգական վայրագ արշավանքի նետանձնով ըսպանալիքի տակ դրվել մի քառն հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Հայ ժողովրդի օրհասական այդ օրերին նրան օգնության ձեռք չմեկնեցին բազմիցս բարեկամության ենեզ ու պատիր խոստումներ անող իմպերիալիստական տերությունները:

Անտանտայի կողմից խաբված, տմարդի կերպով լվված ու կործանման անդնդի եզրին հասցված հայ ժողովուրդը 1920 թվի նոյեմբերյան օրերին տապալեց դաշնակների անարգ ու արյունոտ լուծը: Այդ օրերին ռևոլուցիայի դրոշ պարզած հայ ժողովրդի

կռիվն արձագանքեց Սովետական Ռուսաստանը, որի եղբայրական օգնության շնորհիվ 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին ու հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական քնաշենու մից:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ մի նոր ու փառավոր դարաշրջան սկսվեց: Սովետական իշխանության 27 տարիներում Հայաստանը կերպարանափոխվեց և դարձավ արդյունաբերության ու մեկենայացված գյուղատնտեսության երկիր, առաջավոր գիտության, կուլտուրայի, արվեստի երկիր: ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում ծաղկել ու բարգավաճել է Հայաստանը ու դարձել Սովետական Միության առաջավոր սնուցարկիկաներից մեկը: Սովետական իշխանության տարիներին սնուցարկիկայում ստեղծվել են արդյունաբերական նոր հյուղեր, բարգավաճել է գյուղատնտեսությունը, փարքամօրեն ծաղկել են գիտությունն ու արվեստը, անել են ֆաղափանքն ու գյուղերը:

Հենվում է հայ մարդու սիրտը ի տես այս չնեղ ու աննախընթաց նվաճումների:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիայի 30-ամյակը և Սովետական Հայաստանի 27-ամյակը Հայրենիքում գտնվող արյունակից եղբայրների ու քույրերի հետ միասին հայրենի հառազատ հողի վրա դիմադրեցին հալածվելի ֆառ 85 հազար հայրենադարձ հայեր, որոնք օտար երկնակամարի տակ երկար տարիներ դեզերելուց հետո վերադարձել են իրենց սիրասուն Հայրենիք և լծվել նրա շինարարությանը, իրենց երջանիկ կյանքի ու վառ ապագայի կերտմանը:



Հայաստանի ազգաբնակչության համար համաժողովրդական տոնի օր հանդիսացավ նաև սույն տարվա դեկտեմբերի 21-ը: Այդ օրը տեղի ունեցան սնուցարկիկայի շրջանային, ֆաղափային, գյուղական և ավանային սովետների ընտրությունները: Ամենուրեք ընտրությունները վերածվեցին հայրենասիրական խանդավառ ցույցերի: Հայ ժողովրդի զավակները փվեստուիներին մոտեցան խուրբերախոսակցության գգացմունքով, մեծ Ստալինի անունը շրքներին, Ստալինի, որի անվան հետ են կապված Սովետական անձայրածիր Հայրենիքի տնտեսության, գիտության ու արվեստի ծաղկումը, Հայրենա-

կան Մեծ Պատերազմի հաղթական ավարտը, պատերազմի հետևանքով առաջացած դրժվարությունների արագ հաղթահարումը, սովետական չարդկանց հանդեպ տածվող անսահման հոգատարությունը, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային վերածնունդը, նրա խաղաղ, ապահով, երջանիկ կյանքը և սրբյուտնով մեկ ցրված տարագիր հայության վերադարձը իր սիրասուն Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Անհուն են մանավանդ մեր հայրենադարձ եղբայրների ու քույրերի տածած երախտագիտական զգացմունքները հանդեպ Մեծ Մարդու, ժողովրդների առաջնորդ մեծահանճար Ստալինի: Նրանք ակտիվորեն ու մեծ խանդավառությամբ մասնակցեցին հաղափառ հայրենի ռեսպուբլիկայի տեղական Սովետների ընտրություններին: Տասնյակ հազարավոր հայրենադարձներ օտարության մեջ, իրավազուրկ ապաֆաղափացու վիճակում, ղեզեռել են տարիներ շարունակ, իսկ այսօր նրանք, որպես սովետական լիիրավ քաղաքացիներ, իրենց կյանքում առաջին անգամ հնարավորություն են ստանում ոչ միայն ընտրելու, այլև ընտրվելու: Հայրուրավոր հայրենադարձներ աշխատավորների տեղական Սովետների ղեկուսատուության ղեկնաձուներ են առաջադրվել: Բոլոր հայրենադարձների

երախտագիտական զգացմունքների արտահայտություն կարելի է համարել այն խոսքերը, որ գրել է հայրենադարձ ընտրող Վ. Փայապեզյանը Լենինականի N 24 ընտրական տեղամասի խցիկում բողած իր հետևյալ համակում:—

«Արդյոք կա՞ սովետական մի քաղաքացի, որ այս օրերին ինքն իրեն աշխարհի ամենապարտ մարդը շահմարի: 47 տարեկան եմ, չբռնեմ աշխարհի բոլոր երկրները, բայց առաջին անգամ, որպես մարդ, իրավունք ստացա ընտրության մասնակցելու Սովետական Հայաստանում: Ես փեարկելու եմ Լենինի-Ստալինի մեծագործ պարտիայի և անպարտիականների բլոկի ղեկնաձուներ: օգտին: Այս ամենի համար, մարդկային իմ իսկական իրավունքը ձեռք բերելու համար, շնորհակալությամբ իմ առաջին խոսքն եմ ուղղում Մեծ Ստալինին և ամբողջ սրտով գոչում:—Նեցցե մեր ազատարարը, հայ ժողովրդի լավագույն քառեկամբ:»

Տեսնելով նախկինում բազմառանց հաղափառ հայ ժողովրդի այսօրվա բարձր ու երջանիկ կյանքը Սովետական Մեծ Միության ժողովրդների եղբայրակցության հզոր ընտանիքում, իրեն հոգեպես մխրարված ու երջանիկ է զգում հայ հայրենասեր հոգևորականությունը:





ՀՅՈՒՄԻՍՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻՆ ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՐՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Որքան էլ հախուռն ու տիրական լինեն սոցիալական և քաղաքական հակամարտությունները, այնու հանդերձ իրավունքի և արդարության որոշ սկզբունքներ կան, որոնք իրենց բարոյական արժեքով և պատմական խորհրդով համարվելու են սրբազան և ընդհանրական: Եթե ազգային ու միջազգային հարաբերությունների սխտեմից վերացվեն աստվածային պատգամներով սերբազործված, հանրամարդկային մորալով նվիրագործված և ըստմարդայան վաղեմիություններ օրինականացված այդ արժեքներն ու նորմաները, անխուսափելիորեն կխաբիւվեն բարոյական հիմքերը միջմարդկային համակեցության ու եղբայրակցության և մարդկային պատմությունը կհետաշրջվի դեպի նախնադարյան այն Քաոսը, երբ ուժեղի շահը իշխող էր, բռնակալի կամքը՝ օրենք և մարդը դալ էր մարդու համար՝ *Homo homini lupus est*:

Մենք Ազգնախոր կրոնապետն ենք Հայաստանյայց Ազգային Առաքելական Սուրբ Եկեղեցու և ազգային-եկեղեցական մի համայնքի, որը համաշխարհային պատմության մեջ առաջինը հանդիսացավ Քրիստոսի վարդապետությունը ազդովին ընդունելու և այն պետական-համաժողովրդական կրոն դարձնելու գործում: Հայ ժողովուրդը և հայ հոգևորականությունը բյուրավոր տարիներ պաշտել, գուրգուրել և անօրինակ անձնազուլումամբ պաշտպանել են քրիստոնեական սուրբ հավատի անվթար գոյությունը: Ազգային անկախ պետականության դարաշրջաններում և թե օտար անագորություն բռնակալությունների դաժան լծի ներքո՝ հայ ազգը ու հայ հոգևոր դասը, Ս. Էջմիածնի ազգընտիր հայրապետների գլխավորությամբ, պայքարել են հանուն քրիստոնեա-

կան սիրո վարդապետության, սրբազան հավատի անարատության, մարդկային իրավունքի ու արդարության:

Մենք ալեգարդ Հայրապետն ենք արևելյան հինավուրց մի ժողովրդի, որը հազավոր տարիներ անլուր տառապանքների, անօրինակ նահատակության, հերոսական մարտերի թո՛հ ու բո՛հից և ազնիվ աշխատանքի ու հիպսքանչ ստեղծագործությանց բովից անցնելով, կարողացել է արժանապես պահել ու պահպանել ոչ միայն քրիստոնեական կրոնի անարատությունը, այլ և իր ազգային բարոյական առաքինությունները — հոգեկան հրաշագործ կորովը, խաղաղ աշխատանքի, արդար վաստակի, ազատ կյանքի, անկախ Հայրենիքի անմար տենչանքը: Այս կորովի ժողովրդի մասին, տարիներ առաջ, ամերիկյան ժողովրդի արդարամիտ զավակ Էնդրու Ուայլը գրել էր. —

«Հայ ազգը ամենաաշխատասեր, ընդունակ, ողջախոհ, բարոյական և նախաձեռնությամբ օժտված ազգն է: Այդ ժողովուրդը մեծագույն առաքինաբան տաղանդի տեր է: Դարեր շարունակ նա կարողացել է պահպանել իր մշակույթը և այն էլ ենթակա այնպիսի հալածանքների, որոնք կտորեկեն, կոշնջացնեին որևէ այլ ազգ»:

Մենք Կրոնապետն ենք Հայ Ազգային Առաքելաշնորհ Եկեղեցու, որի հոգևոր դասը դարձր շարունակ խալը ձեռին ուղմի դաշտում պաշտպանել է քրիստոնեական կրոնը և հայ ազգի ազատությունն ու հայ Հայրենիքի անկախությունը՝ անձնազոհ կերպով մարտնչելով անիրավության ու բռնության դեմ: Հայ Եկեղեցու Պետր, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, պատմականորեն նվիրագործված սրբազան պարտականություն ունի ծառանալու ու իր ձայնը միշտ լսելի դարձնելու ամենքին ու ամենուրեք, երբ անիրավաբար

ոտնահարմամբ են Հայ Եկեղեցու և Հայ Ժողովրդի սրբազան իրավունքները:

Ողջ աշխարհին հայտնի է, որ այս Առաքելաշնորհ Եկեղեցու սրբազան իրավանք դեմ և հայ առաքինազարդ ազգի Հայրենիքի, կյանքի ու պատվի հանդեպ անօրինակ վայրագությամբ, հարյուրավոր տարիներ շարունակ, հանցագործել են թուրք պետությունը, թուրք իշխանավորներն ու բռնավորները: Համայն մարդկության հասարակական խղճին ու քաղաքական գիտակցությանը մարտահրավեր կարգալով նրանք եղեռնադրծել են ապերասան հանդգնությամբ ու զազանությամբ և... ցարդ անպատիժ մնացել:

Հազարավոր տարիներ առաջ Մինայի սրբազան բարձունքից աստվածային հզոր ձայնը պատգամե՞լ է.

«Մի սպանանե՛ք»:

Հազարավոր տարիներ շարունակ, միշտ և ամենուրեք, աստվածային այս մեծագույն պատգամը, որպես դեկավար սկզբունք, ներկիրագործվել է պետական ու միջազգային սխտեմում: Սակայն, հակառակ տասնաբանյա պատվիրանով սրբագործված աստվածային այս պատգամախոսության, պանթուրքիզմի և պանիսլամիզմի ռազմատենչ երազանքներով հարբեցած Արդու-Համիդներն ու էնվերները, Մուստաֆա-Քեմալներն ու Քյազիմ Կարաբեքիրները սպանդի վերածեցին ամբողջ Հայաստանը, չարդեցին, սպանեցին հայ ժողովրդի միլիոնավոր զավակներին, սրախողիտող արեցին հազարավոր անմեղ մանուկներին, անարգեցին պատիվը հայ մաքրակենցաղ կույսերի, հրկիզեցին բարեպաշտ ազոթավորներին քրիստոնեական տաճարներում:

«Այս ջարդերն ու տեղահանությունները ռերազանցում են ամենազազոտնայինները, որ ցարդ տեղի են ունեցած, ոճիրներից ամենադիվայինը, որ երբեք չէր գործադրված կամ երեւակայված է համաշխարհային պատմության մեջ», — վկայաբանեց ամերիկյան իրազեկ-ակնաստես դեսպանը Պոլսում՝ արդարախոհ Մորգենտաուն:

Հայ ժողովրդի դեմ դիվային չարամտությամբ կանխատեսված ու նյութված դավերը և անագորույն զազանությամբ կատարված ջարդերն ու տեղահանությունները խիստ նշավակման ենթարկվեցին ամերիկ-

յան ժողովրդի, ինչպես նաև քաղաքակիրթ բազմաթիվ այլ ժողովուրդների կողմից:

«Մի գողանա՛ւ»:

Մինայի սրբազան բարձունքներից հազարավոր տարիներ առաջ հնչած աստվածային այս մեծ պատգամը հանդիսանում է հանրային խաղաղ համակեցությունը երաշխավորող սրբագործված օրենք: Սակայն, թուրք կառավարությունը, հակառակ այս պատգամի, մարդկային խիղճն ու իրավահայեցողությունը վիրավորող և ոտնահարող ապերասանությամբ կողոպտելից հայ ժողովրդին, հարկադրեց հայի Հայրենիքը ու նրա ջարդարեւոյն զավակներին տարադիր դարձրեց: Ամբողջ մարդկությունը սարսուռաց ի տես քաղաքակիրթ ու խաղաղասեր, աշխատասեր ու աշխարհաշեն հայ ժողովրդի այս անօրինակ հավաքական ջարդի ու տարագրման:

Հայ ժողովրդի Մեծ Եղեռնի այդ օրերին ցասման ու զայրույթի զգացմունքը համակեց նաև ամերիկյան ազնիվ ու մարդասեր ժողովրդին: Եվ իրոք, երբ առիթն ու պատահությունը ներկայացավ, ամերիկյան մեծ ու ազնիվ ժողովրդի ամենալայն զանգվածները միահամուռ հանդես եկան ի պաշտպանություն հայ ազգի արդար Դատի ու իրավանցի:

Բավական է, սոսկ որպես օրինակ, հիշատակել ու ընդգծել այն համառ ու ազնիվ պայքարը, որ ամերիկյան ժողովուրդը և հոգևորականությունը վարեցին հօգուտ հայ Հայրենիքի, հայ օրինական ու արդար Դատի և ընդդեմ լոզանի անիրավ ու անարդար դաշնագրի վավերացման: Ամերիկյան հարյուր և տասը հազար զինվորներ Մենատից պահանջեցին մերժել լոզանի դաշնագրի վավերացումը, որպես նշան բողոքի Հայ ժողովրդի ու Հայաստանի արդար իրավանքի օրինական պահանջների անտեսման: Կազմակերպվեց «Լոզանի դաշնագրի դեմ պայքարող ամերիկյան կոմիտե» և լույս ընծայվեց «Քեմալի ստրկավաճառ շուկան և լոզանի դաշնագիրը» խորագիրը կրող հայտնի հրատարակությունը՝ ամերիկյան ժողովրդի ու հոգևոր դասի ակնաւոր ներկայացուցիչների աշխատակցությամբ: Այսպիսով ամերիկյան մեր հոգևոր եղբայրներն ի Քրիստոս հավատարիմ եղան Փրկչի սիրո և եղբայրության վարդապետության:

Մեզ մեծագույն մխիթարություն է պատճառում և երախտագիտությամբ համակում այն գիտակցությունը, թե այսօր ևս ամերիկյան ժողովրդի լավագույն զավակները անդավաճան պաշտպանն են հանդիսանում հայ ազգի օրինական ու արդար Դատի:

Առավել ևս ուրախալի էր Մեզ իմանալ, որ ամերիկյան Մեր հոգևոր եղբայրակիցները կազմակերպված հանդես են գալիս ի պաշտպանություն Հայ Դատի երկու հիմնական խնդիրների — առաջինը՝ թուրքական անագործյն վայրագության դժ շուրջ մեկ միլիոն հայ տարագիրների Հայրենադարձը դեպի Սովետական Հայաստան՝ դեպի իրենց հայրենի անկախ ոջախը, և երկրորդ՝ թուրք արյունկզակ-չարդարար կառավարությունների կողմից հանօրենս բռնագրավված հայ Կուշխարհի, հայկական տոհմային սրբազան հողերի միացումը ազատ, անկախ, ազգային Հայկական Սովետական Հանրապետությանը. հողեր, որոնց նկատմամբ հայ ժողովրդի ունեցած սրբազան իրավունքը հանաչվել է միջազգային-քաղաքական դեկլարացիաներով, Սեյրի դաշնագրով, Վիլսոնյան իրավարարությանը, Ազգերի Լիգայի որոշումներով և այլ բազմատեսակ ակտերով ու պակտներով:

Եթե մարդկային խիղճն ու զգացումը բնութանում են ի տես ամեն մի մարդ արարածի սպանության և պատիժ-հատուցում պահանջում կատարված ոճրագործության համար, կարող է միթե նույն այդ մարդկային խիղճն ու զգացումը անտարբեր մնալ և հաշտվել, երբ ուղղա-քաղաքական անօրինակ գազանության դժ են դառնում միլիոնավոր անմեղներ:

Եթե մարդկային իրավագազացումն ու գիտակցությունը ծառանում են ի տես անհատական գույքի հափշտակման, մասնավոր սեփականության գողության, կարող են երբեքից նույն այդ մարդկային իրավագազացումն ու գիտակցությունը հաշտվել ի տես մի ամբողջ ժողովրդի հայրենազրկմանը, նրա հայրենի օյախի բռնագրավմանն ու հափշտակմանը:

«Մի զողանալ»:

«Մի սպանանալ»:

Այս սրբազան պատգամներին հակառակ, Մենք, ցավոք սրտի, մեր օրերում ականատես ենք լինում այնպիսի քստմենլի ու վրդովեցուցիչ երևույթների, երբ ոճրագործներն ու հափշտակիչները պատժի փոխարեն քաջալերանքի, օժանդակության ու հովանավորության են արժանանում:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գործարար շրջանները և ռազմա-քաղաքական ղեկավարներն այսօր, հակառակ վաղեմի նվիրագործված օրենքների, գորավիդ ու պաշտպան են կանգնել չարդարար, հափշտակիչ ու ոճրագործ թուրք պետությանը, որի ղեկավարների ձեռքերը ներկված են միլիոնավոր հայ, քուրդ, ասորի

ու այլ ազգությունների պատկանող անմեղ գոհների արյունով:

Քաջալերված ամերիկյան կառավարության ֆինանսա-տնտեսական օգնությամբ և ռազմա-քաղաքական աջակցությամբ, երեկվա թուրք ջարդարարները և ֆաշիստական Գերմանիայի քողարկված գործակիցները այսօր տենդորեն նախապատաստվում են նոր ոճիրներ գործելու: Թուրքական մեջլիսի ամբիոնից, ռազմատենչ մամուլի էջերից, ռադիոկայաններից անընդհատ ալարմիստական կոչեր են հնչում. թուրք միլիտարիստները անգլո-սաքսոն գինակիցների անունից սուր ու սուսեր են ճոճում սովետական մեր մեծ ու խաղաղասեր Հայրենիքի դեմ, Սովետական մեծ Միության դեմ, որի հովանու ներքո այսօր ազատ ու երջանիկ, խաղաղ ու ապահով ապրում են երբեմնի բազմաշարչար հայ ժողովրդի զավակները:

Ամերիկա-թուրքական այսօրվա տնտեսական և ռազմա-քաղաքական գործակցությունը առիթ է ծառայել, որպեսզի ամերիկյան ժուրնալիստ Ռոյ Հովարտը իր թուրքֆիլական զեղումներին զուգընթաց հայ սըրբազնագույն դատը անարգող այնպիսի հայտարարություններ անի, որոնք իրենց արտաոգություններով մեծ վիշտ են պատճառում Մեզ՝ հայ ժողովրդի կրոնապետիս և խորին զայրույթն ու բողոք հարուցում հայ ազգի այնքան արնոտված և անցյալի նահատակություններից խոցված սրտում:

Արտասահմանյան հայ թերթերից տեղեկացանք, որ սույն տարվա մայիս ամսին Մտամբուլ են ժամանել և չերմագին հյուրասիրվել ամերիկյան ժուրնալիստները, որոնց թվում նաև Ռոյ Հովարտը: Վերջինս թույլ է տվել իրեն հայ ժողովրդի հասցեին այնպիսի արտահայտություններ անելու, որոնք իրենց զազրելիությամբ բազմիցս գերազանցում են հիտլեր-գեբեխայան վայրահալություններին, Թուրք ժուրնալիստների այն հարցին, թե ի՞նչպես է վերաբերում Ռոյ Հովարտը հայ դատին ու հայերի պահանջներին, վերջինս պատասխանել է. — Ճշանակություն մի տաք, Մենք հայերին մարդ էլ չենք համարում:

Մենք բուռն կերպով բողոքում ենք բազմադարյան կուլտուրայի տեր հայ ժողովրդի հասցեին ուղղված այս սանձարձակ արտահայտության դեմ և դիմում ենք ամերիկյան ժողովրդի ու առաջին հերթին մեր հոգևոր եղբայրների խղճի դատաստանին:

Հայ ժողովուրդը և իր ծերունազարդ Հայրապետը սիրում են հավատալ, որ Ռոյ Հովարտները արտահայտիչն ու թարգմանը չեն

Պանդխտանում ամերիկյան մարդասեր ու բարեպաշտ ժողովրդի զգացմունքներին:

Մենք հավատացած ենք, որ ամերիկյան ժողովուրդը և հոգևոր դասը չեն դավաճանի երբեք հարգանքի ու համակրանքի այն զգացմունքներին, որ տածել են հայ ժողովրդի ու նրա դատի հանդեպ և արժանի հակահարված կտան Ռոյ Հովարաների հատույց ելույթներին:

«Մի սպանանե՛ք»:

«Մի գողանա՛ր»:

Եթե չարագործության դեմ չեն պայքարում և չարագործի ձեռքը զենք են դնում, ապա չարագործությունը ծավալվում ու խորանում է և օրինականացվում ու սրբագործվում վաղեմիությամբ: Չարիքի ուժեղացման և օրինականացման հնարավորությունը պետք է արժանապես նախատեսեն ու կանխեն բոլոր նրանք, որոնց սրտին թանկ է ժողովրդների բարօրությունն ու խաղաղ համակեցությունը: Չկանխել ակնհայտ չարագործությունը նշանակում է մեղսակից լինել չարագործությանը: Այսօր, երբ աշխարհի ռազմամոլ տարրերն ու նրանց Ռոյ Հովարտի տիպի վարձկան գործակալները զրադված են համաշխարհային մի նոր

սպանդի կազմակերպմամբ, ժողովրդներին միջև տեական խաղաղության հաստատման կողմնակիցները չպետք է անդործունեության մատնվեն: Ժողովուրդների համագործակցությունը տեական խաղաղության պայմաններում նրանց երջանիկ կյանքի հիմքն է կազմում: Մենք ուրախ ենք արձանագրելու, որ ամերիկյան ժողովրդի խաղաղասեր տրադիցիաները ոտնահարող ուժերի շարքում բացակայում են ամերիկյան եկեղեցիների, հատկապես ավետարանական եկեղեցու, կրոնապետները, մեր ազնիվ հոգևոր եղբայրակիցներն ի թրիստոս:

Հայ ժողովուրդը և իր ծերունազարդ Հայրապետը սիրում են հավատալ, որ ամերիկյան ազնիվ ժողովուրդը և իր բարեպաշտ ու ազնվախոհ հոգևոր դասը կպայքարեն հանուն ժողովրդների միջև տեական խաղաղության հաստատման, հանուն ժողովրդների համագործակցության, որոնցով պայմանավորված է և հայ Դատի արդարացի լուծումը:

Իսկ Մենք Միածնաէջ Սուրբ Տաճարիցս Մեր ըերմեռանդ աղոթքներն ենք վերադառնում առ Բարձրյալն— Եվսեմ խաղաղության ամենայն աշխարհի և հաստատության սրբո եկեղեցվո, զՏեհ աղաչեսցու՛ք:

Գ Ե Վ Ո Ր Գ Զ

ՊԱՏՐԻԱՐԿ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1 Նոյեմբեր 1947 թ.

Ս. ԷԶՄԻԱՍԻՆ





ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻՍՏԱՅԻ ՅՕ-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆՐԵՎԱՆՈՒՄ

Անձրևային հղանակներից հետո արևի վառ ճառագայթները վաղ առավոտվանից սզողել էին տոնականորեն զարկարկած նրևանը։ Պայծառ երկնակամարի ֆոնում պարզորոշ երևում են հոյակապ Արարատի ձյունապատ զազաթները։

Փողոցները լեփ-լեցուն են մարդկանցով։ Բոլորի տրամագրությամբ հանդիսավոր է, բարձր։

Ալ-կարմիր կտավներով ու դրոշներով զարդարված են լենինի անվան հրապարակի շենքերը, որոնց վրա ամրացված են սովետական պետության հիմնադիրներ՝ լենինի ու Ստալինի նկարները։ Շենքերի ճակատներին ամրացված են սովետական պետության ականավոր գործիչների ու պանծալի գործավարների նկարները։ Հրապարակի կենտրոնում ամրացված ստենդները ցույց են տալիս Հայաստանի աշխատավորության նվաճումները ժողովրդական տրեստիզացիայի և կոլտոտիայի տարրեր քնազավառներում։

Հենում են ժամացույցի համալսի զարկերը, ժամը ուղիղ 11-ն է։ Տրիբունա են բարձրանում Հայաստանի կոմպարտիայի, Հայկական ՍՍՌ կառավարության ղեկավարները, կոլտոտիայի, գիտության ու արվեստի ականավոր գործիչները և արտադրության առաջավորները։

Հրապարակում շարք են կանգնած նրևանի կայազորի զորամասերը։

Զորքերին ու մայրաքաղաքի աշխատավորությանը շնորհավորական հանդիման ճառով դիմում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ Մ. Պապյանը։

Սկսվում է զորահանդեսը։

Հստակ քալքով տրիբունայի մոտից անցնում են Սովետական բանակի քաջարի ռազմիկները։

Զորահանդեսը ավարտված է։

Հրապարակ են մտնում ցուցարարների շարասյուները, որոնց շարքերի վրա ալեկոծվում է դրոշակների ծովը։

Անցնում են Ստալինյան ռայոնի աշխատավորները։ Շարժական պլատֆորմի վրա ամրացված են գործարանի ցեխերի մակետները, Ստալինյան ռայոնի ձեռնարկությունների թողարկած ռազմաթիվ արտադրանքները պատկերող կտավներ։ Շարասյան առջևից անցնում են Ավտոդոդի գործարանի բանվորները, Վառվում են ավտոմեքենայի վրա պատրաստված փոքրիկ կարրիդի գործարանի հնոցները, դազահաշինական գործարանի բանվորները՝ հրկայարտ վեր են բարձրացրել խառատի ունիվերսալ մետաղահատ դազահա պատկերող պլակատը։ Էլեկտրոմեքենաշինական գործարանի բանվորները տանում են էլեկտրական վառ կրակներով լուսավորված բանավանի մակետը։ Գեղեցիկ է ձևավորված ռեսպուբլիկայի խոշորագույն ձեռնարկության՝ Կիրովի անվան գործարանի շարասյուները։

— Փառք մեծ Ստալինին, — հնչում է տրիբունայից։ Նվալ կեցցեին հազարավոր ձայներ պատասխանում են ցնծադին ուռայով։

Ահա անցնում են Սպանդարյան ռայոնի աշխատավորները։ Տոնականորեն զարդարված սովետոմեքենայի վրա դրված են լենինի

և Ստալինի քանդակները Արևի տակ փայլում է իր արտագրանցի տասնյակ տեսակները ցուցադրող «Արարատ» գործարանի ցուցափեշվերը Անցնում են արվեստի աշխատողները:

Սկսվում է Մոլոտովյան ռալոնի աշխատավորների շարասյան երթը: Շարասյան առջև երևում է մի նավ, որի տախտակամածի վրա 16 միութենական ռիսպուբլիկաների գերբերի տակ կանգնած են ազգային տարզերի հազած պատանիներ ու աղջիկներ: Երգով ու պարով են անցնում Մոլոտովյան ռալոնի ձեռնարկությունների ու հիմնարկությունների կոլեկտիվները: Երևանի կոնսերվատորները ցուցադրում են իրենց պեսսայես արտագրանցները: Շարասյան երթը եզրափակում են Սովետական անվան Հայկական Պետական թատրոնի բեմի վարպետները և դերուհիները:

Լենինի և Ստալինի հուսակալ քանդակները, գրքերի վիթխարի մակեթները, բազմաթիվ դրոշմներ, նկարներ, լուզունդները զարդարում են Կիրովյան ռալոնի աշխատավորների առջևի շարասյունը: Անցնում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակա-

դեմիայի կոլեկտիվը: Կուռ շարքերով է շարժվում ուսանող երիտասարդությունը: Ուրախ անցնում են պիտեններն ու դպրոցականները: Պիտենների Երևանի պալատի բազմաթիվ խմբակների մասնակիցները տանում են իրենց պատրաստած նկարները, քանդակները, մակեթները:

Կիցցենների, ուռուների որոտից թնդում է հրապարակը:

Բոլոր շարասյուններում էլ կան արտասահմանից հայրենիք վերադարձած շատ հայեր: Նրանցից շատերն առաջին անգամ են ժողովրդական ցույցին մասնակցում: Հայրենի հողի վրա: Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների հետ միասին նրանք մեծ խանդավառությամբ լծվել են հայրենիքի վիթխարի շինարարությանը:

Հրապարակ են մտնում ֆիզկուլտուրնիկների շարասյունները: Նրանք անցնում են սեղմ, կուռ շարքերով: Նրանց զլխավերև լիզվողով են սպորտային ընկերությունների բազմաթիվ ու բազմերանգ դրոշները:

Ծույցն ավարտված է, Նրան մասնակցեցին Հայաստանի մայրաքաղաքի մոտ 150 հազար աշխատավորներ:



Երեկոյան Լենինի անվան հրապարակում և այլ հրապարակներում տեղի ունեցան ինքնագործ խմբակների տոնական ելույթներ:

Երևանի քաղաքում շարունակվում էր համաժողովրդական ցնծությունը:

Մինչև ուշ գիշեր քաղաքում շարունակվում էր համաժողովրդական ցնծությունը:

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Լենինականի տոնական օրըն զարդարված հրապարակներում, փողոցներում և բանվորական ալյաններում վաղ առավոտից սկսվեց համաժողովրդական ցնծությունը:

Ժամը 11-ին սկսվում է Մեծ Հոկտեմբերի 30-ամյակին նվիրված աշխատավորության շքերթը: Փողային նվազախմբի հաղթական հնչյունների տակ առաջինը Ստալինի անվան հրապարակն են մտնում պիտեն-դպրոցականների գեղեցիկ ու աշխույժ խմբերը:

Նրանք շարքի առջևից տանում են սովետական պետության կազմակերպիչներ՝ Լենինի ու Ստալինի և նրանց մեծավոր զինակիցների նկարները, բազմաթիվ լուզունդներ, պակասներ, դրոշակներ:

Այնուհետև հրապարակ են մտնում Վ. Մ. Մոլոտովի անվան մանվածքային գործարանի բանվորները: Ապա անցնում են Կոշիկի, Մեխանիկական գործարանների և մեքենա-տրակտորային արհեստանոցի կոլեկտիվները: Այնուհետև անցնում են Տեքստիլ և

Մսի կոմբինատների, Փայտամշակման, Կաթի և մյուս գործարանների բանվորների շարասյունները:

Հանկարծ լսվում է շոգեքարշի սուլոցը և հրապարակ է մտնում երկաթուղային հանգույցի բանվորների շարասյունը: Նրանք որպես նվեր մեծ տոնին, նորոգումից բաց Լին թողել մեկ շոգեքարշ:

Ապա գալիս են ինտելիգենցիայի և ուսանողության շարասյունները, ինչպես նաև արտասահմանից հայրենիք վերադարձած հայ աշխատավորության շարքերը:

Լենինականի աշխատավորության շքերթը, որին մասնակցում էին ավելի քան երեսույն հազար մարդ, վերածվեց հայրենասիրական շեղմ ցույցի ի պատիվ սովետական հայրենիքի, Սովետական Միության հաղթանակների յոգեշնչող և կազմակերպիչ մեծ Ստալինի:

ԱՆՎՈՐՈՒՄ

Նույնմբերի 7-ին Անվերդի քաղաքը տոնական տեսք էր ընդունել: Հրապարակը, փողոցներն ու գործարանները զարդարված էին թաղամթիվ լողունգներով, պլակատներով, դրոշակներով, Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի, պաշտիայի ու կառավարության ղեկավարների նկարներով:

Մեծ տոնին նվիրված խանդավառ ցույցն

սկսվեց առավոտյան ժամը 10-ին: Աշխատավորների շարասյան առջևից ղեկավարում էին Պլենալուական գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները: Ապա հրապարակով անցնում են Քիմիական գործարանի բանվորները, հրկամթուլայինները, ինտելիգենցիան, Սանահին գյուղի կոլխոզնիկները, դպրոցականները:

ԿՐՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Դեռ մի քանի օր առաջ կիրովական քաղաքն ընդունել էր տոնական տեսք: Շենքերը զարդարված էին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի ղեկավարների՝ Լենինի և Ստալինի նկարներով, դրոշներով, պլակատներով և լողունգներով:

Նույնմբերի 7-ին, առավոտյան, կազմակերպվեց աշխատավորության հանդիսավոր հրթը:

Հրապարակ են մտնում դպրոցականները, նրանցից հետո անցնում են քաղաքի աշխատողական ձեռնարկությունների կուլկտիվները, Առաջին անցնում է Մյասնիկյանի անվան գործարանի կուլկտիվը, ապա անցնում են Ապրաք գործարանի կառուցողները, Ցույցին մասնակցում են նաև քաղաքամերձ կոլխոզների կոլխոզնիկները:

ՂԱՓԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի հրեուամյակը Ղափան քաղաքի աշխատավորները նշեցին մեծ ցույցով, որին մասնակցում էին ավելի քան չորս հազար մարդ:

Այդ օրը քաղաքի հրապարակներից մե-

կում հանդիսավորությամբ բացվեց սովետական ժողովրդի հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի արձանը, իսկ քաղաքային պարկում՝ ընկեր Ստալինի մեքավոր զինակից, հայ ժողովրդի արժանավոր զավակ Ա. Ի. Միկոյանի արձանը:



Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի հրեուամյակը մեծ խանդավառությամբ նշեցին նաև Հայաստանի մյուս

քուր քաղաքների ու շրջանների աշխատավորները:



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԵՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Նոյեմբերի 29-ին Սպենդիարովի անվան
Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի
պետական թատրոնում տեղի ունեցավ աշ-
խատավորների դեպուտատների նրեանի Քա-
ղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝
պարտիական, կոմերիտական, սովետական,
հասարակական կազմակերպությունների և
Սովետական Բանակի ղեկավարների ներկա-
յացուցիչների հետ միասին, նվիրված Հա-
յաստանում սովետական իշխանություն
հաստատելու 27-րդ տարեդարձին:

Դահլիճը լեկ-լեցուն է հյուրերով, նրանց
մեջ՝ արդյունաբերության և տրանսպորտի
դեկավարներ, գիտության, արվեստի ու գե-
րականության ներկայացուցիչներ, Սովե-
տական Բանակի հրամանատարներ, սովե-
տական նոր քաղաքացի հայրենադարձ հա-
յեր:

Երեկոյան ժամը 6-ին բացվում է վարա-
գույրը. թատրոնի բեմը զարդարված է ծա-
ղիկներով և ալ-կարմիր դրոշմներով, կենտ-
րոնում դրված է հանճարեղ Ստալինի մե-
ծադիր նկարը: Բեմի կողքերին փակցված
կարմիր պաստառի վրա հայերեն ու ռուսե-
րեն լեզվով գրված են հայ ժողովրդի լա-
վազույն բարեկամ, մարդկության հանճար
Ստալինի խոսքերը. «Միայն Սովետական
իշխանության գաղափարը բերեց Հայաս-
տանին խաղաղություն և ազգային վերա-
ծրնության հնարավորություն»:

Հանդիսավոր նիստի նախագահության
սեղանի շուրջն են գտնվում Հայաստանի
կոմպարտիայի ու կառավարության ղեկա-
վարները, գիտության ու արվեստի ականա-
վոր գործիչները:

Հանդիսավոր նիստը բացված է հայտա-
րարում աշխատավորների դեպուտատների
նրեանի Քաղաքային Սովետի գործկոմի
նախագահ Ե. Վարդանյանը:

Հայկական ՍՍՌ Պետական հիմնի հզոր
ու վեհ հնչյունները տարածվում են դահ-
լիճում:

Բուռն, երկար ժամանակ չլող օվա-
ցիայի ներքո ընտրվում է պատվավոր նա-
խագահություն՝ ժողովուրդների մեծ առաջ-
նորդ Ստալինի գլխավորությամբ:

Ներկաները աննկարագրելի բերկրությամբ
ու խանդավառությամբ օվացիա են անում
ի պատիվ սովետական ժողովրդի մեծ ա-
ռաշնորդ Ստալինի, որն այդ նշանակալից
օրը իր համաձայնությունն էր հայտնե-
լու նրեանի Քաղաքային Սովետի դեպուտատ
րվեարկվելու համար:

Հայաստանում սովետական իշխանու-
թյուն հաստատելու 27-րդ տարեդարձի մա-
սին զեկուցելու համար խոսքը տրվում է
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նա-
խագահ Ս. Կարապետյանին:

— Այսօր Սովետական Հայաստանի աշ-
խատավորները, — ասում է Ս. Կարապետ-
յանը, — ցնծությամբ են նշում իրենց ազ-
գային տոնը, Հայաստանում սովետական
իշխանություն հաստատելու 27-ամյակը:
1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի
ապստամբ ռանվորներն ու դուշայիները
ռուս մեծ ժողովրդի և հերոսական Կարմիր
Բանակի օգնությամբ տապալեցին դաշնակ-
ների ատելի լուծը և Հայաստանում հաստա-
տեցին սովետական կարգեր:

Ջեկուցողը կանգ է առնում հայ ժողովրդի
պատմական անցյալի վրա, պատմում է ան-
համար ծանր փորձությունների մասին, որ
կրել է նա իր պատմական ուղին անցնելուց:

— Ժողովրդի համար, — շարունակում է
զեկուցողը, — որի պատմությունը հաշվ-
վում է երկու ու կես հազարամյակ, 27 տա-
րին բավականաչափ փոքր ժամանակամիջոց
է, սակայն սոցիալիստական ռեվոլյուցիայի
հաղթանակի պայմաններում, սովետական
կարգերի պայմաններում, Լենինի-Ստալինի
պարտիայի իմաստուն ղեկավարության շը-
նորհիվ այդ 27 տարիները իրենց նշանա-
կությամբ, բովանդակությամբ և ստեղծա-

գործ ուժով գերազանցում են ողջ նախա-
ռևարդիոն ժամանակաշրջանի հասարա-
կական զարգացմանը:

Նվաճումները, որ ձեռք է բերել հայ ժո-
ղովուրդը սովետական իշխանության տարի-
ներում ռեսպուբլիկայի կյանքի բոլոր ճյու-
ղերում, հնարավոր դարձան միայն Միու-
թենական կառավարության հսկայական
օգնության շնորհիվ, եղբայրական ժողո-
վուրդների և հատկապես ռուս մեծ ժողովրդի,
օգնության շնորհիվ, ընկեր Ստալինի Հա-
յաստանի նկատմամբ տածած ամենօրյա
անդուլ հոգատարության շնորհիվ:

Մեծ առաջնորդի անունը հիշելուց դա՛նի-
նում առաջ է դալիս թուռն օվազիա, ժողո-
վականները հոտնակալ ծափահարում են ի
պատիվ մարդկության մեծագույն հանճար
մեծ Ստալինի:

Զեկուցողը օրինակներով ու թվերով նը-
կարագրում է Հայաստանի աշխատավորնե-
րի անցած փառապանծ ուղին, ցույց է տա-
լիս նրա արդյունաբերության, պուլտատե-
սության, գիտության, կուլտուրայի և ար-
վեստի բուռն աճը: Արդյունաբերության տե-
սակարար կշիռը ռեսպուբլիկայի ժողովրդ-
դական տնտեսության ընդհանուր ծավալում
ներկալում կազմում է 75 տոկոսից ավել-
ին: Սովետական իշխանության տարիներ
ին Հայաստանում կառուցվել են 360-ից
ավելի գործարաններ, ֆաբրիկաներ և այլ
արդյունաբերական ձեռնարկներ: Ռեսպուբ-
լիկայում ստեղծվել են արդյունաբերության
բոլորովին նոր ճյուղեր:

Արդյունաբերության բուռն զարգացումը
պայմաններ է ստեղծել գյուղատնտեսու-
թյան արմատական վերակառուցման և նրա
անդհողորեն առաջընթացի համար: Այս տա-
րի Հայաստանի կուլտուրական ժամկետից
շուտ կատարեցին պետությանը հաջ հանձ-
նելու պլանները: Պլանից դուրս պետական
շտեմարաններն են հանձնվել 350 հազար
փութ հացահատիկ:

Անցած 27 տարում, — ասում է ապա զե-
կուցողը, — Հայաստանում տեղի է ունեցել
իսկական կուլտուրական ռեվոլյուցիա: Այժմ

Հայաստանը ծածկված է միջնակարգ և թե-
րի միջնակարգ դպրոցների, տեխնիկումնե-
րի և բարձրագույն ուսումնական հիմնարկ-
ների, ակումբների և գրադարանների, թատ-
րոնների և կինոյի խիտ ցանցով:

Սովետական Հայաստանում, հատկապես
վերջին տարիներս, մեծ թափ է ընդունել
գիտական և տեխնիկական մտքի զարգա-
րումը: Կազմակերպվել է Հայկական ՍՍՌ
Գիտությունների Ակադեմիան:

Զեկուցողը առանձնապես կանգ է առնում
ռեսպուբլիկայի կյանքում նշանակալից
դեպքի — հայ ժողովրդի ազգային վերամիա-
վորման վրա: 85 հազարից ավելի արտա-
սահմանյան հայեր վերադարձել են իրենց
հայրենիքը՝ Սովետական Հայաստան և ռես-
պուբլիկայի բոլոր աշխատավորների հետ
միասին ստեղծագործ աշխատանքի լծվել:

Զեկուցման եզրափակման ժամանակ զե-
կուցողը ընդամենը է Հայաստանի ար-
դյունաբերության ու գյուղատնտեսության
մեջ իշխող հետպատերազմյան աշխատան-
քային մեծ վերելքը և ընդգծում հայ ժողո-
վրդի ունեցած հսկայական հաջողություն-
ները:

— Այդ հաջողությունները հնարավոր դար-
ձան շնորհիվ Սովետական կառավարության
կողմից ցույց տրվող մշտական օգնության,
շնորհիվ ընկեր Ստալինի ամենօրյա հոգա-
տարության ու ղեկավարության:

Ժողովականները միահամուտ կերպով ոտ-
քի են նշում և թուռն օվազիա կազմակեր-
պում ի պատիվ հանճարեղ առաջնորդ, հայ
ժողովրդի փրկարար ու բարեկամ մեծ
Ստալինի:

Հանդիսավոր նիստի մասնակիցները մեծ
խանդավառությամբ են ընդունում ողջույնի
հեռագրի տեքստը՝ ուղղված սովետական
ժողովրդի հաղթանակների ոգեշնչող ու կազ-
մակերպիչ մեծ Ստալինին:

Վերջում հանդիսավոր նիստի մասնակից-
ների համար մեծ համերգ տրվեց մայրաքա-
ղաքի լավագույն արտիստական ուժերի
մասնակցությամբ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ՆՅՈՒՅՈՐԺ, 20 դեկտեմբերի (ՏԱՍՍ). —
ՇՆԱԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՆԵՒՆՑՈՐԵՔԻ
ԲՇԺԱՆՄՈՒՆՔՐ ԱՄԵՐԻԿԱՅԻՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
27-րդ տարեդարձի տոնակատարության առ-
թիվ կազմակերպել է միտինգ, որտեղ ներկա
են եղել մոտ 800 մարդ: Միտինգում հանդես
է եկել ՇՆԱԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ԲԱՐԵԳՈՐԾԱ-

ԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ քարտուղար ՄԵՍԻԱՅԱՆԸ, որը
ընդգծել է հայ ժողովրդի նվաճումները նրա
ազատագրումից հետո: Խորհուրդը հրապա-
րակել է հայտարարություն, որի մեջ նշված
է, որ ռեճկախ Հայաստան ստեղծվելուց հե-
տո, որի խաղաղությունն ու անվտանգություն-
ընդ երաշխավորված է շնորհիվ այն բանի, որ



նա մտել է Սովետական Միության ժողովուրդների ընտանիքի մեջ, ձեռք են բերվել բաշխակի նվաճումներ գիտության, էկոնոմիկայի և արվեստի ասպարեզում: Միտինգը ողջույն է ուղարկել Սովետական Հայաստանի կառավարությանը:

Խորհրդի ներկայացուցիչները հայտարարել



ՐՈՒՆԱՐԵՍ, 2 դեկտեմբերի (ՏԱՍՍ).— Օրերս Ռումինա-սովետական բարեկամության տանը տեղի է ունեցել Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու 27-րդ տարեդարձի հանդիսավոր տոնակատարությունը: Տոնակատարությունը կազմա-

նել, որ նման միտինգներ տեղի են ունեցել նոյեմբերի 30-ին ամերիկյան 27 բաղադնություն, ներառյալ Ռոստոնը, Լոս-Անջելոսը, Չիկագոն, Խորհուրդը մտադիր է երկրում հավաքել 100 հազար դոլլար՝ եկող տարի իր գործունեությունը շարունակելու համար:

կերպել էր ռումինահայերի միավորումը: Հանդես եկած՝ Ռումինիայում Հայաստանյան ժակետի գլխավոր քարտուղար Բարայանը նշել է Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու պատմական նշանակությունը:



ԲԵՐՈՒԹ, 30 նոյեմբերի (ՏԱՍՍ).— Նոյեմբերի 30-ին Բելյուսում հանդիսավոր կերպով տոնվել է Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձը: Տոնակատարությունը կազմակերպել էր Հայկական Ազգային Խորհուրդը: Հանդիսավոր նիստը տեղի է ունեցել Լիբանանի պրեմիեր-մինիստրի ժամանակավոր պաշտոնակատար, հանրային աշխատանքների մինիստր Գաբրիել Մուրրի և հայ եկեղեցու կաթողիկոս Գարեգինի նախագահությամբ: Երևան կինոթատրոնի հսկայական դահլիճը, որտեղ տեղի էր ունենում ժողովը, լեփ-լեցուն էր: Ներկա էին գիտական և կուլտուրական աշխարհի ակադեմիկոս արար հասարակական ներկայացուցիչներ: Սովետական Հայաստանի նվաճումները վերաբերյալ ղեկուցումով հանդես եկան հայ հասա-

րակական գործիչ Զանգոտեյանը և հայ բանաստեղծ Սարգիս Աբգալյանը: Հանդիսավոր մասը ավարտելուց հետո հայկական ղեկավարական ինքնազործունեության ուժերը տրվեց համերգ և ապա ցուցադրվեց սովետական գունավոր կինոֆիլմ՝ նվիրված Մոսկվայում մայիսի մեկի տոնակատարությանը և 1947 թվին Կառմիր հրապարակում տեղի ունեցած զորահանդեսին: Ֆիլմը հիացրեց հանդիսատեսներին: Յուրաքանչյուր անդամ, երբ էկրանի վրա երևում էին ընկեր Ստալինը և կառավարության անդամները, դահլիճում թնդում էին որոտընդոստ ծափահարություններ: Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնակատարությունն անցավ հսկայական ոգևորությամբ:



ԿԱՀԻՐՆ, 29 նոյեմբերի (ՏԱՍՍ).— Նոյեմբերի 29-ին Կահիրեում տեղի է ունեցել Հայկական զաղութի հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայկական ՍՍՌ 27-րդ տարեդարձին: Հանդես եկած հոստոնները նշել են ռեսպուբլիկայում քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման ասպարեզում հսկայական հաջողությունները, որ ձեռք են բերվել 27 տարվա ընթացքում Լենինի-Ստալինի կոմունիստական պարտիայի օգնությամբ և նրա ղեկավարությամբ: Հոստոններն ընդդեմում էին արտասահմանյան հայերի անսա-

սան վճռականությունը, որքան կարելի է շուտ վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան: Ժողովը ողջույնի հեռադրեր է ուղարկել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետին և կառավարությանը:



Հայկական զաղութի հանդիսավոր նիստ է տեղի ունեցել նաև Ալեքսանդրիայում: Նոյեմբերի 29-ին Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ եկեղեցիներում հատուկ պատարագ է մատուցվել Հայկական ՍՍՌ 27-րդ տարեդարձի առթիվ:



ՆՅՈՒ-ՅՈՐԿ (ՏԱՍՍ).— Նյու-Յորքում ՍՍՌ-ի Գլխավոր հյուպատոս Լոմակինը նոյեմբերի 25-ին ընդունելություն կազմակերպեց Հայկական ՍՍՌ կազմակերպման 27-րդ տարեդարձի առթիվ, որին ներկա էին ավելի քան 300 ամերիկահայեր: Ընդունելությանը ներկա էին Գլխավոր Ասամբլիայում սովետական ղեկավարի ղեկավար ՍՍՌ Ար-

աաքին Գործերի Մինիստրի տեղակալ Ա.Յա. Վիշնյակին, Միավորված Ազգերի կազմակերպությունում ՍՍՌ-ի ներկայացուցիչ ՍՍՌ Արտաքին Գործերի Մինիստրի տեղակալ Ա. Ա. Գրոմիկոն և Բելոռուսական ՍՍՌ Արտաքին Գործերի Մինիստր Կիսիլովը: Ընդունելությունն անցավ բարեկամական մթնոլորտում:

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի 30-րդ տարեդարձի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց, Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո՝ Նորին Ս. Օծուխուն Տ. Տ. Գևորգ Զ. Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ կատարվեց մաղթանք սովետական իշխանության հարատևության համար: Մաղթանքին ներկա էր ժողովրդի հոծ բազմություն:

Մաղթանքից հետո Մայր Աթոռի միաբանությունը Վեհարանի դահլիճում իր շնորհավորանքը մատուցեց Ազգընտիր Վեհափառ Հայրապետին՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի 30-ամյակի առթիվ: Միաբանությունը արժանացավ Նորին Ս. Օծուխուն Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի հայրական օրհնությանը:



Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի առթիվ Մայրադուլն Պատրիարք և Ամենայն Հայոց Դաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ն ողջույնի, շնորհավորանքի ու օրհնության հեռագիր հղեց ժողովուրդների մեծ և հանճարեղ առաջնորդ Գեներալիսսիմուս Խոսիք Վիսարիոնովիչ Ստալինի անունով:



Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի 30-ամյակի առթիվ Մայրադուլն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Տ. Տ. Գևորգ Զ-ն ողջույնի, շնորհավորանքի և օրհնության հեռագիր հղեց նաև

Սովետական Հայաստանի կառավարության անունով:



Նոյեմբերի 6-ին, երեկոյան, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի 30-ամյակին: Հանդիսավոր նիստին ներկա էին ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի միաբանության անդամները և հյուրերը:

Հանդիսավոր նիստը սկսվեց ՍՍՍՄ Պետական հիմնով, որից հետո մեծ տոնին նվիրված հակիրճ խոսքով հանդիսավոր նիստը բացված հայտարարեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ա. Արզարյանը, որը մանրամասն թրվեց սովետական ժողովրդի նվաճումները 30 տարվա ընթացքում և նշեց Հոկտեմբերյան Ռեուլուցիայի դերը հայ ժողովրդի փրկության ու ազատագրության գործում:

Հանդիսավոր նիստին ողջույնի խոսք ասացին Մայր Աթոռի միաբանության կողմից Գեր. Սուրեն Եպիսկոպոսը, Հոգևոր Ճեմարանի սաների անունից՝ Լ. Սևոյանը, նիստից հետո կազմակերպված համերգին իրենց մասնակցությունը բերին երգեցիկ խումբը և առանձին սաներ: Սաներից ոմանք հանդես եկան իրենց ինքնուրույն գործերի արտասանությամբ: Համերգային բաժինը ղեկավարում էր Տեր-Նիկողայոս ավագ քահանա Բալեյանը՝ իրեն օգնական ունենալով երրորդ կուրսի սան, շնորհայի թառ նվագող, Մ. Շահինյանին:

Նոյեմբերի 29-ին, Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց: Պատարագին էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր նորին Ս. Օծուխյան Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո նորին Ս. Օծուխյան Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ մաղթանք կատարվեց Սովետական Հայաստանի բարգաձման և ծաղկման համար, Մաղթանքը կատարվեց ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ:

Մաղթանքից հետո Մայր Աթոռի միաբանությունը Վեհաբանում ներկայացավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ու իր շնորհավորանքը մատուցեց Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի առթիվ, արժանանալով նորին Ս. Օծուխյան Հայրական օրհնությանը:

Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի առթիվ Մայրաքաղաքի Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ն ողջունելի, շնորհավորանքի ու օրհնության հեռագիր հղեց Սովետական Հայաստանի կառավարության անունով:

Նոյեմբերի 29-ին, երեկոյան, Հոգևոր ձեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին:

Նիստը սկսվեց Հայկական ՍՍՌ Պետական հիմնով, այնուհետև Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին նվիրված ողջունելի հակիրճ խոսքով հանդես գալով, Հոգևոր ձեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը հանդիսավոր նիստը բացված հայտարարեց:

Նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանության անդամները, ձեմարանի դասախոսական կազմը, ռադիոհաղորդումների և բազմաթիվ հյուրեր:

Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին նվիրված զեկուցում կարդաց ձեմարանի բժիշկ Ս. Առաքելյանը, որը մանրամասն թվեց Սովետական Հայաստանի նվաճումները 27 տարվա ընթացքում՝ նշելով

նրա արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու արվեստի աննախընթաց վերելքը:

Հանդիսավոր նիստին ողջունելի խոսքով հանդես եկան Մայր Աթոռի միաբան Գևր. Սուրեն Եպիսկոպոսը, ձեմարանի դասախոս Ա. Դիրոյանը և ռադիոհաղորդման ներկայացուցիչը:

Հանդիսավոր նիստին ողջունելի խոսքով արվեց հրգեցիկ Խմբի և առանձին սաների մասնակցությամբ: Համերգային բաժինը վարում էր Տեր-Նիկողայոս ավագ քահանա Բավելյանը:

Դեկտեմբերի 18-ին էջմիածնի Մեքենատրակտորային կայանի սրահում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր ձեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և վանքի բնակիչների հանդիսավոր հանդիպումը տեղական Սովետների ղեկավարության թեկնածուների հետ:

Նորին Վեհափառություն Տ. Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Կաթողիկոսի գրավոր հրամանի համաձայն Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թումանյանի կողմից նոյեմբերի 30-ին Մայր Տաճարում ծալագույն վարդապետության տառիճան շնորհվեց Մայր Աթոռի միաբան, լուսարարապետ Տ. Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանին:

Հայկական ՍՍՌ մուսուլմանների կրոնական պետ Ղազի շեյխ Ալասկյար Մահադա-մովի և Երևանի Դամբր-Բուլաղի մզկիթի գործադիր օրգանի նախագահ Աբաս Տարուշևի հրավերով, և Վեհափառ Հայրապետի հաճությամբ, նոյեմբերի 23-ին Երևան մեկնեցին Մայր Աթոռի միաբաններ Գևր. Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանը, Տ. Կոնստանդին աբեղա Թադևոսյանը և Հոգևոր ձեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը՝ մուսուլմանների «Մահադադ»-ի սգո արարողություններ ներկա գտնվելու համար:

Դամբր-Բուլաղի մզկիթում Գևր. Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանը, Տ. Կոնստանդին աբեղա Թադևոսյանը և Հոգևոր ձեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը նոյեմբերի 23-ին ներկա գտնվեցին մուսուլմանների «Մահադադ»-ի սգո արարողությանը: Արարողությունից հետո հացկերույթ տեղի ունեցավ, որը կազմակերպել էր մզկիթի գործադիր օրգանը:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՐ ՍՍԻՑ ԷԶՄԻԱԾԻՆ ՓՈՒԱԴՐԵԼՈՒ 500-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ՆՇՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 29-ին Ա. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանում տեղի ունեցավ Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու 500-ամյա հորելյանի նշումը:

Հորելյանական հանդեսին ներկա էին Նորին Ա. Օծուքյուն Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսը, Գերադույն Հոգեւոր եւրօրդի անդամները, Մայր Աթոռի միաբանության անդամները, ձեմարանի դասախոսական կազմը և Էջմիածնից ու Երևանից հրաւիրված բազմաթիվ հյուրեր: Զեմարանի դահլիճը լեւի-լեցուն էր ժողովրդի հոծ բազմությամբ:

Հորելյանական հանդեսը սկսվեց աղոթքով: Աղոթքից հետո ձեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը, բացման իր հակիրճ ճառում դրվատելով Ամենայն Հայոց Կաթողիկոսության խաղացած գերը հայ ժողովրդի ազգահավաքման գործում և նշելով Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու պատմական բազմանշանակալից իրողությունը, հորելյանական հանդեսը բացված հայտարարեց:

Բացման խոսքից հետո Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու շարժառիթների մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ձեմարանի դասախոս, դոցենտ Ա. Շահնազարյանը, որը մանրամասն ու հանգամանորեն վերլուծեց կրոնական, քաղաքական այն իրադրությունը, որ րստեղծվել էր Հայ Եկեղեցու շուրջը 15-րդ դարու սկզբին: Զեկուցողը վեր հանեց Էջմիածնի Մայր Աթոռի կատարած գերը Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատմության մեջ և հատկապես ընդգծեց Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու կրոնական, քաղաքական կարեւորագույն նշանակությունը՝ Հայ Եկեղեցու անկախության, անաղարտության, հարատեւության ու հայ ժողովրդի հայրենահավաքման տեսակետից:

Այնուհետև, Հայ Եկեղեցու և հայ հոգեւորականության գերը հայ մշակույթի զարգացման գործում թեմայի շուրջը, զեկուցումով հանդես եկավ Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Թովմանյանը: Զեկուցողը նշեց հայ հոգեւորականության գերը տառերի գյուտի, դպրության, ճեղագրական մատենագրության, տպագրական գործի, դպրոցաշինարարության ասպարեզներում և այլն: Ի վերջո զեկուցողը կանգ առավ նախկին Գևորգյան ձեմարանի խաղացած գերի վրա և նշեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի ջանքերով բացված Հոգեւոր ձեմարանի նշանակությունը Հայ Եկեղեցու համար րստամենայնի պիտանի կազրեր պատրաստելու տեսակետից:

Գևորգ Դ կրթասեր կաթողիկոսի մասին ընդարձակ զեկուցում կարդաց ձեմարանի դասախոս Ա. Դիւլյանը: Զեկուցողը հատկապես կանգ առավ Գևորգ Դ-ի կողմից հիմնադրված Գևորգյան ձեմարանի, այդ կրթական մեծ օջախի, Հայ Եկեղեցու կյանքում ու հայ իրականության մեջ խաղացած կարեւոր գերի վրա:

Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու 500-ամյա հորելյանի նշանակության մասին արտահայտվեցին Սահակ Ժայրազունը վարդապետ Տեր- Հովհաննիսյանը և Կարապետ վարդապետ Ասլամազյանը:

Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու 500-ամյա հորելյանին նվիրված հակիրճ զեկուցումներ կարդացին նաև ձեմարանի III կուրսի սաներ Լ. Մարտիրոսյանը և Ք. Գևորգյանը:

ձեմարանի երգեցիկ խումբը, զեկաւարության մեջ վաստակավոր ուսուցիչ, կոմպոզի-

տոր Գանդիի Ղազարյանի, հանդես եկավ տոնին պատշաճ երգերի կատարումով, Ուսանողության նախաձեռնությամբ և Ճեմարանի վարչության հաճությամբ տոնին պատշաճ արտասանություններ եղան:

Ի վերջո Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հաճեց երկու խոսքով իր գոհունակությունը հայտնել կազմակերպված հանդիսության առթիվ: Ազգընտիր Հայրապետը նախ իր խորը երախտագիտությունը արտահայտեց Սովետական իշխանության և սովետական ժողովրդի մեծ առաջնորդ Ստալինի հանդեպ՝ հայ ժողովրդի համար տնտեսական-կուլտուրական խաղաղ զարգացման հնարավորություններ ստեղծելու համար:

Օրվան գեղեցիկ հանդիսությունը նախապատրաստելու առթիվ Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց Ճեմարանի դասախոսական կազմին, ինչպես նաև ուսանողությանը: Նորին Ս. Օծությունը իր երկու խոսքն ավարտեց օրհնանքով, օրհնելով Սովետական կառավարությանը, հայ ժողովրդին, Սփյուռքի տարազիր հայությանը և ներկա հանդիսականներին:

Գահլիճում տիրում էր տոնական մեծ ռեզուրուքուն:

Վեհափառ Հայրապետի օրհնանքով փակվեց օրվան հանդիսությունը:

Հանդեսից հետո հյուրերի, միաբանության անդամների, Ճեմարանի դասախոսների և ուսանողության համար ընթրիք պատրաստվեց:


Ընթրիքին բարեհաճեց ներկա գտնվել Նորին Ս. Օծություն Ս. Տ. Գեորգ Զ Հայրապետը: Նորին Ս. Օծությունը առաջին կենաց

քաժակը բարձրացնելով առաջարկեց խմել Մեծ Ստալինի կենացը, Սովետական քարեխնամ կառավարության կենացը, որ կործանման անդնդի եզրին հասցված հայ ժողովրդին փրկեցին կորստից և նրա համար սեփական ազգային պետական կյանքով ապրելու, ազգային մշակույթը զարգացնելու և խաղաղ ստեղծագործ աշխատանքով զբաղվելու լիակատար հնարավորություններ ստեղծեցին: Մեծ Ստալինի, Սովետական կառավարության հոգաւարության շնորհիվ, — շարունակեց Վեհափառ Հայրապետը, — այսօր Սփյուռքի տարագիր հայությունը կենտրոնանում է իր սիրաւուն հայրենիքում: Եվ վերջապես մենք երախտապարտ ենք Մեծ Ստալինի ու Սովետական կառավարության հանդեպ, որ հաճեցին թույլատրել ներկա Հոգևոր Ճեմարանի բացումը, Ճեմարան, որ կարևոր ազդակ պետք է հանդիսանա Հայ եկեղեցու կյանքում սկսված նոր վերելքի համար:

Ներկաները խորը երախտագիտական զգացմունքով և հոտնկայա խմեցին Նորին Ս. Օծության կողմից առաջարկված կենաց քաժակը:

Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը կենաց քաժակ առաջարկեց Ազգընտիր Վեհափառ Հայրապետ Ս. Տ. Գեվորգ Զ-ի արեւատության համար, բարեմաղթելով նրան երկար կյանք՝ ի սպաս Հայ եկեղեցու և հայ ժողովրդի: Ներկաները հոտնկայա խմեցին Վեհափառ Հայրապետի արեւատության համար առաջարկված կենաց քաժակը:

Ռ. ԱԼԻՇԱՆՅԱՆ:





ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ



շունը տարօրինապես անուշ է Արարատյան դաշտին մեջ:

Տաք և միօրինակ կլիմայի վարժ հայրենադարձ եգիպ-

տահայեր, որոնք կանխակալ կարծիքով և նախապաշարուածով կսարսափեին, թե պիտի սրսփան այս աշնան օրերուն... սաստիկ ցուրտեն, հաճելի զարմացումով կվայելեն արևաշող օրերը և կապուտակ երկինքը Արարատյան դաշտի աշունին: Մասիսները հստակ գծերով կշողան հորիզոնին վաղ առավոտեն մինչև մայրամուտ, քիչ անգամ եղծանվելով մշուշի ու ամպի կուտակումեն:

Հայրենադարձներն ընդերկար կդիտեն մեր հարազատ և մայրական Արարատը... Անոնց սիրտերը կուրախանան, բայց կըտրրտմին ու կտամկանան նաև՝ անախորժ հուշով մը և մտածումով մը...

Արարատը մին է այն անդիմադրելի մագնիսներեն, որոնք Մայր Երկիր կդարձնեն արտասահմանյան հայերը:

Մյուս գերահզոր մագնիսներեն են առաջինը՝ հայ պետականությունը, որը դարերու ստրկությունեն հետո վերապարգևուած է մեզի շնորհիվ Հոկտեմբերյան Մեծ Ռեւոլուցիայի և որուն գոյութիւնը պայմանավորւած հրաշալի երևութներու ականատես կըլլանք ամեն քայլափոխի, և երկրորդը՝ էջմիածինը, Հայ հալածքի ու կոպտութեան վաղեմի կենտրոնը, իր ներկայիս փառահեղ գահակալով:

Պատմական ճանապարհով մը, որ սովետական արեւի տակ նոր կյանքի մը եռուղեք կապրի հիմա, էջմիածին կերթանք այսօր,

վեհափառ կաթողիկոսին այցելութիւն տալու:

Իմ մասնավոր խնդրանքիս վրա, զիս անձամբ կառաջնորդե ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի նորհուրդի նախագահ ընկ. Սուրեն Հովհաննիսյանը, որուն ծանոթանալու հաճույքն ունեցած էի շուրջ երկու տարի առաջ, էջմիածնա մեջ կայացած Ազգային-եկեղեցական ժողովին:

Սովետահայ տիպար քաղաքացի է ան, որ գիտե այնքան բարութիւնք և բարյացակամութիւնք շրջապատել շորեկ քաղաքացիները, այսինքն արտասահմանեն հայրենադարձ հայերը: Քիչ անգամ պատահած եմ արտասահմանի մեջ նույն որակով մարդկանց, որոնք այնքան շեշտվածորեն տրամադրված ըլլան օգնելու իրենց նմաններուն, և որոնք ցույց տված ըլլան այդ ուղղութիւնք այնքան դրական փաստերու կոմունիստական պարտիային և սովետական պետութեան կողմն պատրաստված այսպիսի միլիոնավոր մարդկանց շնորհիվ էր անտարակույս, որ սովետական երկիրը դիմադրեց և հուսկ ուրեմն հաղթեց նացիֆաշիստ ցազազած վճռականներուն, արձանացրելով համաշխարհային պատմութեան մեծագոյն հաղթանակը:

...Ամբողջ օրը, գրեթե ամառային տաքով արեգակ մը կար: Հիմա, իրիկնադեմին թեթևորեն կանձրեն և օդը զաղը է, մեղմ ցուրտի մը հազիվ զգալի շեշտով ակադէմի: Ըստ երևութին, հետզհետե պիտի ցրտե ճանապարհին, իսկ ես անխոհմաքար վերարկու լեմ վերցուցած ինձ հետ: Բայց հակառակ տարածամող օրերուն և պահ մը սաստկացող անձրեւին, օդը կշարունակե մնալ

դադը, հազիվ զգալի մեղմ ցուրտով մը Զր-
մայիկի է Արարատյան դաշտի աշունը:

Ուշ հոկտեմբերի այս երեկոյան, մինչ
երեւանի լուսերը հետզհետեւ կսկսին շողալ,
կախաողակաւ գեղեցկութիւն մը բնծայե-
լով մեր մայրաքաղաքին, կանցնին նորա-
կերտ, շքեղակառույց Հաղթանակի կամուր-
ջին և կուղևորինք դեպի Էմիածին: Առ-
ֆալտապատ լայն ճանապարհին երկու եզ-
րերու քարոյները կօրորեն իրենց նուրբ, հե-
ղաճկուն սիւղերը, հայրենական շքեղ ծա-
ռեր, որոնց կարողութեամբ քաղաքները կտան-
ցնը զիս փարավորներու երկրին մէջ, որոնց
օտորուն ստվերները միայն ևս տեսնես հի-
մա, և զորմ պիտի ուզի տեսնել ցերեկով,
արևուն տակ: Յերեկով պիտի ուզի տեսնել,
նաև ներգաղթողներու համար կառուցված
տներու, որոնք նույնպէս կնկերեն ճանա-
պարհը, քարոյներուն զուգահեռ: Տուներն
մաս մը անավառտ է տակաւին, բայց շատ
մոտունեւ արդեն իսկ ավարտված ու քնա-
հեղված են անցյալ տառի Իրանէն և Հու-
նաստանէն ներգաղթած հայերով: Առաջա-
որոյց է նման շինքերով իրարու միացնել
երեւանը ու էջմիածինը: Հանրակառքը հա-
ղորդակցութեան մեջ պիտի դնէ զանոնք:

... Հասած ենք դարավոր էջմիածնի դար-
պասներուն առջև: Ինքնաշարժը կմտնէ ըն-
դարեակ բակը, շրջան կընէ վեհաշուք Մայր
տաճառին, որ կուրճադձովի կիսամոնթին մէջ,
հուշածնով այն հանդիսավոր և խանդա-
վառ օրերը, զորս ապրեցանք ալքքան նե-
րուժորեն, շուրջ երկու տարի առաջ, Ազգա-
յին-Նկեղեցական մեծ համագումարին ա-
ռիթով:

Կանգ կառնենք Վեհարան առաջնորդող
արտաքին դռան առջև: Բովանդակ ճամբու
րնթացքին և այժմ մանավանդ, երբ քանի
մը բոպն միայն կբաժանեն զիս կաթողիկո-
սին հանդիպելու պահին, հարց մը կցրաղեց-
նէր միտքս — ի՞նչպէս պիտի գտնի ա-
ռողական վիճակը Վեհափառին, որուն
միաձայնութեամբ ընտրութիւնը երկու տա-
րի առաջ ալքքան հրճվանք էր պատճառած
արտասահմանի հայութեան և որուն ներկա-
յութիւնը լուսավորչի գահին վրա ալքքան
բերկրաւոր էր ամենուս համար: Արդեն ծե-
րունազարդ, իր ընտրութեան օրերուն արդեն
յոթանասուն և ութամյա Գեորգ Զ. ի՞նչպէս
կկրէ, հիմա, իր ութսուն տարիներու՝ Արդ-
յո՞ք կքած է կաղնին տարիներու ծանրու-
թեան տակ, արդդո՞ք...

Ո՞վ հրաշք...

Անցած երկու տարիները տասը-տասն և
հինգ տարիով երիտասարդացուցած են
Գեորգ Կաթողիկոսը:

Արդարեւ, Վեհարանի մեծ գրասենդանին
նտին ոտքի կանգնած է պարթև և վեհ կեր-
պառանք մը, էջմիածնա ճանապարհին
կանգնագեղ քարոյներուն պես ողիղ հասա-
կով: Երկու տարի առաջ մեր տեսած, մեր
ընտրած Հայրապետն է, անհամեմատ ավելի
առողջ, ավելի կայտառ, ավելի թարմ
ու երիտասարդ, քան այն օրերուն...

Չեմ կոնար որախուրթունք և շնորհավո-
րութիւններս յայտնել Կաթողիկոսին՝ իր
փարթամացած առողջութեան և տարիքը ու-
րազող արտաքինին համար...

Հայրապետը կտառի իր քաղկաթոյին
վրա և կհրավիրէ մեզ ևս նստելու:

— Ժիշտ է, տղաս, առողջութիւնս շատ
ավելի լավ է, քան երկու տարի առաջ:
Պետք է ըսնմ, թե ես, թե շրտապատս հոգ
կտանինք առողջութեանս: Քանի մը՝ ամիս
առաջ եղա Կիսլովոդսկ, Հյուսիսային Կով-
կասի հայտնի ջերմուկներու, ինչ որ մեծա-
պես նպաստեց առողջութեանս: Ունիմ էջ-
միածնա համար ծրագիրներու Կիսլովոդսկի
Սփուռքի հայութեան տեսնել մերախում-
բված Մար Հարիսիի մէջ: Այս երկու
առաջնորդութեամբ կյանքի տեսք ունիմ: Եթե
Աստուած հինգ տարեկա կյանք ևս շնորհ
ինձ, շնորհակալ կըլլամ շատ...

— Հինգ տարին ինչ է որ, Վեհափառ:
Շատ ավելի երկար կյանք կունենաք:

— Չեմ մերժեր — կրնեմ Հայրապետը
ժպտուն: Կյանքը լավ բան է, եթէ զիտնանք
օգտակարապէս վարել ու տնտեսել զայն:

Կաթողիկոսը իր ընդարձակ գրասենդանին
վրա, ձեռքի տակ ունի արտասահմանեան
բազմաթիւ թերթեր և այլ հրատարակու-
թիւններ: Ենդրճիվ ատոնց, ինչպէս նաև
արտասահմանյան թեմերն եկած նամակնե-
րու և տեղեկագիրներու, հիանալիորեն ի-
րազեկ է Սփուռքի հայ կյանքի բոլոր ան-
ցողորմերուն, ինչպէս ի հայտ պիտի գար
ավելի քան երկու ժամ տեւած մեր հանդի-
պումին բովանդակ տեղեկութեանը:

Կհարցնեմ որպիսութիւնը եօղապահայոց
և անոնց թեմական Առաջնորդ Մամբրե Արք-
եպիսկոպոսի: Հարցումներ կրնեմ, որոնք
կձգտին յուսաբանել այդ թեմին հատուկ
զանազան երևութիւններ:

Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանը, կը-
սենք, Չեր միջոցով շնորհակալութիւն կը-
հայտնէ Պետութեանը, որ թույլատրեց և հը-
նարավոր դարձրեց հայրենադարձը առ հա-
սարակ և եզիպտահայութեան հայրենադար-

ձը ի մասնավորի Ան ճշմարտապես հայրենասեր և էջմիածնական եպիսկոպոս, սրբառանգն կաշխատի հայրենադարձի գործին հաջողությանը համար: Մեր ներգաղթի կենտրոնական կոմիտեին կնախագահեր ակտիվ կերպով, իր ամենաշերտ փափագն է դալ Հայաստան և ծառայել կամ էջմիածնա մեջ՝ որպես լուսարարպետ և կամ Սեանա մեջ՝ որպես վանահայր: Այսպես ալ հայտարարեց հայրենադարձի կապակցությամբ Վերեա թերթին իր տված լնթովիտին մեջ: Սպասելով որ իր Հայրապետին կարգադրությամբ օր մը ինքն ալ կարողանա դալ Հայրենիք, կղրկե իր կրտսեր եղբայրը՝ Լևոն Սիրունյանը, որ պիտի գա այս տարվան Բ կարավանով:

— Ուրախ եմ ու հայաբու Մամրոն Սրբազանի հայրենասիրական եռանդուն գործունեության համար: Մեծապես ուրախ պիտի ըլլայի հոս էջմիածնա մեջ կողքիս ունենալով զինքը: Շատ օգտակար կրնա ըլլալ մեզի, բայց առայժմ լավ է, որ իր պաշտոնին վրա մնա նպիպտոսի մեջ, ուր զինքը փոխարինելը շատ է դժվար: Միշտ ի մտի ունեցած եմ զինքը իբր ինձի մերձ գործակից վալելելը այստեղ: Տեսնենք ապագային:

Վեհափառ կհյուրասիրե զմեզ սուրճով, հայրենական համեղ մրգերով և շաքարեղեններով:

Կշարունակենք մեր գրույցը Վեհափառին հետ, փոխն ի փոխ արտասահմանեն և Մալր նրկրեն վերցնելով մեր նյութերը: Պատկանելի խոսակցիս մտքի և շարժումներու աշխույժը հարաճուն հիացմունքով կլեցնե զիս:

Ոգևորությամբ կիտսի Դպրեմվանքին մասին, որ արդեն 60 սաներով բարօր և հետըզհետն լուվ կազմակերպվող օջախ մըն է կրոնական կրթության: Առաջին երեք դասարանները լրիվ են այս տարի: հառաչիկա դպրոցական տարեշրջանին կկազմակերպվի բարձրագույն կրթական բաժին և կունենա Ա լսարանու: Հայրապետին փափագն է հառաչիկա տարի էջմիածին հրավիրել Դերենիկ եպիսկոպոսը՝ որպես ուսուցիչ: Գարեգին կաթողիկոսի հետ թղթակցության մեջ է այս մասին: Ընդհանրական

Հայրապետը տարված է դպրեմվանքին կրթական-բարոյական բարձրությունը ապահովելու և ատոր համար անհրաժեշտ նյութական բազա ստեղծելու մտասեռումով: Այս մասին ակնկալ է Սիյուտքի հայության լայն աշակցությանը, իր մեկ ուրիշ մտասեռումն է Մալր տաճարին վերանս-



Վեհափառ Հայրապետը
Վեհառանի պարտեզում՝ զրոսանքի ժամին

րոգումը, որուն ամբողջ ծախսը հոգալու հոժարած է ինքնակամ՝ արտասահմանի հայ հարուստներեն մեկը:

Կմնա դպրեմվանքին տնտեսական ապահովության պարագան: Արտասահմանի մեր ունեւորները պետք է օգնեն Հայրապետին այս մարդին մեջ: Մեզի ծանոթ է թե հայրապետական կոնգակով մը հարցը քանի մը ամիսն ի վեր կպտնվի արտասահմանյան թեմական՝ ժողովներու օրակարգին վրա, Կլուծվեր ավելի շուտով, եթե արտասահմանի թե երկրին իսկ համար ավելի

առաջավորությունն ներկայացնող հայրենա-
դարձի գործերը կլանած շրջալիս ուղադրու-
թյունները և միջոցները Այս հարցը, էջ-
միածնա Հոգևոր ձեռնարանին տնտեսական
ապահովության հարցը, պետք է լուծեն թե-
մական ժողովներն ավելի՝ անհատ հարուստ-
ներու։

Հայրապետը շատ իրաւունք մարդ է, բայց
ատիկա արգելք մը չէ շատ լավատես քե-
լալուն առ հասարակ իր բոլոր բաղձանքնե-
րուն իրադրոժման կապակցութեամբ։ Շատ
լավատես է մեր Դատին արդար լուծումին
մասին, այն նվիրական դատին, որուն
պաշտպանութեանը համար այնքան հոյակապ
վավերագրութիւն մը խմբագրած էր և հղած
մեծ տերութեանց արտաքին գործոց նախա-
րարներուն, շուրջ մեկ տարի առաջ և՛ որ
այնքան խոր և ծավալուն արձագանք ունե-
ցավ արտասահմանի մեջ։

Ամենայն Հայոց Հայրապետը շատ ոգևոր-
ված է հայրենադարձով, զոր կնկատեմ
պատմական անհրաժեշտութեան մը։ Ընդ
է, որ ծանր մոմենտի տեղի կունենա, պա-
տերազմեն անմիջապէս հետո և ծանր զո-
հողութիւններ կապրտադրեմ, բայց ամեն
զոհողութիւն կտարվի և պետք է տարվի
հոգեարթութեամբ, վասնզի հայութեան ազգա-
հովանքին չափ մեծ երևույթի մը առջև ենք։
Հայութեան պետք է թափով հաճախ տարվի
այս աննախընթաց շարժումը, իր սկսած
է երկու տարիէ ի վեր և կշարունակվի։

Ամենայն Հայոց Հայրապետը երկար կը-
խոսի Հայրենադարձի և Հայկական Դատին
մասին, ընդհանրապէս տալով շքեղ և սրտա-
զրբով հեռապատկերներ անոնց կապակ-
ցութեամբ։ Այս սրտտես, արծիւահայաց՝ նա-
հապետին վստահելի առաջնորդութեամբ
ահա կմխրճվինք ապագայի թուրքերուն մեջ,
ուր Սովետական Հայաստանը մեծցած ու
շատ և շատ ալելի բազմամարդ դարձած,
հզոր և բարձր պետութիւն մը է սովետական
ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ։

Ոչ ինք կտարակուսի ամենազուլզն լա-
փով և ոչ ալ մենք՝ հաջողութեանը մասին
Հայրենադարձի մեծ ու պատմական շարժ-
ման և Հայկական սրբազան Դատին իրա-
կանացմանը մասին իր ընդհանրապէս տված
հեռանկարներուն, քանի որ մեր փոքրիկ, ալլ
արի և հառաչողական Հայաստանը մաս
կկազմեն Սովետական գերհզոր Միութեան և
քանի որ այդ Միութեանը կվայելն գերա-
զանց առաջնորդութիւնը հանձարեղ
Մտալիսի։

Ամեն զոժարութիւն պիտի լուծվի ան-
վերեպ և անվերապ պիտի հասնենք մեր նը-
պատականերուն։

Ընկեր Սուրեն Հովհաննիսյանն կվերա-
դառնա մեզ մոտ հարակից սրահն մը, ուր
խորհրդակցութեան մեջ է եղած դպրեվան-
քին վերաբերյալ հարցերու շուրջ։ Ո՛րքան
էր տեսած մեր առանձնակի խոսակցութիւնը
Հայոց Հայրապետին հետ։ Ավելի քան եր-
կու ժամ, Մեր խոսակցութիւնը պահ մը
կդառնա խմբական և հրաժեշտ կառնենք
Հայրապետին, շուտով ցերեկով գալու և ճե-
մարանը այցելելու խոստումով։

Կվերադառնանք լավագույն տպավորու-
թիւններով և բարձր տրամադրութեամբ։

Շքեղ և սիրտաբար է Հայոց ներկան և
շատ ավելի շքեղափայլ և երջանկաբեր Հա-
յոց ապագան։

Վաղնշական Վաղարշապատին կվերա-
դառնանք, և կսուրանք դեպի մեր նոր և
արեւաշող օրերու ոստանը՝ Երևան...

Միտքս լիքն է հազար խոհերով և մտո-
րումներով, ու սիրտս հազար զգացմունք-
ներով, վարար ու վճիտ...

Հայոց հարազատ Արարատյան դաշտին
մեջ շրջող հայրենադարձ հայ եմ ես հիմա։
Այսքան երջանիկ չեմ եղած քրքրեցե...

Երևան կմտնինք ու զիշերին։ Անձրեղ
դադարած է և երկինքը պայծառ։





ՀԱՅԱՍՏԱՆԹԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՓՑՈՒՌՔԻ ՄԵՋ

Պ. ԲԱԳՐԱՏ ՊԱԳԱՅԱՆԸ ԻՐ ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պ. Բ. Պագայանը Առվեստական Հայաստանից Պեյրուք վերադառնալուց տեսակցություն է ունեցել «Առաւօտ» թերթի խմբագրի հետ և իր խանդավառ տպավորություններն է հաղորդել Առվեստական Հայաստանի հայակապ նվաճումների մասին: Պատասխանելով խմբագրի հարցումներին՝ նա հիշատակել է նաև էջմիածին կատարած իր այցելության մասին: Օգտվելով «Էրաբեր» թերթի 1947 թ. օգոստոս 9-ի համարում զետեղված հոլովածից, ստորև տալիս ենք այդ տպավորությունների այն մասը, որ վերաբերում է նրա էջմիածին կատարած այցելությանը:

ԽՄԹ.

Նրկու անգամ էջմիածին գացի, Առաջին անգամ ինքնաբերաբար, իսկ երկրորդ անգամ՝ Վեհափառ Հայրապետի հրավերով: Պատեցա էջմիածին տաճարն ու վանքին բոլոր մասերը: Դպրեմանքն արդեն բացված է: Տպավորությունս շատ լավ է և էջմիածնի մեջ հպարտ զգացի ինքզինքս: Վեհափառ կաթողիկոսը շատ հմուտ, քաղաքավար, քաղաքագետ և առողջ մեծ առնձնավորություն մըն է և հարգանք կպարտադրե բոլորին: Անիկա նվիրված է Հայ եկեղեցիի

բարեգաղղման գործին ու մոտեն կհետաքրքրվի արտասահմանի հայության վիճակով:

Մեր Վեհափառ կաթողիկոսի մտասեն-ռումը արտասահմանի հայությունն է և ներգաղթը: Անիկա գիշեր ցերեկ կմտածե ամբողջական ազգահավաքման գործը հաշույնյամբ գլուխ բերելու համար: Այս ուղղությամբ անիկա երբեք չի խնայեր իր ջանքերը և մոտեն կհետաքրքրվի ամբողջ գաղթախարհի հայության վիճակով:

ԵՎՐՈՊԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՎԻՐԱԿ

ԳԵՐ. ՍՐՏԱՎԱՋԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՈՒՐՄԵՅԱՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Եվրոպայի կաթողիկոսական նվիրակ Գեր. Արտավազդ Արքեպիսկոպոս Մյուլմեյան, որ հովվական այցելության և ներգաղթի հանգանակության համար իտալիա մեկնած էր, Միլան այցելելով հյուրասիրված է Պ. Հայկ Ղազարոսյանի բնակարանը, ուր ճաշկերույթի մը ընթացքին հանգանակություն մը բաց-

ված է և տեղվույն վրա իսկ գոյացած է հինգ միլիոն լիրե՝ ի նպաստ ներգաղթի ֆոնդին: Հանգանակությունը բացած է հյուրընկալ Պ. Ղազարոսյան՝ արձանագրելով 300 հազար լիրե:

(«Արաբս» 25 հոկտեմբեր, 1947 թ.)

ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՊԵԼՃԻՔԱՅԻ ՀԱՅՈՑ

Գաղթգյուղի երեք Տ. Պսակ քահանա Ստեփանյան, որ հոգևոր հովիվ կարգված է Պելճիքայի հայոց, Խատանպուլեն արդեն

իր նոր պաշտոնատեղին մեկնած է Մարտել-Փարիզ ճամբով:

(«Արաբս» 25 հոկտեմբեր, 1947 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ՆՅՈՒՅՈՐՔԻ ՄԵՋ

Մոտ 400 կամավորներ, որ հիմա տունն տուն կատրուտին Մայր Եկեղեցվոց և Ազգային տան համար նվերներ հավաքելու պաշտոնով, հրահանգ ստացած են Հայ Առաջնորդարանին՝ Մեծագույն Նյու-Յորքի և Հըտսըն Բառնթիի հայերուն մարդահամարը առնելու Այսպիսով Հայ Առաջնորդարանի պաշտոնատեղին կհուսա մոտ ատենեն կարելի եղածին չափ ամբողջական արձանագրությունը ունենալ Նյու-Յորքի շրջանի հայ ազգայիններուն:

Դիմում Ժողած յուրաքանչյուր ընտանիքի համար պատրաստված է մասնավոր քարտ

մը, որ կպարունակե անունը ընտանիքին մեծին, շափահասներու ու փոքրիկներուն թիվը, և այլն: Ենթոհիվ այս ծրագրին կհուսացվի, որ 50 տարվան մեջ առաջին անգամ ըլլալով կարելի պիտի ըլլա Նյու-Յորքի շրջանի հայոց ցանկը ունենալ:

Հետեւելով այս ծրագրին ուրիշ քաղաքներու մեջ ալ, կհուսացվի, որ երբ քննարկներ լրանա, կարելի պիտի ըլլա Ամերիկայի հայոց ամբողջական արձանագրությունը ունենալ Առաջնորդարանի տրամադրության տակ:

(ԷԼԵԱՔԵՐՏ ՕԳՈՍՏՈՍ 23, 1947 թ.)

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ԱՋԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԵՆ

Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Հովհաննէս եկեղեցվոց առժամյա հովիվ Գեր. Զգոն ծայրագույն վարդապետ բանախոսություն մը տվալ անգլերենով, մեր անգլիախոս նոր սերունդին համար, Նյուպիքն էր Մայրատանայից եկեղեցվոց ծագումը:

Սրահը իր տարողությամբ լցված էր. ներկաներ հետաքրքրությամբ ունկնդրեցին և հարցումներ ուղղեցին, որոնց պատասխան

եց Զգոն ծայրագույն վարդապետ:

Հոգաբարձությունը մասնավոր մշակված ծրագրով մը կաշխատի կրթական, գեղարվեստական ու ընկերային շարաթական հավաքույթներով եկեղեցվոց ընդարձակ շնորհ մշակույթի կեդրոն մը դարձնել:

(ՏՆՈՐ ՕՐԵ ՄԵԿԱՏԵՄԵՐ 30, 1947 թ.)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆ ԷՃԱԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ 500-ԱՍՅԱ ՀՈՐԵՏԱՆԸ

Մայր Աթոռին Սիսեն ի Ս. Էջմիածին փոխադրության 500-ամյա հոբելանի հանդիսությունը տեղի ունեցավ Պուրբեշի մեջ, 25 մայիսին, եկեղեցվոց մեջ, խոսն քաղմության մը ներկայությամբ:

Ներկա էին Ազգային մարմինները և Հայաստանյան Ժակատի կազմակերպության կեդրոնական և Տեղական մարմինները և անդամները հավաքաբար:

Հանդիսավոր Ս. Պատարագեն հետո, զոր մատուց թեմիս Առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Վազգին վարդապետ, շրջապատված բարձրապատիվ քահանա հայրերեն, հաջորդեց զոհարանական մաղթանքի արարողությունը:

Մաղթանքն առաջ, Գեր. Տ. Վազգեն վարդապետ Ս. Էջմիածնեն այս առթիվ րատացված Հայրապետական կոնդակը կարդաց ու ապա հայրենաշունչ քարոզով մը պատկերացուց ներկա ժողովուրդին այն պատմական անցքերը, որոնք մեկը մյուսին հաջորդեցին Մայր Աթոռի տեղափոխությանց

կապակցությամբ, երբ դարեր շարունակ Հայաստանայից եկեղեցվոցն ճակատագիրը հայ ժողովրդի ճակատագիրը ծղավ և՛ դժբախտ օրերուն, և՛ Ժողանիկ օրերուն: Քարոզիչ Հայր Սուրբը ծանրացավ նաև Ս. Էջմիածնի այսօրվան մեծ դերին վրա, երբ ան հայրենասիրական գետնին վրա այնքան մեծ գործ կատարեց ու կկատարի: Մայր Աթոռի գործունեությունը մեր օրերուն ի հայտ կուգա մասնավանդ ներդաշխ կազմակերպման փրկարար գործով և մեր պատմական հողերը Սովետական Հայրենիքին կցվելու արդար պահանջով:

Դոհարանական մաղթանքն հետո սկսավ հանդիսության երկրորդ մասը: Այս առթիվ խոսք առին Թեմական Վոյրուրդի փոխ-նախագահ փառաքան Պ. Եր. Մելիտոն և Պուրբեշի Թաղականության նախագահ Պ. Գ. Տեյրեմենճյան, որոնք օրվան նշանակությունը փառաքանեցին և հանուն մեր ժողովուրդին իրենց ողջույնի, հարգանքի և հավատարմության խոսքը ուղղեցին Մայր Աթոռին

և անոր Ազգընտիր դահակալ Վեհափառ Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Հայրապետին:

Հայորդեցին երկու կրոնաշուկա և հայրենաշունչ արտասանություններ բանաստեղծ Զ. Պլպուկի և Պ. Կ. Կարապետյանի կողմից, որոնցմե հետո խոսք առավ հանուն Հայաստանյան Ճակատի Կեդրոնական Կոմիտեի, կաթողիկոսական ընտրության պատվիրակ Տոթթոր Ա. Տիրացյան, որ ներշնչված ճառ մը արտասանեց, փոթորկելով բոլորին հայրենասիրական հույզերը:

Հայաստանյան Ճակատի ներկայացուցիչը վեր հանեց մանավանդ Մայր Հողին և Ս. Էջմիածնի միջև այն ամուր օրկանաբան կապը, որ միշտ գոյություն ունեցավ անցյալի և ներկայի մեջ: Մայր Հողին ձայնն էր, որ Մայր Աթոռը հինգ հարյուր տարի առաջ ի Ս. Էջմիածին վերադարձուց: Եվ այսօր ալ այդ նույն հողին ձայնն է, որ զազութահայ

ժողովուրդը կմիացնե և կկապե մեր Մայր Հայրենիքին՝ մեր հարազատ Սոփեական Հայաստանին:

Վա՛յ անոր, որ կհեռանա այդ հողին օրենքեն: Մենք՝ հայ ժողովուրդը և հայ եկեղեցին կանք ու կմանք միմիայն մեր հայրենի հողին վրա և մեր հայրենի հողին հավերժական ուժերովը. այս խոսքերով վերջացուց իր ճառը Տոթթոր Տիրացյան:

Խոր տպավորության մը տակ, այս պատմական հանդիսությունը փակվեցավ «Հայր մեր»-ով և ժողովուրդը ցրվեցավ անգամ մըն ալ իր հոգիին մեջ նորսգելով Մայր Հայրենիքին և Ս. Էջմիածնին հավատարիմ դինվոր մնալու ուխտը:

Վ.

(«Հայաստանյան Ճակատ» 1 հունիս 1947 թ.)

ԳՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ 500-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՖՈՔՇԱՆՈՒՄ

Թեմիս Առաջնորդական Փոխանորդարանեն ստացված շրջաբերական հրահանգի համաձայն տեղվույս Թաղական Խորհուրդը, պրոֆ. Խաչիկ Պողոսի, նախօրոք կարգադրած էր հայտարարություններ ցրել և համայնքը հրավիրել կերակի, 25 մայիսին, եկեղեցվո մեջ կատարելիք հանդիսությանց և մաղթանքներուն մասնակցիլ, կաթողիկոսական Աթոռին Կիլիկիայեն Ս. Էջմիածին վերահաստատվելուն առիթով:

Եկեղեցին լեցված էր հոգեշանցի հայ և ուսման ընտրյալ բազմությունով մը:

Պատարագիչ Հոգևոր Հովիվ Տ. Արսեն քահանա վարժապետյան համառոտ կերպով

բացատրեց 500-ամյակի իմաստը և այժմու երկու հայրենասեր Հայրապետներու սերտ համագործակցությունը, որ հազվագեղ պարագա մըն է Կիլիկիո և Ս. Էջմիածնա կաթողիկոսական տարեգրությանց մեջ:

Կատարվեցա՛վ զոհաբանական աղոթք Հայրապետական զույգ Աթոռներու անսասան միասնականության և դահակալներու արևշատության համար:

Մ. Մինասյան

(«Հայաստանյան Ճակատ» 1 հունիս, 1947 թ.)



ՆԵՐԳԱՂԹԸ ԵՎ ՄԵՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐԹԱՅԲ ԲԱՐՅԱՎ ՍԻՐՏԱ ՁԵՐ ՄՐՏԵՐՈՒՆ ՇԵՏ

Ոչ ոք ունի այժմ իմ ուրախությունը, Քրիստոնեական տարի իր հետ ապրած, իրեն հետ լացած ու հրճուած ժողովուրդն, Սուրիոն և իրաւանի մեջ, անցյալ տարի քսան հազարներու ողջերթ մաղթեցի, իսկ այս տարի նույնքան, և թերևս ավելի, հրճուածքով ու բախտավորությամբ, յոթը հազարներու դեպի Երկիր մեկնումի հանդիսատեսը կըլլամ Ֆրանսայի իմ սիրելի ժողովուրդիս։ Տարի մը ամբողջ Ֆրանսայի ամեն շրջաններուն մեջ՝ ուր աղքեղեցի, ո՛հ, ես անպատմելի հուզումով տեսա, թե որպիսի տաք սիրով կաբախեի ձեր սիրտը դեպի ձեր երիտասարդ, վերանորոգ ու ծաղկած հայրենիքը, Տեսա ձեր բոլորին անուամբ կամօք՝ երթալ միանալու ձեր հարազատներուն, անոնց հետ բաժնելու ձեր անակուն աշխատանքն ու անուշ հացն և քաղցրահամ գինին, ու կուսակամ անխաթար միտքով կերտելու հայ հանճարին ու աննահանջ քստեղծագործության նոր կոթողներ ու Հայաստանի գլուղացիներու գովանի, նախիրի ու ցորենի երգերուն խառնելու ձեր ալ երգը՝ զոր սուրվեր էիք պանդխտության ձեր երկարատև տարիներուն։ Այդ ձեր նոր երգերը աշխատանքով, մտածումով ու այլազան հղացումներով անցուցած ձեր ժամերում, ձեզի համար օրհնություն պիտի դառնան ու հիացումով պիտի վայելեք հայրենատուր բոլոր բարիքները, որոնց գոյացության մեջ ձեր ալ վաստակն ու քրտինքը պիտի վերհիշեք դուրսովյալ։

Երթալ ք բարյալ, աչքերս ձեր աչքերուն հետ։

Ձեր ծննդավայրեն մինչև Սուրիոն և Միջագետքի անձայր ու մահասարսուռ անապատները, հետո կրկին դարձը դեպի ձեր ծննդավայրը, անկե կ։ Պոլսո հայկական կամ իրաւանի ամերիկյան ուրբանցները, Հունաստան ու հուսկ հետո Ֆրանսա, հաջորդական ձեր տարագրությունները, բոլոր այս զարհուրելի տառապանքներն ու մաշումները ֆիզիկական, ի խնդիր խաղաղ պատառ մը հացի և խոնավ ու անարև խրցիկի մը, ձեր անհուսահատ աշխատանքը բազմաժողով գործարաններու և անդնդախոր հանքերու սևությամբ մեջ, ու հարգանք բոլորիդ ու մանավանդ բյուր հարգանք ձեր ժիր բազումներուն ու ի նպաստ մարդկության բարօրությամբ ձեր բերած նպաստին, բոլոր այս ոգորումները ձեզի պարգևեցին ձեր այսօրվան հայրենադարձի անուշ երջանկությունը։

Երթալ ք բարյալ, հոգիս տնքաժան ձեր հոգիներեն։

Ֆրանսայի մեջ ապրած տարիներու ձեր ժուժկալ, անաղմուկ ու աշխատունակ կյանքը սքանչելի վկայական մը եղավ ձեր անստգրուտ հայրենասիրության։ Տարի մը ամբողջ տեսա ձեր բնակարանները մաքուր ու հայկական ուշադրով ճաշակով, մեծ մասով ձեր ձեռակերպուր, ծաղկազարդ ու մըրգառատ պարտիզաններու միջև բարձրացած, տեսա ձեր հավաքավայր կախանները, շատ ավելի տանելի քան երբեմնի Հալեպի և այժմու։ Պելլուրի գաղթականները, տեսա թե որպիսի բարեպաշտությամբ ձեր կայտառ բազումներով կառուցած ձեր ան-

շուք մատուցներուն մեջ, ձեր երեցին ազդեցներուն ու Ս. Պատարարին, հսկումներուն ու արևազայներուն կհետևեիք, ձեր նախնիքներու անխորտակելի բարեպաշտությամբն ու անկորնչելի ավանդությամբը: Տեսա թե ինչքան վայելչությամբ ձեր հարսներն ու փեսաները, հարսանեկան սպիտակ քողով ու նարդոսով, նափուտ հագած քահանայով ու դպիրով աղոթարան կմտնեին ցեղին հավերժությանը համար աստուածային օրհնություն խնդրելու: Տեսա թե հայ երեցով ու սարկավագով մանուկ տարիքնուն, մկրտված ու դրոշմված անմեղ երկսեռ մանուկներ, որպիսի սիրով ու եռանդով ամեն առտու դպրատուն կերթային ուսումնական աշակերտն ու հետևողը դառնալու Սուրբ Սահակին ու Մեսրոպին:

Ձեր ապրումներուն արգասիքն է ահա՛ զոր կվախելեք այսօր երթալով հայրենիք ձեր հայրերուն, որոնց՝ դուք ազնական մարտնչումներուն արդյունքը պիտի վայելեք համրուած օրերի հետո, մտնելով անոր աստուածապահ սահմաններն ներս: Հոն են ձեր հայրերով, ձեր դիցակերպ թագավոր ու իշխանազուններուն, ձեր անմահ եկեղեցիի սրբաձուռն հաղթապետներուն կառուցած կաթողիկոսներն ու հոյաշեն վանքերը, որոնք այսօր ալ հայ հոգևոր մշակույթի կոթողները կման, իրենց երկնալաց դմբեթներով: Ուստի գացեք այդ բոլորին երկուղած պաշտումով ու բոլորախումբ թափորով:

Երթալք բարյալ, իմ ազոթքի մրմունջներս ձեզի համար:

Բայց գնացե՛ք, ամենն ալելի կարգապահ ու լրջությամբ: Աշխատության, եղբայրական աննախանձ սիրո, կարգապահության և մանավանդ լրջության երկիր է մեր հայրենիքը և իր լրջմիտ աշխատասիրության կպարտի իր այսօրվան հրաշալի վերելքը: Ձեր հանգիստի ժամերուն, աշնանավերջի ու ձմրան երկարաձիգ դիշերներուն,

ուրախացե՛ք, բայց աշխատանքի ձեր ժամերուն ձեր կարելի են ավելին ըրե՛ք, ու այդ թող ըլլա ձեր վարձքը:

Ամիսներն ի վեր մետաղե ողորմելի տաշտերու մեջ Միջերկրականի նավահանգիստներն դեպի իրենց հայրենիքը երթալու համար տառապալից օրեր անցրելով ռափառական Հրեայա-ին միշտ թափառական սերունդը կմոտենա իր հայրենի ծովափներուն ու չի կրնար ցամաք ելել ու խառնուիլ իր ցեղի հարադատներուն: Բայց դո՛ւք, իմ սիրելի ու հայրենասեր զավակներ, դուք հոյակապ նավերով ահա պիտի կտրեք հաջորդական լորս-հիմզ ծովեր ու նույնքան նեղուց ու ջրանցքներ, երթալ հասնելու ձեր պաշտելի, ձեր երազած հայրենիքին, ուր ատելություն չկա, ուր նախանձ ու ռիսակալություն չկա, ուր մանավանդ մենաստիքություն չկա: Լրջությամբ ու կարգապահությամբ աշխատեցե՛ք ու շուտով պիտի վայելեք ձեր լրջմիտ աշխատության բարիքները:

Գնացե՛ք սիրով ու խաղաղությամբ ու զրնացե՛ք մանավանդ երախտագետ սրտով դեպի սքանչելի Ֆրանսան, որուն հետ սիրով բաժնեցիք անոր տաղնապներն ու անձկություններն ու անոր հետ կողք կողքի կռուեցաք իր ազատագրությանը համար և պատվուհեցանք: Նմանապես երախտագետ եղեք այս երկիրը թողած ձեր հայ եղբայր ու քույրերուն, որոնց հետ տարիներով բարեկամներով ապրեցանք, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, որ գլուխացուց դեպի հայրենիք ձեր դարձր, ներգաղթի Հանգանակիչ կեդրոնական Հանձնաժողովին ու իր մասնաճյուղերուն, ներգաղթի Գործադիր Մարմնուն և իր մասնաճյուղերուն, Հայ Տիկնանք Բարեսիրական Միություններուն և Ֆրանսահայ մամուլին: Երթալք բարյալ, իմ ազոթքներս ձեզի հետ, վաղվա ազատ քաղաքացիները խորհրդային Հայաստանի:

22 հոգոստոս 1947 թ.

ԿՈՉ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ

Գերաշնորհ և Արժանաշնորհ Հոգևորական Պաշտոնից
Պատուարժան Հոգաբարձությանց և
Սիրելի ու Պատուական մեր Հայ ժողովրդյան, ողջույն

Ամերիկայի Հայությունը անցյալ տարի ի Հայրենիս վերադարձի սրբազան գործին օժանդակելու նպատակով հաջողությամբ պսակեց մեկ միլիոն տոլարի հանգանակու-

թյունը, որուն ձեռնարկեց Հ. Բ. Ը. Միությունը և որուն ձեռնտու եղան մեր եկեղեցական մարմինները և ուրիշ ամեն հայրենասիրական կազմակերպություններ:

Այս տարի դարձյալ կարավաններ իրա-
րու հետեւ կուղարկվին դեպի Հայաստան,
նորեն Հ. Բ. Ը. Միութիւնը կձեռնարկէ
հանգանակության կրկնելու համար անցյալ
տարվան գեղեցիկ հաջողութիւնը։ Ուստի
կհորդորենք ամենքդ, որ այս տարի ևս,
սուրբ գործին համապատասխան խանդա-
վառութեամբ և արդյունավորութեամբ, ձեր
կարելիքն ընեք առաջադրված գումարը գո-
յացնելու առատածեռն նվիրատւութիւններ
բով։

Դարձեալ մեծ ուրախութիւն է մեզ տես-
նել թե ամերիկահայերու ալ կուղարկվի
հրավեր խառնվելու ճերգաղթի թափորին։
Հայրենիքը կկանչէ անխտիր իր բոլոր այն
զավակները, որոնք կրնան դառնալ իր գիր-
կը, բոլոր այն Հայերը, որոնք կցանկան
ծիլի ու ծաղկիլ իր ծոցին մեջ, աշխատիլ ու
տքնիլ Հայաստանի բարգաւաճման համար։

Երթալ կրցողները պիտի երթան, Իսկ այն
ստվար զանգվածն ալ, որ պիտի մնա այս
երկրին մեջ, պետք է հաստատուն վճռակա-
նութեամբ առաջելագունի բարձրացնել իր

Ազգին և Եկեղեցիին նվիրված հավատարմ
ծառայութիւնը։

Պ. Ա. Շահնազարյան, Նոր Հայաստանի
զավակներն պատուական ներկայացուցիչ
մը, Հայկական իշխանության կողմէ նշա-
նակված է հառաջ տանելու Ամերիկային
հազար անձերու ներգաղթի գործը, և ձեռ-
նարկելու կարավաններու կազմության և
ուղեորության աշխատանքներուն, Այս նը-
պատակով պիտի այցելի ան Միացյալ Նա-
հանգաց հայաշատ քաղաքները, կհորդորենք
պատկան մարմինները տալ իրեն հարկ ե-
լած ամեն աջակցութիւն։

Կօրհնենք Ամերիկային ներգաղթի սրբա-
զան գործը, և լիակատար հաջողութիւն կը-
ցանկանք Պ. Շահնազարյանին, Կհանձ-
նարարենք, որ անոնք, որ կարող են երթալ
Հայաստանի վերելքի գործին իրենց կարելի
բաժինը բերելու, չվարանին բնավ գերա-
զանցապես հայրենասիրական այդ քայլն
առնելու, Կհավատանք, որ քրիստոնեական,
հայրենասիրական և միաժամանակ մարդա-
սիրական գործ է Հայաստանի մեջ Հայաս-
տանի համար գործի զծովը։

Մաղթելով ձեզ ամենուր հաջողութիւն ձեր բարի և աստուածահաճո գործոց մեջ ։

Մնամք աչլոթալդալ ի Տեր

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ



ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ԻՑ

ՆՅՈՒ-ՅՈՒՐ, 31 հոկտեմբերի (ՏՄՍՍ). — Միացյալ Նահանգներում գտնվող հայկական դադուքը մեծ ու բերկրալից իրադարձություն է ապրում։ Սկսվել է հայ տարագիրների վերադարձը դեպի հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Թուրքական կառավարության արյունալի քաղաքականությունը հետևանքով իրենց հայրենիքը կորցրած հարյուր հազարավոր հայերի համար միշտ ամենաբաղձալի իղձն է եղել վերադառնալ Սովետական Հայաստան։ Սովետական կառավարությունը բնառաջից այդ թշվառ մարդկանց և այժմ այդ իղձը գարձել է իրականություն։ Սովետական «Ռոսսիա» շերմանավով Սովետական Հայաստան է մեկնում 150 մարդուց բաղկացած հայերի առաջին խումբը։ Մոտ հազար ուրիշ հայեր անհամբեր սպասում են ուղևորվելու Հայրենադարձների մեջ են բանվորներ, ֆերմերներ և ինտելիգենտներ։

Մենք հայերս, վերջապես ձեռք բերեցինք մեր երջանկությունը, — ասաց առաջին խմբի հետ վերադարձող հասակավոր բանվոր Նշան Փայակյանը։ — Մենք այժմ ունենք հայրենիք՝ Սովետական Հայաստանը, որտեղ աշխատավոր մարդուն այնքան ազատ և հեշտ է ապրել, — ձեռք մինչ այդ մենք իսկական կյանք չունեինք, — պատմում է Փայակյանը։ — Ավելի քան 30 տարի առաջ ես փոխա Ամերիկա, փրկվելով Թուրքերի կազմակերպած կոտորածից։ Միացյալ Նահանգներում ապրում էի կիսաքաղց վիճակում։ Ըզնաթամի ժամանակ

ավելի քան երեք տարի անդործ էի։ Այն սարսափելի տարիներին մեռավ կինս, միջոցներ չունեի բուժման ու սննդի համար, երբ նա հիվանդացավ։ Միայն այժմ իմ ընտանիքը կարող է հայրենիքում ստեղծել երջանիկ նոր կյանք։ Դրա համար մենք՝ հայերս, ամենից առաջ պարտական ենք բոլոր աշխատավորների մեծ առաջնորդներ Լենինին և Ստալինին։

Կալիֆորնիայի ֆերմեր Զաքար Սվաթյանը պատմում է. «Գալով Ամերիկա, ինձ համար դժվար եղավ աշխատանք գտնել։ Մի տնտեսատեր, որպես վարձակալության պայման, ինձ առաջարկեց հրաժարվել հայ անունից և այն փոխարինել անգլիականով։ Սեփական տնտեսություն ստեղծելու փորձերս վեց անգամ ձախողվեցին խոշոր ձեռնարկատերերի մրցակցության հետևանքով։ Երբ բացվեց հայրենադարձության հնարավորությունը, ես վաճառեցի իմ ֆերման և ուրախությամբ վերադառնում եմ հայրենիք, ես կգործադրեմ բոլոր ջանքերս, գիտելիքներս ու կենսափորձս, որպեսզի լինեմ Սովետական Հայաստանի օգտակար քաղաքացի և այդպիսով կատարեմ պարտքս իմ նոր ձեռք բերած հայրենիքի հանդեպ։

Տնայնագործ Պողոս Հարությունյանը ասաց. «Եմ պարծելում եմ վերածնված Հայաստանով և երջանիկ եմ, որ իմ երեխաները այնտեղ կսկսեն իրենց նոր կյանքը, որպես ազատ ու լիիրավ քաղաքացիներ»։



ԲԱԹՈՒՄԻ, 20 նոյեմբերի. — Նրեանի «Եւմոնիստ» թերթի հատուկ թղթակիցը նոյեմբերի 20-ին ռադիոյի միջոցով կապվեց սովետական մարդատար «Ռոսսիա» շերմանալի կապիտան Էլիզբար Շարանովիչ Գոգիտիձեի հետ, որը հաղորդեց.

— Նյու-Յորքից ճանապարհով եմ նոյեմբերի 1-ին Նավահանգստում շատ հայեր էին

հավաքվել, որոնք եկել էին ողջերթ մաղթելու հայրենիք՝ Սովետական Հայաստան մեկնող իրենց արյունակից եղբայրներին ու քույրերին։

Բարեհաջող կերպով անցանք օվկիանոսի վրայով և նոյեմբերի 12-ին, չվացուցակի համաձայն, խարխալ նետեցինք Մարտիկի նավահանգստում։

Հստ չվացուցակի ուղևորվելով, նոյեմբերի 14-ին հասանք Նեապոլ։ Բոլոր ուղևորները դիտեցին Նեապոլի տեսարժան տեղերը։ Նոյեմբերի 19-ին, ժամը 19-ին դուրս եկանք Հալֆայից, ուր հայերի հայրենադարձության տեղական Հայկական կոմիտեի ներկայացուցիչները ողջունեցին նյու-Յորքից եկած ու հայրենի երկիրը վերադարձող իրենց հայրենակիցներին։

Նկվորների մեջ կան զանազան մասնագիտության տեր անձինք—բժիշկներ, ուսուցիչներ, ուսանողներ, դերձակներ, հյուաններ, հողագործներ։ Նավի տախտակամածի վրա անսովոր խանդավառություն է տիրում։

Բոլորն էլ առողջ են, շտապում ենք հայրենիք։



ՐԱԹՈՒՍԻ, 24 նոյեմբերի.— Այսօր ժողովրդականության մեծ շեղմանով Քաթոլիկ ժամանեց հայրենադարձ հայերի առաջին խումբը ԱՄՆ-ից, Նկվորները— 151 մարդ.— երկար տարիներ թափառել են օտարության մեջ, քաղաքից քաղաք, երկրից երկիր տեղափոխվելով, նվաճած միայն նրանք զապարել են թափառաշրջիկ լինել, զառնալով սովետական իրավահավասար քաղաքացիներ, Հայրենիքն այսօր ջերմ կերպով հանդի-

պում է իր նոր քաղաքացիներին— հայ մտղավոր դրդիներին ու դուստրներին։

Միտենի հայրենակիցներին հանդիպեցին— Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի կողմից՝ Բ. Ա. Նիրսիսյանը, Հայկական ՍՍՌ Արտաքին գործոց մինիստր Գ. Ա. Հովհաննիսյանը, արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ներկայացուցիչները, թերթերի թղթակիցները և ուրիշները։



Դեկտեմբերի մեկին Երևան ժամանեց ամերիկահայերին Երևան բերող հատուկ մարդատար գնացքը։ Կայարանում այդ առթիվ կազմակերպված միտինգը բաց արեց Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի նախագահ ընկ. Ե. Վարդանյանը, որը մայրաքաղաքի աշխատավորության անուանից շնորհավորեց և ողջունեց ամերիկահայերի գալուստը հայրենիք՝ Սովետական Հայաստան։

Միտինգում ամենուրեք լսվում էին բացականչություններ. «Փառք Մեծ Ստալինին», «Թող երկաթ ապրի ընկեր Ստալինը...»

Երևանի և Արարկիորի աշխատավորության անուանից ժամանողներին ողջունեցին ընկ. ընկ. Վարդանյանը և ինքիբեկյանը։

Սրտագին պատասխան ելույթ ունեցավ Ամերիկայում ներգաղթին օգնող հանձնաժո-

ղովի քարտուղար դոկտոր Բնակունին։ Նա ասաց.

— Մեր, պանդուխտներին թողած երբեմնի Հայաստանը երբեք նման չէ այսօրվա Սովետական Հայաստանին։ Միայն Հեկտեմբերյան Մեծ Ռևոլյուցիայի, լենինի-Ստալինի մեծ պարտիայի և ռուս ժողովրդի հղբայրական օգնության շնորհիվ էր, որ Հայաստանը հասավ այս լուսավոր օրվան։

Կեցցե Սովետական Մեծ Միությունը, աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդների լուսատու փարոսը։ Երկար կյանք ընկեր Ստալինին։

Միտինգից հետո հայրենադարձ հայերը մեկնեցին իրենց համար նախապես պատրաստված բնակարանները։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՆՈՐ ԽՄԲԵՐԻ ԺԱՄՆՈՒՄ

ՐԱԹՈՒՄԻ, 4 նոյեմբերի (ՀՀԳ-ի հատ. թղթ.). «Պորեբա շեղմանով Քեյրուքից և Հալֆայից Քաթոլիկ ժամանեցին արտասահ-

մառից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի նոր խմբեր։ Հնդամենը ժամանել է 3910 մարդ։



Նոյեմբերի 20-ին հատուկ գնացքով Երևան ժամանեց Միտինգի ու Լիբանանից ներգաղթող հայերի վերջին քարավանի առաջին խումբը։ Երկու օր առաջ էլ ժամանել էին

Հալֆայից (Պաղեստին) ներգաղթած հայերը։ Հայրենադարձներին դիմավորեցին ներգաղթի կոմիտեի և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները։

ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ

Աթենք, 17 նոյեմբերի (ՏՄՍՍ).— Ձուկոտկան ջերմանավով Սովետական Հայաստանում ուղևորվեցին 1.837 հայեր: Ընդամենը հայրենադարձության սկզբից սկսած Հայաստան են ուղևորվել մոտ 18 հազար մարդ, որ կազմում է Հունաստանում ապրող ամբողջ հայ ազգաբնակչության երկու երրորդ մասը:

Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր: Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր: Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր:



ԲԱԹՈՒՄԻ, 20 նոյեմբերի.— Այսօր Ձուկոտկան ջերմանավով ժամանեց Հունաստանից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերի մի նոր խումբ: Ժամանել են ընդամենը 1837 մարդ: Դրանք գլխավորապես Աթենք և Պիրեյ քաղաքների նախկին բնակիչներ են:

Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր: Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր: Երևանից հայրենադարձության ճանապարհը հայերի համար անհեշտ էր:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԻՆՖԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՍԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՐԻԶ, 21 դեկտեմբերի (ՏՄՍՍ).— Իսպանիա հայտնի է, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության թույլատրությամբ 1200 հայեր մեկնելու վիզաներ էին ստացել և հայրենիք վերադառնալու համար հավաքվել էին Մարսելում, որտեղ այդ նպատակով ուղարկվել էր սովետական Պորեդան շոգենավը: Մակայն Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրության կարգադրությամբ Ֆրանսիայից մեկնելու թույլ է տրվել հայրենադարձ հայերի միայն կես մասին, իսկ մնացած 600 մարդուն շեն թույլատրել մեկնել Ֆրանսիայից: Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության այդ կամայականությունը, որը կոպտորեն խախտում է ՍՍԽՄ-ի կառավարության և ֆրանսիական կառավարության միջև Ֆրանսիայից հայերին հայրենիք վերադարձնելու շուրջը առաջուց կայացած համաձայնագիրը, խորին զայրույթ առաջացրեց հայրենադարձների մեջ:

Սովետական կառավարությունը ֆրանսիական կառավարության ուղադրությունը հրավիրեց հայրենադարձ հայերի վերաբերմամբ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության ձեռնարկած վերոհիշյալ գործողությունների արժիվ, պնդելով որ Մարսելի ֆրանսիական իշխանություններին անհապաղ


ցուցումներ տրվեն, որ նրանք խոչընդոտ չհանդիսանան ֆրանսիական մեկնելու վիզա ստացած բոլոր հայերի ուղևորմանը դեպի Սովետական Միություն:

ՓԱՐԻԶ, 11 դեկտեմբերի (ՏՄՍՍ).— Մարսելից ժամանածները հաղորդում են ֆրանսիական իշխանությունների նոր քմահաճության մասին Սովետական Հայաստան: մեկնելուց անկացող հայերի նկատմամբ:

Ներկայումս Մարսելում են գտնվում 400 հայ ընտանիք, որոնք նախօրոք ստացված համապատասխան թույլտվության համաձայն այստեղ են հավաքվել Ֆրանսիայի բոլոր ծայրերից և սպասում են Պորեդան շոգենավը նստելու, որը պետք է նրանց հասցնի սովետական նավահանգիստները:

Մակայն, այժմ ֆրանսիական իշխանությունները շմերժելով ծնողներին Ֆրանսիայից մեկնելու թույլտվություն տալը, շեն տալիս այդ թույլտվությունը նրանց անչափահաս երեխաներին:

Դեմոկրատական հասարակայնությունը վրդովված է, իրենց նպատակներին հասնելու համար ծնողական զգացմունքների նողկալի սպեկուլացիայի առաջ կանգ չառնող բուրժուազարի հերոսներին այդ անմարդկային արարքների համար:



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻՆՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1947 թվի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ-ի շրջանային, բազային, գյուղական և արվանային Սովետների ընտրությունները:

Դեկտեմբերի 21-ը համաժողովրդական տոնական օր հանդիսացավ Հայաստանի աշխատավորության համար:

Հայաստանի աշխատավորությունը ընտրությունների օրը դիմավորեց արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու արվեստի ընդգնացողներով՝ ձեռք բերած մեծագույն նվաճումներով:

Փառալուր ու հոյակապ են այդ նվաճումները: Գործող ձեռնարկների շարքն էին անցել մի շարք նոր գործարաններ, ֆաբրիկաներ ու արտադրական ձեռնարկներ: Բերքատվության բարձր ցուցանիշների էր հասել գյուղատնտեսությունը: Հայաստանի գրեթե բոլոր վայրերում վեհոքեն վեր էին խոյացել հետպատերազմյան հնգամյակի հոյակապ նորակառույցների երկնամարտ աշտարակները, նորակառույցներ, որոնք վաղը էլ ավելի պիտի խթանեն Հայաստանի արդյունաբերության հարաճուն վերելքը: Այդ նորակառույցների մեջ մանիկց առաջ աչքին են դարձում պղնձա-մոլիբդենային կոմբինատը, որը Հայաստանում մոլիբդեն արտադրող առաջին ձեռնարկությունն է հանդիսանալու (մոլիբդենն անհրաժեշտ է բարձրորակ պողպատի ստացման համար), ալյումինիումի խողոր գործարանը, հրակայուն աղյուսի գործարանը, նուրբ մահուդի մեծ գործարանը, որն արտադրելու է բարձրորակ բրդյա գործվածքներ— տրիկո, շվյուտ, ինդիկո և այլն ու ուրիշ շատ նորակառույցներ:

Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության համար մեծ կարևորություն է ներկայացնում հիդրոէլեկտրակայանների շինարարությունը. նոր հնգամյակի նորակառույցների շարքում կան երկու հիդրոէլեկտրակայաններ, որոնց լրիվ շահագործման հանձնվելուց հետո Հայաստանը 2,5—3 մե-

գամ ավելի էլեկտրական էներգիա կստանա. քան նա ստանում է այժմ: Այսպիսի էներգետիկ բազայի առկայության պայմաններում հնարավոր կլինի ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքը ավելացնել առնվազը երեք անգամ: Բայց էլեկտրական էներգիայի առկայությունը ոչ միայն խթանելու է արդյունաբերության հարաճույն վերելքը, արդյունաբերական նոր ճյուղերի առաջացումը, այլ և նա վճռելու է կրթարտության լայնածավալ դաշտի հազարավոր հեկտար անջրդի հողերի չքառոտման հրատապ խնդիրները:

Ահա այսպիսի սիւյլուն հեռանկարներով ոգեշնչված նոր հնգամյակի նորակառույցների շինարարները դեկտեմբերի 21-ին քվեատույիներին մոտեցան:

Սակայն ոչ միայն նորակառույցների և արդյունաբերական հին օջախների աշխատավորները, այլև ռեսպուբլիկայի շրջանների աշխատավորները մեծագույն նվաճումներով դիմավորեցին դեկտեմբերի 21-ը: Հայաստանի տասնյակ շրջաններից վերցնենք թեկուզ Բերիայի անվան և Հոկտեմբերյանի շրջանները: Սովետական իշխանության տարիներին տնտեսական ու կուլտուրական վերելքի ուղիով են ընթացել այս երկու շրջանները: Սրանցից առաջինն ունի վեց արդյունաբերական ձեռնարկություն, դրանց թվում Շահումյանի անվան Մետաքսագործվածքային ֆաբրիկան, որն ընթացիկ տարում տվել է 600 հազար մետր մետաքսյա գործվածքներ: Թե շրջկենտրոնը և թե շրջանի գյուղերի մեծ մասը ունեն էլեկտրալուսավորություն, իսկ նոր հնգամյակի տարիներին շրջանի բոլոր գյուղերի կոլխոզնիկների ընակարաններում պայծառորեն կվաճեն էլեկտրալամպերը: Շրջանի բոլոր հիմնարկ-ձեռնարկները և գյուղերը միմյանց հետ կապված են հեռախոսային ցանցով, գյուղերում գործում են ռադիոարձարխոս-

Եւր, իսկ շրջկենտրոնն ունի ուղիւհաղորդման հանգույց: Շրջանում գործում են 14 դպրոց, որոնցից 7-ը՝ միջնակարգ, 14 ակումբ և 7 գրադարան: Շրջանն ունի հիվանդանոց՝ 30 մահճակալով և ծննդատուն: Շրջանում գործում են շրջանային պետական թատրոնը, 7 կինոթատրոններ, մեկ շրջիկ կինոթատրոն և թատերական, ժողգործիքների, նրգի ու պարի 19 ինքնագործ խմբակներ: Այժմ անդրադառնանք Հոկտեմբերյանի շրջանին: Տարիներ առաջ այստեղ ձգվում էր Մարդարապատի ջրագուրկ, ռճառատ ու անհրապույր անապատը: Սովետական մարդկանց հերոսական ջանքերի շնորհիվ Արաքսի ջրերը ցնձենտակուտ ջրանցքներով հորդեցին դեպի Մարդարապատի անապատը և նա վերածվեց ծաղկուն բուրաստանի: Հազարավոր հեկտար տարածություններ, ծածկվեցին ծառաստաններով, ոսկեոդկույզ խաղողի, մեղրաճուղ դեղձի, ծիրանի, կարմրաթուշ խնձորի և այլ պտուղների ժպտուն այգիներով: Մարդարապատի ջրանցքի կառուցման վրա սովետական կառավարությունը ծախսել է 7 միլիոն ուրուլի: այդ հսկա ջրանցքի հիմնական ցանցը միայն կազմում է 550 կիլոմետր: ավելի քան 18 հազար հեկտար տարածություն ներկայումս ծածկվել է բամբակի, խորդենու, կերաբույսերի, բանջարեղենի ցանքերով և խաղողի ու պտղատու փաթեմ այգիներով: Նախկին անապատում ներկայումս ծաղկում են վեց սովխոզներ՝ իրենց հիասքանչ բանվորական ավաններով: Այս պտղաբուծական խոշոր սովխոզներում կիրառվում է դուրդատնտեսական առաջավոր տեխնիկա, այգիների բուծումը կատարվում է ինքնաթիռներից արվող սրովումենտով, իսկ դեռնի վրա գործում են խոշոր «Վուլկան» մեքենաները, որոնցից յուրաքանչյուրը 100 մետր լայնությամբ բուծանյութի անձրև է տեղում ծառերի վրա: այստեղ աշխատանքները լրիվ մեքենայացված են, իսկ ծառերի խնամքը տարվում է սպորտտեխնիկայի վերջին խոսքով: Մի քանի սառնյակ գյուղատնտեսներ են աշխատում այս առաջավոր սովխոզներում: Արագ թափով զարգանում է նաև շրջկենտրոն Հոկտեմբերյանը: Հայաստանի այս երկրասարգ քաղաքը, որ կրում է Մեծ Հոկտեմբերի անունը, ընդամենը 15 տարվա պատմություն ունի: Այժմ Հոկտեմբերյանն ունի 800 շենք, որից 70-ը բաղմահարկ, ունի դպրոցներ, գրադարաններ, ակումբներ, թատրոն, կինոթատրոն, տպարան, լրագիր, ռադիոհաճագույց, բուժարան, հիվանդանոց, ծննդատուն, ջրմուղ և այլ կուլտուր-կենցաղային սպասարկման հիմնարկ-ձեռնարկներ: Հոկտեմբերյանում հսկայական տարածու-

թյան վրա քարձրանում են կոնսերվի խոշորագույն գործարանի կորպուսները: Այս գործարանի լիակատար կառուցումն ավարտվելու է նոր հնգամյակի վերջում, որի հետևանքով նրա արտադրական կարողությունն ու արտադրանքը կաճի քսան անգամ: Հոկտեմբերյանի շրջանը համարվում է բամբակի, խորդենու, խաղողի և բաղմատեսակ ընտիր մրգերի արտադրության շրջան: Բացի բամբակազտիչ գործարանից, Հոկտեմբերյանի շրջանում գործում են դինու գործարաններ: Նրանք ունի երկու մեքենա-տրակտորային կայան: Նրանում գործում են 10 միջնակարգ, 19 ու-լրիվ միջնակարգ և 7 տարբական դպրոց ու մեկ գյուղատնտեսական տեխնիկում: շրջանի 373 ուսուցիչներից 80-ը ունեն բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն, իսկ մնացածները միջնակարգ մանկավարժական կրթություն: Շրջանում գործում են 36 ակումբ՝ իրենց դրադարան-ընթերցարաններով, հինգ ստացիոնար և մեկ շրջիկ կինոթատրոն, մեկ պետական թատրոն, 7 տրուպկայան, մեկ բուժարան՝ իր վիրաբուժական, ակնաբուժական, թերապևտիկ և այլ բաժիններով, ու երկու մանկական հիվանդանոց: Շրջանում աշխատում են 26 բժիշկ և միջին բժշկական անձնակազմի 72 աշխատողներ: Հոկտեմբերյանում լույս է տեսնում նաև իր շրջանային թերթը:

Այսպիսի և ավելի հոյակապ պատկեր ունեն նաև ռեսպուբլիկայի մի քանի տառնյակի հասնող մյուս շրջանները:

Անճանաչելիորեն փոխվել է և հայ գյուղի պատկերը: անցյալի հայ գրականությունից ծանոթ հայ գյուղը գոյություն չունի այժև: Հսկայաքայլ առաջ է ընթացել նա գիտության ու կուլտուրայի լուսապայծառ ուղիով: Ահա ձեզ օրինակ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղը: Ներկայումս այս գյուղում աշխատում են քարձրագույն կրթություն ունեցող մոտ քառասուն մարդ— ուսուցիչներ, բժիշկներ, գյուղատնտեսներ, անասնաբույժներ, ինժեներներ: Այս գյուղում միայն 25 ուսուցիչ է աշխատում: կուլադի բուրդ բրիգադիսիրն ու օդակավարները անխտիր միջնակարգ կրթություն ունեն: գյուղում արդեն շորորդ տարին է, ինչ գործում է դիշերային միջնակարգ դպրոց, ուր ներկայումս սովորում են 70 կուլտուրիկներ: գյուղացիներն իրենց առաջ խնդիր են դրել, որպեսզի յուրաքանչյուր լափահաս քաղաքացի պարտադիր կերպով միջնակարգ կրթություն ունենա: Գյուղում մի քանի անդրադետ մարդ կա միայն, դրանք էլ հայրենի վերադարձած մեր եղբայրներն ու բույրերն

են, որոնք օտար «կուլտուրական» երկրներում գրկված են եղել իրենց անդրազդիտությանը վերադարձնելու հնարավորությունից։ Ներկայումս հայրենադարձները արագորեն վերադառնում են իրենց անգրագիտությունը նրանց համար կազմակերպված անգրագիտության վերացման հատուկ խմբակներում։ Հայ կինը սնցյալի գյուղում իրավագուրկ ու անգրագետ է եղել, սակայն փոխվել է այժմ պատկերը, նա ոչ միայն իրավագուրկ ու անգրագետ չէ, այլև ակտիվորեն մասնակցում է հասարակական կյանքին։ Բացի ներառից, որ Ոսկեվազի բարձրագույն կրթություն ունեցող ինտելիգենցիայի մի մասը կանայք են կազմում, այստեղ թե գյուղատնտեսի նախագահն է կին, և թե կոլխոզի նախագահը։ Անցել է անդարձ այն ժամանակը, երբ հայ գրողը դանդաղում էր, որ «ճարագույն հայ գրքին, հայ մուշտարի շնո ճար»։ Գյուղում մեծ է գրականության պահանջը, ստացված գրքերը արագորեն ձեռքից ձեռք են անցնում։ Ոսկեվազը ցանկություն է հայտնում գյուղում գրախանութ բաց անելու։ Այստեղ մենք կանգ լառանք այս դեռի գյուղատնտեսության մեթոնայացման, ագրոտեխնիկայի կիրառման, կուլտուրայուսավորական հիմնարկների աշխատանքի, գյուղի բարեշին ու բարեկարգ վիճակի, կոլխոզնիկների կուլտուրական նիստ ու կացի և կոլխոզային լիառատ, ունևոր նյութի խթնդիրների վրա։

Սակայն Ոսկեվազը երջանիկ ռաքսառություն չի կազմում, նա ռեսպուբլիկայի նմանատիպ գյուղերից մեկն է հանդիսանում։

Դեկտեմբերի 21-ը ամհուն բերկրությամբ ու խանդավառությամբ դիմադրողին նաև անցյալ ու այս տարում հայրենիք ժամանած մեր հայրենադարձ ճղբայրներն ու քույրերը։ Այս տարի ժամանածները առաջին անգամ բախտ ունեցան, որպես սովետական լիբրավ քաղաքացիներ, հայրենի հողի վրա մասնակցելու տեղական Սովետների ընտրություններին։ Նրանցից շատ շատերը, որոնք օտար ու անհարազատ երկնակամարի տակ իրավազուրկ ապաքաղաքացու վիճակում դեզերել են տարիներ շարունակ, այսօր իրենց հայրենիքում արժանացել են աշխատավորների տեղական Սովետների ղեպուտատ ընտրվելու բարձր պատվին։ Միայն նրանք քաղաքում ղեպուտատ են ընտրվել 35 հայրենադարձ, դրանց թվում պրոֆեսոր-դոկտոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը, Հրանտ Դեմիշյանը, Ժիրայր Միմոնյանը, Հակոբ Բաբայանը, Վահան Դադեայանը, Ազատ Աղաճյանը, Մելինե Մանուշյանը, Հովհաննես Ղուկասյանը և ուրիշներ։ Լենինականում ղեպուտատ են ընտրվել 20 հայրենադարձ, Հարյուրավոր

հայրենադարձներ էլ տեղական Սովետների ղեպուտատ են ընտրվել։ Հայաստանի շրջակենտրոններում, քաղաքներում ու գյուղերում։ Ահա ինչ են գրում տեղական Սովետների ղեպուտատության թեկնածու առաջադրված հայրենադարձները։

«Ես այն հայերից մեկն եմ, — գրում է հայրենադարձ բժիշկ Գառնիկ Սահեյանը, — որոնք երջանիկ պատահականությամբ փրկվեցին կոտորածներից և սկսեցին քախու որոնել կապիտալի աշխարհում։

Երկար քափառումներեցի հետո ես հաստատվեցի Հունաստանում, 27 տարվա ընթացքում 3 անգամ, աշխատավորների կամքով, ես առաջադրվեցի պետական պաշտոնի, բայց 3 անգամն էլ հունական կառավարությունը մերժեց աշխատավորների պահանջը, որովհետև ես էլ աշխատավոր էի, հայ աշխատավոր, խորթ ու օտարական։

Ինչպես աշխարհով մեկ ցրված հայերը, արնպես էլ ես այդ անարգանքից ու նախատինքից ազատվելու միակ հույսը կապում էի իմ հայրենի երկրի՝ Սովետական Հայաստանի հետ։ Ստաբիլիտետ մեզ գտնվող հայերու շերտերին ընդունեցինք՝ մեծ Ստալինի կամքով Սովետական պետության ընդունած որոշումը հայերի ներգաղթ կազմակերպելու մասին։

Իմ հույսերը իրականացած են, վերադառնալով հայրենիք, անմիջապես անցա աշխատանքի և ինձ նվիրեցի ժողովրդական առողջապահության գործին։

Սովետական Հայաստանում ես տեսա ավելին, քան սպասում էի. տաքացա ավելի զգալուն վերաբերմունք, ավելի շատ վստահություն, քան կարելի էր հուսալու, ես թողա մենք մի քանի ամիս է, որ հայրենիքում եմ, և այդ կարճ ժամանակամիջոցում Ավիվերդի քաղաքի աշխատավորները արժանավուն կերպով զնահատեցին իմ աշխատանքը և ինձ առաջադրեցին քաղաքային Սովետի ղեպուտատության թեկնածու ես, որ օտարության մեջ իրավազուրկ էի, արհամարհված, այժմ պետք է մասնակցեմ քաղաքի կառավարմանը։ Սրանից մեծ պատիվ ես չեմ տեսել իմ կյանքում։ Եվ դա պարտավորեցնում է ինձ աշխատել ազնվորեն, արդարացնել ժողովրդի վստահությունը։

Վերա Ղամբարյանը գրում է. «Թուրքիայից փախչելով մեր ընտանիքը ընկալություն էր հաստատել Իրանի Թավրիզ քաղաքում։ Այնտեղ հայրս աշխատելով կալվածատիրոջ հողում, չէր կարողանում կերակրել ընտանիքը, կարիքն ու զրկանքը միշտ անբաժան էին մեզնից։

Ես, որ 1919 թվի ծնված եմ, մինչև 1946 թվի օգոստոս ամիսը աշխատանք չեմ գտել

Իրանում, երբ վերադարձա Իրանից և քնակություն հաստատեցի Ղափան քաղաքում, ինձ օգնեցին մասնագիտություն սովորել, իսկ այնուհետև նշանակեցի Ղափանի շրջապետական կի հսկիչ— հաշվապահ, Աշխատում են նաև հայրս, մայրս և քույրս:

Մեր սեփական աշխատանքով մենք այժմ ապրում ենք առանց կարիքի և օգտվում Ստալինյան Կոնստիտուցիայով սովետական քաղաքացիներին տրված բոլոր իրավունքներով:

Միայն իմ հարազատ հայրենիքում՝ Սովետական երկրում ստացա քաղաքացիական իրավունքներ և այժմ ես ոչ միայն կարող եմ ընտրել, այլ կարող եմ նաև ընտրվել, որպես լիիրավ քաղաքացի:

Ղափանի Զանգեզուրի հանքավայրային Շահումյանի անվան հանքերի բանվորները, ինձենքա-տեխնիկական աշխատողները, ինչպես նաև Շրջսովետի դործկոմի ֆինրաժետի, Պետրանիկի և խնայողամարկղի աշխատողների կուլեկտիվները ինձ առաջադրեցին աշխատավորների ղեկաւտատների Ղափանի Քաղաքային Սովետի ղեկաւտատության թեկնածու:

Նախկին իրավագուրկ կնոջ համար դա ամենամեծ իրավունքն է, աշխատավոր մարդու համար պատիվ ու հարգանք, որը կարող է լինել միայն Սովետների երկրում, Ստալինյան Կոնստիտուցիայի վառ արեւի տակ: Ես դժվարանում եմ բառեր գտնել արտահայտելու իմ սերն ու համակրանքը իմ ջերմորեն սիրելի հայրենիքի, մեր ազատարար հայր Ստալինի նկատմամբ: Ես ոչ մի քանի չեմ խնայի ղեպի ինձ ցուցաբերվող վստահությունն արդարացնելու համար:

Իսկ Արտաշատի շրջանի Դարդալու գյուղի հայրենադարձ կոլխոզնիկ Նարիման Միխայանի հետևյալն է գրում.— «Նրկար տարիներ թափառելով օտարության մեջ, ես չգտա արդարություն, ազատություն և օրվա շոր հաց, միշտ օտար էի, իրավագուրկ: Միայն Սովետական կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հայրական հոգատարության շնորհիվ վերադարձա սովետական Հայրենիք, որտեղ ինձ համար ստեղծվեցին ունեւոր ու երջանիկ կյանքի բոլոր պայմանները:

Հայրենիք վերադառնալուս առաջին իսկ օրվանից ես մտա կոլխոզ և սկսեցի աշխատել ինչքան որ ուժ ու եռանդ ունեմ, խորապես գիտակցելով, որ աշխատում եմ ի՛նձ համար, իմ Հայրենիքի է՛լ ավելի հզորացման ու բարգավաճման համար: Այս տարի իմ ընտանիքով վաստակեցի հազար աշխուր,

որի դիմաց արդեն, ստացել եմ 1.500 կիլոգրամ հացահատիկ, 2.500 կիլոգրամ խաղող, 700 կիլոգրամ շամիչ, 500 կիլոգրամ փշատ, 2 տոննա վառելանյութ, 25.000 ռուբլի կանխիկ դրամ, մեծ քանակությամբ յուղ, պանիր, մեղր և այլն: Սա սովետական առատությունն է, Այո, մեր երկրում առատություն է: Իրա լավագույն ապացույցը պարտիայի ու կառավարության պատմական ուղղումն է: Այն պահին, երբ կապիտալիստական երկրներում կրճատվում է աշխատավորների որապահիլը, մեր երկրում վերացվում է քարտային սիստեմը: Նյութական ապահովության հետ միասին այստեղ, իմ հայրենիքում ես դարձա սովետական իրավահավասար քաղաքացի, և օգտվում եմ Ստալինյան Կոնստիտուցիայով տրված բոլոր իրավունքներից: Մեր գյուղի աշխատավորներն իրենց նախընտրական ժողովում ինձ առաջադրեցին գյուղական Սովետի ղեկաւտատության թեկնածու: Ես խոսք եմ տալիս արդարացնել իմ ընտրույների վստահությունը և ծառայել նրանց շահերի համար:

Շնորհակալություն հայր Ստալինին, որ ինձ և ինձ նման հազարավոր պանդուխտներին շնորհեց հայրենիք, ազատ ու երջանիկ կյանք: Երբ Արեւիկի ու Այգաբացի կոլխոզնիկները իրենց նախընտրական ժողովում Թորոգոմ Գալստյանին առաջադրեցին Ախուրյանի Շրջանային Սովետի ղեկաւտատության թեկնածու, ապա հայրենադարձ դարձին, որը Հայրենիք էր վերադարձել 1946 թվին Հունաստանից, հայտարարեց. «Երբ ինձմ համաձայնություն կուզեք, խնդրեմ, ես համաձայն եմ: Ես կանեմ իմ ամենը, որոնցով ոգտակար կրնամ ըլլալ այն հայրենիքիս, իմ երկրիս, իմ սովետական Արեւիկիս»:

Այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել, որոնք ցույց են տալիս հայրենիքում հայրենադարձների նկատմամբ ցուցաբերվող անսահման հոգատարությունը, գոյությունը: Անհուն է հայրենադարձների երջանկությունը՝ հայրենիքում վայելած արտոնությունների, երջանիկ կյանքի կերտման հնարավորությունների ստեղծման համար. նրանք իրենց խորը երախտագիտական զգացմունքները արտահայտելու համար դժվարանում են բառեր գտնելու: Եվ իրավացի է նդիպտոսից վերջերս հայրենիք վերադարձած Հակոբ Արամյանը, որը գրում է.—

«Այնքան հորդառատ է մեր երջանկությունը, այնքան անշափ, որ մեզանից շատ շատերը դեռ չեն կարողանում լրիվ հասկանալ և ըմբռնել այն: Անհրաժեշտ է որոշ

ժամանակ, որպեսզի կարողանանք վարժվել մեր երջանկությանը»:

Դեկտեմբերի 21 էր:

Լույսը դեռ չէր բացվել, բայց Հայաստանի քաղաքներում, ավաններում ու գյուղերում արտասովոր եռուզեռ էր տիրում. մարդիկ խուժ-խուժ գնացի ընտրական տեղամասերն էին շտապում. Ամեն մեկն աշխատում էր առաջինը ինքը քվեատուփի մեջ իջեցրած լինել ընտրական թերթիկը: Սովետական երջանիկ մարդկանց խմբերը ընտրական տեղամաս էին գալիս երաժշտության ախորժարուհի հնչյունների տակ: Ընտրական տեղամասերում հավաքված ընտրողները մինչև քվեարկության սկսվելը երգում, նվագում ու սարում էին, ամենուրեք զիլ հնչում էր երջանիկ ընտրողների առույգ ու զվարթ ծիծաղը: Զափազանց շատ ընտրողներ էին հավաքվել մանավանդ այն տեղամասերում, որ քվեարկվում էին բուլճեիկների պարտիայի ու սովետական կառավարության առաջնորդներն ու ղեկավարները՝ հայ ժողովրդի մեծագույն բարեկամ ու ազատարար Ի. Վ. Ստալինը, հայ ժողովրդի հավատարիմ զավակ Ա. Ի. Միկոյանը, հայ ժողովրդի լավագույն բարեկամներ Վ. Մ. Մոլոտովը, Լ. Պ. Բերիան, Հայաստանի Կոմունիստական Կարտիայի ղեկավար Գր. Հարությունյանը, ՀՍՄԻ Փեթագուլն Սովետի նախագահության նախագահ Մ. Պապյանը և ուրիշներ: Առաջինը քվեարկելու բուռն ցանկությամբ նրանք բոլորն էլ անհամբեր սպասում էին քվեարկության սկզբին:

Ժամը 6 է:

Ընտրողները, երջանկության ժպիտը դեմքերին և հպարտ սովետական քաղաքացու կոշիկներով, մոտենում են քվեատուփերին. այդ պահին Հայաստանի բոլոր վայրերում միաժամանակ ընտրական տուփերի մեջ են իջեցվում առաջին ընտրական թերթիկները: Քվեարկությունը սկսված էր. Հայաստանի քաղաքներում, ավաններում, գյուղերում շարան-շարան քվեատուփերին էին մոտենում արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորները, պարտիայի ու կառավարության ղեկավար աշխատողները, նորակառույցների շինարարները, տրանսպորտի աշխատողները, գիտության ու արվեստի ակադեմիկոսները, հայրենիք վերադարձած հայերը, հոգևոր հայրերը... Քվեատուփերին էին մոտենում ընտրության հասակը բուրբառ երիտասարդները և սովետական կարգերում երիտասարդացած ծերերը: Երեանի քաղաքամերձ Կիրգա ավանի ընտրական

տեղամասն էր եկել մի քանի ամիս առաջ Միրիայից վերադարձած 198-ամյա Հովհաննես Բաղասյանը իր ընտանիքի յոթ անդամների՝ կնոջ, տղաների, աղջիկների ու հարսների հետ: Կիրգովկանում առաջինը քվեատուփին էր մոտեցել հայրենադարձ 94 տարեկան նախկին Բաբուրյանը, Զանգիբազում քվեարկելու առաջնությունը տրվել է 120-ամյա կոլխոզնիկ Արաս Ջումշուդյանին, Լուկասյանի շրջանի Սարագյուղում առավել տյան ժամը 4-ին ընտրական տեղամաս էր եկել 99-ամյա Ներսես Մանուկյանը, Ղարաբաղյարի շրջանի Ազիզբեյանի գյուղում լավ տեղը ձեռքին ընտրական տեղամաս էր եկել 132 տարեկան Ալավերդի Աբուլուզը, որի առաջինը քվեատուփի մեջ իջեցրեց ընտրական թերթիկը գուլյով. «Կեցցե մեծ Ստալինը, նա, որ մեզ համար երջանիկ ու ուրախ կյանք է ստեղծել: Ալագյազում քուրդ կոլխոզնիկուհի Շաքե Կոկչյանը առաջինը մոտենալով քվեատուփին առաջ. «Աշխարհում կա միտ 7 միլիոն քուրդ, նրանք ոչ միայն շունեն ձախի իրավունք, գիր ու գրականություն, այլև զազանաբար շահագործվում են օտարերկրյա կեղեքիչների և քուրդ բեկերի կողմից: Մեր լեռնային շրջանը մի փարոս է ամբողջ աշխարհի քրդերի համար: Իսկ Ամերիկայից վերջերս հայրենիք վերադարձած բժիշկ Մ. Բնակունին գրում է. —

«1947 թվականի դեկտեմբերի 21-ը, որ աշնանային պայծառ, արևով օծված մի գեղեցիկ օր էր, իմ վաթսուհամյա կյանքի ամենամանուշ և հիշատակարժան օրերի մեջ կմնա հավետ»:

Կյանքիս մեջ առաջին անգամ, որպես սովետական ազատ ու երջանիկ քաղաքացի, հայրենի սուրբ հողի վրա ընտրություններին մասնակցեցի այնպիսի եղբայրական ջերմ և անկեղծ մթնոլորտում, որի նմանը երբեք չեմ տեսել օտարերկրյա քաղաքացիության իմ ամբողջ կյանքում:

Արտասահմանյան ռեակցիոն թերթերում հաճախ կարդում էինք Սովետական Միության կարծեցյալ երկաթյա վարպետների առասպելի մասին: Այսօր մեր սեփական աչքերով տեսնում ենք, որ այդ երկաթյա վարպետը զուլայություն ունի ոչ թե Սովետական Միությունում, այլ արևմտյան այսպես կոչված զեմուկրատական երկրներում:

Սովետական իմ Հայրենիքում եռ տարում էի ընդամենը երեք շաբաթ և որպես սովետական լիիրավ քաղաքացի մասնակցեցի տեղական Սովետների ընտրություններին:

Իսկական ճշմարիտ դեմոկրատիան այսօր է, սովետական երկրում, որի քաղ. սրբային եմ այժմ:

Դեկտեմբերի 26-ին հրապարակվեց Հայկական ՍՍԻ Գերագույն Սովետի նախագահ

Կոմունիստների և անպարտիականների բոլոր թեկնածուների օգտին ձայն էր տվել քվեարկությանը մասնակցած ընտրողների 99,62 տոկոսը:

Տեղական բոլոր Սովետներում ընդամենը



Հայրենայարձ Արշակ Սալարյանի ընտանիքը Բվեարկելուց հետո դուրս է գալիս ընտրական տեղամասից: Ձախից աջ՝ Ա. Սալարյանի որդի՝ Կարապետը, դուստրը՝ Վրեժուհին, միջենի որդի՝ Նույարը, կինը՝ Հայկուհին, ինքը՝ Արշակ Սալարյանը, կրտսեր որդի՝ Զավենը, հարսը՝ Անմելը և ավագ որդի՝ Սմբատը՝ իր փոքրիկ Պետիկին գրկած:

Հոթյան հաղորդագրությամբ, ՀՍՍԻ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Սովետների ընտրությունների արդյունքների մասին, Զվեարկությանը մասնակցել էին ցուցակագրված ընտրողների 99,99 տոկոսը:

ընտրվել են 12.195 մարդ: Ընտրված դեպուտատների թվում կան 4.118 կին, որ կազմում է 33,77 տոկոսը, կոմպարտիայի անդամներ և թեկնածուներ 6.411 մարդ, որ կազմում է 52,57 տոկոսը և 5.784 անպարտիական, որ կազմում է 47,43 տոկոսը:

Վ.



ԳԻՏՆԱԿԱՆ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՍԱՐԳԻՍ ԽՈՐԱՍԱՆՅԱՆԻՆ

Մոսկվա, 30 մայիսի 1874 թ.

Սիրելի ու թանկագին Սերգեյ Դանիլովիչ^{*)}, վերջին անգամ մենք միմյանց հետ տեսնվել ենք 1848 թվին, այսինքն ճիշտ 25 տարի առաջ— քառորդ դար է, հեշտ է ասել: Ես, ինչպես տեսնում ես, դեռ կենդանի եմ, դու էլ, ինչպես լսում եմ, դեռ ողջ ես, փառք Աստուծոյ: Սրանից 25 տարի առաջ մենք միմյանց պատահեցինք, միտդ է, Միմֆերոպոլի հյուրանոցներից մեկում և մինչև լույս քեֆ արինք: Այն օրվանից ես երբեք չեմ դադարել հիշել քեզ ու հետաքրքրվել քո վիճակով ու դրությամբ, չգիտեմ դու ինչպես: Եվ որպես ապացույց, որ ես հիշում եմ քեզ, գրում եմ այս տողերը: Հնարավոր է, որ երբ տեսնես դրանք, կարմրես ու մի լուր, տեղեկություն տաս քո մասին: Փոքն մի երկու խոսք գրիր քո մասին, թե ինչ ես անում և ո՞րտեղ է քո բնակավայրը: Հաջորդ ձմեռը, եթե կենդանի մնամ, մտադիր եմ գալ ձեր կողմերը— հարավային ափերը, ծովում լողանալու հա-

մար. իսկ այս տարի ես կանցկացնեմ Կարլսբադում և մասամբ կթափառեմ Խոտլիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Ուղարկում եմ քեզ իմ գիտական երկերից մի քանիսը. դու արդյոք տեղեկություն ունե՞ս զբանց մասին: Ձեր կողմերում արդյոք հասկացողություն ունե՞ն, իհարկե, ուսյալ հայերի մասին է խոսքս, թե դրանց և թե Մոսկվայի ու Պետերբուրգի իմ եղբայրակիցների ձեռնարկած մյուս երկերի մասին: Առաջ դու այդպիսի բաներով հետաքրքրվում էիր, չգիտեմ այժմ ինչպես: Համենայն դեպս, ես հավատացած եմ, որ դու մի ակնարկ կձգես առաջդ դրված գրքույկների վրա ու կհիշես անցյալը, անդարձ անցած-գնացած անցյալը: Ավելին չեմ գրում, առաջին անգամվու համար այս էլ բավական է: (Ընդունիր իմ բարեկամական shake-hand-ը^{*)} և ողջ եղիր:

Քո էմին

Իմ հասցեն՝ Директору Московской

5-ой гимназии, Никите Осиповичу Эмину,

Մոսկվա, 26 օգոստոսի 1874 թ.

Իմ մանկության անգին ընկե՛ր, արտասահմանից վերադառնալով ես իմ մոտ գտա քո նամակը, որի վրա ոչ ամիսը և ոչ էլ՝ ամ-

սաթիվն էր նշանակված: Ես նամակը տեսնելով այնպես ուրախացա, ինչպես որ ուրախանում եմ տասնյակ տարիներից ի վեր շտեպած ընկերոջը հանդիպելիս: Հույս ունեմ, Սերգեյ Դանիլովիչ, որ այդ քո վերջին նամակը չի լինի: Ես գիտեմ, որ դու նամակագրության շատ էլ սեր լուռնես, բայց և այնպես վատ չէր լինի, եթե մենք երբեմն միմ-

^{*)} Սերգեյ Դանիլովիչը զրիմցի կալվածատեր հանդուցյալ Սարգիս Դանիլյան Խորասանյանն է, որը գիտնական Մկրտիչ Էմինի մանկության վաղեմի ու սիրելի ընկերն էր և վախճում էր նրա սերն ու հարգանքը: Խորասանյանը վախճանվել է խորը տերություն հասակում իր Բեշարան կոչված կալվածքում, Պերեկոպի մոտ:

^{*)} Shake-hand անգլերեն նշանակում է ձեռքի սեղմում:

երկար ժամանակ լուծվում պահպանեցի-
կա սակայն և մի երրորդ պատճառ, որ ինձ
ստիպեց այդքան հետաքննել քո նամակի պա-
տասխանը. ես կամենում էի միանգամից
ուղարկել քեզ և՛ նամակս և՛ այն գրքույկը^{*)},
որ սրա հետ միասին կատանա գու: Այս
գրքույկի հրատարակման պատճառը պրոֆե-
սոր Պատկանյանցի հոգովածն է, որի մասին
քեզ ասել է ex քահանան^{**)}, վերջինիս հորեղ-
բայրը, բայց շատ խորհրդավոր կերպով և
մեծ վարպետությամբ թագցրել է քեզին,
այն ինչ նա շտապել է այդ հոգովածը Տիգ-
րանյանին^{***}) ուղարկել: Պետք է ասեմ քեզ,
որ գրքույկս պիտի լույս տեսներ դեռ անցյալ
տարվա կիսին, որովհետև այն ժամանակ
նա արդեն տպագրված—ավարտված էր
վիեննայում, իմ այնտեղ գտնվածս ժամա-
նակ: Օգոստոսին գրքույկս վիեննայից ու-
ղարկվեց Ս. Պետերբուրգի գրաքննչական:
ատյանը, որը արգելք դրեց նրա վրա, ինչ-
պես մի հրատարակության, որը կարող էր
վարկաբեկել պրոֆեսորին ուսանողների ա-
ռաջ: Եիշտ է, իմ գրքույկի մեջ կային մի
քանի խիստ արտահայտություններ, որոնք
առաջ էին եկել Պատկանյանցի ամբողջ հոգ-
վածում տեղ գտած խիստ արտահայտու-
թյունների հետևանքով: Ասկայն գրաքննչա-
կան ատյանը ի նկատի չէր առել այս վերջին
հանգամանքը և արգելել էր գրքույկս հա-
սարակության մեջ տարածել: Ըս այս դեպ-
քում ստիպված եղա դիմելու օտպագրության
գործերի գլխավոր կառավարչությանը. ըս-

կըսվեց մի երկար գրադրություն, որ շարու-
նակվեց մինչև անցյալ տարվա վերջը և ոչ
մի դրական արդյունքի էլ չհասցրեց ինձ.
բացի նրանից, որ հաստատվեց գրաքննչա-
կան ատյանի որոշումը, Այսպիսի հանգա-
մանքներում ինձ մի բան էր մնում միայն
անել, գրքույկիցս դուրս ձգել խիստ արտա-
հայտությունները և այդ ձևով ներկայացնել
Մոսկվայի գրաքննչական ատյանին: Ինչպես
մտածել էի, այնպես էլ արի. ատյանը թույ-
լատրեց գրքույկիս տպագրությունը և ահա
հա այժմ քո առաջն է—կարդա՛ պարապ ժա-
մանակդ ու ասա, թե ի՞նչ տպավորություն է
թողնում նա քո վրան: Ըս ուզում էի, որ իմ
գրքույկս տպագրվի ու տարածվի հասարա-
կության մեջ, ոչ այնքան Պատկանյանցին ի
նկատի ունենալով, այլ այն նոր մեկնարա-
նությունների համար, որ ես արել եմ իմ
հարուցած խնդրի ավելի ևս նոր ապացույց-
ներով հաստատելու համար, թե Վահագն—
աստվածությունն է: Իմ գրքույկից ուղարկում
եմ մի քանի օրինակ— մեկը քեզ, մեկը
Տիգրանյանին, երրորդն էլ ուղարկիր Ալ-
թունջիին՝ Թեոդոսիա, — ես նրա հետ ծանո-
թացա անցյալ տարի Կարլսբադում, — և վեր-
ջպես մյուսները, ըստ քո բարեհայեցողու-
թյան, տուր նրանց. որոնք հետաքրքրվում են
այդ խնդրով:

Դու արդյոք ծանոթ ես Գաբրիել Այվազ-
յանի հետ. ի՞նչ է անում նա, ի՞նչ գրության
մեջ է հալիբյան դպրոցը, արդյոք գոյություն
ունի նա և ի՞նչ վիճակի մեջ է— գրի՛ր այդ
մասին: Ըս ու Գաբրիել Այվազյանը միմյանց
հետ ունեցած հարևանցի ծանոթությունից
հետո խզեցինք մեր բարեկամությունը. ես
նրա հետ ծանոթացել էի Մոսկվայում, ուր
նա մի քանի օր մնաց Թիֆլիսից դալուց հե-
տո: Ըս չգիտեմ, դու որևէ տեղեկություն ու-
նե՞ս այն աստվածաբանական վեճի մասին,
որ սրանից 10—12 տարի առաջ ծագել էր
մեր միջև՝ նրա քրիստոնեական վարդապե-
տարանի աթիվ^{*)}: Ըս այն ժամանակ գրել էի
ներքին գործոց նախարարին, թե հալիբյան
դպրոցի վերատեսչի հրատարակած ձեռնար-
կը իր մեջ պարունակում է ոչ թե՛ հայ-լու-
սավորչական եկեղեցու վարդապետությունը,
այլ հայ կաթողիկոսների, և այդ ապացույցի
էի նույն ձեռնարկից քաղված հատվածնե-
րով: Այդ հիմունքով ես պահանջել էի, որ

*) Այս գրքույկը, որ էմիլը հրատարակել էր
1874 թվին, ուղղված էր Պետերբուրգի համալսարանի
արևելյան բաժնի հայոց լեզվի պրոֆեսոր գիտնական
Փերովը: Պատկանյանցի դեմ. գրքույկի հրատարակ-
ման շարժառիթ էր ծնալով Պատկանյանցի հայտնի
կարծիքը Վահագնի մասին և Վահագնի հայտնի երգի
ոուսերեն թարգմանության առթիվ նրա արած նկա-
տողությունները: Գրքույկը կրում էր «ОТВЕТ НА
ВЗМЕЧАНИЯ ПАТКАНЯНА» վերնագիրը:
էմիլը իր կարծիքը Վահագնի, իբրև աստվածու-
թյան, մասին հայտնել էր մի առանձին գրքույկում,
որը կրում է «Вахагн—Вишалавах армянской
мифологии есть. Кндр. Вригвахан Ригведы» վեր-
նագիրը (1873 թ.):
**) Ex քահանան Սերովյան վարժապետի որդի
Տեր-Գաբրիել Պատկանյանցն է, որը համապատաս-
խան իշխանության կարգադրությամբ այդ ժամանակ-
ները քահանայագործելու իրավունքից զրկվել ու ու-
ղարկվել էր Պետերբուրգ: Տեր-Գաբրիելը Փերովյան
Պատկանյանցի հորեղբայրն էր:
***) Այստեղ հիշված Տիգրանյանը նոր նախնական-
քի Սարգիս Տիգրանյանն է, բարեգործ. Գևորգ Էիգ-
րանյանի եղբայրը, հալիբյան դպրոցի տեսուչը:

*) Նամակի մեջ հիշված կրոնի ձեռնարկը Գաբ-
րիել Այվազյանի «Վարդապետարանն» է, որ իր ժա-
մանակին տեղիք է տվել մեծ աշուպի: Մատթեոս
կաթողիկոսը նրա մեջ նկատված թերությունների հա-
մար արգելել էր նրա, իբրև կրոնի ձեռնարկի, օգտա-
դրումը դպրոցներում:

Գարրիել Ալվազյանի ձեռնարկը արգելվի, իբրև մի գիրք, որ հակասում է Հայաստանյայց եկեղեցու ոգուն: Նախարարի հետ սկզբված իմ այդ գրութային հետևանքը հղավ այն, որ հրամայեցին Ալվազյանին ժողովել արդեն տարածված օրինակները և այդ ձեռնարկով դպրոցներում բնավ չուսուցանել, կրոնը Այնուհետև, մի որոշ ժամանակ անց՝ նեղուց հետո, կարգադրվեց արձակել Ալվազյանին թե՛ դպրոցի վերատեսչի և թե՛ թեմի կառավարչի պաշտոններից^{*)}: Ահա այդ ժամանակվանից էլ նա իմ երգվյալ թշնամին է: Տիրաւայանի համար ուղարկում եմ Վահագնի մասին իմ դրած գրքույկից մի օրինակ: Երկու հոգիան են էլ, երբ հարմար կհամարես, կուղարկես նրան: Մնաս բարյալ սիրելի ընկեր. գրիր, երբ կամենաս, երբ ժամանակ կունենաս:

Փո էմին

Մոսկվա, 9 ապրիլի 1876 թ.

Սիրելի և թանկագին Սերգեյ Գանիլովիչ, ուղարկում եմ քեզ իմ մի նոր գրքույկը «Апокрифическое сказание об успении св. евангелиста Иоанна»^{*)}, որը հրատարակվեց «Православное обозрение» ամսագրի հանվարի գրքում: Այս անվանված գրվածքը միակն է յուր հնությամբ — ոչ հունաց և ոչ մյուս լեզուներով նա գոյություն չունի: Այդ մի շատ կարևոր գյուտ է, որ անվանված գրվածքներին հմուտ անձինք ընդունեցին մեծ գնծությամբ: Պարապ ժամանակ կամ քննույց առաջ կարդա, կարելի է և հայհոյան ծերունի բարեկամիդ ախ ձանձրութի համար, որ նա պատճառում է քեզ իր դիտակետ շատախոսությամբ:

Դու ի՞նչ բանի ես: Վաղուց է, որ կենդանության նշույլ չես ցույց տալիս, ես գոնե երբեմն գրիչ եմ առնում ձեռս քեզ գրելու, իսկ դու, երբեք, Ամոթ չէ՞: Ես դեռ մի քանի բաներ ունեմ տպագրելու, միայն ծառայությանս տեղի գործերի պատճառով ժամանակ չունեմ, որ վերջնականապես մշակեմ դրանք: Վերջին ժամանակներս չգիտեմ ինչից է, աշխատեմ սկսել են ցավել, և հենց այս ժողովի քեզ նամակ եմ գրում մի աչքով, որովհետև մյուսը կապած է և արգելվում է ինձ երկար գրել: Վերջական եմ դնում, բավական է — ցմայուս անգամ:

Փո էմին

Մոսկվա, 13 հունիսի 1879 թ.

Красная Ворота, д. Филиппа

Սիրելի պարոնայք^{**)}

Ձե, չէ, բայց դարձյալ ես եմ ձայն տալիս իմ հեռավոր բնակության վայրից, իսկ դու

^{*)} Էմինը 1876 թվականից սկսած առհասարակ շատ էր զբաղվում անվանված գրվածքներով: Նա, սրբան մենք հիշում ենք, ութսունական թվականներին, Մոսկվայի համալսարանի արևելյան պատմության պրոֆեսոր Միլլերի ցանկությամբ ու ինդրանցով, կազմել էր մի մեծ ցուցակ, որի մեջ ամփոփել էր հայոց գրականության մեջ եղած և իրեն հայտնի բոլոր անվանված գրվածքները: Ահա հենց այդ ցուցակիցն էին նրա մեկնված հետևից հրատարակած անվանված գրվածքները — «Сказание о Преставлении Бого-рождицы и об ей образе, написанном евангелистом Иоанном», նամակում հիշված «Апокрифическое сказание об успении св. евангелиста Иоанна», «Сказание о св. Фадее и Варфоломее, апостолах Армении», «Новооткрытое армянское pedant ы послании Публия Лентула в римский сенат об Иисусе Христе»:

^{**)} Էմինը դիմելով իր ընկերոջ «պարոնայք» բառով, իհարկե կատակ է անում. դրանով նա ուզում է ևսորաշանչանքի հիշեցնել նրա՝ իրեն, Էմինին, «պարոնայք» կանչելու սովորությունը, չին ժամա-

լուռ ես, փույթի չէ, չես էլ մտահոգված իմանալու կենդանի՞ է տրոյոց ալեոք ընկերդ: Թեև դու չես հարցնում, բայց նա, ինչպես տեսնում ես, ոչ միայն քեզ տեղեկացնում է, որ ինքը կենդանի է, այլ և դեռ շարունակում է իր թուղթ մրտնելու եվ ահա մի քանի մրտած թերթ, միասին ժողոված, կազմած, նամակի հետ միասին քեզ է ուղարկում: Հուսալով, որ դրանք ստանալուց հետո ձայն կտաս այն հասցեով, որ նամակիս վերը գրված է — Այդ հասցեն արդեն ինքն ըստ ին-

նականը կաղարչան ձեմարանում սովորություն կար պարագահայ ու հնդկահայ աշակերտներին «պարոնայք» կանչելու, որովհետև նրանք փոխանակ «պարոններ» բառի ընդհանրացած ձևին, սիրել են գործածել նրա գրաբար «պարոնայք» ձևը:

^{*)} Գարրիել վարդապետ Ալվազյանի իր վարած պաշտոններից արձակվեց 1865 թվին, Մատթեոս կաթողիկոսի ցանկությամբ, քանի որ նա Բնաւորաբայի թեմի առաջնորդության տեղապահ էր նշանակվել կաթողիկոսական դահի թափուր եղած ժամանակը, առանց նորընտիր կաթողիկոսի գիտության ու հավանության:

ըլան քեզ ասում է, թե ես թողել եմ Մոսկր-վայի Հինգերորդ գիմնադիտայի վերատեսչու-թյան պաշտոնս, ծառ տարվա վերատեսչու-թյունը, այդքան էլ, եթե ոչ ավելի, տեսչու-թյունը քաղականին ձանձրացրել են ինձ, իսկ բոլոր ծառայությունն ավելի քան 40 տարի է — հեշտ է ասել *): Հենց այս պատ-ճառով կուզեի հանգստանալ, դադար առնել և կյանքիս մնացած օրերը ամբողջությամբ նվիրել գիտական պարապմունքի, որովհետև մինչև ցայսօր աշխատել եմ միայն ընդհա-տումներով, ծառայությունիցս ազատ խղած ժամանակները — իսկ գլխումս շատ ծրագրեր ու տպավորություններ կան:

Մի ժամանակ, զարման սկզբին, իմ գլխում մի միտք հղացավ — այցելել ձեր կող-մերը և ամառն անցկացնել հարավում՝ Ղրի-մում, լինել, իհարկե, մոտիկ, սովոր գրկել քեզ և վերհիշել վաղուց անցած-գնացածը — բայց ծուլությունս հաղթեց, հետաձգեցի մի

ուրիշ ժամանակի, եթե ես այդտեղ մի կտոր սեփական հող ունենայի, ո՛հ, այն ժամա-նակ ես չէի մտածի, կիռչեի ծիծեռնակների նրեպուն պես... ի դեպ, չե՞ս կարող արդյոք ասել ինձ, թե ի՞նչ գնով կարելի է ձեր կող-մերում հողի մի կտոր ձեռք բերել, բայց այնպիսին, որ հիշեցներ Զվիցերիան, հայա-նի բան է, կյանքի համար հարմարություն ունեցող: Բայց գուցե այս տեսակ խոսակ-ցությունները քեզ համար հետաքրքիր չլի-նեն: Դու երբեք մնացել ես նույն անհող, ան-փուլք մարդը, ինչպես ես քեզ ճանաչել եմ 40 տարի առաջ, այնպես չէ՞:

Է՛հ, քաղական է, շատ խոսեցի: Այժմ հերթը քոն է. գրի՛ր մանրամասն քո մասին, ոչ ապաքեն երկու տարի է, ձքն ոչ երբ, որ ես քեզանից որևէ լուր չունեմ: Նայիր, չժու-լանաս, Մնաս բարյավ. պինդ գրկում եմ քեզ, մնամ

Բո էմին

Մոսկվա, 26 օգոստոսի 1979 թ.

Красная Ворота, д. Филиппа.

Սիրելի և անդին պարոնայք,

Հուլիսի 8-ին քո գրած նամակը ինձ վերհի-շեցրեց մեր երիտասարդության երջանիկ օ-րերը, երբ ես ու դու ապրում էինք ՈՖրեմովի տանը — Ֆիլիպովում, որը նայում էր ճեմելի-քին: Այժմ այդ տեղում կանգնեցված է մի հո-լակապ պալատ, որը պատկանում է երկա-թուղու նախնիներից մեկին: Մի՞տք է արդյոք այն ցուրտ տունը, որտեղ ես ու դու կարդում էինք Շեքսպիրից ու մոռանում է՝ ցուրտը, և՛ քաղցր: Բայց մենք երջանիկ էինք, այդպես չէ՞: Իս գոնե, սրտի հրճվանքով եմ հիշում այդ ժամանակը. թուվ, զնաց նա անդա՛րձ ու տարավ իր հետ կյանքի ողջ սպոնզիան: Այ-ժմ չկա ոչ ցուրտը, ոչ քաղցը. ընդհակառա-կը, կա առատություն, բայց չկա այն, որ այն ժամանակ մեր կյանքի երջանկությունն էր կազմում. չկան և նրանք, որոնց հետ անց է-ինք կացնում մեր օրերը, ժամերը, որոնց հետ մենք տանում էինք և վիշտը և կարոտություն-նը, որոնց հետ ուրախանում և տխրում էինք ու որոնց հետ վերջին կուպկներս էինք գի-

*) Էմինը տասն տարի տեսչության պաշտոն է վա-րել: Լազարյան ճեմարանում և տասը տարի էլ վերա-տեսչություն արել: Վլադիմիրի ու Մոսկվայի գիմնա-զիաներում: Ցուր 40 տարվա ծառայության միացյալ մասը — 20 տարին, նա նվիրել է հայոց լեզվի ու գրականության ուսուցմանը: Լազարյան ճեմարանի բարձր (լիկեոնական) դասարաններում, սկզբում որ-պես ուսուցիչ և ապա որպես պրոֆեսոր:

րում: Զկան ոչ Հախվերդյանը,*) ոչ Կորոտ-կովը,**) ոչ Փոնդոյանը,***) ոչ Ստադլե-րը****), ոչ Սարգիս Հովհաննիսյանը*****), ոչ էլ Գոնչարովը:*****) Այդ ուրախ, ուշիմ ու կենդանի շարքից միայն մենք ենք մնացել — երկու ավերակներ: Մի քանիսն արդեն կեն-դանի էլ չեն, իսկ մի քանիսն էլ հեռու են, ինչպես երբեմն ասել է Ստադլին, Ոչ միայն մի քանիսը, այլ համարյա թե ոչ ոք չկա. ցա-վալի է: Կնոջս արդեն 13 տարի է, որ կորց-

*) Հախվերդյանը Սայաթ Նովայի հայտնի հրա-տարակիչ՝ թիշկ Գևորգ Հախվերդյանն է, որի գի-տությունն մասին մեծ համարում ուներ Էմինը:

**) Կորոտկովը — Ս. Կորոտկովն է, որի ընկերակ-ցությամբ Էմինը 1826 թվին Ֆրանսերենից ուսանողն էր թարգմանել Վիլմանի «Միշին դարերի գրականու-թյան պատմությունը»:

***) Այստեղ խոսքը ճեմարանավարտ թիֆլիսեցի Փոնդոյանցի մասին է, որը, ինչպես երևում է նամա-կից, Էմինի ընկերներից մեկն է եղել:

****) Ստադլերը Էմինի՝ «Очерк истории языков армян» դրսյակի ֆրանսերեն թարգմանողն է: Թարգ-մանության վերնագիրն է Recherches sur le paga- nisme Armenien traduit par M. A. de Studler Paris 1864, որից և կատարվել է հայերեն թարգմանու-թյունը Հով. Տերոյանցի կողմից:

*****) Այստեղ խոսքը ճեմարանավարտ Քիշինեցի Սարգիս Հովհաննիսյանի մասին է:

*****) Գոնչարովը Էմինի, Լազարյան ճեմարանում ուսանող եղած ժամանակվա, ուսնազգի դասընկերնե-րից մեկն է:

րել էմ. շուտով արդեն երեք տարի կլինի, որ 22 տարեկան որդիս մեռավ: Հասկանում ե՞ս, որ կյանքը ինձ համար կորցրել է իր քաղորդարժիչ կողմերը: Այժմի բան այն է, հետաքրքրում, ապրում ենք արհեստական, առանձնասեյակային կյանքով. դեռ այդտեղ մի հետաքրքրական բան կա, թե չէ, անտանելի կլինե՞ր, ես կարծում եմ թե՛ ձանձրույթ պատճառեցի, մեծահոգի եղբոր ներքի ինձ, պարոնայք: Մի րոպե ինքս ինձ մոռացա, հիշելով անդարձ կերպով անցած-գնացածը:

Դու քո երկմտի նկատողություններով քաղաքացի ինձ թողնել Ղրիմում հող գնելու գիտավորություն. երևում է, որ ձեր կողմերում գործերը շատ էլ կարդին չեն: Է՞հ, Տիրուքը հանձնենք հողը. լավ կլինի, որ կոպեկները խնայենք արտասահմանի կյանքի համար. կարելի է այնտեղ ավելի մեծ հարմարությամբ հնարավոր լինի տեղավորվել այս ժնրությանն օրերում, քան թե Ղրիմում: Մտածում եմ գործիս այնպես կարգավորել, որ եկող 1880 թվի աշնանը կարողանամ տեղա-

փոխվել կամ Փարիզ, կամ Իտալիայի քաղաքներից մեկը: Մերացել եմ և այստեղի սահմանափակ շեն հարմարվում իմ ոսկրները, ինձ տաք է պետք: Ահա այս դիտումներով էլ ես հետաձգում եմ իմ քեզ անելիք այցելությունն մինչև մյուս տարի, այսինքն մինչև 1880 թվի աշունը. այդտեղից էլ ես կլիմմեմ իմ առաջադրած նպատակին:

Շատ ուրախ եմ, որ շարականի իմ թարգմանությունը*) քեզ դուր է գնել: Ձեզ մոտ Սիմֆերոպոլի հայոց եկեղեցում դու շարականի հարկե կարող ես գտնել ու վերցնել այնտեղից, եթե ցանկանաս համեմատել թարգմանությունը քնադրի հետ, իսկ այդ քեզ հարկավոր է անել, որպեսզի համազդես, թե ի՞նչպիսի դժվարությունների դեմ անհրաժեշտ է եղել ինձ մաքառելու: Դրա համար բավական է միայն համեմատել երկու-երեք շարական:

Մնաս բարյավ, սիրելի պարոնայք. — պինդ որկում եմ քեզ և խնդրում, որ նամակիս պատասխանես:

Քո էմիլ

Թանկագին պարոնայք,

Քո պատուական նամակն այսօր ստացա, այսօր էլ հենց այստեսխանում եմ. լավ է, որ ժամանակ ունեմ: Իմ գրքույկը «Отрывок из Аполлогии Аристиды»*) ես առանց նամակի ուղարկեցի քեզ, որովհետեւ ցանկանում էի այս հազվագյուտ գործիք քեզ էլ մաս հանել, իսկ գրելու ժամանակ չունեի: Քո առաձներին ես պատասխանում եմ կետ առ կետ, նամակիդ համաձայն:

Եկեղեցական պատմությունը խոսում է միայն Արիստիդեսի և նրա՝ քրիստոնյաների ջատագովության մասին. այս վերջինն էլ կորած է և չի հասել մեր ձեռքը — ոչ հունական բնագիրը և ոչ էլ նրա լատիներեն թարգմանությունը: Զատագովության այդ հատվածը, ինչպես տեսնում ես, դռնվեց հայերեն, Եղարի, թարգմանությամբ: Այդ հատվածը գրտան Մխիթարյանները և անցյալ տարի հրատարակեցին, իսկ ձեր խոնարհ ծառան էլ այս տարի թարգմանեց այն ու հրատարակեց ուսու դիտականներին ծանոթացնելու համար: Թեև այդ ջատագովությունը հատվածական

Մոսկվա. 28 դեկտեմբերի 1879 թ.

քնույթ է կրում, աբսուրդանալիզմ դա մի մեծ դյուտ է և գիտական աշխարհը կցնծա, կուրախանա, այն հրատարակված տեսնելով: Դուք հետադարձ դռնվի նաև դրա հայերեն ամբողջական թարգմանությունը:

Այս րոտը, ինչ որ ես այստեղ դրում եմ, կա և իմ համառոտ հառաչաբանում. ի՞նչից է առաջ գալիս, ուրեմն, քո երկրայությունը, չեմ հասկանում: Կարելի է քո ձեռքն է հասնել գրքույկի օրինակներից մեկը, որը հառաչաբան չունի. պատասխան տուր, եթե այդպես է, ես քեզ մի ուրիշ օրինակ կուղարկեմ:

Դու հարցնում ես, թե մի՞թե մինչև քո այդ դյուտն անելը, արևելագետները, դրանց թրվում և Մխիթարյանները, չէին զգացել ու կարծել, որ «Ասողիկ» մակդիրը առաջ է եկել ռասոդ հարազատ բառից: Եթե միայն նրանք կարողանային ռասոմ խոսքի իմաստի մեջ մի այդպիսի բան ենթադրել, այն ժամանակ նրանք հեշտությամբ էլ կորոշեին, «միպասան, երգիչ ասեն», «երգն վիպասանաց ասէ» և այլն խոսքերի նշանակությունը: Մովսես Խորենացու այդ և դրա մոտ դռնված ուրիշ դույնանման խոսքերն ու ոճերը, որոնց

*) Էմիլն այս թարգմանության լիակատար վերնագիրն է «Отрывок из Аполлогии Аристиды, християнского апологета и афинского философа, представленной им императору Адриану» (1879 թ.):

*) Հարական ոտներեն թարգմանությունը՝ «Шарьян, Богослужебные каноны и песни армянской восточной церкви» լույս տեսավ 1879 թվին:

նշանակութիւնն ինձ հաշողվեց պարզել, միջոց տվին ինձ գտնելու մեր հին վիպասաններին, այսինքն րապտողներին, վիպական քերթողներին մի ամբողջ աշխարհ և մեր հին վիպի մի ամբողջ հատված հորինացու գրքում: Շարականի իմ թարգմանությունը ուսանողն լեզվով վատ չէ հնչում: Հեշտությամբ է կարգացվում, այդ ես ինքս էլ եմ նկատում ու զգում: և ուրիշ կերպ լինել էլ չէր կարող, ուրիշ կերպ հարկավոր էլ չէր և շարժեր էլ թարգմանել: Անշուշտ դուրսին բան չէր հաղթահարել բանաստեղծական-աստվածաբանական հակիրճարան, սեղմ լեզվի զովարությունները: Գիտես, թանկագին պարոնայք, ալդ իմ կողմից էլ մի տեսակ, ինչպես ֆրանսիացիք են ասում, *tour de force* էր. սկսեցի թարգմանել շարականը, այսինքն ձեռնարկեցի այնպիսի գործի, որին ձեռնարկել Ռուսաստանում ոչ ոք չէր համաձայնի ոչ այժմ և ոչ ապագայում: Այստեղ անհրաժեշտ էր իմանալ երկու լեզուն էլ, բացի այդ,

պետք էր իմանալ և աստվածաբանական լեզուն: Դու այդ կհասկանաս, — ուրիշները ոչ իմ գլխում զանազան մտքեր են պտույտ գալիս, որ պետք է իրագործել: Մտածում եմ երեք մենագրության 'մասին' Շամիրամի զրույցի, հայկական աղբյուրների համեմատ, հայկական վիպի, որից մեծ հատվածներ եմ գտել հորինացու մոտ. և հայոց հեթանոսության մասին, որի վերաբերյալ շատ նյութեր եմ հավաքել: Սրանցից բացի, ես պատրաստում եմ հրատարակելու հորինացու նոր թարգմանությունը: Իմ կատարած առաջին թարգմանությունը ինձ չէ գահացնում, ես այն իսպառ պետք է մշակեմ. առաջին գիրքն արդեն պատրաստ է:

Գրիր ինձ, անգին րարեկամ, երբ ժամանակ ունենաս: Ոչ ապագան չկա ավելի մեծ րավականություն, քան թե զրույցելը մի այնպիսի ընկերոջ հետ, որի զգացմունքները դեռ քոնի պես թարմ են մնացել: Շնորհավոր նոր տարի, ցանկանում եմ քեզ լավից լավ, պլսավորասիս առողջություն:

Քո էմին

Մոսկվա, 24 նոյեմբերի 1881 թ.

Красные Ворота, д. Гуськова.

Թարի րարեկամ և ընկեր Սերգեյ Դանիլովի:

Այս մի քանի տողերիս հետ միաժամանակ դու կստանաս և իմ փոքրիկ գրքուկս^{*)}, որ կարծեմ, քեզ համար շատ էլ անհետաքրքիր

^{*)} Այստեղ հիշված գրքուկը, որի վերնագիրը չի նշված, 1881 թվին Թիֆլիսում դամարված հինգերորդ հնագիտական ժողովի առթիվ էմինի հրատարակած «Монсей Хоренский и древний эпос армянский» գրվածքն է, որի հայերեն թարգմանությունը «Մոսկվա-ի հորինացին և հին հայոց վիպերը» վերնագրով Գ. Խ.-ի թարգմանությամբ լույս տեսավ 1888 թվին Թիֆլիսում, որպես «Արձագանք» շաբաթաթերթի հավելված:

Էմինը Թիֆլիս գալով անձամբ մասնակցել է հինգերորդ հնագիտական ժողովին: Հայ հասարակությունը ժողովում նրան այնպիսի սիրով ու խանդավառությամբ էր ընդունել, որ նա ապշած էր մնացել և ըզգացմունքի հորդությունից ու սրտի հուզմունքից արտասովոր նա ընդհանրապես զարմացած էր մնացել այն փոփոխությունից, որ կատարվել էր Կովկասի հայ հասարակության յղանակներում, սկսած 1843 թվին, երբ նա առաջին անգամ այցելել էր Կովկաս, մինչև 1881 թվին, այսինքն 33 տարվա ընթացքում: Հայ հասարակությունն այդ ժամանակամիջոցում այնքան էր զարգացել ու հասաչափեմի մտավորապես և ազգային տեսակետից, որ Էմինի միանգամայն անհավատալի էր թվում: Էմինը հրվիճակով էր պատմում մեզ

չպետք է որ լինի: Դու այդ կկարդաս ինչպես մի բան, որ դուրս է եկել մի այնպիսի անուղղա գրչակի գրչի տակից, որը հին Հա-

իր այն քաղցր տպավորությունների մասին, որ նա ստացել էր Թիֆլիսում իրեն ցույց տրված ընդունելություններից: Մեծ ու փոքր, ուսուցիչ ու աշակերտ նրան տեսնելուց շտապել էին իրենց սերն ու հարգանքը արտահայտել, որից էմինն այն եզրակացություն էր հանգել, որ եթե հայ հասարակությունը կարճ ժամանակամիջոցում այնքան է հասունացել, որ նույնիսկ տեղակ է իր, մասնագետների համար միայն հրատարակած, գիտական գրվածքներին ու ըստ արժանվույն գիտն վնահատել դրանք, ապա կարելի է ուղա-հով լինել հայ ազգի ապագայի նկատմամբ: Հայ ժողովրդի զարթոնքը քաղցր հույսերով է պարուրում նրա սիրտը: Նա հեռու է վառում այն թախիճը, որ քուն էր գրել իր սրտում ազգի վերածնության կապակցությամբ. նա սկսում է հավատալ հայ ազգի վառ ապագային: Այդ օրերին էլ նրա մոտ միտք է հղանում իր ողջ ունեցվածքը ազգին տրամադրել՝ գիտական երկեր հրատարակելու համար, որ և հետագայում իրագործում է Էմինյան ֆոնդի հիմնադրելով:

Էմինը թեև հին մանր էր, բայց համակիր էր նոր գաղափարների. նա կողմնակից էր երկրների կառավարման հասարակապետական եղանակին:


Իր կյանքի վերջին տարիներում նա մեծ հետաքրքրությամբ հետևում էր հայերի ազգային շարժմանը:

յաստանի վերաբերյալ նյութեցի ուսումնասիրության գործում ոչ հանգիստ և ոչ էլ դադար ունի։ Այդ գրքույկը Մովսես Խորենացու պատմության քննական ուսումնասիրության սկիզբն է։ Ղրան պետք է հետևեն և այլ նույնանման մենագրություններ։ Ըսկարծում եմ, որ միայն առանձին մենագրություններով կարելի է և պետք է մշակել մեր պատմությունը, որը տակավին քննադատության չի ենթարկվել։ Միայն այսպիսի ճանա-

պարհով կպատրաստվի այն նյութը, որը ապագա քննադատ-պատմագրի համար պետքական կլինի։

Ձայն տուր, թանկագին պարոնայք, պատասխանիր իմ այս նամակին, որ ես վերջացնում եմ, ցանկանալով մանրամասն տեղեկություններ իմանալ քո առողջական վիճակի մասին։ Շտապում եմ նամակս փոստը հանձնել, մյուս անգամ ավելին կգրեմ։ Պինդ պրկում ու համբուրում եմ քեզ։

Քո էմի՛ն



Մկրտիչ էմին

Մոսկվա, 8 հունվարի, 1882 թ.

Վերջապես, նոյեմբերի 24-ին իմ քեզ գրած նամակիս պատասխանն ստացա քեզ-
նից, թանկագին, մտերիմ բարեկամ և ընկեր-
ներկար սպասեցի, բայց և վարձատրվեցի,
ստանալով քո ընդարձակ և ճաշակով շարա-
դրված նամակը, որի համար և քեզ իմ լիա-
բերան շնորհակալությունն եմ հայտնում:
Համբուրում եմ աչքերդ, ամուր սեղմում
կրծքիս և նոր տարին թևակոխելու առթիվ
ցանկանում եմ քեզ նախ առողջություն,
երկրորդը՝ առողջություն և երրորդը՝ դարձյալ
առողջություն ու երկար կյանք:

Ես քո նամակը կարդացի մեծ ուշադրու-
թյամբ, և կարծում եմ, որ դու իմ գրքույկիս
նշանակությունը մի քիչ չափազանցեցում
ես: Ես կարծում եմ, որ եթե Մովսես Խորե-
նացու հայկազյան շրջանի պատմության
մյուս ուսումնասիրողները մինչև այսօր չեն
հկել այդ հզորակացության, ապա այդ նրա-
նից է, որ նրանք բավականաչափ միջամուկ
չեն եղել նրա ուսումնասիրության գործի
մեջ, նամանավանդ այն մեկնաբանություն-
ներից հետո, որ ես շատ տարիներ առաջ
տվել էի ծերունի Խորենացու մոտ դեռ մին-
չև այսօր պահպանված հնացած խոսքերին:
Ես ինձ եմ վերագրում այն միտքը, որ վե-
րաբերում է Մար-Աբաս-Կատինայի գոյու-
թյուն լուծենալու, Նինուեի քաղաքական
պատմության չգոյության և հայոց ծերունի
ու արդո պատմագրի այս մասին ունեցած
համոզմունքի հերքման խնդիրներին: Խոստո-
վանում եմ, դրա համար պետք է մեծ քա-
ջություն ունենալ, որով և ես զինվեցի, հեռ-
ման կետ ու նեցուկ ունենալով ժողովրդա-
կան վեպը, ինչպես հայկազյան շրջանի
գլխավոր աղբյուրներից մեկը: Բայց այն էլ

պետք է ասեմ, որ դրա համար իմ վրա շատ
հարձակվեցին ու հարձակվում են: Է՛հ, թո՛ղ,
կանցնի ժամանակ, կգան ուրիշ օրեր, օրեկ-
տիվ կերպով կսկսեն վերաբերվել իմ լուծած
խնդրին և ինձ կարդարացնեն: Եթե կենդանի
մնամ, դեռ ես շատ անգամ կվերագառնամ
Խորենացու հայկազյան շրջանին. իմ գլխում
դեռ շատ մտքեր են պտտվում, դեռ շատ բան
կա անելու զանազան ոչ պատմական, այլ
գրական խնդիրների վերաբերմամբ: Այժմ
գրադված եմ Մովսես Խորենացու իմ թարգ-
մանությունը վերստին վերանայելու գործով:
այն երկրորդ անգամ հրատարակելու հա-
մար: Վերանայելուց հետո այդ թարգմանու-
թյունը միանգամայն ուրիշ կերպարանը
կընդունի և դու այն տեսնելով, չես ճանաչի
քո սիրելի Խորենացուն:

Այսուհետև ես ավելի շատ ժամանակ կու-
նենամ առանձնասենյակային պարապմուն-
քի համար, որովհետև բոլորովին թողել եմ
պաշտոնս^{*)}: Այժմ ես ազատ թռչուն եմ:
Նախ և առաջ գարնանը կամ ամռանը ես իմ
քայլերը կուղղեմ դեպի Փարիզ, իսկ հետո Ի-
տալիա: Եթե այստեղ, Փարիզում կամ Իտա-
լիայում, ինձ դուր կգա, կմնամ ձմեռելու Իսկ
մինչև որ վերջնականապես կորոշեմ այդ
խնդիրը, դեռ կապրեմ Վենետիկում և կաշ-
խատեմ Միխայիլայանների մատենադարա-
նում, որի գրչագիր մատյանների բաժնում
մեծ զանձեր կան պահված:

Սակայն այս բոլորը դեռ in spe-
ի՞նչպես կտոբրինե Աստված, կտեսնենք:

Մնաս բարյավ, պարոնայք, ցմյուս ան-
գամ:

Քեզ մտերիմ էմին

Մոսկվա, 18 մարտի, 1884 թ.

իմ մի նոր գրքույկը^{**)}, որ իր մեջ բովանդա-

Թանկագին ու վաղեմի բարեկամ և ընկեր
Սերգեյ Դանիլովիչ: Այն ժամանակ, երբ դու
ամենևին չես սպասում, իմ նամակը, անկո-
չի պես, հյուր է գալիս քեզ և գալիս է ոչ մե-
նակ, այլ գրքույկի ընկերակցությամբ, որ իմ
նախկին մրտադարների նման պիտի վրդով
քո հոգու անդորրությունը: Ի՞նչ կհրամայես
անել, թանկագին ընկեր, ես, ինչպես մի ար-
բեցող, մոլություն մեջ եմ ընկել և չեմ կա-
րողանում ձեռք քաշել մեր ալևոր Հայաստա-
նի անցյալը քրքրելուց:

Նամակիս հետ միասին ուղարկում եմ քեզ

^{*)} Էմիլը այդ ժամանակները դեռ բոլորովին չէր
թողել իր պաշտոնը: Ճիշտ է, ես վերջնականապես իր
պաշտոնից հրաժարվեցի 1882 թվին, բայց ոչ հունվա-
րին, ինչպես գրում է նամակում, այլ մայիսին: Նա
այդ ժամանակ դասախոսում էր Լազարյան ձեմարա-
նում, ուստի և չէր կարող տարվա կիսին թողնել իր
պաշտոնը, այլ պետք է սպասեր ուսումնական տարվա
վերջանալուն, այսինքն մինչև 1882 թվի հունիս ամիսը:
<sup>**) Այստեղ խոսքը վերաբերում է Էմիլի 1884
թվին հրատարակած «Древнеармянский список Хри-
стоса» վերնագրով գրքույկին, որը հատվածաբար
թարգմանվեց նաև հայերեն (տես «Արձագանք»,
1884 թ. № 27):</sup>

կում է Մովսես Խորենացու պատմության իմ սկսած ուսումնասիրության շարունակությունը: Առաջին հրատարակությունն արդեն դուռնեա. ես խոսում եմ Խորենացու և մեր վեպի մասին. երկրորդն ահա հասնում է քո ձեռքը: Դրանից հետո կհրատարակեմ երրորդը և այդպես շարունակաբար, մինչև որ, իմ հասկացողության համեմատ, իսպառ կվերջացնեմ Մովսես Խորենացու ամբողջ առաջին դիրքը: Մնացյալ երկու գրքերը ես թողնում եմ ուսումնասիրելու մյուս գիտնականներին: Պատրաստ եմ ընդունելու հերձվածողության համար գլխիս տեղալիք հայհոյանքների և հիշոցների մի ամբողջ տարափ— հայհոյանք ուղղափառ ազգասերներից, հիշոցներ նախանձոտ ու բթամիտ ուսումնականներից: Եվ այդ մանավանդ նրա համար, որ քեզ ուղարկած գրքույկիս մեջ պատասխանատվության է ենթարկված և քո ծանոթ

Միքայել Չամչյանը: Սակայն, ինչ և իցե: վիճակը ձգված է. Մովսես Խորենացու առաջին դիրքը պետք է քամել, ինչպես որ հարկն է:

Բայց բավական է:

Կամենում եմ քեզ հաղորդել, դուցե և այդ մի փոքր դեռ կանուխ է, որ այս տարվա օգոստոսին կամ սեպտեմբերին միտք ունեմ Ղրիմ, հատկապես Սիմֆերոպոլ, գալու: մասնավորապես քեզ գրվելու, քեզ հետ զրուցելու և ընդհանրապես հարավային մաքուր օդ շնչելու համար: Ես այժմ կարող եմ ազատ կերպով գործածել ժամանակս, որովհետև այս արգեն երրորդ տարին է, ինչ թողել եմ պաշտոնս. ես ժամանակիս տներն եմ: Իր ժամանակին ես կգրեմ քեզ և կխնդրեմ մի քանի տեղեկություններ: Հերիք է գրեմ, ցմյուս անգամ:

Քո էմիլ

9 հոկտի, 1884 թ.

Село Спасское, по Никол. железп. дороге, станция, Брюкова,

Թանկագին և սիրելի պարոնայք ու մեծ ընկեր.

Ապրիլի 12-ին քո գրած նամակին ես միայն այժմ եմ պատասխանում, այն էլ ոչ Մոսկվայից: Ինչպես տեսնում ես հասցեիցս, ես դուրս եմ. այստեղ տեղափոխվել եմ մայիսի 25-ին ու կմնամ մինչև օգոստոսի 20—25-ը, եթե միայն շատ վատ եղանակը ինձ չստիպե ժամանակից առաջ քաղաք քաշվել: Ես այստեղ հանգստանում եմ և միանգամայն far niente- էի մեջ եմ: Քիչ աշխատում եմ, շատ կարդում և ավելի շատ զրոսնում ու բժշկվում գլուխի մաքուր օդով: Գլուխը, որտեղ ես մնում եմ, գտնվում է Մոսկվայից 35 վերստ հեռավորության վրա: Մի դրացի կալվածատեր կա միայն, իսկ հետո միայն բնություն, բնություն և բնություն ու հանգստություն, որ ես ամեն բանից վեր եմ դասում: Բայց բավ է սրա մասին խոսենք, այժմ ացնենք նամակիդ բովանդակությանը, այն է իմ Ղրիմ, Սիմֆերոպոլ, Բեռլի-Բիշարան կատարելիք ճանապարհորդության մասին: Դու ցանկանում ես, որ երբ ես քեզ մոտ գալու լինեմ, մի ամիս առաջ հաղորդեմ քեզ այդ մասին, ես այդ այժմ եմ անում: Կգամ քեզ մոտ, իմ վաղեմի թանկագին ընկերոջս մոտ, անպատճառ, եթե միայն չմեռնեմ: Դուրս կգամ Մոսկվայից օգոստոսի 20-ին կամ 25-ին: Իմ ճանապարհվելու օրվա մասին ես քեզ նախօրոք իմաց կտամ կամ նամակով կամ հեռագրով: Կարճ ու պարզ, ճշմարիտ չէ:

Դու ինձ վախեցնում ես, զգուշացնելով Ղրիմի սեպտեմբերի և հոկտեմբերի կլիմայից ու խորհուրդ տալիս տաք շորեր, մինչև իսկ մուշտակ, վերցնել: Այդ ժամանակները մենք մինչև անգամ Մոսկվայում մուշտակ չենք գործածում: Համենայն դեպս հետո կվերցնեմ, քանի որ դու խորհուրդ ես տալիս, նամանավանդ, որ նա կարող է ինձ պետք գալ վերադառնալու ժամանակ: Սակայն, ես հագիվ թե Ղրիմում մնամ հոկտեմբերի առաջին օրերից ավելի, թող այդ քեզ հայտնի լինի:

Իմ ռեյսկադայնց հարստության ցուցակի ուսումնասիրությունը քեզ դուր չէ գալիս: Ինչպես և շատերին, եթե միայն ոչ բոլորին: մեր ինտելիգենտ պահպանողականներին: Ի՞նչ անենք, թող հայհոյեն, թող հերքեն: Այդ բոլոր անհիմն իմաստակութունները ինձ չեն կարող կասեցնել: Եթե իմ կյանքը երկարի ևս մի քանի տարով և առողջությունս ինձ չղավաճանի, ես ինձնից հետո կթողնեմ Խորենացուն քննության բովից, անցկացրած, մաքրած, որի համար և հետագա սերունդը ինձնից շնորհակալ կմնա: Մենք, ես ու դու, այդ չենք տեսնի որովհետև մեր օրերն արդեն հաշված են:

Սակայն, գիտե՛ս, ես քեզ ինչ կուզենայի սսել, բայց չէ... ես քեզ այդ կպատմեմ մեր տեսության ժամանակ, երբ մենք նստած կլինենք միասին, Ղրիմի հին ընտիր գինիով լի բաժակները առաջներս դրած:

Եթե մտադրվեմ գրելու, ուղարկիր վերը նշված հասցեով, որովհետև ես մինչև օգոստոսի 20-ը այստեղ կմնամ:

Մնաս բարյավ, Թանկագին պարոնայք, ցտեսություն, պինդ գրկում եմ քեզ:

Քո էմիլ

10 օգոստոսի, 1884 թ.

Գրում եմ քեզ, Թանկագին պարոնայք, մի քանի խոսք, որպեսզի նախապես իմացրած լինեմ իմ քեզ մոտ գալու մասին: Դու ցանկանում էիր, որ ես մի ամիս առաջ իմաց տամ քեզ այդ մասին: Կատարում եմ քո ցանկությունը, հայտնելով, որ սեպտեմբերի սկզբներին ես քեզ մոտ—գյուղումը կլինեմ, Դուրս գալու օրվա մասին ես քեզ նամակ

կգրեմ, կամ կհեռագրեմ, թող այդ քեզ հայտնի լինի:

Արդյոք դու ստացա՞ր իմ այն նամակը, որ ես քեզ գրել էի քո ինձ տված հասցեով: Ափսոս է, եթե նա կորած ու քո ձեռն ընկած չլինի: Ե՛հ, կարելի է այս մեկը հասնի: Մնաս բարյավ, ցտեսություն:

Քո էմիլ

P. S. Իմաց տալով իմ քեզ մոտ գալու մասին, Թանկագին պարոնայք, միաժամանակ անհրաժեշտ եմ համարում ասել, որ քո տված հասցեն ինձ չի բավարարում, Симферопольского уезда, станица Зуга և այլն. հենց նրա համար ինձ չի բավարարում, որ «Զուլա» կայարանը Փրումի «Երկաթուղիների ուղեցույցում» ամենևին չի նշանակված: Այս պատճառով էլ խնդրում եմ քեզ հենց առաջին թղթատարով հաղորդել ինձ, թե

երկաթուղու մինչև ո՞ր կայարանը ես պետք է տոմսակ վերցնեմ, որպեսզի անսխալ կերպով կարողանամ հասնել ուր հարկն է: Հուլիսի կիսին ես գրել էի քեզ նամակ քո հասցեով, բայց չգիտեմ հասա՞վ քո ձեռը նամակս, թե ոչ. քեզանից ձայն, ծպտուն չկա. մի լուր հաղորդիր, թե Աստված կսիրես: Նամակներդ դիրք Մոսկվայի իմ տան հասցեով:

Մ. էմիլ

27 օգոստոսի 1884 թ.

Սույն ամսի 19-ին գրած նամակդ, Թանկագին պարոնայք, շանթահար արեց ինձ, ես երկար ժամանակ չէի կարողանում խելքս գլուխս ժողովել: Վերջապես, նամակդ երկու-երեք անգամ կարդալուց հետո միայն, կարողացա պարզ կերպով ալքիս առաջ վերականգնել պատկերը այն ահռելի աղետի, որ անցել է ձեր երկրի, նամանավանդ քո, գլխով: Անհամբերությամբ սպասում եմ քո հաղորդ նամակին, որը դու խոստացել ես ուղարկել երկու շաբթից հետո. գուցե բնությունը խղճա ձեզ և հագեցնի ձեր ընդհանուրի ծարավը:

Հետաձգենք, վաղեմի բարեկամ, մեր տեսությունը մի ուրիշ, ավելի բախտավոր ժամանակի: Քո ներկա հանգամանքներում դու գլուխ չես ունենա ընկերոջդ հետ լինելու, զրույց անելու և ուրախանալու: Այժմ քեզ

համար ամեն մի բոպեն Թանգ է: Քո կալվածքին հասած վնասից հետո պետք է այն վերաշինել ու կարգի բերել: Աստուծով դու մյուս տարի քեզ մոտ կհրավիրես վաղեմի ընկերոջդ, որը կուզեր քեզ այնպես ուրախ տեսնել, ինչպես 40 տարի առաջ էիր: Ես ինձ մխիթարում եմ այդ մտքով, գուցե դա իրադրե՞վի:

Ձեր մոտ երաշտ է, իսկ մեզ մոտ մայիսից սկսած մինչև այսօր անձրևներ են. ամեն բան անձրևը հեղեղել, ամեն բան փլուցրել է: 22-ին ես քաղաք վերադարձա, որովհետև գյուղում անհնար էր ապրել. անձրևը և աշնանացուրտը գյուղում մնալը անհնար էին դարձրել: Անհամբերությամբ կսպասեմ քո նամակին:

Մնաս բարով, բարի պարոնայք, մի վհատիր, գուցե պայծառ օրեր գան:

Քո էմիլ

1 սեպտեմբերի 1884 թ.

Երեկ երեկո ստացա քո հեռագիրը, թանկագին պարոնայք, և խոստովանում եմ, դարձաքան նրա բովանդակության վրա. աջուրը գտնված է, եկեք Բեյուկ—Օնլար կայարանը, հարցրեք ժանդարմին, նա ամեն քան կանխա՝ քո առաջին նամակում ցույց էր տրված Զույա կայարանը, այժմ էլ Բեյուկ—Օնլարն է. առաջ դու ինքդ լիք ուզում կայարանում ինձ ընդառաջ գալ և կառքով ինձ քո գլուխը տանել, այժմ էլ դու ինձ հանձնում ես մի ժանդարմի, որ ինչպես դու ես գրում, «ամեն քան կանխա՝ Սպանես էլ, քան շեմ հասկանում չեմ», աջուրը գտնված է, ի՛նչ շուրտ:

Բայց թողնեմ այս բոլորը, որ հանելուկի բնավորություն է կրում և խոսենք պարզ լեզվով. Եթե դու իմ երկրորդ նամակը ստացել ես Մոսկվայից, և ոչ թե ամառանոցից, — դու պետք է տեսնեիր, թե ինչպիսի սար-

սափելի ազդեցություն էր թողել իմ վրա քո այն նամակը, ուր նկարագրում էիր ձեր երկրին, քեզ ու քո կալվածքին հասած ազեությունը: Այդ իսկ պատճառով ես գրել էի, թե լավ կլինի, որ մենք հետաձգենք մեր տեսությունը մի ուրիշ ավելի բարեհաջող, լավ ժամանակի, մյուս տարվան — կարելի է կհասնենք այդ ժամանակին: Այժմ դու, երևի, ինչպես ընդունված է ասել, հոգսերի, աշխատանքի ձեռքից գլուխ չես թափում և հյուրերի հետ էլ գլուխ ցավացնելու ժամանակ չունես, մինչև անգամ և ինձ հետ: Պարապիր, թանկագին պարոնայք, քո տնտեսությունը կարգի բերելու գործով և աշխատանքից մի՛ կտրվիր, մի՛ զբաղվիր գաղափարական ցնորքներով մեր տեսակցության մասին. 40 տարի սպասել ենք, մի տարին շատ էլ մեծ քան չէ...

(Նամակի շարունակությունը պատռված է):

17 հոկտեմբերի, 1884 թ.

Ուղարկելով քեզ, թանկագին ընկեր և պարոնայք, իմ օրերս հանած լուսանկարը, կամենում եմ մի երկու խոսք գրել քեզ և խնդրել, որ դու սիրով ընդունես այս և ոչ թե նեղանալով դեն ձգես: Չգիտեմ ինչու, բայց ինձ թվում է, որ դու շատ էլ գոհ չես, որ ես հրաժարվեցի քեզ մոտ դալ քո տնտեսությունն այդպիսի խառնակ ժամանակը: Այն պատկերը, որ դու նկարագրել էիր քո վերջին նամակում, այնպես ազդեց վրաս, որ ես մտածեցի, թե եթե այդպիսի ժամանակ ես գամ քեզ մոտ, ապա անկող հյուրից էլ վատ կլինեմ, իսկ ես չէի ուզում այդ-

պիսին լինել, այլ կամենում էի ցանկալի հյուր լինել քեզ մոտ: Սերգեյ Դանիլովիչը, մտածում էի ես, այժմ այնքան գործ ունի, որ, ինչպես ընդունված է ասել, գլուխ չի թափում գործից: Ես ուստի նրան մի կարգին չեմ տեսնի, որը անբավականություն կպատճառի ինչպես ինձ, այնպես էլ նրան, և հենց սրա համար էլ ավելի լավ է, որ զնալս հետաձգեմ մի ուրիշ ավելի խաղաղ ժամանակի: Այդ ժամանակը կարող է լինել մյուս տարի—մայիսի կամ սեպտեմբերի սկզբներում, մեկ կամ երկու շաբթով: Եվ այդ, sans rancune, mon bon amie: Մնաս բարյավ, պի՛նդ գրկում եմ քեզ:

Քո էմիլ

Մոսկվա, 28 հունիսի, 1887 թ.

Գրում եմ քեզ, թանկագին և մտերիմ ընկեր Սերգեյ Դանիլովիչ, մի քանի խոսք դողողուն ձեռքով, որպեսզի շնորհակալություն հայտնեմ քեզ, իմ հորեկանի առթիվ քո գրած սիրալիք նամակի համար, նամակիդ, որ Քանանյանցը*) կարդաց ճաշի ժամանակ: Նամակդ իմ սրտում շատ բան զարթեցրեց մեր երիտասարդական կյանքի անդարձ կերպով անցած—զնացածից: Ենոր-

հակալ եմ քեզնից, քո բարի, զգացմունքների, ճշգրիտ հիշողության համար, հիշողություն, որը քեզ հետ իմ անցկացրած օրերի մասին թանկագին մանրամասնություններ է պահպանել: Բոլորն էլ հիացած մնացին քո գրածից: Ես հենց այնպես էլ չկարողացա խոսքիս տերը լինել և չայցելեցի քեզ քո գլուխում: Սակայն բավական է, որ դու միայն մի հայացք ձգես իմ այս խորզանքի վրա, և կհասկանաս, թե ինչ վիճակի մեջ եմ ես: Այլևս գրել չեմ կարող: Մնաս բարյավ և այդ մնաս—բարյավիս հետ լսիր այն ոտանավորը, որ դու մեր հ-

*) Այստեղ հիշված Քանանյանցը լազարյան ճեմարանի և լիկեոնի վերատեսուչ, զգարացի Գևորգ Քանանյանցն է, ըստաստեղծ Գամառ-Փաթիպայի հայտնի բարեկամն ու բնկերը:

րիտասարդության օրերին, ուրախ ընդունե-
րիդ սիրում էիր ասել ու երգել:

Հարություն, Հարություն,

Մամայիդ ոսկի դուփին

Դիշերը կերթա գողություն:

Դու տեսնում ես, որ իմ հիշողությունս
դեռ իսպառ մաշված ու հնացած չէ:

Այսօր ես քեզ ուղարկեցի իմ «Հորեկյանի
տոնախմբությունը»^{*)}, որ միայն այս քա-

նի օրս է դուրս եկել տպարանից: Քեզ հա-
մար, երևի, հետաքրքիր կլինի լսել. թե ի՞նչ
և ի՞նչպես խոսեցին Եվրոպայի և Ասիայի
զանազան ծայրերում, Մնաս բարյավ թան-
կագին ընկեր, մի անգամ էլ, Եթե ցանկու-
թյուն ունենաս ինձ բավականություն պատ-
ճառել, ահա իմ հասցեն. В.П. Красных Ворот,
дом Гуськова.

✠ Էմիլ

15 հուլիսի 1887 թ.

Թանկագին բարեկամ Սերգեյ Գանիլովիչ,
Դու վախեցել ես, տեսնելով իմ այլանդակ
ձեռագիրս. ի սեր Աստուծո, հանգիստ եղիր,
արգեն ես այդքան էլ խիստ հիվանդ չեմ,
ինչքան որ դու ես երևակայում: Երեք տարի
սրանից առաջ ես մի թեթև հարված ստացա:
Շատ բժիշկներ եկան ու գնացին. նրանց
մեջ կային նաև բժիշկ-պրոֆեսորներ. նը-
րանք ինձ ոտքի կանգնեցրին. Դրիմը
ինձ օգուտ տալ չէր կարող: Եթե Աստուծո
օգնությամբ կատարելապես առողջանամ,
ես կիրադործեմ իմ մտադրությունը, քեզ,
իմ վաղեմի և մտերիմ ընկերոջս ու բարե-
կամիս, Բեշարանում այցելելու և քեզ հետ

միասին մի շիշ Դրիմի հին դինի խմելու
մասին: Եվ արդ, չվհատես, Մի բան եմ
միայն փստոսում. ձեռք գողում է և դժվար
է գրել: Իսկույն և եթ պատասխանում եմ
նամակիդ, որպեսզի իմ վերաբերմամբ
չմտահոգվես: Ես դեռ չեմ հրաժարվել գրե-
լուց, հույս ունեմ դեռ ապագայում քեզ շատ
երկեր պարգևելու:

Դրիմ այն տպավորության մասին, որ
ստացել ես հորեկյանի նկարագրությունը
կարդալուց. քո նամակը դրված է վերջում
Մնաս բարյավ, պինդ գրկում ու համբուրում
եմ. քեզ, Ես կապրեմ դեռ ես հինգ տարի^{*)}:

✠ Էմիլ

Հրապարակելով նշանավոր գիտնական
Մկրտիչ Էմինի այս 17-րդ նամակները,
պարտք ենք համարում ավելացնել, որ նը-
րանք գրված են ռուսերեն լեզվով, որից և
մենք թարգմանել ենք հայերեն: Այս նա-
մակները գրված են հաստատուն, դուրըն-
թեանելի ու գեղեցիկ ձևագրով, բացի վեր-
ջին երկու-երեք նամակներից, որոնք կրում
են դողդոջուն ձեռքի հետքեր: Վերջին նա-
մակը մանավանդ, այնպիսի դողդոջուն ձեռ-
քով է գրված, որ դժվարությամբ է կարդաց-
վում. երևում է ծերունու գրիչը նրա կյանքի
վերջին տարիներում, դժվարությամբ էր
հնազանդվում նրան:

Նամակները, օգտվելու և տպագրելու հա-
մար, մեզ էր հանձնել մեր դասընկեր ու սի-
րելի բարեկամ արմավիրցի Դրիգոր Դավթ-
յանցը, որ ստացել էր դրանք նամակատի-
րոյ՝ Խորասանյանի որդուց:

Մենք այս նամակներն իր ժամանակին
օգտագործել ենք մեր «Մկրտիչ Հովսեփեան
Էմին» երկասիրությունը գրելուց, որը տպա-

դրվել է «Էլումյա» գրական հանդեսի 1900
թվի Ա և Բ գրքերում, իսկ այնուհետև էլ
արտատպվել ու լույս է ընծայվել առանձին
գրքով:

Ներկայումս, տպագրության հանձնելով
Էմինի այս նամակները, մենք նպատակ
ունենք պահպանել թե դրանց հաջորդա-
կանությունը և թե ամբողջական բովանդա-
կությունը, մինչդեռ մեր գրքում տեղ են
գտել միայն այդ նամակներից մեղքերված
հատվածներ: Այս նամակների հաջորդակա-
նությունն ու ամբողջական բովանդակու-
թյունը ընթերցողներին հնարավորություն
կտան ծանոթանալու գիտնական Էմինի
կյանքի, ունեցած զգացմունքների, ծածուկ
տենչերի ու խոհերի հետ: Չնայած այդ նա-
մակները գրված են ընդմիջումներով,
1874-ից մինչև 1887 թվականներն ընկած
ժամանակամիջոցում, բայց կրում են կյան-
քի հիշատակարանի կամ հաջորդաբար գըր-
ված օրագրի բնույթ:

Սույն նամակներին կցում ենք նաև Հրեդ-
կաստանի Կալկաթա քաղաքից մինչև Մոսկ-
վա Էմինի կատարած կիսամյա ճանապար-

<sup>**) «Հորեկյանի տոնախմբություն» գրքի վերնա-
գիրն է «Празднование 50-летнего юбилея учено-
педагогической деятельности Н. О. Эмина».
Москва 1887 г.</sup>

^{*)} Էմինի գույնգրությունը լարդարացավ, եւ մե-
ռավ ավելի կանուխ, 1890 թվի դեկտեմբերի 13-ին:

հորդութեան հետաքրքրական մանրամասնութիւնը, որը տեղ չի գտել վերը հիշատակված մեր գրքում, որովհետեւ իր ժամանակին մենք ձեռքի տակ բավարարելու չէինք ունեցել այդ մասին:

Ուսումնասիրելով Հայաստանի Պետական թանգարանի բազմաթիւ ու թանկարժեք գրական-պատմական նյութերը, մենք Գրիգոր Խալաթյանի թղթերի մեջ հանդիպեցինք մի քանի թերթիկների պատառիկներին, որտեղ Խալաթյանը «Գծեր էմինի կյանքից» խորագրի տակ մի քանի տեղեկություններ է հաղորդում նրա կյանքի մասին: Հենց այս հատուկ տոր տեղեկությունների մեջ էլ գտանք էմինի հիշյալ ճանապարհորդու-

թյանը վերաբերող մանրամասնությունները, որոնք և նյութ ծառայեցին մեր ներկա ներկարգութեան համար: Այս նկարագրությունը պետք է դիտել որպէս հավելված մեր «Մկրտիչ Հովսեփեան էմին» գրքի, որի մեջ տրված կենսագրականը թերի է մնացել, իր ժամանակին ձեռքի տակ համապատասխան նյութեր չունենալու հետեւանքով:

Գրիգոր Խալաթյանը էմինի մերձավորագույն աշակերտներից մեկն է եղել և անկասկած այդ ճանապարհորդութեան պատմությունը նրան հաղորդած կլինի հենց ինքը էմինը, ուստի կարելի է հավատ քնծայել Խալաթյանի հաղորդած տեղեկություններին:

ՊԱՏԱՆԻ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԿԱԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱ

Ինչը տարեկան Մկրտչին, նրա ծնողները, Նոր Զուլայից ուղարկում են Կալկաթա՝ իր տատ (մոր կողմից) Թանգում— խաթունի մոտ, որը հարուստ վաճառական էմինյանի կինն էր: Մկրտչի Կալկաթայում մնում է հինգ տարի և սովորում Մարդասիրական ճեմարանում, որն այդ ժամանակները, այսինքն 1824—1829 թվականներին, ուներ միայն երեք դասարան: Նա սովորում է հայոց լեզու, կրոն, թվագրություն, աշխարհագրություն, հայոց և ընդհանուր պատմություն, անգլերեն ու լատիներեն:

Ուշիմ ու աշխատասեր Մկրտչի հավասարապես մեծ հաջողությամբ ուսումնասիրում է ճեմարանում ավանդուղի բոլոր դիսցիպլինները, բայց, դեռ 14—15 տարեկան հասակից սկսած, հատկապես առանձնահատուկ ուղադրություն է դարձնում հայոց լեզվի ու պատմության ուսումնասիրմանը, մանավանդ որ նրա ուսուցիչ հայտնի Հովհաննես Ավդալն էլ աշխատում էր պատանու սրտում սեր գարթեցնել հատկապես հենց այդ դիսցիպլինների նկատմամբ:

Սակայն դեռահաս էմինին Մարդասիրական ճեմարանի տված գիտությունը չի բավարարում, նա միջոցներ էր որոնում իր գիտության թերին լրացնելու:

Հենց այդ ժամանակներն էլ էմինի ձեռքն է անցնում Մոսկվայի Լազարյան ճեմարանի ծրագիրը, որը ճեմարանի լուսանկարով հանդերձ հրատարակել էր Հովակիմ աղա Լազարյանը և ուղարկել հայաբնակ բոլոր անկյունները: Պատանին տարվում է այդ ծրագրով և հաստատ որոշում անպայման Մոսկվա գնալ ու Լազարյան ճեմարանում ուսանելով, լրացնել իր կրթության թերին:

Սակայն իր այս մտադրությունն իրա-

գործելու համար էմինը պետք է հաղթահարեր երկու մեծ խոչընդոտներ— նախ Մոսկվա տեղափոխվելու դժվարությունը՝ կապված ճանապարհի երկարության ու ճանապարհորդելու հոգսերի հետ, և երկրորդ՝ իր տատի հավանությունը ստանալու դժվարությունը: Թանգում խանիկը կամ Նանին, ինչպես որ ջուլայեցիք սովորություն ունեին հորջորջելու մեծ մորը, շատ էր սիրում իր թոռանը ու ոչ մի կերպ չէր համաձայնի թույլ տալ նրան մի այդպիսի հեռավոր վայր մեկնելու, նախ որպեսզի չգրկվի նրա տնտեսությունից, և երկրորդ՝ կվախենար այս ձևով նրա կյանքը վտանգի ենթարկել:

Մկրտչի սկսում է խնդրել, թախանձել, բայց խանիկը լսել անգամ չէր ուզում այդ մասին: Շատ խնդրելուց հետո, երբ ոչինչ չի օգնում, Մկրտչի դիմում է իր ուսուցիչ Ավդալին, որպեսզի վերջինս միջնորդ հանդիսանալով համոզի տատին՝ թույլ տալու իրեն Մոսկվա մեկնելու և այնտեղ իր ուսման ծառայել հագեցնելու Ավդալը, որ անկեղծ կերպով գնահատում էր պատանու սերը ղեպի գիտությունը և նրան խոստումնալից տաղանդի տեր էր համարում, սիրով հանձն է առնում միջնորդի դեր կատարելու: Նա, քանիցս միջնորդելով, վերջապես կարողանում է համոզել խաթունին, որ արգելք չհանդիսանա տաղանդավոր ու ապագա խոստացող պատանու ձգտումների իրագործմանը:

Այդ ժամանակները Կալկաթա է ժամանում շվեդական առևտրական մի նավ Praeciosa անունով, որին նավապետն էր Հիլմ անունով մի գինվորական: Այս նավը պատկանում էր շվեդացի հարուստ վաճառական բարոն Դանթցերին, որը բացի սրանից ուներ

նաև մի քանի ուրիշ նավեր էլ, որոնք առևտրական նպատակներով նավարկում էին հեռավոր երկրներ. Գանթցերը մի գեղեցիկ դուռտու ունեն, որի վրա սիրահարվել էր Հիլմը. նա, որպես նախապալման, Հիլմին առաջարկում է, որ մինչև որ Praeclosa նավը շառաջնորդե Կալկաթա ու այնտեղից էլ հաջողությամբ վերադառնա, իր դստեր ձեռքը նրան չի տա: Հիլմը, որ մի շիտակ մարդ ու վարպետ էլ նկարիչ էր, իր սիրածին շուտով տիրանալու համար, համաձայնում ու ճանապարհվում է Կալկաթա, աշխատելով որքան կարելի է շուտ տեղ հասնել, շուտ վաճառել բերած ապրանքը, նոր ապրանք առնել և առանց հապաղելու Ստոկհոլմ վերադառնալ, որը բնակվում էր իր նշանածը:

Կալկաթայի նավահանգիստը հասնելով Հիլմը, ընդունված սովորության համաձայն, հայտնում է նավի ժամանման, մնալու և մեկնելու ժամկետները:

Էմիլը կարդալով Հիլմի հայտարարությունը, որոշում է հենց այդ նավով էլ մեկնել Շվեդիա, մտածելով, որ այնտեղից արդեն հեշտ կլինի Ռուսաստան—Մոսկվա ուղեվորովելը: Թանգում խաթունը քանիցս նավապետին իր տունը հրավիրելով մոտիկից ծանոթանում է նրա հետ և համոզվելով, որ կարելի է վստահել նրան, վճարում է ճանապարհածախսը ու իր սիրասուն սանիկին նրա խնամքին հանձնում: Մինչև վերջն էլ այդ ուղևորությանը համաձայն չէր ու ընդհամառում էր միայն Մկրտչի մեծ եղբայրը՝ Ավետիքը, որի ալդախի համառ ընդդիմությունը այնքան հարազատից բաժանվելու հանգամանքից չէր բխում, որքան նախանձից:

Լրանում է Կալկաթայի նավահանգստում նավի մնալու ժամկետը. Հիլմի հայտարարության համաձայն, ժամանելուց երկու շաբաթ անց նավը մեկնում է, իր հետ տանելով պատանի Էմիլին այնտեղ, որտեղից նա այլ ևս չպիտի վերադառնար: Թանգում խաթունը կարծես նախազգում էր այդ, և դրա համար էր, որ մեծ դժվարությամբ համաձայնվեց բաժանվել նրանից. հրաժեշտի վերջին րոպեներին նա շատ արցունք թափեց, բաղում, կարոտագին ու ջերմ համբույրներ դրոշմեց նրա ճակտին, մեծ դժվարությամբ բաց թողնելով նրան իր գրկից:

Սահում էր նավը Հնդկական օվկիանոսի ալեծուռի կոհակների վրայից, շրջանցելով Ասիայի ափերը և նպատակակետ ունենալով հաջողակ հողմի օգնությամբ կտրել—անցնել օվկիանոսի լայնածավալ ջրերն ու

հասնել Ասիոյիկայի ափերին. այստեղից էլ նա Բարեհուստ հրվանդանի մոտ շրջան գործելով, պիտք է մտնեք Ասլանտյան օվկիանոսը և ուղիղ դիմեք դեպի իլլոպա, երկար է տևում ճանապարհորդությունը—ամբողջ կես տարի. Էմիլը Կալկաթայից ճանապարհվում է 1829 թվի ապրիլ կամ մայիս ամսին, բայց Ստոկհոլմ է հասնում նույն թվի միայն հոկտեմբեր ամսին:

Մովսիսն ճանապարհորդությանն այնտեղ էմիլը առաջին իսկ օրերին հիվանդանում է ծովային հիվանդությամբ, որից շատ է տառապում, բայց հետո հետզհետե ընտելանում ու ապաքինվում է: Հիլմը, որը կամաց-կամաց մոտիկություն ստեղծելով հայ պատանու հետ, արդեն բավականաչափ մտերմացել էր ու սիրել նրան, ամեն հնարավոր միջոցներով աշխատում էր հոգալ նրա բոլոր կարիքները ու խնամել նրան: Էմիլը նավի վրա յուր ժամանակն անց էր կացնում բնության գեղեցիկ տեսարանները դիտելով ու անդերեն գրքեր կարդալով, որ նավապետը մեծ պատրաստակամությամբ տրամադրում էր նրան նավի մատենադասանից, ի միջի այլոց նա նավի վրա կարդում է Սվիֆթի հայտնի Շոուպիլիերի ճանապարհորդությունը:

Բնության հարատե փոփոխվող տեսարաններն անշնչելի տպավորություն են թողնում պատանու վրա. շատ տարիներ անցնելուց հետո էլ նա չի մոռանում իր այդ ճանապարհորդական տպավորությունները և ուսանողության տարիներին գրած իր շարադրություններից մեկում վառ գույներով նկարագրելով իր ճանապարհորդությունը, պրոֆեսորներին ու ընկեր—ուսանողներին հետաքրքրություն է չարժում, որոնք շատապու մ են իրենց հիացմունքն արտահայտել նրան: Այդ տեղի է ունենում Էմիլի ուսանող եղած ժամանակվա առաջին տարում: Գրականության պրոֆեսոր Շենբյուլը ուսանողներին պատմիրում է հատվածներ թարգմանել ֆրանսերենից կամ գերմաներենից և մի ինքնուրույն էլ շարադրություն գրել. այս աշխատանքները ներկայացնելու համար նա որոշ ժամկետ է սահմանում:

Էմիլը ծովանալով երկար ժամանակ չի պատրաստում իր աշխատանքը, որի համար էլ նրա ընկերները սկսում են սրախոտություններ անել ու ծիծաղել: Մի օր էլ, երբ շարադրությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալու մոտ էր, փոխտեսուչը հայտարարում է, որ պրոֆեսորը պահանջել է, որպեսզի շարադրությունները ճիշտ սահմանված օրը ներկա-

յացվեն, էմինը պրոֆեսորի պատվերը ճշտությամբ կատարած լինելու համար շտապ կերպով թարգմանում է մի հատված Շլեզելից և գրում, որպես ինքնուրույն շարադրովյուն, Կալկաթայից—Մոսկվա իր կատարած ճանապարհորդության նկարագրությունը:

Պրոֆեսորը, զարմացած ու հիացած ճանապարհորդության գողտրիկ նկարագրությամբ, շարադրությունների մասին իր տված հաշվետվության ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է նվիրում էմինին, իսկ վերջինիս ընկերներն էլ հիացմամբ ու համակրանքով շտապում են սեղմել նրա ձեռքը:

Էմինն իր շարադրության մեջ վառ գույներով էր նկարագրել հրաշալի լուսնյակ գիշերները օվկիանոսի վրա, ահռելի փոթորիկները, լեռնացած ահեղադուրդ ալիքները, աննման արևածագն ու արևամուտը, խաղաղ ու մեղմ ջրերի հայելին, երբ բանաստեղծի նկարագրածի նմանությամբ կարելի էր ասել.—

«Մոմն ի ծոցույն յուր ծածաններ,
Քաղցրիկ օդովն ծիծաղերն»:

Իր ճանապարհորդության ամենածանր օրերը նա անց է կացնում Բարենուտո հրվանդանի մոտ, երբ քամին սկսում է փչել հակառակ կողմից ու նավը ստիպված է լինում կանգ առնել և սպասել մինչև որ մրրիկը դադարի ու սկսի փչել բարենհալող քամին: Մրրիկը մոլեգնում, ալիքները լեռնանում էին ու ջրի երեսը նետում ծովային խոշոր կենդանիներին: Նավը տաշեղի պես վեր ու վար էր շարտվում, թավալում ալիքների մեջ, մերթ լեռնացած ալիքների կատարը բարձրանում ու մերթ էլ գահավիժորեն ջրային անպտուղ սուզվում: Ալիքների հզոր հարվածներից շուտով վնասվում է նավի կայմը: Դրությունը օրեցօր վտանգավոր էր դառնում, քանի որ մրրիկը չէր դադարում և քամին էլ շարունակում էր հակառակ ուղղությամբ փչել: Բացի դրանից խմելու ջուրը հատնելու վրա էր:

Նրկու շարժից հետո, երբ վերջապես փոխվում է քամու ուղղությունը և փոթորիկն իջ մեղմանում, նավը շտապում է հեռանալ այդ վտանգավոր վայրից, ուր ժայռոտ ափերին նա մոտենալ չէր կարող: Նավը լողում է դեպի սուրբ Հեղինեի կղզին, որտեղ երկու օր հանգստանալով, թե՛ խմելու ջրի պաշար է վերցնում և թե՛ նորոգում վնասված կայմը: Էմինն այստեղ, օգտվելով պատեհ առիթից, իր ուղեկիցների հետ միասին այցելում է Նապոլեոնի գերեզմանն

ու ծաղիկներ քաղում այնտեղից: Այդ ծաղիկները հետագայում շորացած վիճակում նա պահում էր իր սենյակում դրված նապոլեոնի պատկերի հետ միասին, որպես իր ճամբորդության հիշատակ: Այդպիսի ուրիշ հիշատակ էլ է նա իր հետ բերում: Բարենուտո հրվանդանի մոտ եղած ժամանակ նավաստիներին հաշոգվում է մի մեծ շնաձուկ որսալ, իր ձագուկներով: Էմինը ձագուկներից երկուսը, որպես իր ապրած դաժան օրերի հիշատակ, վերցնում ու իր հետ բերում է Մոսկվա: Այստեղ կազարյան ճեմարանի իր ուսուցիչ Մամիկոնյանի խորհրդով նա այդ շնաձուկներին հանձնում է համալսարանի կենդանաբանական թանգարանին:

Սուրբ Հեղինեի կղզուց ճանապարհվելով նավը վերջապես մտնում է Լամանշ ու Անգլիայի ափերին մերձ նավարկելով կանգ առնում Պորտսմութում, այստեղից էլ ուղեվորվելով անցնում է Զուլդր ու հասնում Ստոկհոլմ, ուր տեղի պիտի ունենար նավապետի հարսանիքը:

Շվեդիայում այդ օրերին արդեն խորը ձմեռ էր, երկիրը ծածկված էր ձյունի հաստ շերտով ու ամենուրեք սահնակներով էին ճամբորդում: Էմինը և Հիլմը իջնանում են միևնույն հյուրանոցում: Նիսնք միասին ճաշում էին, սուրճ խմում, սահնակով զրոսնում, թատրոն հաճախում և միասին էլ այցելում Գանթցերի տունը: Հիլմը էմինի համեստ քնավորությունը և նրա միայնակ, անմխիթար վիճակը տեսնելով ու Թանգում-խաթունի թախանձանքը, իր սանիկին լավ խնամելու մասին, հիշելով ավելի քան մտերմանում է նրա հետ: Մի օր էլ Հիլմը էմինին տանում է նկարչի մոտ ու նկարահանել տալիս: Իսկ նրա աներն էլ մի դրամապանակ է նվիրում, հետևյալ մակագրությամբ «From Baron Cantzer to M. Emin, on the 17 of oct. 1829, at Stokholm, Saturday af, termon, at 6 O'clock»:

Այս անգլերեն մակագրությունից երևում է, որ 1829 թվի հոկտեմբերի 17-ին էմինը Ստոկհոլմումն է եղել: Դրամապանակը պատրաստված էր կարմիր սաֆյանից: Մինչև իր կյանքի վերջին օրերն էլ էմինը պահում էր իր մոտ այդ դրամապանակը, որպես հիշատակ Ստոկհոլմում անցկացրած օրերի, Հիլմի մտերմության, նրա աներոջ և վերջինիս դստեր, որի դիմանկարը այնքան հաճախ սիրում էր նկարել Հիլմը Կալկաթայից Շվեդիա վերադառնալիս:

Էմինը Շվեդիայի մայրաքաղաքում մնում

է երկու շաբաթ. երկար մնալու պատճառն այն էր, որ մի հարմար մարդ չէր գտնվում, որը կարողանար ուղեկցել նրան մինչև Ռուսաստան: Վերջապես գտնվում է մի ֆինլանդացի վաճառական, որը առևտրական գործերով Պետերբուրգ պիտի մեկնէր: Հիմի խնդրանքով վերջինս համաձայնում է էմինին իր հետ Ռուսաստան տանել: Նախքան Ռուսաստան ուղևորելը Հիմը էմինին տանում է ռուսաց հյուպատոսարանը, որպեսզի նրա համար անձնագիր ստանա, քանի որ էմինը կալկաթայից դուրս էր եկել առանց որևէ փաստաթղթի, իսկ Ռուսաստանում պահանջվում էր անձնագիր օժնենալ: Էմինը խոսել գիտեր միայն հայերեն, անգլերեն ու մեկ էլ հնդկերեն՝ կալկաթայի տեղական բարբառով, իսկ հյուպատոսը այդ լեզուները չգիտեր, ուստի թեև չի մերժում նրան անձնագիր տալ, բայց լավ չհասկանալով «armenian» բառը, սխալմամբ անձնագրում գրում է «american» այսպիսով էմինը Ռուսաստան ոտք է դնում իրրև ամերիկացի:

Ֆինլանդացի վաճառականը Արո քաղաքը և այնտեղից էլ Ս. Պետերբուրգ հասնելով էմինին նախ տանում է շվեդական հյուպատոսի մոտ: Նոյեմբեր ամսվա սկիզբն էր. շվեդական հյուպատոս Ստարկը էմինին պահում է իր մոտ մինչև Մոսկվա գնացող մի ուղևոր է գտնում ու նրա հետ ճանապարհում այնտեղ: Այդ ժամանակ Ռուսաստանի երկու մայրաքաղաքների միջև դեռ

երկաթուղի չէր աշխատում, ուստի էմինը Մոսկվա է ուղևորվում դելիժանսով:

Մոսկվա հասնելով էմինը անմիջապես գնում է կազարյան ճեմարանը և ներկայանում ճեմարանի հոգաբարձու և խնամակալ ադա Հովհաննես կազարյանին, որը այդ ժամանակ իր ընտանիքով դեռ Մոսկվայումն էր ապրում: Հովհաննես կազարյանին շատ է հետաքրքրում էմինի Մոսկվա գալու հանգամանքը, էմինի, որին ուսման անհազուրդ ծարավը ստիպել էր այդքան երկար ու դժվարին՝ ճանապարհ կտրել, բազում արկածների հանդիպել, տանջվել և բոլոր խաղընդոտները հաղթահարելով Մոսկվա հասնել, նա հրամայում է էմինին անմիջապես ճեմարան ընդունել և այնուհետև էլ միշտ հետևում էր հեռավոր շնորհաստանից եկած անգրագետ հայ պատանու ուսման ընթացքին ու հառաջագիժությունը:

Նոյեմբերի 25-ին էմինն առաջին անգամ ոտք է կոխում կազարյան ճեմարանը, որը հետագայում դառնում է նրա հայապիտական աշխատանքի վայրը և որտեղ նա գիտնականի հռչակ է ձեռք բերում:

*) Գիտնական Մկրտիչ Էմինի այս նամակները մենք թարգմանել ենք դեռ 1900 թվին, մեր «Մկրտիչ Հովսեփեն» էմինա գրքի համար:

Ներկայումս մենք վերստին ստուգեցինք այդ նամակների թարգմանությունը և անհրաժեշտ խմբագրության ենթարկեցինք: Բացի գրախոս, ճշտեցինք գրված ձևերը, լրացրինք և համակներին կցեցինք վերջերս մեր գրած «Պատանի Մկրտիչ Էմինի ճանապարհորդությունը»:



ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

1947 թվի դեկտեմբերի 24-ին լրացավ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզի մահվան 40-ամյակը:

Այս առթիվ ցանկանում ենք տպագրության հանձնել ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում մեր կողմից հայտարարված նրա մի քանի անտիպ նամակները: Այդ նամակները կարևոր նշանակություն ունեն բանաստեղծի կենսագրության համար և լույս են սփռում նրա հասարակական գործունեության վրա: Նամակներից երևում է, որ հայ հասարակական կյանքի երևույթները խորապես հուզել, ալեկոծել են մեր զգայուն բանաստեղծի ներաշխարհը և այդ երևույթներն անաբաղաճ լին մնացել նրա կողմից, Բանաստեղծը աշխատել է գեթ որևէ բանով օգտակար հանդիսանալ իր հարազատ հայ ժողովրդին, ամոքել նրա խորը վիշտը: Ինչպես ինքն է ասում իր այդ նամակներից մեկում, նա աչքերը միշտ հառած է պահել ալեզարդ Մասիս սարին, անխզելի կապերով կապված մնալով հայ աշխարհին: Շահազիզի ապրած ժամանակաշրջանի հայ իրականության ամսխիթար վիճակը, նամանավանդ հայ գրական անդաստանի մշակների եղբայրի կացությունը, նրան հոռետեսության չի հանգեցնում: Ընդհակառակը նրան խորթ է վհատությունը, նա անսահման հավատ ունի հայ ժողովրդի հառաջագիմության, կուլտուրական վերելքի, լուսաշող ապագայի նկատմամբ: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրա լավատեսությամբ հագեցած նամակները: Նամակներում հատկորեն դրսևորված ենք տեսնում նաև Շահազիզի անլավ հոգատարությունը հայ գրական մշակների նկատմամբ, նրա համեստությունը, անշահախնդ-



Սմբատ Շահազիզ

րությունը և հայ առաջին լուսավորիչներ Ն. Աբովյանի ու Ս. Նազարյանի հանդեպ տառած խորը համակրանքը:

Ս. Շահազիզի ստորև բերված 13 նամակներից 9-ը կապված են Կովկասի Հայոց Բարեգործական լիակերպության անվան հետ և զվարավորապես վերաբերում են «Աբովյան-Նազարյան գրական ֆոնդ»-ի հիմնադրման խնդիրներին, մի ֆոնդ, որի տոկոսները պիտի հատկացվեին կարոտյալ հայ գրողներին, մեկը հասցեագրված է Բարեգործականի Սրբանի ճյուղի նախագահ Գևորգ Ղարաջյանին, մեկը՝ ԹԺԽՀ Հովհաննես Հովհաննիսյանին, իսկ երկուսը՝ Մկրտիչ Ա կաթողիկոսին (Խրիմյան):

«Աբովյան-Նազարյան գրական ֆոնդ»-ի հիմնադրումը կապված է Ս. Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 30-ամյա հոբելյանի կատարման հետ, որը

տեղի է ունեցել 1892 թվին՝ Մոսկվայի հայ հասարակության նախաձեռնությամբ և ամբողջ ուսահայության մասնակցությամբ, Հոբելյանական հանձնաժողովի մի գրության մեջ, որն ուղղված է լազարյան ճեմարանի ուսուցիչ Խաչատուր Քուլակ-Հովհաննիսյանին, շարադրված ենք տեսնում հիմնադրվելիք Ֆոնդի նպատակը՝ Մոսկվայի հայ հասարակությանը, տոնելով Ս. Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 30-ամյակը, որոշել էր այդ հոբելյանը նշանավորել գրական մի ֆոնդի հիմնադրմամբ, որի նպատակը պիտի լիներ օգնություն ցույց տալ հայ գրական մշակներին։ Ստորև բերում ենք վերոհիշյալ գրությունը։—

Մեծազո Տեր

Պաշտոնական տեղեկություններից և պարբերական հրատարակություններից արդեն լավ հայտնի է մեր մատենագիրների և հեղինակների անապահով դրությունը. մինչև այժմ մեզանում տակավին գոյություն չունի մի այնպիսի հասարակական հիմնարկություն, որ հարկ եղած ժամանակը կարողանար օգնության ձեռն կարկառել մեր մանուկ գրականությունը մշակողներին, ի նկատի ունենալով այդ հանգամանքը՝ տեղվույս հայ հասարակությունը, որ պատրաստվում է տոնելու բանաստեղծ Մմբատ Շահազիզյանի գրականական և մանկավարժական գործունեության երեսունամյակը, մտադիր է հավերժացնել այդ օրը մի գրականական ֆոնդի

Հովհաննես Տեր-Հակոբյան

Ներսես Ներսիսյանց

Իս. Ժամբադյան

Գրիգոր Զանգյան

Ս. Շահազիզի գրական-մանկավարժական գործունեության 30-ամյա հոբելյանի տոնակատարության ժողովրդականության մասին է վկայում Բարեգործական Բնկերության Երևանի ճյուղի վարչության ուղերձը՝ հղված հոբելյանին։ Ուղերձում, շեշտելով Շահազիզի 30-ամյա գրական-մանկավարժական գործունեության բեղմնավորությունը, վարչությունը ընդգծում է, որ նա հանդիսանալով նազարյանցների և Նալբանդյանցների

հիմնարկությամբ՝ նվիրված բանաստեղծի անվան, Ուստի Մեծազո պարոն, հանձնաժողովի անդամները պատիվ ունին խնդրելու, որ աջակցեք այդ բարի դիտավորության իրագործման թե՛ Ձեր անձնական և թե՛ Ձեր ծանոթների նվիրատվությամբ։

Հանգանակած գումարը խնդրում ենք ուղարկել մինչև ներկա տարվույս ապրիլի 5-ը հանձնաժողովի անդամ պ. Ներսես Ներսիսյանցին հետևյալ հասցեով. — Москва, Салтыковская пер. д. Жявого և կամ պ. Հովհաննես Տեր-Հակոբյանցին, — Москва, Покровка, Лялхи пер. д. Струве

Մ. Բարխուդարյան

Խ. Հովհաննիսյան

Սո. Մամիկոնյան*)

դորոշակակիրը, նրանց հետ ու նրանցից հետո միշտ մաքատել է իսավարի և մոլությունց դեմ, Միաժամանակ վարչությունը հայտնում է իր որոշումը՝ բանաստեղծի անունը հավերժացնելու համար Երևանի թեմական դպրոցում սեհազիզյան սանս անունով մշտական մի որդեգիր պահելու մասին, ի նկատի առնելով այս փաստաթղթի կարևորությունը Ս. Շահազիզի կենսագրության համար, ստորև մեջ ենք բերում այն. —

20 մարտի 1892 թ.

Ուղերձ

Հոբելյան Սմբատ Շահազիզյանցին

Մեծարգո ուսուցիչ և բանաստեղծ!

Նրա որ հասարակության որևէ անդամը յուր առօրյա մասնավոր հաշիվների շրջանից դուրս գալով կարողություն է ստանում գիտակցաբար յուր ույծերից մաս նվիրելու հասարակական օգտին, նա խորխուրվելու, գովվելու և սիրվելու արժանիք է ստանում հասարակությունից։ Նվիրած ույծերի լավի

որոշում է գործող անձի բարոյական մեծության աստիճանը։ Մասնավորելով խոսքս Ձեզ, Դուք ևս Ձեր լավագույն ույծերն նվիրած եք այս երեսուն տարի շարունակ այն-

*) ՀԱՅՈՒ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 40, գործ № 26, էջ 48.

պիսի ծանր գործունեության — ինչպիսին է գրականական և մանկավարժական գործունեությունը, որո համար արժանի և սիրելի էր դարձած ամենքին, Այդ չէ միայն. Ձեր անվան և գործունեության հետ կապված են եղել միշտ անկեղծության և ազնվության հատկությունները, Մենք Ձեզ ճանաչում ենք, Դուք նազարյանցների, նալբանդյանցների շրջանի մարդ էք, նրանց դրոշակակիրը, նրանց հետ և նրանցից հետո մինչև վերջը խավարի և փոխությանց դեմ մարտնչողը:

Ահա ինչու համար հրավիր ստանալով մասնակցելու Ձեր տոնախմբության, մենք,

Այս ուղերձին քանաստեղծը պատասխանել է մի սրտառու նամակով. նախ նա իր շնորհակալությունն է հայտնում վարդապետներ՝ իրեն ցույց տրված մեծարանքի համար և ապա ավելացնում է, որ ինքը, Արարատյան մայր նահանգի որդին լինելով, մի աչքը

Իմ ազնիվ հայրենակից,

Գևորգ Ղարաբյան

Ես շատ ուրախ եմ, որ հորելյանիս դասընկերներից պարտադիր միջոց գտնելով, կարող եմ հայտնել Ձեզ և Երևանու Բարեգործականի ճյուղին իմ լիաբերան շնորհակալությունը այն ուշադրության համար, որով այնքան սիրալիությանը պատվասիրեցիք ինձ: Թե որքան զեղեցիկ զաղափար է հղացել Բարեգործական Ընկերությունը, պարզեցնելով մեր համեստ անվան մի որդեգիր-սան, այդ ինքնըստինքյան հայտնի է: Ես միայն կարող եմ մաղթել, որ այդ որդեգիրն արդարացնե ապագայում Ձեր բարի հավատը դեպի բարի գործը և ժամանակով երեսնավորը հատուցանե փոխարենը:

Արարատյան մայր նահանգի որդի լինելով, մի աչքս պահած դեպի հայկական աշխարհի Մասիսը, մյուսը դեպի սրբավայր էջմիածինը, տակավին անխզելի կապված եմ այդ աշխարհի հետ և կմնամ այդպես, մինչև աչքերս կփակեմ հավիտենական քնով: Քանի որ կենդանի եմ հոգով ու մարմնով, և

Բարեգործական Ընկերության Երևանի ճյուղի վարչությունը կազմող անդամներս, սրբազան պարտք համարեցինք ուրախ սրտով ողջունելու Ձեզ և հայտնելու մեր առ Ձեզ ունեցած հարգանքները: Ընդամենն պատիվ ունինք հայտնելու, որ Ձեր անունը և գործունեությունը, իրապես ըստ չափու մեր կարողության, հարգած լինելու համար մարտ ամսի 19-ի վարչության նիստում որոշվեց Երևանի թեմական դպրանոցում Ընկերության հաշվին պահել «Երևանի դպրանոցի սան» անունով մի մշտական որդեգիր*):

պահած ունի դեպի հայկական աշխարհի Մասիսը, մյուսը դեպի սրբավայր էջմիածինը՝ անխզելի կապեցով կապված մնալով հայ աշխարհին մինչև իր կյանքի վերջին րոպեն: Ահավասիկ այդ նամակը. —

այսուհետև կաշխատեմ իմ ազգի համար. կնվիրեմ նրան իմ խոսքս, իմ գործս, որքան տրված է ինձ կարողությունս: Ապա ուրեմն թող մեզանից ամեն մեկն, օգուտ քաղելով կայսերության մարդասեր օրենքներից, հանգիստ և խաղաղական կենցաղավարությամբ առաքինի հանգիստանա յուր մեծավորի համար և կատարե յուր բարոյական պարտքը դեպի հայրենիքը, որին երկինքը վիճակել է այսօր այնքան դանդաղություններ ու թանձր խավար:

Ահա ինչ բաներ է մնում մեզ սրբել և փառատել:

Խոնարհաբար խնդրում եմ ուղարկել մի օրինակ Ընկերության կանոնադրություն, որպեսզի կարողանամ ստորագրություններ բանալ և աշակցել Ձեզ:

Խույս տվեցեք, ազնիվ պարոն, վկայել Ձեզ բոլորիդ իմ խորին հարգանքի հավաստիքը, որով կամ և մնամ պատրաստական սպասավոր Ձեր

Ս. Շահադրյան

1892 թ.

? մայիսի

Մոսկվա*)

1892 թվի ապրիլի 9-ին մեծ հանդիսավորությամբ Մոսկվայում տոնվում է մեծանուն քանաստեղծի 30-ամյա հորելյանը: Հորելյան

*) ՀԱՅԱ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 356, էջ 46:

նի առթիվ Մոսկվայի հայ հասարակությունը մոտ ութ հազար Խուրու մի դամար և նվիրաբերում, որը հորելյանական հանձնաժողովի

*) ՀԱՅԱ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 356, էջ 24:

որոշմամբ պետք է հիմնադրամ ծառայեր քանաստեղծի անվան հիմնադրովելիք գրական ֆոնդի համար: Սակայն տարիներ են անցնում և գրական ֆոնդի հիմնադրումը ձգձգվում է: 1896 թվի դեկտեմբերի 11-ին կոպկասի Հայոց Բարեգործական Ընկերության խորհուրդը, իր 391 գրութայմբ, հորել-

յարին հայտնում է, որ Ընկերությունն իրավասու է կատարել այն, ինչ որ ծրագրել է հորելյանական հանձնաժողովը՝ գրական ֆոնդ հիմնելու ու տոկոսները կարիքավոր գրողներին բաժանելու մասին: Այս գրութայն մեջ ուղղակի ասված է.—

4. 2. Բ. Ը. Խորհուրդ
N 391
11 դեկտեմբերի 1890 թ.

Մեծապատիվ պարոն
Ամբատ Շահազիզ:

Խորհուրդս իմանալով, որ Ձեր գրական հորելյանի առիթով մոտ 8000 հուրլու մի գումար է ժողովվել՝ հիմնելու մի ֆոնդ հայ գրողներին օգնելու համար, ու ի նկատի ունենալով որ Թիֆլիսում թեև ջանքեր եղան հիմնել գրողներին օգնելու մի առանձին ընկերություն, բայց մինչև այսօր չստացվեց թույլտվություն, և դժվար թե երբեք ստացվի, և հաշվի առնելով, որ Բարեգործական Ընկերությունը յուր կանոնադրութայմբ իրավունք ունի կատարել այն, ինչ որ պետք է կատարեր ծրագրայլ ընկերությունը, մյուս կողմից էլ նկատի առնելով, որ ներկայումս շատ հայ գրողներ, անօգնական մնացած, դիմում են զանազան, ոչ գրական, գրադ-

մունքների, որոշեց դիմել Ձեզ, մեծապատիվ պարոն և առաջարկել հետևյալը: Արդյոք Դուք չէիք համաձայնի հանձնել այդ գումարը Խորհրդիս, որը կազմելով գրական ֆոնդ՝ թե այդ և թե ուրիշ գումարներից, որոնք կարող են ստացվել, կգործադրեր տոկոսիքը հայ գրողներին օգնելու համար, համաձայն այն հիմունքների, որոնք կմշակվեն մանրամասն երկուստեք, այն է՝ Ձեր և Խորհրդիս համաձայնութայմբ, Խորհուրդս համոզված է, որ Դուք ամենայն համակրութայմբ վերաբերվելով այս առաջարկին, կքարհհաճեք պատասխանել և քանակցել, որով և կնպաստեք որ առաջ հայ գրողներին օգնելու գործի իրականացմանը:

Խորհրդի նախագահ
Փարտուղար*)

Շահազիզը, պատասխանելով հիշյալ գրութայնը, հայտնում է, որ սկզբունքորեն միազամայն համաձայն լինելով խորհրդի առաջարկութայնը՝ չի կարող չկատարել նվիրատուների ցանկությունը՝ առանձին ընկերություն կազմելու մասին և եթե Թիֆլիսում չի հաջողվի այն պուխ բերել, թերևս հաջողվի

Մոսկվայում, Այս առումով էլ լսողում է սպասել, երբ իր ջանքերն այս ուղղութայմբ ապարդյուն կանցնեն, սպա ինքը պատրաստ է գումարը տրամադրելու Ընկերութայնը: Ստորև բերում եմ Շահազիզի այդ նամակը.—

Հայոց Բարեգործական Ընկերության Խորհրդին,

Կովկասում.

Պատիվ ունեցա ստանալ անցյալ դեկտեմբերին N 391 Բարեգործական Ընկերութայն Խորհրդից թուղթը, որով առաջադրում եք ինձ իմ հորելյանի առիթով հավաքված գումարը՝ 7 հազար և փոքր մի ավելի, հանձնել հիշյալ Բարեգործական Ընկերութայն՝ նույն գրականական ֆոնդի նպատակով, երկուստեք պայմանադրութայմբ: Սկզբունքով ես իմ կողմից ոչինչ չունիմ ասելու ընդդեմ առաջարկութայն, երովհետև դուրս նպատակը նույնն է, ինչ որ կամեցել է իրապործել և հորելյանական հանձնաժողովը: Սակայն հանձնաժողովը այն կարծիքն է հայտնում, որ եթե Թիֆլիսում չէ հաջողվել կազմել ա-

ռանձին ընկերություն, գուցե այստեղ հաջողվի և, ուրեմն, պետք է գործ դնել և ուրիշ միջոցներ դուրս հաստատութայն համար: Երբ որ այդ մտքով, բոլոր նորա ջանադրությունը առհետևանք կմնա, այն ժամանակ կարելի կլինի հանձնել գումարը Հայոց Բարեգործական Ընկերութայն: Եվ արդարև, բարվոք է մի փոքր սպասել, մինչև որ անցանին դժվար ժամանակները և հնարավոր լինի նորից ընթացք տալ գործին: Մեր բոլորիս վերա սբրազան պարտք կա կատարել այն,

*) ՀԱՅՈՒ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ N 28, գործ N 46, էջ 2.

ինչ որ ցանկացել են դուստրի նվիրատունները, այսինքն կազմել առանձին ընկերություն. և մենք ազատ խիղճով կարող ենք փոխադրել գումարը, երբ որ, ինչպես ասացի, ամենայն հույս ու ակնկալություն կվերանան

1897 թ.

2 փետրվարի*)

Այս գրագրությունից հետո անցնում է ուղիղ մեկ տարի, Բանաստեղծի և հանձնաժողովի գործադրած բանքերը գրական ֆոնդ հիմնադրելու ուղղությամբ հաջողությամբ չեն պատկվում, Այն ժամանակ Շահագիրյան

նոր ընկերության վերաբերությամբ Խոնարհաբար խնդրելով արգո խորհրդականներից ներողամտությունը պատասխանս ուշացնելու պատճառով, մնամ պատրաստական ըստ պասալոր

Ձեռ Ս. Շահագիրյան

Մեծապատիվ նախագահին «Հայոց Բարեգործական Ընկերության Կովկասում»

Աղեփռանգր Ստեպանովիչ Անանյանին

Մեծարգո նախագահ, անցյալ տարի պատիվ ունեցա ստանալ Բարեգործական Ընկերության խորհրդից մի թուղթ, որով առաջարկում էիք ինձ իմ հորեղբայրի հավաքված գումարը հոգուտ գրականական ֆոնդի՝ հանձնել վերահիշյալ Ընկերության փոխադարձ պայմանագրությամբ, որի տոկոսը կարելի կլինի բաժանել Հայոց կարուսյալ գրականներին: Ես այն ժամանակ խնդրեցի մի տարի ես հետաձգել գումարի փոխադրությունը, որպեսզի գործ դրվին առանձին ֆոնդ կազմելու բոլոր միջոցները. բայց այդ բոլորը իզուր անցան:

Այժմ, մեծարգո նախագահ, խոնարհաբար դիմում եմ Ձեզ, խնդրելով, որ ձեթ խորհուրդից մտադրությունը չէ փոխվել, բարեհաճեք հայտնել ինձ, որպեսզի անհապաղ փոխադրեմ գումարը Բարեգործական Ընկերությանը: Փոխադարձ պայմանագրությունը ոչ մի կերպ չէ կարող արգելք լինել գործին, այդ պայմանները այնքան ևս պարզ են, որքան և պարզ է նույն ֆոնդի նպատակը, այսինքն ա) Մայր գումարը մասնավոր բարեգործների գոհաբերություններով, սր կարող են լինել ներկայումս և ապագայում, մնում է անձնական խելի:

բ) Գումարի տոկոսը միայն տարեց տարի բաժանվում է կարուսյալ գրականներին ըստ տնօրինության Բարեգործական Ընկերության:

1898 թ.

10 փետրվարի

Մոսկվա

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 46, էջ 3:

գ) խորհուրդը յուր տարեկան հաշվից հետո լուր տեղեկություն է տալիս հորեղբայրին, թե ով ինչ է ստացել:

դ) Եթե առանձին ֆոնդ հիմնվի Կովկասում, Բարեգործական Ընկերությունը պարտավորվում է հանձնել այն նոր ֆոնդին — անձնական խելի գումարը:

ե) Եթե ժամանակով, այլ և այլ հանգամանքների շնորհիվ, խափանվի Հայոց Բարեգործական Ընկերությունը Կովկասում, Ընկերությունը պարտավոր է մայր գումարը ավանդել ազգային հաստատություններից մեկին, որպես Մարդասիրական Ընկերության Բազմում կամ Գասպարյան անկեղանոցին Մոսկվայում:

Ահա այս թուղթիկ պայմանները գծադրեցի այստեղ, որ սրանք յուր աչքի առջև ունենա Բարեգործական Ընկերությունը, երբ նա կարճատևորեն յուրն անտարակույս, ավելի շրջանկատ, նպատակահարմար և բոլորամասուն: Ուրեմն եթե իմ պայմանները հակառակ կթվին Ձեր կանոնադրություններին և տրամադրությանը, փոխեցեք դրանք, որպես և կամենաք:

Ընդունեցեք, մեծարգո նախագահ, իմ խորին հարգանքի հավաստիքը, որով մնամ անձնական վեր պատրաստական

Ձեռ Ս. Շահագիրյան

Իմ հասցեն. — Сибату Семеновичу Шах-Азизу, Москва. Мясн. ул. д. Шершавковой*)

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 46, էջ 4:

Կովկասի հայոց Բարեգործական Ընկերության վարչությունը ստանալով Շահազիզի սուլն նամակը և կետ առ կետ քննության առնելով նրա առաջարկած պայմանները,

բոլոր կետերը, բացառությամբ մեկի, ընդունում է: Այստեղ մեջ ենք բերում Ընկերության պատասխան-գրությունը.—

4. Հ. Բ. Ը. Խորհուրդ
№ 50
26 փետրվարի 1898 թ.

Մեծապատիվ պարոն
Սմբատ Շահազիզին

Մեծապատիվ Տեղ
Սմբատ Սեվոնովիչ

Խորհուրդս պատիվ ունեցավ ստանալու Ձեր սուլն ամսի 10-ի գրությունը, հանուն Խորհուրդիս պ. Նախագահի, որով հայտնում եք Ձեր պատրաստակամությունը՝ հանձնելու Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Ձեր հորելյանի առիթով հավաքված գումարը, համաձայն Խորհրդիս առաջարկության՝ մի գրական ֆոնդ կազմելու և նրա տեղում կարողությամբ հայ գրականներին բաժանելու համար: Ընդ միև մի Դուք բարեհաճել եք առաջարկել և այն պայմանները, որոնց հիման վրա հնարավոր եք համարում հանձնել գումարը Խորհրդիս, իրավունք տալով Խորհրդիս փոփոխության ձեթարկել նրանք:

Արդ, Խորհուրդս, քննելով Ձեր առաջարկած պայմանները և ի նկատի ունենալով Ընկերության կանոնադրությունը, հետևաբար գտավ ընդունել Ձեր առաջարկությունը՝ հետևյալ պայմաններով.—

ա) Մայր գումարը, այն է Ձեզանից ըստանալիք գումարը և ապագայում լինելիք նվերները կկազմեն անձեռնմխելի գումար:

բ) Գումարի տեղում միայն տարեց-տարի կրթական կարողությամբ գրականներին, որոնց ընտրությունը կկատարի Խորհուրդս, կանխապես Խորհրդակցության հրավերով մի քանի ձեռնահատ անձանց և վերապահելով Ձեզ իրավունք՝ յուրաքանչյուր տարվա ըսկզբում մատնացույց անել այն գրականների

վրա, որոնք Ձեր կարծիքով արժանի կլինեն նպաստ ստանալու:

դ) Իմեն տարվա վերջին Խորհուրդս կըհաղորդե քաղվածքներ իր հաշվից՝ դրական ֆոնդի և նպաստների գործադրության վերաբերմամբ:

դ) Եթե որևէ ժամանակ խափանվի Հայոց Բարեգործական Ընկերությունը Կովկասում, գրական ֆոնդի մայր գումարը, համաձայն Ընկերության կանոնադրության § 50-ի, կըհանձնվի Քիֆլիսի Հայոց ներսխայան դպրոցին կամ ազգային հաստատություններից մեկին՝ նույն նպատակը իրագործելու:

Այս պայմաններից կարող եք տեսնել, մեծապատիվ Տեղ, որ Ձեր առաջարկած բոլոր պայմանները, բացի մեկից, Խորհուրդս ամբողջությամբ ընդունում է:

Դալով Ձեր առաջարկած դ պայմանին, Խորհուրդս այդ տեսակ պարտավորություն հանձն առնել չէ կարող, որովհետև այդ դեպքում, նա հանդիսանում է լոկ ժամանակավոր ավանդապահ և բացի դրանից, Բարեգործական Ընկերությունը իր կանոնադրությամբ ամենի նպատակահարմար և իր ձևով կարող է կատարել նույն դերը, ինչ որ պետք է կատարի մի առանձին գրական ֆոնդի ընկերություն:

Եթե Ձեր կողմից ընդունվի են այս պայմանները, Խորհուրդս խնդրում է փոխադրել գումարը:

Խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝ Հ. Առաքելյան

Շահազիզը, ստանալով Բարեգործական Ընկերության որոշումը, հայտնում է իր համաձայնությունը՝ գումարը Ընկերությանը փոխադրելու մասին: Սակայն, քանի որ երկուստեք եղած բանակցությունները սկսվել էին մեկ տարի առաջ, բանաստեղծը հիմնական գումարի հետ միասին փոխադրում է նաև մի տարվա տեղում՝ 350 ռուբլի գումարով, խնդրելով այդ 350 ռուբլին անմիջապես բաժանել կարողությամբ գրողներին: Բանաստեղծը իր նամակն ավարտում է դրվատանքի

չերմ խոսքերով հայ ժողովրդի պայծառ ապագայի նկատմամբ:

Այո, իսկ հավատում եմ, որ մի օր Հայկական ազգը, կուստուրայի գիտակցությամբ ներշնչված և ամենաազնիվ ձգտողություններով զարգացած, ամենիս կտա յուր մտավոր մշակներին, ասելով. «Նկայք առ իս ամեն»:

*) ՀԱՍՈՒ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 48, էջ 5-8:

նայն աշխատյալք և բեռնավորք, և ես հան-
դուցից զձեզս:

Շահագիզի մարգարեական այս խոսքերը
մեր օրերին իրականություն դարձան, հա-
սավ հայ ժողովրդի այգաբացը, Եսոազեց

Մեծապատիվ Նախագահին

Հայոց Բարեգործական Ընկերության Կովկասում

Մեծարգո Աղեխանդր Ստեպանովիչ Աւանյանին

Պատիվ ունեցա ստանալու խորհրդիդ ար-
ձանագրությունը 26-ին փետրվարի, որպես
պատասխան իմ առաջադրության, այն է, որ
Հայոց Բարեգործական Ընկերությունը կով-
կասում բարեհաճի ընդունելու իմ հորեւյանի
առիթով հավաքած գումարը, այն պայման-
ներով, որ ես հաղորդել էի նրան զրոյթամբս
փետրվարի 10-ից 1898 թ.: Բարեգործական
Ընկերության խորհուրդը յուր ներկա արձա-
նագրությամբ ընդունում է համարյա բոլոր
այն իմ առաջարկած պայմաններն, բացի 7
հոդվածից, որ է. «Եթե Ընկերության գոյու-
թյան ժամանակ իրագործվի մի առանձին
գրականական ֆոնդ կազմելը, Ընկերությու-
նը պարտավորվում է հանձնել մայր գումա-
րն այդ նոր ֆոնդին»:

Ընկերությունը քաջասելով պայմանագրիս
այդ կետը, առարկում է, որ նախ չէ կամե-
նում ժամանակավոր լուկ տեր հանդիսանալ
այդ գումարին, և երկրորդ, որ նա ինքը կա-
րող է ամենայն հաջողությամբ կատարել և
նոր ֆոնդի բոլոր գործողությունները, խոր-
հրդի եզրակացությունները միանգամայն
ուղիղ են և անհակառակելի: Սակայն այդ
հոդվածը դնելով, ես իմ աչքիս առջև ունեցել
եմ այն հանգամանքը, որ նախ նոր ընկե-
րության հաստատությունը կարող էր գրավել
և նոր գումարներ ազգի բարեգործներից,
ինչպես և մի քանիսը խոստացել էին ինձ
այդ, և երկրորդ, ես այդ նոր ընկերությունով
կամենում էի հավերժացնել երկու նվիրական
անուն հայկական լուսավորության պատմու-
թյան մեջ, այն է ի. Արովյանի և Ս. Նազար-
յանցի, հետևաբար դոցա անունով իսկ կո-
չելով սկզբվյալ-նազարյան գրականական
ֆոնդ կամ նպաստի ընկերություն: Այժմ
այդ խնդիրը թողնելով բաց, ապագայի հա-
մար, ես համաձայն եմ հանձնել գումարը
Բարեգործական Ընկերության, նույնպես հա-
մաձայն եմ և այն մի քանի փոփոխություն-
ների հետ, որ Ընկերության խորհուրդը ար-
ժան է համարել մտցնել իմ հոդվածների
մեջ:

Հոկտեմբերյան Մեծ Ռեուլուցիայի բորբ
արևը և նրա կենսաբեր ճառագայթները տա-
րածվեցին մինչև Հայոց աշխարհը, հայ մտքի
մշակներին բերկրալից կյանք ավետելով:
Ստորև բերում ենք Շահագիզի այդ նամակը:

Գումարը, որ հանձնել է ինձ հորեւյանիս
մասնաժողովը, էլ յոթ հազար իններ հարյուր
լառապետ և իններ ուսլի (7,949 ռ.). Սորա
վերա ես ավելացնում եմ ինձանից 51 ուսլ-
ի, որպեսզի գումարը լինի ուղիղ ուր հա-
զար, առանց կոտորակի: Որովհետև մեր բա-
նակցությունը սկսվել է մի տարի առաջ, ես
հանձն եմ առնում դնելու իմ վերա տուգանք
և առաջուց վճարել, իբր թե այն անցած
տարվա տոկոսը, 350 ուսլի և իսնարհաբար
կլնեղրեմ Բարեգործական Ընկերության
խորհրդից, որ այդ 350 ռ. այժմս իսկ բաժա-
նե մեր կարոտայլ գրականներին, առանց իմ
խորհրդակցության):

Եվ թող գրականների այդ փոքրիկ գումա-
րը, որ է ութ հազար և որի հիմքը դրել է հայ
հասարակությունը 1892 թվականին, մնա
լուսավոր հանգանակ այն գաղափարի, որ ոչ
մի ազգ, եթե նա կամենում է ապրել, այսին-
քն հետ շրնկնել և առաջ գնալ, պետք է հա-
մերաշխաբար ձեռքը մեկնե յուր կարոտայլ
գրականներին ու նյութապես օգնե դրանց:
Այո՛, ես հավատում եմ, որ մի օր Հայկական
ազգը, կուլտուրայի գիտակցությամբ ներ-
շնչված և ամենաազնիվ ձգտողություններով
գարգացած, ավետիս կտա յուր մտավոր մը-
շակներին, ասելով. «Տեկայք առ իս ամենայն
աշխատյալք և բեռնավորք, և ես հանդուցից
զձեզս»:

1) Ես չառ շնորհակալ եմ Ընկերության
խորհրդից, որ նա կամեցել է մեզ այնպիսի
մեծ պատիվ ընծայել, տալով մեզ իրավունք
նպաստներ նշանակելու այն գրականներին,
որոնց արժանի կհամարենք. բայց այդ ինքը
խորհուրդը յուր ձեռնահաս անձերով ավելի
լավ կարող էր կատարել մոտից, քան թե
մենք հեռվից: Վասն որո երբ որ այն նը-
պաստները վիճելի առարկա կդառնան խոր-
հրդի համար և հարկավոր կլինի ձայների
առավելություն, մենք հոժար կլինենք տալ
և մեր կարծիքը:

Ակնածու սպասավոր Ձերդ պատվականու-
թյան

Ս. Շահագիզյան

Ներփակյալ ուղարկում եմ փոխանակա գիրը — 8350 ռ.:

1888 թ. 14 մարտի Մոսկվա*)

1898 թ. մարտի 27-ին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Խորհուրդը, իր № 67 գրությամբ, բանաստեղծին ծանուցում է, որ արդեն ստացել է թե՛ նամակը և թե՛ 8350 ռուբլու փոխանակագիրը և հիշյալ

գումարի 8.000 ռուբլին, որպես հիմնական դրամագումար, 5 տոկոսով շահեցման է հանձնել Թիֆլիսի առևտրական բանկը ու կոչել աճրական Ֆոնդ Ս. Շահազիզին՝ անվան—

Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդ
№ 67
27 մարտ 1898 թ.

Մեծապատիվ պարոն
Սմբատ Շահազիզ

Խորհուրդս պատիվ ունեցավ ստանալու Ձեր ամսիս 14-ի գրությունը և 8350 ռուբլու փոխանակագիրը և որոշեց անմիջապես 8.000 ռուբլին հանձնել ի շահեցումն Թիֆլիսի առևտրական բանկին 5%-ով և այդ

գումարը համարել աճրական Ֆոնդ Ս. Շահազիզին, իսկ 350 ռուբլին պահեց առձեռն գործադրելու համաձայն Ձեր ցանկության, Գործադրությունից հետո Խորհուրդս պարտք կհամարի տեղեկություն տալ Ձեզ:

Նախագահ՝ (Ա. Ա.)

Քարտուղար՝ (Հ. Ա.) *)

Ստանալով Ընկերության Խորհրդի վերը բերված գրությունը, բանաստեղծը խնդրում է, որպեսզի գրական ֆոնդը լինի ոչ թե Շահազիզի անվան, այլ Սևրովյան-Նազարյան գրականական ֆոնդը կոչվի, քանի որ գաիր վաղեմի ցանկությունն է եղել և բացի դրանից նա մի հանդիսի առթիվ իր ճա-

ռում հանդիսականներին հայտնել է, որ գումարը նվիրել է Արսլյանի և Նազարյանի անուններին, Շահազիզը խնդրում է, որպեսզի Ընկերության վարչությունը հարգած լինի իր այս ցանկությունը, Ահա այդ նամակը.—

Մեծաբզո Նախագահին
Հայոց Բարեգործական Ընկերության Կովկասում

Մեծապատիվ Տե-

ղատիվ ունեցա ստանալու Բարեգործական Ընկերության գրությունը 27-ին մարտի № 67, որով հայտնում եք թե արդեն ստացված է իմ ուղարկած 8350 ռուբլին, որից 8 հազարը հանձնել եք ի շահեցումն Թիֆլիսի առևտրական բանկին 5%-ով և պիտի համարվի աճրական Ֆոնդ Ս. Շահազիզին, իսկ 350 ռ. պիտի է գործադրվի այժմեի իսկ, համաձայն իմ ցանկության: Մատուցանելով Խորհրդիդ իմ խորին շնորհակալությունը, որ սիրողաբար հանձն առավ տնորինել հիշյալ գումարը, ես խոնարհաբար կխնդրեի, որ գրական ֆոնդը այսուհետև կոչվի ոչ Շահազիզի, այլ Սևրովյան-

Նազարյան գրականական ֆոնդ: Այդ իմ ուխտյալ ցանկությունն է եղել սկզբից, երբ առաջին անգամ այդ միտքը հղացավ այստեղ, Անցյալ մարտի 26-ին մի հանդեսի առթիվ ես ճառիս մեջ հիշեցի հանդիսականներին, որ գումարը արդեն նվիրել եմ եմ. Արսլյանի և Ս. Նազարյանի անուններին:

Այս բոլորը զեկուցանելով Ընկերությանդ Խորհրդին, հատուկ խնդրում եմ, որ անտես չանե իմ ցանկությունը:

Շատ բավական է ինձ, եթե հիմնադիր ֆոնդին համարվեի:

Պատրաստական սպասավոր՝

Չեռ Ս. Շահազիզյան

1888 թ.

8 ապրիլ**)

*) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՆՆՆՈՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ, Ֆոնդ № 28, գործ № 46, էջ 8—9:

**) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՆՆՆՈՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ, Ֆոնդ № 28, գործ № 46, էջ 11:

**) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՆՆՆՈՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ, Ֆոնդ № 28, գործ № 46, էջ 9:

Քննարկում ստորագրությունների փոխարեն դրված են փափագծերում անվան և ազգանվան սկզբնաղագհերը:

350 ուրիշին Բարեգործական Ընկերության
խորհուրդը հատկացնում է Ղ. Աղայանին և
Հ. Թումանյանին, որպես ամենակարողայ

գրողների, այս մասին հետևյալը ժանուցի-
լով Ս. Շահազիզին։—

Կ. Հ. Ռ. Ը. Խորհուրդ
№ 141

28 մայիսի 1898 թ.

Մեծապատիվ պարոն
Ամբաստանապետ

Խորհուրդս պատգ և համարում հայտնել
Ձեզ ի տեղեկություն, որ Ձեր հատկացրած
350 ուրիշին տրվեց պ. պ. Ղազարոս Աղա-

յանցին և Հովհաննես Թումանյանցին, իրրե
ամենակարողայ գրականագետների,

Նախագահ
Քարտուղար

1898 թվի օգոստոսի 25-ին Յալթայից գը-
րած իր նամակում Շահազիզը պարտավում է
հայ հարուստներին, որոնց չեն գիտակցում
հայ կարողության գրողներին օգնելու անհրա-
ժեշտությունը և չեն նպաստում գրական
ֆոնդի ուժեղացմանը։ Այս նամակում նա

հայտնում է, որ ի պատիվ իր նախկին աշա-
կերտների, որոշել է սեփական միջոցներից
երկու հազար ուրիշ ևս փոխադրել, որպես-
զի ֆոնդի հիմնադրամը ութի փոխարեն կազ-
մի տասը հազար։

Մեծարգո նախագահին Հայոց Բարեգործական Ընկերության Կոմիտեում

Մեծապատիվ Աղևսանդր Ստեփանովիչ

Եթե մեր հասարակության ունեւորները քաց
աշքով նայեն մեր կարողության գրականների
վրա, նոքա, անտարակույս, կհամոզվեն,
որ դարիս կենսական խնդիրներից մինը է և
գրականական ֆոնդի առաջադիմությունը,
մի խնդիր, որով այսօր գրադված է լուսա-
վոր եվրոպան։

Բայց, ավագ, որ այդ գիտակցությունը
դեռ հեռու է մերայիններից, և այդ պատճա-
ռով խնդրի կարևորությունը զգալի չէ շա-
տերին։ Ցանկանալով մեր նորընծա ֆոնդին

(Արուսյան-Նազարյան) մի փոքր ավելի ուժ
տալ, ես այս օրերս կփոխադրեմ Ձեզ իմ
ունեցածից երկու հազար ուրիշ, ի պատիվ
իմ նախկին աշակերտների, որ առաջին ու-
ղարկածիս հետ միասին կկազմեն տասը
հազար։

Ձեզ հուսահատվում, որ ապագայում ինձ
կհաջողվի ուրիշներից էլ նպաստներ հավա-
քել։

Ընդունեցեք իմ սիրտ և հարգանքի հավաս-
տիքը, որով մնամ պատրաստական մպա-
սավոր

Ար. Ս. Շահազիզյան

25 օգոստոսի

1898 թ.

Յալթա

Իմ հասցեն. — Ялта, С. Шех. Азия

(մինչև սեպտեմբերի վերջը)։*

Կովկասի կառավարչապետի կարգադրու-
թյամբ 1899 թվի սկզբներին խիստ փոփոխ-
ման է ենթարկվում Կովկասի Հայոց Բարե-
գործական Ընկերության կանոնադրությունը,
որի համար էլ նա զրկվում է «Արուսյան-Նա-
զարյան» ֆոնդի գումարը իր նպատակին

ծառայեցնելու հնարավորությունից։ Տեղե-
կանալով այս մասին Շահազիզը նամակ է
գրում Ընկերությանը և խնդրում մանրամա-
սին իրազեկ դարձնել իրեն իրադրությանը,
որպեսզի ինքը ըստ այնմ տնորինել կարո-
ղանա ֆոնդի վիճակը։

*) ՀԱՅՍՏ Գիտական կենտրոնական տրիբյւ, ֆոնդ
№ 26, գործ № 47, էջ 21

*) ՀԱՅՍՏ Գիտական կենտրոնական տրիբյւ, ֆոնդ
№ 28, գործ № 48, էջ 12

Մեծարգո Հոգաբարձության Հայոց Բարեգործական Ընկերության Կովկասում

Պատիվ ունիմ հայտնել արգո Հոգաբարձությանդ, որ այս օրերին լրագրորեն իմացա, որ Հայոց Բարեգործական Ընկերության կանոնադրությունները պիտի հիմնովին ենթարկվին փոփոխությունների նոր ծրագրի գործությամբ, որ մշակել է Կովկասի կառավարչապետը ներքին գործերի մինիստրի համաձայնությամբ:

Նույն լրագրորենում հաղորդված են նոր ծրագրի և էական կետերը, որոնցից, ի միջի այլոց, երևում է, որ նախ նյութական նըպաստ տալ կարոտյալներին գրեթե խափանված է, և երկրորդ Ընկերության փակման դեպքում քույր նրա գույքը անցնում է քաղաքային վարչությանը:

Ես այս երկու կետերի վերա հարկավոր համարեցի շեշտել, որովհետև դրանցով միանգամայն խախտվում են այն պայմանները, որ սրանից երկու տարի առաջ կայացրել ենք Ընկերության հետ՝ վերադարձնել ԵԱ-

բովան-նազարյան գրականական ֆոնդի կազմակերպության, որի համար փոխադրել եմ նախ ուր ճազար և ապա երկու հազար, ընդամենը տասը հազար: Այն պայմաններով պարզապես որոշված էր, որ ա) Բարեգործական Ընկերությունը հիշյալ գումարի տարեկան տոկոսները հատկացնելու է հայ կարոտյալ գրականներին, և բ) Ընկերության փակման դեպքում ֆոնդը հանձնում է ներսիայան հոգևոր գաղտնիքին՝ նույն նպատակներով գործադրելու: Ես ընդունեցի Ընկերության առաջարկած պայմանները, որոնց այժմ պիտի փոխվին: Վասն որո խոնարհաբար կամեի խնդրել, որ Ընկերության հոգաբարձությունը բարեհաճե ծանոթացնել մեզ գործի հանգամանքների հետ, որպեսզի կարողանանք օֆոնդին ապագայի մասին մտածել:

Պատրաստական սպասավոր Հոգաբարձությունդ

Ա. Շանազիզյան

1899 թ.

8 ապրիլի

Մոսկվա*)

Շահազիզը Ընկերության նոր կանոնադրությունը ստանալով տեսնում է, որ ֆոնդի գումարը իր նպատակին ծառայեցնել այլևս ի վիճակի չպիտի լինի Ընկերությունը, ուս-

տի հետևյալ նամակով խնդրում է ժամհարյանների բանկային գրասենյակի միջոցով իրեն վերադարձնել գումարը:—

Հայոց Բարեգործական Ընկերության Խորհուրդին

Սմբատ Շանազիզյանի զեկուցումը

Պատիվ ունիմ հայտնել, որ Ընկերությանդ նոր կանոնադրությունը ստացաւ: Այդ նոր կանոնադրությունից տեղեկացա, որ Ընկերության գործունեությունը այսուհետև սահմանված է չքավոր դասակարգին նյութապես օգնություն մատուցանելու Որովհետև ԵԱ-բովան-նազարյան գրականական ֆոնդի գումարը փոխադրել եմ այն պայմանով, որ դրա տարեկան տոկոսը բաժանվի միայն մեր կարոտյալ դրականներին,— այն որ այժմ չի մտած նոր կանոնադրության մեջ,— այս պատճառով խոնարհաբար կխնդրեմ, որ հիշ-

յալ ֆոնդի գումարը՝ տասը հազար ուսուլին Ընկերության Խորհուրդը բարեհաճե փոխադրել ինձ Եղը. ժամհարյանց բանկային կոնտորի միջոցով:

Ես ինձ թույլ եմ տալիս վկայելու Ընկերության Խորհրդիդ իմ խորին շնորհակալությունը, որ այս երկու տարվա ընթացքում ամենայն արդարությամբ մատակարարեց տոկոսները կարոտյալ գրականներին ըստ արժանիքի:

Ակնածու սպասավոր Ընկերության

Ա. Շանազիզյան

1899 թ.

17 ապրիլի

Մոսկվա**)

*) 2000 Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 264, էջ 11.

**) Նույնը, էջ 14.

Շահագրգիռ սույն նամակի վրա կա հետևյալ մակագրությունը.—

1899 թ. հունիսի 6-ին Թիֆլիսում կայացած Ընկերության կենտրոնական ընդհանուր ժողովը որոշեց վերադարձնել՝ հորհրդին

թողնելով որոշել վերադարձնելու ժամանակը:

Նախագահ՝ ընդհանուր ժողովի՝
Րժ. Բ. Նավասարդյան

Փարտուղար՝ Շիրինյան

Կ. Հ. Բ. Ը. հորհուրդը նշված դամարը փոխադրում է Շահագրգիռ, որը չի հապադում իրազեկ դարձնել նրան թե՛ դամարի ստացման և թե՛ իր նպատակների մասին:

Շահագրգիռ այս նամակով էլ ավարտվում է «Արքայան-Նազարյան» դրական ֆոնդի շուրջը հղած գրագրությունները:

Մեծարգո նախագահին

Հայոց Բարեգործական Ընկերությանը հուրհուրով

Աղեֆսանդր Մելիք-Ազարյանին

Պատիվ ունիմ ծանուցանելու պ. նախագահից Հայոց Բարեգործական Ընկերության հորհրդին, որ հոկտեմբերի 18-ին Յալթայից վերադառնալով Մոսկվա, ստացա Թիֆլիսի Առևտրական բանկի փոխադրական տոմսը տասն հազար մի հարյուր երեսուն և ութ ռուբլու ութսուն և մի կոպեկի համուն Եղբ. Ժամհարյանների, որ հորհուրդը ուղարկել է ինձ ըստ կանխիկ պայմանագրության:

Ինչպես հորհրդից պաշտոնական թղթում հայտարարված է, «Արքայան-Նազարյան» դրական ֆոնդի հիմնական գումարն է 10

հազար, չգործադրված տոկոսի մնացորդը 88 ռուբլի 41 կոպեկ, նվեր Բաթումից ու Բեռլինի ուսանողներից նույն ֆոնդին՝ 52 ռ. 95 կոպ., որոնցից դուրս գալով ճանապարհածախսը կմնա փոխադրված գումար 10138 ռ. 81 կոպ.: Այդ գումարը, մեր կարոտյալ գրականներին օգնելու նպատակով, ներկա ամսին 18-ին դրած հմ ցպահանջ իմ առնուով 51½ տոկ. Եղբ. Ժամհարյանների բանկային կոնտորում:

Խորին շնորհակալությամբ պատրաստական սպասավոր

Ս. Շահագրգյան

1899 թ.

25 հոկտեմբերի

Մոսկվա*)

Այնուհետև Ս. Շահագրգր, մինչև իր մահը, ամեն տարի կանոնավոր կերպով նպատակորել է հայ անապահով գրողներին հիմնական դրամագլխի տարեկան տոկոսի՝ 500 ռուբլու սահմաններում:

Նպաստ ստացել են 14 հոգի. դրանցից ոմանք նպաստ ստացել են 2—3 տարի շարունակ, իսկ մի քանիսն էլ, ինչպես՝ Ղազարոս Աղայանը, Հով. Թումանյանը, Պերճ Պողոսյանը, 5—6 տարի շարունակ: Նպաստի

առավելագույն չափը հղել է 200 ռուբլի, իսկ հվազագույնը՝ 50 ռուբլի:

Շահագրգիռ հաջորդ նամակներից մեկը նույնպես հասցեագրված է Կ. Հ. Բ. Ընկերությանը և վերաբերում է Ընկերության նորարաց մատենադարան-ընթերցարանի համար գրականություն ուղարկելուն: Բանաստեղծը սիրով ընդառաջելով իրեն արված դիմումին, մի արկղ գրքեր է ուղարկում ընթերցարանի համար: Ահա այդ նամակը.—

Մեծարգո նախագահ Հայոց Բարեգործական Ընկերությանը հուրհուրով

Աղեֆսանդր Իվանովիչ

Մի քանի ամիս առաջ Բարեգործականի հորհրդի կողմից պատիվ ունեցա ստանալ հրավեր Ընկերության նոր բացված «Մատենադարան-ընթերցարանին» նվիրել ինքնու-

րույն և թարգմանական շարադրություններ, այլև Արեւելագիտության և Կովկասագիտության վերաբերյալ գրքեր:

Ամենաբն սիրով ուղարկելով այդ նշանավոր և ժամանակակից հիմնականությունը, որպես մի գեղեցիկ միջոց կենցաղագուտ դիտություններ ժողովրդի մեջ տարածելու, ես

*) ՀԱՅԱ Պատական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 28, գործ № 59, էջ 32:

առայած չկարողացա պրոգրամին համաձայն
դրքեր ուղարկել, մասնավոր՝ որ ինձ հայտ-
նի չէ. թի ներկայումս ինչ օրինակներ կան
մատենադարան-ընթացքարանում, որպեսզի
պակասորդը ըստ շափու կարողության լը-
րացնեն:

Բայց համարելով, որ ընթերցարանը պետք
է լինի ոչ մասնագիտական, եւ ուղար-
կեցի Ձեր անունով մի արկղ գիրք, վերա-
բերյալ դանազան դուրամատչելի նյութե-
րի, որ չեմ կարծում ավելորդ լինին ընթեր-
ցարանի համար:

12 դեկտ. 1894 թ.)

Այս նամակի հաջորդ երեսին կա հետևյալ գրությունը.—

Կ. Հ. Բ. Ը. Խորհուրդ
№ 2
10 հունվարի՝ 1895 թ.

Մեծապատիվ տեռ
Ամրատ Շահագիզ

Խորհուրդս քաղցր պարտավորություն է
համարում հայտնել Ձեզ յուր սրտագին շնոր-
հակալությունները Ձեր՝ Ընկերությանս ըն-
թերցարանին արած նվերի մասին, որն ստա-

Մաղթելով Ձեզ, մեծապատիվ պա-
րոն, և Խորհրդիդ անդամներին, ա-
ջողություն և երկար կյանք: որպեսզի մար-
դասիրության և լուսավորության պտուղները
ավելանան օրեցօր մի ր ազգի մեջ, մնամ
պատրաստական սպասովոր

Ձեր Ա. Շահագիզյան

«Արկղը ուղարկված է Դամբովի գրավա-
ճառանոցից «Надежда» կոնտորի միջնորդու-
թյամբ:

Թիշչկ Հովհաննես Հովհաննիսյանին հաս-
ցեագրված նամակի շարժառիթ է ծառայել
Բարեգործական Ընկերության Երևանի ճյու-
ղի ցանկությունը՝ Շահագիզին պարտավո-
րեցնել հալ սովյալների օգտին հանգանա-
կություն կատարելու: Երբ Շահագիզը ձեռ-
նամուխ է լինում հանգանակությանը, ստաց-
վում է կաթողիկոսի կոնդակը, որով նույն
պես առաջարկվում էր հայ սովյալների օգտին

ցավ Խորհուրդս «Надежда» ընկերության
ձեռքով, որն բաղկացած է 79 կտոր գրքե-
րից:

Նախագահ՝

Քարտուղար՝

Մեծարգո հայրենակից

Հովհաննես Հովհաննիսյան

Ստանալով Բարեգործական Ընկերության
Երևանա ճյուղի հրավերը՝ օգնություն հասցե-
նել սովյալներին, ես գրադվեցի. թե ինչպե-
ս պետք է առաջ տանել այդ խնդիրը: Այդ իսկ
մտածմունքների մեջ էի, երբ ստացանք և
վեհափառի կոնդակը: Ժողովրդի մեջ սկսվեց
իրարանցում, այնպես որ ինձ անհարմար էր
աչնուհետև առանձին հանգանակություն
անել Ձեր Ընկերության անունով, իմանալով
որ Ժողովրդի հակումն գլխավորաբար կաթո-
ղիկոսի կողմը պիտի լինի:

ոին, որոնց գումարը մոտ հասնում է 3000-ի:
Ինձ մնում էր միայն քաղալերել դոցա
ձեռնարկությունը: Եվ Ժողովրդականները
կամեցան ժողովել. այդ նպատակով սո-
ցանից երկու պարոն եկան իմ տունս և
խնդրեցին գործի գլուխ անցնել և սկսել. այն
ժամանակ ես էլ առաջարկեցի էմ. Պուպով-
յանին՝ հավաքել նախիջևանիցներին մեզ և
Արգ. Հովհաննիսյանին՝ մյուսների մեջ. ա-
ռաջինը հավաքել է 1000 մ., երկրորդը՝ 660,
իսկ ես՝ 350, այնպես ընտանյոք, մի երկու
բարեկամներիս հետ: Ընգամենն է 2.000
(10 ո. ճանապարհածախս): Սորանից 1.000
մանեթ ուղարկում եմ Ընկերությանը (թե
շատերը գուցե հակառակ լինեն) և 1.000
մանեթ վեհափառին՝ Խորեն Ստեփաննի ա-
նունով, Թեև հանգանակությունը շարու-

Այդպես և եղավ: Մի քանի մասնավոր
մարդիկ յուրյանց նվերները առանձին նա-
մակներով ուղղակի ուղարկեցին վեհափա-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 28, գործ № 119, էջ 92:

նակվում է, բայց այն բացառապես կերթա
Վեհափառին, և ես անխառն եմ դորան։

Խնդրեմ ընդունեցե՞ք մեր աննշան լուսան
այդ բազմաթիվ սովյալների համար, որոնց
հարկավոր են հազարներ և ոչ հազար։

Մատուցանելով իմ խորին հարգանքս մե-
ծարդու նախագահիդ և անդամներիդ, սիրելի
Մեքատիս, միամ միշտ պատրաստական
սպասավոր

Ջեֆ Ս. Ըահագիզյան

Նամակի կողին ավելացված է հետևյալ նախադասությունը. —

Կանանց կողմից նույնպես կատարված
օժանդակություն՝ նախաձեռնություններ այ-
1894 թ.
9 մայիսի^{*)})

րիացյալ տիկնոջ ներուխյանի և Աճեմյանի,

Շահագիզի, ստորև բերվող, հաշորդ երկու
նամակները հասցեագրված են Մկրտիչ կա-
թողիկոսին (Խրիմյան Հայրիկին)։

Շահագիզը այս նամակները գրել է մի
այիպիսի ժամանակամիջոցում, երբ Տաճ-
կահայաստանում մոլեզունում էր «Եճ» մար-
դասպան սովթան Արդուլ Համիդի մահա-
րեր սուրբ, ամենուրեք մահ սփռելով։ Իր իսկ
արյան ու արցունքի ծովում խեղդվող տաճ-
կահայ ժողովրդի ողբալի կացությունը խորը
վիրտ էր պատճառում ժամանակի հայոց
հայրապետ Խրիմյան Հայրիկին։ Նա որո-
շում է անձամբ ներկայանալ ուսաց կայսեր
և նրա օգնությունը խնդրել, Խրիմյանի այս
ճանապարհորդությունը տևում է շուրջ երեք
ամիս։ Ժանապարհորդության ընթացքում
նա կանգ է առնում Նոր-Նախիջևանում,
Մոսկվայում, Հայոց հայրապետին ըստ ա-

մենայնի վայելուչ կերպով ընդունելու հա-
մար Մոսկվայի հայ հասարակությունը ընտ-
րում է մի հանձնաժողով, որի կազմի մեջ
էր մտնում նաև Շահագիզը։

Իր այս նամակում Շահագիզը նշելով հայ
ժողովրդի ակնկալությունները Վեհի ճանա-
պարհորդության, առթիվ, որը նախամարզարե
Մովսիսի պես կամենում է յուր ժողովուրդը
փրկել նգիպտոսից և բերել Ավետյաց երկի-
րը՝ թերահավատությամբ է վերաբերվում
այդ առաքելության հաջողությանը, քանի
սոր այդ վեհագույն սկզբունքները արգել-
վում են քաղաքագիտական միջազգային շա-
հախնդրություններից, այնպես որ դոքա
անկարող են տակավին ազատ ընթացք
դնել թնդանությունների և հրազենների միջից,
որով սպառազինված են այսօր պետություն-
ները։ Ահա Շահագիզի այդ նամակը. —

Աստուածապատիվ Հայրապետ.

Վեհափառ Տեր.

Սուրբ մատանց գիրը Ձերդ Վեհափառու-
թյան ամենախորին որդիական զգացմուն-
քով և ակնածություններ բախտ ունեցա ստա-
նայ ե երկրպագություն մատուցանել մաք-
րափայլ Հովուապետիդ, որ հետին սպասա-
վորիս բարեհաճել է ցույց տալ յուր գթա-
ռատ շնորհը և տրամադրությունը։

Վեհափառ Տեր, արդարև մեր ազգը երբեք
այնպիսի հուզմունքով և հրատապ ակնկա-
լություններով չէ հետնել այն ճանապարհոր-
դության, որ ամենայն դժվարությամբ հանձն
է առել կատարել մի ալեգարդ և ազգային
ցավներից դժբախտացած Անձն, որպիսին եք
Դուք։ Սակայն նույնիսկ բազմաշարար ազ-
գը այսօր լիովին համարում է յուրյան եր-
ջանիկ, ունենալով Վեհիդ նման Առաջնորդ,
որ նախամարզարե Մովսիսի պես կամենում

է յուր ժողովուրդը փրկել նգիպտոսից և
բերել Ավետյաց երկիրը։ Նվ այսօր մենք,
խորախիացվոց մանուկների պես, արմա-
վենիների ոստը բռնած, աղաղակում ենք և
ասում. «Օ՜վսաննա, որ գաս հանուն Տյառն-
օրհնություն ի բարձանցս»։ Ամեն մտացի և
խոհական մարդ անտարակույս համոզված
է, Ձերդ Վեհափառություն, որ մաքառում
եք մարդասիրական և քրիստոնեական րու-
կրդությունների լայն ասպարիզում և հոժար
եք արտաք պատվիլի նախախնամությունից
հանձնված Ձեզ հոտի համար. սակայն, ափ-
սո՛ւ, որ այդ վեհագույն սկզբունքները ար-
գելվում են քաղաքագիտական միջազգային
շահախնդրություններից, այնպես որ դոքա
անկարող են տակավին ազատ ընթացք
դնել թնդանությունների և հրազենների միջից,
որով սպառազինված են այսօր պետություն-
ները։ Ահա այս իսկ է պատճառը, որ և այ-
սօր, որպես և երեկ, տակավին պատած է

*) ՀԱՅԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 28, գործ № 365, էջ 60.

երկինքը պղնձի ամպերով ողջակիցյալ Սասունի նահատակների վերա և Վեհափառությանդ ամենագթած սիրտը պաշարված ծանր խորհրդածություններով և Այնդամենայնիվ հայրապետական զորավորությունը չէ թրվում մեզ որպես Մեծին Պարթևի երթը դեպի Տիգրոն:

Իսկ վասն ի ցկյանս, որ Վեհափառությունդ ականարկի, արդարև արգելյալ կամ հայնժ որպես ի կապանս և ոչ կարեմ ելանել և զերծա-

1895 թ. 20 մարտի*)

Բանաստեղծ-հրապարակախոսի Խրիմյան Հայրիկին ուղղված մյուս նամակը գրված է նախորդ նամակից մոտ երկու ամիս հետո: Այս նամակում նա նորից անդրադառնալով հայկական հարցի նկատմամբ Եվրոպայի ցուցաբերած մարդասիրությանը, իր գրգռությունն է հայտնում, որ այդ մարդասիրությունը խոսքից գործի չի վերածվում և վերջ չի դրվում Տաճկահայաստանում տիրող բարբարոսություններին: Դրա պատճառը Շահադիդը համարում է այն, որ ռմիշազային կենճոտ մրցողությունները, միանգամայն հակառակ քրիստոնեական և մարդասիրական սկզբունքներին, այսօր, որպես և երեկ, արգելք են լինում գլորելու փաշաների տիրապետությունը...: Շահադիդը չի հավատում եվրոպական պետությունների նենգ խոստումներին, նա համոզված է, որ այդ պետությունների միջև գոյություն ունեցող մրցակցությունը, նրանց շահամոլությունը միշտ էլ արգելք պիտի հանդիսանան հայ ժողովրդի շահերի պաշտպանմանը: Նրանց կողմից, եվ իրավացի է մեր բանաստեղծը, երբ արյունոտ նախահերքերի հեղինակ Սուլթան Արզուլ Համիդը հարյուրավոր անմեղ հայերի արյունով կարմիր ներկեց Տաճկահայաստանի լեռներն ու ձորերը, Եվրոպայում զիլ հնչիլ սկսեցին հայասիրական, մարդասիրական ճառերը: Սակայն այդ ճառերը Եվրոպական պետական գործիչների կողմից արտասանվում էին միայն իրենց համար նպաստավոր հանրային կարծիք ստեղծելու նպատակով, այլ էր պատկերը իրականում: Օրինակ, այն ժամանակ, երբ Գլադստոնը բռնուցք էր ճռնում Թուրքիայի վրա ու սպառնում նրան իր հայասիրական զեղումներով համեմված ճառերով, անգլիական «մարդասեր» հյուպատոսը օժանդակում, զինում էր Թուրք մարդասպան-

ներ, ցավով սիրով անրուժյալ տանջալի Սմին իրի շարժանանամ պարթևադեմ և անբիծ երեսացդ տեսություն: Իցի՞վ թե ապաքինեի հառաչիկա Տոնիս և ի թես ամպոց սլանայի առ զարշապարս Վեհիդ՝ առաքինվույն և սրբակենցաղի, և ողջագուրեի Սուրբդ սիրով սրտի իմո:

Մնամ խորին ականածությունժը հլու և հընազանդ սպասավոր, Վեհափառությանդ օրհնությունը հայցող

Ս. Շահադիդյան:

ներին, Ահա ինչ է գրում այս մասին Մրկտիչ կաթողիկոսին ուղղված իր զեկուցագրում Աղթամարի կաթողիկոսական Տան տնդապահ և Վասպուրականի Առաջնորդական փոխանորդ Արսեն վարդապետը:—

«...Կոտորածի հեղինակներն կքաշալերվին նախ տեղվույս անգլիական վսեմ հյուպատոսի կողմեն և կվարձատրվին: Սա անցյալներն տեղվույս ռուսական վսեմ հյուպատոսի հետ Գառաշ և Կարճկան զավառները պատույտի ելած ժամանակը հյուր կլինի Գառաշի կոտորածի դուցազն Տերվիշ-բեկ Ղադի Կուլի խանի տունը և Կարճկանի դուցազն Մուսա պեյի տունը և ոչ միայն այսչափ, այլ նաև հիշյալ երկու ոճրագործներուն մեկ-մեկ նոր անգլիական հրացան նվեր տալի հետո Աղթամարի վանքը դնացած ժամանակը վանքի միաբանության անդամ վարդապետներուն կզույն Կուլի խանի և Մուսա պեյի ազնվությունը և կհավելու ըսել, թե դուք (հայերդ) գեշ եք: Բրիտանական քրիստոնյա պետություններկայացուցիչն քյուրդերու նկատմամբ յուր այս համակրությունը և հայոց նկատմամբ յուր հակակրությունը պաշտոնապես հայտնած ժամանակը հայտնի է թե քյուրդերն և մանավանդ հիշյալ կռվին ոճրագործ պեյերն ի՞նչ աստիճանի քաշալեր պիտի առնուն ևս առավել կոտորելու և հարստահարելու մնացյալ հայերը: Եվ արդեն ի՞նչ կնշանակե պաշտոնապես հրացան նվիրել քյուրդերու, երբ դանոնք զինաթափ ընելու առաջարկը կընեն Եվրոպան:

Սույն աղետից միջոցին անգլիական վսեմ հյուպատոսը հատուկ ծանուցումներով ժողովրդ յուր զրոշի ներքև հրավիրելիք հետո բոլոր շափահաս արունները ոստիկաններու միջոցավ այնպիսի միջոցի մը արտաքսեց զանոնք, երբ խեղճներն այլևս ուրիշ տեղեր պաշտպանություն փնտռելու կարող չէին. և ատոնք դուրս ելնելով, լեռներու, դաշտի խոտերու, աղբյուրներաց հորերու

*) ՀԱՍՏ Գետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 50, վարչա-կազմակերպական բաժին, պորտ № 184, էջ 151

մեջ ապաստարան փնտռած ժամանակ բազմաթիվ անձինք սրտ ճարակ եղան...

Անդրիական ներկայացուցչի սուլն և նախորդ հակահայ վարմունքը հիշատակած ժամանակը չենք կարող անհիշատակ թողուլ անդվույս ուսական վսեմ. հյուպատոսի և նորա հայազգի թարգման պ. Կարապետ Զիլինկարյանի ազնիվ և մարդասեր վարմունքը, զոր ցույց տվին թե՛ ամբողջ կոտորածի միջոցին և թե՛ հետ կոտորածն զանազան խնդիրներու մեջ, որ Ռուսական հյուպատոսարան կոտորածի բոլոր մանրամասնությունները խնամով հավաքել և տեղեկագրել է հետո, Հայերը զինաթափ ընելու, հյուպատոսարաններու մեջը ապաստանող հայերը խուզարկելու, զոռյակները բերդ կամ այլուր փոխադրելու հային խնդրոց մեջը նշանակելի ծառայություններ մատուցող հայուցա: Թողնուք որ հազարավոր հայերը ուսական դրոշակի ներքև առնելով թե՛ հյուպատոսարանի մեջը և թե՛ քանի որ ուսական հպատակներու տանց մեջը պաշտպանեց զանոնք ընդդեմ կոտորածի: Ռուսահպատակ Կարոյանց տան վրա քաշած դրոշակն պատճառեղավ պաշտպանելու այդ ամբողջ թաղեն զատ նաև Կլոր-գարի մի մասի ժողովուրդը, որք առանց անոր անխառնակի կորսալան

պիտի մատնվին, չունենալով որեւէ փախուստի միջոց: Ռուսական հյուպատոսի սուլն վեհանձն վարմունքը ընդդեմ անգլիական հյուպատոսի հակահայ և ոչ մարդասեր վարմանց գրաված է արդեն մեր ազգայնոց ուշադրությունը և կատարյալ վստահությունը. այնպես որ որեւէ դեպք մը կամ կասկած մը պատահած ժամանակը ուսական հյուպատոսարանի պաշտպանության և միջնորդության կղիմեն. իսկ վսեմ. հյուպատոսն ալ, որ ուշադիր է ամեն դիպաց և պատահարներու, հաճախ պաշտոնական անձանց ուշադրությունը կհրավիրե անոնց վրա և պաշտոնական հավաստիք ստանալով, կապահովացնե հայերը ընդդեմ ապագա կասկածներու:

Ռուսական վսեմ. հյուպատոսի և իր թարգմանի նշանակյալ վեհանձն և մարդասեր վարմունքը ներկայացնելով Ձեր Վեհափառության հատուկ ուշադրության, կիսնդրեմ, որ բարեհաճիք հայրապետական, հատուկ գրով օրհնել նոցա մարդասիրական ընթացքը, իրենց կյանքը և գերդաստանը և քայալերյալ հարատևելու ի նույն:

Կամամ ըղձազին կարոտով համբույրի սրբո Աշույդ օծելու

Տեղապահ Կաթողիկոսության Տանն Աղթամար և Առաջնորդական Փոխանորդ
Վասպուրականի՝ Արսեն վարդապետ Մարգարյան

1886 թ. ոգոստոս 21

(ան*)

Հետագայում մեր բանաստեղծը ավելի խիստ տոնով է սկսում արտահայտվել նվրդալի մարդասիրության, նրա քաղաքակրթության հասցեին, իր հորեղբոր որդուն հասցեագրված մի նամակում նա գրում է.

«Կենդ գնե՛ք այս մեր թշվառ կոմիդիային...

Նվրդական իսող է անում, մի անարգ և բարբարոսական կոմիդիա. տառնիններորդ դարի էջերը կմնան սևացած պատմություն մեջ և կարճանագրեն խալտառակ դիպլոմատիայի հնարագիտությունները. Նվրդալի մարդասիրությունը, Նվրդալի պրոգրեսը ոչ այլ ինչ է, քան թե մի ամբողջ շարք վայրենի կրքերի և անառակության, թքեմ այդ շիվիլիզացիայի երեսին, որ ներկայացնում է մի կատարյալ մտավորական սիֆիլիզացիա. Տես՝ ի՞նչ դիրք է բռնել այն ճղճղան Ֆրանսիան, որ մեզ ուսուցանում էր ևղբայ-

րությամբ և հավասարությամբ, այժմ ինքը փոխվել է ստրուկ և ծառա և պապանձել է լեզվով, որ մի ծալիտ անգամ չհանն այն անմեղ զոհերի համար, որոնք պաշտպան են հանդիսանում նրա դավանած սկզբունքների համար. Գրիչս հրաժարվում է շարունակել այն անտանելի պատմությունը:

Բայց այնուամենայնիվ ավելի պիտի հուսալ, քան թե վհատել»^{*)}:

Հավատեսությունը կարմիր գծի պես անցնում է Շահազիզի նամակներով, նա հուսահատվել, վհատել չգիտե, անգամ երբ հակական երկնքի հորիզոնը... է պաշարված երկաթի սմպերով: Նա այնտեղ նկատում է ռադոտափայլ կետ մի...: Անհուն է նրա հավատը հայ ժողովրդի լավագույն ապագայի նկատմամբ, նա հուսադրում է իրիմյանին, որ ռեբրձ է գարուն...:»

Ստորև բերում ենք իրիմյանին ուղղված երկրորդ նամակը:

*) ՀԱՅՈՒ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 58, վարչա-կազմակերպչական րութին, գործ № 184, էջ 42—43:

*) Երվանդ Շահազիզ, «Սմբատ Շահազիզի կենսագրությունը», Երևան 1944 թ., էջ 94:

Աստուածաստիվ Քահանայապետ
Վեհափառ Տեռ

Խորին պատկառանքով գոհությամբ մատուցանեմ Վեհափառ Տյառնդ, որ բարեհաճել էիք գրել իսահակ ժամհարյանին, որ ինձ տանի յուր հետ Ղարաբաղ, որպեսզի սակավիկ մի մխիթարվենք հայրենական հիշատակարաններով մեր բազմավտանգ ժամանակներում։ Ասում ենք բազմավտանգ, որովհետև հայկական հրկնքի հորիզոնը դեռ թվում է մեզ պաշարված երկաթի ամպերով։ Թեև աղոթափայլ կետ մի գոգցես ցլանում է դոցա միջից և մերձ է գարունն...

Գովելի է նվրտայլի մարդասիրությունը հայկական հարցի վերաբերությամբ, բայց ավելի գովելի կլինեք, եթե նա զորության դեմ զորություն գործ աներ և սյդպես վերջ դներ այն րարքաբասական միջոցներին, որոնցով թուրքը բռնաբարում է յուր անմեղ ժողովրդին։ Սակայն միջազգային կնճռոտ մրցողությունները միանգամայն հակառակ քրիստոնեական և մարդասիրական սկզբունքներին, այսօր, որպես և երեկ, արգելք են լինում գլորելու փաշաների ախրապետությունը և նոր կարգեր մտցնելու քայքայված աշխարհիս մեջ։ Այս շարադեպ հանգամանքը քաջ նկատելով և Ձերոյին Վեհափառությունը, թախծյալ սրտով, անմխիթար օրերի ու ակնկալությունների մեջ, հեռու հայրապետական Աթոռից ու կենտրոնից, հանձն էք առել նստել մի բացակողմյան քաղաքում

և անդադար կրկնել մարգարեի ողբը մի տայր զգլուխս իմ չուր և զաչս իմ աղբյուրս արտասովաք, և լայի զժողովուրդս զայս զրտիվ և զգիշեր և զվիրավորյալս դստեր իմոս։ Վեհափառ Տեռ, այս օրերս այստեղի հարուստներից միևր, որ արդեն մոտենում է ծերության, կամենալով յուր մահից հետո մի քարի հիշատակ թողնել ազգի մեջ, մտադիր է կտակ շինել և նվիրել ազգին մի խոշոր գումար։

Նորա ցանկությունն է հիմնել արհեստագիտական կամ տեխնիկական դպրոց եվրոպական սարք ու կարգով։

Բայց թե ո՞ր և ի՞նչպես կարելի է գլուխ բերել այդ գործը, — ահա դորա համար նա խնդրեց ինձ դիմել Վեհափառությունդ և հայցել Ձեր լուսավոր և աշխարհագետ խորհուրդը։

Կտակատերը նախապես որոշել էր, որ այդ դպրոցը կառուցանվի Ռուսաստանի քաղաքներից միևրում, բայց ես իմ կողմից մտառացուց եղա Տաճկահայաստանի վերա, հաշվելով դորան նպաստակահարմար և գալոց սերունդի համար ավելի օգտավետ և փրկավետ։

Այս խնդիրը առաջադրելով ներող և դուրսադար Տերությունդ, անթարթ աչքը սպասում ենք Վեհիդ պատասխանին։

Վեհափառությունդ ակնածու սպասավոր

Ս. Շահազիզյան

1935 թ.

14 մայիսի*)

Նամակում հիշատակված հարուստը մոսկվաբնակ հաշտարխանցի վաճառական

Սարգիս Զանումյանցն (*), որը հետագայում հրաժարվել էր իր հարստությունը ազգին կտակելու։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 58, վարչա-կադմս. կերպական բաժին, գործ № 184, էջ 18—17։

*) Այս մասին տես երվանդ Շահազիզի «Բանաստեղծ Սարա Շահազիզի և նրա անվան հետ կապված անտիպ նամակներից» խորագրով հոդվածը, տեղեկածին հուլիս-օգոստոս, 1947 թ., էջ 71։





ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Զ. ՄՈՒԹԱՅՅԱՆ, ԶԿՆՈՐԱ ՆԿԱՐԻԶ, ՊՈՐՔԱՆԻՈ ՄԵԶ ԳՏԱԾ Է ԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱՆԳՆԵՐԸ

Այս վերնագրին տակ «Լիբերասիոն» մեծ օրաբերը իր 2 հոկտեմբերի թիվով, մեր տա-
ղանդավոր եկարիչ Զ. Մուրաֆյանի մասին կհրատարակե նետազա հոդվածը:

Լեւոնտի, Քիմպերի շատ մոտ Պոլթոնյան
նավահանգիստ մըն է: Քանի մը օրե ի վեր,
ամառնաբնակները պրեթե ամենքը մեկնա-
ծ են Ֆինիսթերի այս ծովափեն, ուր հրատապ
ամառվան ընթացքին եկած էին փնտռելու
տանելի օդի բարեխառնություն մը:

Փարիզցիներու մեկնումեն ի վեր, նկարիչ
Մուրաֆյան այս գեղանկարին տեր դառնա-
լու զգացումն ունի, ուրկե կքաղե քանի մը
հրափայլ նկարներ:

Առտուրեն մինչև իրիկուն կնկարե, ու մերթ
քանի մը տղաք, հրապուրված իր նկարներու
շերմ երանգներեն, կուզան միայն խոռովել
իր մենությունը:

Մուրաֆյան տակավին քառասուն տարե-
կան չկա, այսուհանդերձ 1946-ին կալիֆո-
ռնիոյ մեջ վախճանար ժողովի կողմէ ներկա-
յացված գեղեցիկ ցուցահանդեսին մեզի կը-
թողու կատարելապես հաջողած լավ կտավ-
ներու հիշատակ: Այս նկարները միշտ գրծ-
ված են սգույնով: Իր հորինման եղանակին
մեջ ան կպահե Արեւելքի դրոշմը, օգտագոր-
ծելով խիստ հաճախ իր վճիտ թույրերը,
որոնց ճաշակը սակայն, լուրացուց դիտելով
փարիզյան դպրոցի գլուխ-գործոցները, մա-
նավանդ Սեզանի և Վան Գոգի գործերը,
զորս ամենքն ավելի կսիրե: Մուրաֆյան
ծնած է Փոքր-Ասիոյ մեկ պղտիկ գլուղին
մեջ: Ըրր իր հայրենի երկրին մասին կխոս-
վի, իր ծավի ակնարկը կերանգաժողովի
տրամուրդամբ, որովհետեւ իր մանկության
ընթացքին արվեստագետը թուրքերուն հալա-
ծանքին ենթարկված է: Ան իր պատանեկու-

թյան առաջին տարիներն անցուց Հոնաս-
տան, որքանոցի մը մեջ, ու այս ճակատա-
գրին դաժանությունը բարեբախտաբար
քաղցրացավ վաղահաս հրալրող մը, — նը-
կարչություն:

Ավելի ետքը, Իտալիա, ուր երկար առե-
նապրեցավ, Թիթիենի, Քինթորի, Քինթու-
լի տեսարանը զինքը մղեց ամբողջովին ապ-
րի արվեստին համար: Ասկե դատ, կկար-
ծեմ թե Ֆրանսայի մեջ 1937-են ի վեր իր
ապրած տարիները, իր ծանոթանալը Պոն-
տի կամ Մաթիսի հետ դասական գործերու
առանձին հայեցողութենեն ավելի հարստու-
թյան աղբյուր մը եղավ իրեն համար:

Լավագույնս նկարելու համար իր ձկնորս-
ները, այդ խրած նավակները, հրաներկ ա-
րևով օծուն կապույտ ցանցերը, աճ հաճախ
կբաժեն ծովայիններու կլանքը, այսինքն իր
կարգին ձկնորս կղառնա: Երբ գիշերը կհաս-
նի, նկարիչին աշխատանքը լրացած չէ:
«Լամբարա»-ներով բռնավոր նավակները
կմտնե, ու քարյուղի լապտերների լույսին
տակ արվեստագետը կքաղե շքեղ պատկեր-
ներու հունձքը: Արդեն իսկ երբ ցանցերը
դուրս կուզան սեաթույր չուրերեն, ձուկե-
րուն արծաթագոծ ցուլքերը հառաչիկա «մեռ-
յալ բնություն» կտավներուն համար հրաշա-
լի քնարան մըն են:

Բայց մանավանդ օրվան լույսին տակ է,
որ Մուրաֆյան իր մեծագույն հաճույքը կըզ-
գա: Մերթ այնքան ներգոր գութներով, Պոն-
թանի մեջ ան կկարծե զսուել Հայաստանի
գլուղանկարները: Միասին մենք պատեցանք

նավահանգիստը, դեպի փառոսը, որ հետաքրքրական զուգահեռություն մը կկոչվի Արմեն,— հաճախ Փոքր-Ասիո տղոց տրված անուն մը:

Երբ տուն մտանք, Մուրաֆյան ինձ ըսավ.
— Օր մը, հուամ, գոնե նկարներու մեջ

իրարու հետ հաշտեցնել վերացական ու ձևադրոշմ նկարիչները. որոնք իրար կդգնե, իրարու հետ կկոխտին պարապ տեղը:

Այսպես խոսելով ան կրամնվի ինձմե, որովհետև ցայգային նոր ձկնորսության մը պեսք է ներկա գտնվել:

ՌԸՆԵ ՊԱՐՈՐ

(«Ժողովուրդ» 8 հոկտեմբեր 1947 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀՈՒՆԳԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Մայիս 13-ին հրապարակագիր, Տոթթոր Նակ Իվանի Զուլթան (որ տասներկու տարիներ ապրած է Սովետական Միության մեջ) դասախոսություն մը տվավ հունգար կոմունիստներու հավաքատեղիին մեջ՝ «Անձնական ազատությունը Սովետական Միության մեջ» նյութին շուրջ: Ստորագրելու անձամբ շնորհակալություն հայտնեցի այդ պատվարկան հունգարացի դասախոսին, որ նախկին հորթիական թունապետության ժամանակ, երբ Հունգարիո մեծամասնությունը թունդ թրջասեր էր, համարձակությունը ունեցած էր գիրք մը հրատարակելու հունգար լեզվով՝ «Օտար լեզուներն մինչև Սովետական Միություն» խորագրով, որուն մեջ քողազերծ ըրած էր թուրքին կեղծ գեմկրասին, նամանավանդ հայոց թուրքերու կողմն քաշած շարժարանները պատկերացուցած էր:

Երբ հարգելի դասախոսը իմացավ, որ հայ մըն է իրեն շնորհակալություն հայտնողը, իսկույն խոսք առնելով՝ ներկա գտնվող մոտ երկու հարյուր հունգարացիներու առաջ ըսկրսավ խոսիլ Եվրոպայի անցյալ դիվանագիտության մասին հայոց վերաբերյալ:

Հարգելի պարոնը սապես վերջացուց իր խոսքերը.

«Արևմտյան դրամատիքության պաշտպան

դիվանագիտությունը դեռ չէ բարեփոխված: Հուսախար շինինք երբեք, Եթե նրանք ուզեին օգնել հայ ժողովրդին, շատ տարիներ առաջ այդ զուլումներն կազատեին անոնք. բայց նրանք այնպես վատ են, որ չօգնեցին հայ ժողովրդին: Անգլիացիք ըսած են թե՛ «Մենք զրահավորները կալող չեն երբեք Արատ լեռան գագաթը բարձրանալ, որպեսզի կարողանայինք Հայաստանը ազատել»: Բայց կվստահացնեմ ձեզ,— ըսավ պ. դասախոսը,— Եթե Արարատի գագաթը քարյուղի հանքեր գտնվեին, շատոնց հանած կլինեին իրենց զրահավորները Արարատի գագաթը:


Արսօր սակայն, շնորհիվ Սովետական Միության, հայ ժողովուրդը ինքնորեն ու անկախ է և կհուսանք ու կսպասենք, որ երեկվան ստորով հայ ժողովուրդը վաղը իր թըշնամիեն հաշիվ պահանջե և ինք լուծե իր դատը, և ոչ մի անգամ այլևս արևմտյան դիվանագետներու դուռը ծեծելու և ազատություն մուրալու ստիպված ըլլալ:

Բոլոր ներկաները ծափահարություններով իրենց գոհունակությունը հայտնեցին հարգելի դասախոսին՝ տրված լուսաբանություններուն համար:

2. Ս. ՌԵՏՈՆԻ

(«Հայաստան» թերթի 8 հունիս 1947 թ.)





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍՐ

ԿՈՏԱՅՔ.— «Արարատ» տրեստի Կոտայքի սովխոզում անցյալ տարվանից սկսված է բնակելի նոր շենքերի կառուցումը հայրենադարձ հայերի համար: Մինչև այժմ ավարտված և օգտագործման են հանձնված 13 շենք: Մինչև տարվա վերջը կավարտվի ևս

3 շենքի կառուցումը: Բացի այդ, սկսված է նաև 5 նոր շենքի շինարարությունը: Նորակառույց գեղեցիկ խնամարաններում ներկայումս բնակվում են 42 ներգաղթած ընտանիք



Արաբկիրում ավարտվում է արտամահմանից վերադարձած հայերի համար կառուցվող 3 երկհարկանի և 2 միահարկանի տների շինարարությունը: Երկհարկանի տները ունեն 15-ական ընդարձակ սենյակներ, իսկ միահարկանները՝ 6-ական սենյակներ:

յակներ: Սենյակների մի մասը արդեն բնակության է հանձնված սովետական նոր քաղաքայինների ընտանիքներին: Ավարտվում է սպորտերի կառուցումը ևս մի երկհարկանի տան:



1948 թվի առաջին եռամսյակում լայն ծավալ կրեդիտի արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի սնահատական բնակարանային շինարարությունը: Աշխատավորների ղեկավարատների Նրևանի քաղաքային Մովսեսի գործկոմը անհատական բնակարան կառուցողների համար 1080 կտոր

հողամաս է առանձնացրել: Նորքում և 880 կտոր հողամաս էլ Բերիայի անվան շրջանում: 40 կտոր հողամաս էլ առանձնացվել է քառաբնակարանային տների կոլեկտիվ շինարարության համար: Ընդամենը այդ տները կունենան 350 բնակարան:



ԱՆԱՎԵՐԴԻ.— Շրջկենտրոնից Սահահին կայարանը տանող ճանապարհի վրա, ձորակի բացվածքում կառուցվել են մի քանի տասնյակ գեղեցիկ երկհարկանի շենքեր: Այստեղ բնակվում են արտասահմանից հայրենիք վերադարձած մի խումբ հայ ընտանիքներ:

Օրերս Ալավերդու ջրմուղի վարչությունը

Ադարակ-Ալավերդի ջրմուղից 1,5 կիլոմետր երկարությամբ նոր ջրմուղ անցկացրեց, որով այդ թաղամասը և հայրենադարձներն ապահովվեցին խմելու մաքուր ջրով:

Մոտ մեկ կիլոմետր երկարությամբ նոր ջրմուղ է կառուցված նաև Էնիսիյան հանքերի բանվորական ավանում:



ԿՈՏԱՅՔ.— Քանաքեռում կառուցվում է կոշիկի նոր ֆաբրիկա, որը իր առաջին արտադրանքը կտա 1948 թվի հունվար ամսին: Ֆաբրիկայում աշխատում են Ֆրանսիայից

ներգաղթած հայերը: Հետագայում, մի քանի ամսից հետո ֆաբրիկան օրական կարտադրի հազար ղույզ կոշիկ:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ

— Հնդաժյակը կատարել չուրս տարում:

Այս նշանաբանով են աշխատում գյուղգործիքների գործարանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական անձնակազմը: Առաջավոր ստախանովական բանվորները մտահոգված են ոչ միայն իրենց պլանները ժամկետից շուտ կատարելով այլ և տեխնիկական նոր կատարելագործումներին, աշխատանքը հեշտացնելու և երիտասարդ բանվորներին օգնելու ու նրանց առաջավորներին հասցնելու գործով: Այս խնդրում առանձնապես աչքի բնկավ գործարանի ստախանովական խառատ Ս. Զորանյանը:

Զորանյանի և մյուս առաջավոր բանվորների օրինակով սկսեցին աշխատել նաև գործարանի հայրենադարձ բանվորները: Հայրենադարձ բանվորները, սովետական այդ նոր քաղաքացիները, սկսեցին յուրացնել սոցիալիստական աշխատանքի առաջավոր մեթոդները և աշխատել ստախանովականորեն: Գործարանի հայրենադարձ բանվոր Ա. Արաբյանը 9 ամսվա ընթացքում կատարել է

2,5 տարվա նորմա: Հոկտեմբերյան ՄԵԾ տոնը նա դիմավորեց 3 տարվա պլանը կատարած: Արաբյանի հետ մրցում է նաև իր փոքր եղբայրը՝ Ժիրայրը, որը գործարանում աշխատելով հասել է չորրորդ կարգի վարպետի աստիճանին: Նա իր նորմաները կատարում է 200 տոկոսով: Աչքի է ընկնում նաև Մ. Խաչոյանը, որը 8 ամսում կատարել է 2 տարվա առաջադրանք: Մեկը մյուսի հետ մրցելով առաջավորների շարքն են անցել ճղբայրներ Լեոն և Հաբուժյուն: Ռումյանցիները: Նրանք իրար չեն զիջում և պլանները միշտ կատարում են միատեսակ, բարձր ցուցանիշներով:

Գործարանը հանդիսանում է մի քանի կարգի պատրաստելու լավագույն զարդ: Կարճ ժամանակ է, ինչ հայրենադարձ Հ. Զարուսյանը աշխատանքի է ընդունվել դարձարանում, բայց առաջավոր վարպետների օգնությամբ այժմ իր պլանը կատարում է 220-230 տոկոսով:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅՐԻ ԲՐԻԳԱԴԱՆ

ԿՈՏԱՅՔ. — Արտասովորանից հայրենիք վերադարձած Զաթալյանների ընտանիքը, կազմելով մեկ բրիգադա, որպես բնտնադործներ աշխատում են Գյումրի գետի շինարարության Լյադի տեղամասում: Նրանք մեծ սիրով ընդունեցին լենինգրացիների հայրենա

նախրական չուր՝ հնգամյա պլանը չորս տարում կատարելու մասին: Լայն ծախելով սոցիալիստական մրցությունը, այժմ բրիգադան օրվա առաջադրանքները շարունակ կատարում է 250—300 տոկոսով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏՈՒՄ

1948 թվի սեպտեմբերին հայկական Նոր գրականության հիմնադրի նախատու Արուսյանի մահվան հարյուրամյակը յրանալու կապակցությամբ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը աչք տարեթիվը նշանավորելու համար կազմեց հորելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Ն. Կարապետյան, նախագահի տեղակալ՝ Հր. Քոչար և անդամներ՝ Ավ. Իսահակյան, Վ. Համբարձումյան, Զ. Դրիգորյան, Գ. Դեմիրճյան, Գ.

Ալեքսյան, Գ. Բուրյան, Ս. Սողոմոնյան, Հ. Մամիկոնյան, Գ. Բեքուտով, Ե. Վարդանյան, Հ. Պողոսյան, Ա. Տերտեղյան, Մ. Մկրտչյան, Ստ. Զորյան, Հ. Սիրաս, Գ. Աբով, Գ. Սարյան, Ն. Զարյան, Ս. Սարյան, Ռ. Հովհաննիսյան, Գ. Գոմբախ, Ա. Բարսյան, Ա. Սարգսյան, Ա. Ղազարյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Մկրտչյան, Ա. Մուցակաճյան, Ռ. Զարյան, Ա. Շահինյան, Ս. Գասպարյան, Հ. Ստեփանյան:

ԽԱՍԱՏՈՒՐ ԱՐՈՎՑԱՆԻ ՊՈՐՏՐԵՆ

Նկարիչ Ա. Ավետիսյանն ավարտել է Խ. Արուսյանի պորտրեն, Նկարիչը յուզաներկով գծել է հայ ժողովրդի սիրելի գրողի կերպարը: Նկարիչն իր առաջ խնդիր էր դրել — քաջահայտել մեծ ռուսագրողի կերպարը նրա ստեղծագործական գործունեության

ժողկման ժամանակաշրջանում:

Ներկայումս Նկարիչ Ավետիսյանը աշխատում է Արուսյանը երեխաների հետ կոմպոզիցիոն նկարի վրա, որը պատկերելու է մեծ գրողին բնության ծոցում՝ երեխաների շրջանում:

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՓՈՍՏԱՆԻՇՆԵՐ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Արով-յանի մահվան 100-ամյակին անցկացնող հորեյանական հանձնաժողովը Մոսկվայից հուղորդագրություն է ստացել, որ ՍՍՌՄ

կապի Մինիստրությունը 1948 թվին լույս է ընծայելու փոստանիշներ և Արովյանի նկարով:

(ՀՀԳ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՑՈՒՄ

ՋՐՈՒՅՑ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ՊՐԵՋԻԴԵՆՏ Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ

Նոյեմբերի 26-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նիստերի պահիճում բացվում է Ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի 30-ամյակին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ՀՀԳ-ի թղթակցի հետ ունեցած զրույցում հայտնեց հետևյալը.

«Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի նիստերում լսվելու են մի շարք զեկուցումներ՝ հասարակական, ֆիզիկո-մաթեմատիկական, քնակալ, տեխնիկական և բիոլոգիական գիտությունների գծով, նիստերը տևելու են չորս օր:

Ժողովի առաջին նիստի զեկուցումները նվիրված են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիային, սովետական կարգերի հաստատմանը Հայաստանում և սովետական հայագիտության հիմունքներին: Հաջորդ նիստերում հանրագումարի են բերվելու Ակադեմիայի ջրա-էներգետիկ ինստիտուտի գիտնականների և գիտական աշխատողների երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները՝ Սևանա լճի, Զանգվի և Արաքսի միջին հոսանքի ջրերի օգտագործման գիտավոր պլանն սովորական կապակցությամբ, ինչպես նաև լսվելու են զեկուցումներ բիոլոգիական գիտությունների բնագավառի:

Սեսիայում գրված զեկուցումները դրսևորում են Ակադեմիայի գիտական հաստատությունների ձեռք բերած հաջողությունները գիտա-հետազոտական աշխատանքների բուսադավառում, որոնք ունեն տեսական և ակտուալ գործնական նշանակություն մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար:

Ընդհանուր ժողովն իր վերջին նիստում ընտրելու է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ և հաստատելու է նոր թղթակց-անդամներ: Բացված է իսկական անդամության չորս ազատ տեղ. առաջադրված է 16 թեկնածություն— հինգը իսկական անդամության, 11-ը թղթակց-անդամության համար:

Թղթակցների առաջադրմանը մասնակցել են, բացի Սովետական Հաստատանի գիտական հիմնարկներից, նաև Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի գիտական հաստատություններ և առանձին գիտնականներ:

Հատկապես պետք է նշել ակադեմիկոսներ Վոլդինի, Իսաչենկոյի, Պալենովի, Պրասոյովի մասնակցությունն այդ պործում: Նրանք առաջադրել են մի շարք արժանավոր թեկնածություններ:

Իսկական անդամության համար առաջադրվածների թվումն են ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակց-անդամ Եգրաս Հաբարթյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակց-անդամ Արտաշես Եահինյանը, պատմական գիտությունների դոկտոր Արդար Հովհաննիսյանը, և ուրիշներ: Թղթակց-անդամության համար՝ հայրենագարձ պրոֆեսոր-դոկտոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը, ֆիզիոլոգիական գիտությունների դոկտոր Արարատ Ղաթիրյանը, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գազիկ Դավթյանը և ուրիշներ:

Այս ընտրությունները մի նոր իրթան կհանդիսանան հետագայում է՝ այսպիսի լավ հիմքերի վրա դնելու Ակադեմիայի գործունեությունը և գիտա-հետազոտական աշխատանքներում հառնելու նոր նվաճումների:

(ՀՀԳ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նոյեմբերի 26-ին բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի սեսիան: Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը իր բացման խոսքում շնչեց, որ Ակադեմիայի հերթական այս նստաշրջանը, որը նվիրված է Հոկտեմ-

ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

բերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի 30-ամյակին, զուգադիպում է Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 27-րդ տարեդարձին: Նա հշից պատմական վիթխարի նշանակություն ունեցող այն նվաճում-

ները, որով հայ ժողովուրդը դիմավորում է 27-րդ տարեդարձը:

Ապա անդրադարձնալով Ակադեմիայի գործունեությանը նա ասաց:

— Ներկա սեսիան, համընկնում է նրանում Գիտությունների Ակադեմիա հիմնելու 4-րդ տարեդարձին: Սովետական կառավարությունը գիտականների աշխատանքի համար ստեղծել է բոլոր պայմանները և այսօր մենք կարող ենք զեկուցել երկրին, բոլշևիկյան պարտիային, ընկեր Ստալինին, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան հաջողությունների է հասել, որոնք հատկապես նշանակալից են 1947 թվին: Այս տարում մի շարք կարևոր աշխատանքներ են կատարվել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, գեոլոգիայի, կառուցման գործի, միկրոբիոլոգիայի, բուսաբանության, զենե-տիկայի և այլ բնագավառներում: Ենթահիվ նպատակալաց աշխատանքի մեր գիտական հիմնարկները սկսել են արժեքավոր դիտա-կան արտադրանք տալ:

Աճել է մեր նյութական բազան: Միայն այս տարվա ընթացքում ավարտվել ու շահագործման են հանձնվել շատ նոր գիտական լաբորատորիաներ. դրանք են բարձր լեռնային լաբորատորիան, Բյուրականի աստղագիտարանի ասպիտակալի արտադրանքը, կառուցումների ինստիտուտին կից մեծ լաբորատորիան, անասնապահական ինստիտուտին կից սպիտակուցների և ֆերմենտների լաբորատորիան և այլն: Մի շարք լաբորատորիաներ կառուցման պոռոցներում են գրտնվում և շահագործման են հանձնվելու հաջորդ տարում: Լաբորատորիաների կահավորման համառ առկող հատկացումները 1949 թվին, կհասնի 5 միլիոն ռուբլու, երկու անգամ ամիսի քան ընթացիկ տարում:

— Անհրաժեշտ է. — շարունակում է Վ. Համբարձումյանը, — մերան, մեր աշխատանքում նկատվող բերությունները, ավելի մոտ կանգնել արտադրության խնդիրներին:

— Մենք սովետական գիտնականներս աշխարհի ամենաառաջատար գիտության գիտնականներին, հենց, հանդուրժելի՝ է մեզ համար ստորաբաժանումներ, օտարամուծություն: Իհարկե ու, Ահա մեր առջև է ամերիկյան աստղագիտական ամսագիրը, ոտտեո ղեկավարում է հունական աստղագիտական հոգի դիմում Ամերիկայի աստղագիտականին: Նրանք խնդրում են խոնո համա հաղուստի, սննդի, թյթի կոոտանք, որովհետև թույլ չունեն, և վերջապես մատուցել ուղարկել:

Ահա մյուս կողմից էլ Հայաստանի աստ-

ղաբաշխները, որոնք նպատակ են դրել իրենց աստղագիտարանում զետեղել աշխարհում խոշորագույն անադիսպիոն տեխնիկայի:

— Բայց մենք, — շարունակում է Վ. Համբարձումյանը, — չենք հանգստանում մեր հաջողություններով: Յուրաքանչյուր գիտնական պետք է ավելի պահանջկոտ լինի իր նկատմամբ. աշխատի ավելի մեծ արդյունքների հասնելու:

Ներկա սեսիան պետք է ընտրի Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նոր իսկական անդամներ և թղթակից-անդամներ: Մենք հավատացած ենք, որ կրնարվեն գիտնականներ, որոնք կօգնեն մեզ գիտական խոշոր պրոբլեմների լուծման գործում, կասկած չկա, որ սովետական գիտնականները կկատարեն իրենց պարտքը երկրի հանդեպ և կօգտագործեն իրենց տրամադրված հնարավորությունները, կօգնեն ժողովրդին կատարելու մեծ Ստալինի տված իր խոստումը՝ հնդամյակը շորս տարում իրականացնելու մասին:

Վ. Համբարձումյանի եզրափակման խոսքը ժողովականների կողմից ընդունվում է բուռն օվաղայովի պատիվ ժողովարների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի:

Ժողովում «Հեղինակների» Սոցիալիստական Մեծ Ռեզոլուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում թեմայի մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Մ. Ներսիսյանը:

Հեղինակների Սոցիալիստական Մեծ Ռեզոլուցիան, — ասաց զեկուցողը. — նոր դարազուլի, սոցիալիզմի դարազուլի բացեղ մարդկային հասարակության պատմության մեր: Հեղինակների Ռեզոլուցիան միաժամանակ փորձեց նաև հայ ժողովրդին կաշկանդող իմպերիալիզմի շղթաները, ազատագրեց նորան կապիտալիզմի հերաններից, չորեք ոչնչացումից, կյանքի կոյեց նրան ու նրա առաջ բացեց սոցիալիստական զարգացման հեռանկարները: Մեծ Ռեզոլուցիայի կազմակերպիչներ և առաջնորդներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը հանդիսացան հայ ժողովրդի ազատարարները: Զեկուցողը մանրամասնորեն ցույց տվեց արև մեծ ու վճռական դիրք, որը խաղացել է հայ ժողովրդի մեծ բարեկամ Ստալինը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու, հայ ժողովրդի վերածնության կազմակերպման գործում:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ և Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը զեկուցեց

«Աստղային սիստեմների վիճակագրական մեխանիկան» հետաքրքիր թեմայի մասին: Նա կանգ առավ իր դիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների վրա, որը նվիրված է վիճակագրական մեխանիկայի զարգացման մեթոդներին: Հիմնական եզրակացությունը, որը հանում է Վ. Համբարձումյանը, այն է, որ մեր աստղային սիստեմի ընդհանուր աստղերը չեն գոյացել մեկ էպոխայում:

Աստղերի առաջացումը, — ասում է նա, — շարունակվում է նաև ներկա ժամանակներում:

«Սեան լճի, Զանգուի և Արաքսի միջին հոսանքի ջրերի օգտագործման գլխավոր պլանի մասին» զեկուցեց տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Լեբեդևը և հարակից ելույթ ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Նոյազարյանը: Զրեքի օգտագործման այդ գլխավոր պլանի համաձայն Սեան լճի ջրային ռեժիմի փոփոխումից հետո ստեղծվում է միասնական ջրա-էներգետիկ սիստեմ, որն ապահովելու է Արաքսյան դաշտավայրի 225 հազար հեկտար հողերի ոռոգումը և ավելի քան 4,5 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրոէներգիայի արտադրությունը:

«Սովետական հայադիտության հիմունքները» թեմայի մասին զեկուցում տվեց Ֆիդուզիական գիտությունների ղեկավար Ա. Ղարիբյանը: Ակադեմիայի ընդհանուր ժողովում լսվեցին նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Բունիաթյանի զեկուցումը «Բիոգենեզմանների դերը օրգանիզմի պրոցեսում» թեմայի մասին և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Չալախյանի զեկուցումը «Բույսերի ծաղկումը անընդատ մթնոթյան մեջ» թեմայի մասին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հոբելյանական ժողովում լսված զեկուցումները ցույց տվեցին Ակադեմիայի և նրա գիտա-հետազոտական հիմնարկների ձեռք բերած հաջողությունները գիտա-հետա-

զոտական աշխատանքի ծավալման թիպավորում, հաջողություններ, որոնք խոշոր ազգային կահնդիսական մեր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման ու բարգավաճման համար:

Իր վերջին նիստում Ակադեմիայի ընդհանուր ժողովը փակ (դադարի) քվեարկությամբ րնտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ. — Բիդուզիական գիտությունների բաժանմունքի գրծով՝ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, Բիդուզիական գիտությունների ղեկավար Եզրաս Հասարաթի, Հասարակական, Ֆիզիկո-մաթեմատիկական և սոխնիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Արտաշես Լիպարիտի Շահինյանին և հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ պատմական գիտությունների ղեկավար Արզար Ռուբենի Հովհաննիսյանին:

Ընդհանուր ժողովը հաստատեց թղթակից-անդամների կազմը. հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ Ֆիդուզիական գիտությունների ղեկավար Ա. Ղարիբյանին, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գծով՝ գյուղատնտեսական գիտությունների ղեկավար Գ. Ս. Դավթյանին և բնագիտական գիտությունների բաժանմունքի գծով՝ հայրենադարձ գիտնական Մ. Ա. Տեղ-Կարապետյանին:

Ակադեմիայի ընդհանուր ժողովը ջերմորեն ուղարկեց Ի. Վ. Նոյազարյանի և Վ. Ա. Համբարձումյանի առաջարկությամբ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ րնտրել Համաժողովին Ակադեմիայի ղեկավար Ս. Ի. Վավրիլինի նկատի ունենալով նրա աշքի րնկնող ծառայությունները սովետական գիտության և նրա ամենօրյա հոգատար վեոաքնդմունքը և օգնությունը երիտասարդ Հայկական Ակադեմիային:

Ս. Ի. Վավրիլինի միաձայն րնտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՅԻ ՄԵԿԵՆՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻ

Հայկական և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների միջև փոխադարձ կապը էլ ավելի ուժեղացնելու նպատակով ղեկավարների վերջերին Թբիլիսի մեկնեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հատուկ ղեկեացիան:

Դեկեացիայի կազմի մեջ են՝ Հայկական

ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանը, Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը, թղթակից-անդամ Ա.

Ղարիբյանը և Ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող,

պատմական գիտությունների թեկնածու Ս. Երեմյանը:

(ՀՀԳ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎ ԱԴԵՄԻԱԶԵԻ ԴԻՆԵԿԱՑԻԱՆ ԲՐԻԼԻՍԻՈՒՍ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ղեկավարացի, որի կազմի մեջ մտնում են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյանը և ավագ գիտաշխատող Ս. Տ. Նրեմյանը, մի քանի օր մնաց թրիխիում:

Գեղեցիկայի նպատակն է— ուժեղացնել գիտական կապերը և աշխատանքի փոքրիկ փոխանակումը եղբայրական երկու ռեսպուբլիկաների Գիտությունների Ակադեմիաների միջև:

Գիտական կապի և աշխատանքի փոքրիկ փոխանակման խնդիրը քննարկվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում՝ խորհրդակցության ժամանակ:

Խորհրդակցությունը բաց արեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ, Ակադեմիայի իսկական անդամ Ա. Գ. Շանիձեն, որը նշեց եղբայրական երկու ռեսպուբլիկաների, ողոնց ժողովուրդները եապաված են միմյանց հետ դարափոր բարեկամության կապերով: Գիտությունների Ակադեմիաների միջև աշխատանքի փոքրիկ փոխանակման և մշտական կապի հաստատման խոշոր նշանակությունը:

Խորհրդակցության ժամանակ ելույթ ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձում-

յանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ն. Ի. Մուսխելիշվիլին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ռ. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մառի անվան լեզվի ինստիտուտի գիտնական, Ակադեմիայի իսկական անդամ Ա. Մ. Տոպուրիան, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ռուսթավելու անվան վրացական գրականության ինստիտուտի գիտնական, Ակադեմիայի իսկական անդամ Կ. Ս. Կեկելիձեն, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ն. Ա. Բերձենիշվիլին և Գ. Վ. Խաչապուրիձեն, ակադեմիկոս-քարոտար Ի. Ն. Վեկուան, պրոֆեսոր Լ. Ն. Մենիքսեթ-քեկը:

Վրաստանի և Հայաստանի Գիտությունների Ակադեմիաների միջև կապը ուժեղացնելու համար մի շարք առաջարկներ մտցվեցին:

Որոշվեց 1948 թվի մայիսին Վրացական և Հայկական Գիտությունների Ակադեմիաների համատեղ գիտական սեսիա հրապարակել: 1948 թվի հունվարին Երևան է մեկնելու Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ղեկավարացի:

Կազմակերպվում է ինֆորմացիաների փոխանակություն Գիտությունների Ակադեմիաների աշխատանքի մասին, ինչպես նաև գիտական գրականության փոխանակություն:

(ՎՀԳ)

ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻՆ 30-ԱՍՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ

Նոյեմբերի 2-ին հրեանի նկարիչների տանը քաղվեց Հայաստանի սովետական կերպարվեստագետների հորելյանական ուղագահանդեսը, նախաձեռնող Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեվոլյուցիայի 30-րդ տարեդարձին: Հոկտեմբերյան ցուցահանդեսին մասնակցում են ավելի քան 90 կերպարվեստագետներ՝ գեղանկարիչներ, քանդակագործ-

ներ, գրաֆիկներ, որոնք ներկայացրել են մոտ 300 աշխատանք:

Ցուցահանդեսում աչքի են ընկնում մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի պորտրեներն ու կիսանդրիները. առանձնապես ուշագրավ է Ստալինյան մրցանակի լաուրեատ Գ. Նալբանդյանի գործը՝ «Ստալինի պորտրեն»:



Հայաստանի կերպարվեստագետները մասնակցում են նաև Հոկտեմբերյան Մեծ Ռեվոլյուցիայի 30-ամյակի առթիվ Մոսկվայում կազմակերպվելիք համամիութենական ցուցահանդեսին:

Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի հանձնաժողովը, իր նիստում քննության առնելով Հայաստանի կերպարվեստագետների ներկայացրած գործերը, ցուցահանդեսի համար ընդունել է Հայաստ-

տանի 29 կերպարվեստագետների 57 գործ։ Մհժ համալսարանին են զտել Ստալինյան մրցանակի լաուրեատ, սեպուրիկայի ժողովրդական նկարիչ, ՄՍՌՄ Գեղարվեստից Ակադեմիայի իսկական անգամ Մ. Սարյանի, ռեսպուբլիկայի ժողովրդական նկարիչներ Գ. Գյուրջյանի, Հ. Կոչոյանի և

նկարիչ Ա. Ղաթիրյանի ներկայացրած գործերը։ Հաջորդությամբ են բնորոշվել նաև երիտասարդ կերպարվեստագետներ Օ. Ջարդարյանի, Ա. Բեքարյանի, Ե. Սափյանի, Բ. Քոչոյանի, Թ. Չոբեքչյանի, Ն. Նիկողոսյանի և ուրիշների գործերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նոյեմբերի 26-ին բացվեց Հայաստանի կերպարվեստագետների Միության երկրորդ համագումարը։ Համագումարը իր վերջին նիստում ընտրեց Հայաստանի Սովետական կերպարվեստագետների Միության նոր վարչություն՝ 17 հոգուց բաղկացած։ Վարչության նախագահ ընտրվեց Ստալինյան մրցանակի

լաուրեատ, ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը։

Կերպարվեստագետների Միության գլխավոր քարտուղար լինարվեց արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Արա Սարգսյանը, քարտուղարներ ընտրվեցին նկարիչներ Յ. Ազիզյանը և Ն. Հովհաննիսյանը։

ՍՍՌՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԻՑ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՍՈՍՁԻՆ ԱԵՍԻԱՆ

Երեքօրյա աշխատանքից հետո նոյեմբերի 24-ին փակվեց ՍՍՌՄ Գեղարվեստից Ակադեմիայի ընդհանուր ժողովի առաջին սեսիան։ Ակադեմիայի պրեզիդենտ Ա. Մ. Գերասիմովը հրապարակեց ՍՍՌՄ Գեղարվեստից

Ակադեմիայի թղթակից-անդամների ընտրությունների արդյունքները։

Գաղտնի քվեարկությամբ ընտրված թղթակից-անդամների թվում է գտնվում նաև սովետական հայ նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Դ. Ա. Նալբանդյանը։

ՀԱՆՐԱՊԵՏՄԱՆ ԵՆ ՀԱՆՁՆՎՈՒՄ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից կոլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեն լայն օգնություն կազմա-

ԿՈՒԼՏՈՋԱՑԻՆ ՆՈՐ ԱԿՈՒՍՐՆԵՐ

կերպելով ռեսպուբլիկայի կոլխոզներում ծավալվող ակումբաշինարարությանը, այդ առարկաներում զգալի նվաճումների է հասել։



Ներին Ալիտայի կոլխոզային ակումբը
կառուցված կոլխոզների Հ. Ավետիսյանի նախագծով

Կատարված աշխատանքների շնորհիվ շահագործման են հանձնվում Ախուրյանի շրջանի Ն. Ախուր, Սուրակ, Բջին, Ցանտան, Գյումուշ-գիս գյուղերի կոլխոզային ակումբները, Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնական օրերին շահագործման են հանձնվել նաև Թալինի շրջանի՝ Աշնակ, Այնալու, Վ. Սասունաշեն, Ստեփանավանի շրջանի՝ Կաթնաղբյուր, Վարդարուր, Հոբարձի, Հոկտեմբերյանի շրջանի՝ Սովետական, Ապարանի շրջանի՝ Բլինք, Քասախ, Արտաշատի շրջանի Ձովաշեն, Բամբակավան, Աշտարակի շրջանի՝ Կոշ, Ագարակ, Սասունիկ, Ղուկաս-

յանի շրջանի՝ Թաղաղուղ, Զուլպաղբյուր, Վարդաղբյուր, Մարտունու շրջանի՝ Գետաշեն, Վարդենիկ, Առաղածոր գյուղերի կոլխոզային ակումբները:

Կոլխոզային նորակառույց ակումբներ շահագործման են հանձնվելու նաև Էջմիածնի, Կոտայքի, Սիսիանի, Ամասիայի, Միկոյանի, Բասարգեշարի, Սպիտակի, Սևանի, Ղարաբաղարի, Արթիկի, Նոր Բայազեդի, Ալաղյազի, Գորիսի, Կալինինոյի, Գամշադինի, Վեդիի, Ալավերդու, Ախուրյանի և Աղիզբեկովի 34 կոլխոզներում:

ԵՐԳԵՑԻԿ ԿԱՊԵԼԼԱՅԻ ԵԼՈՒՅՐԸ

Նոյեմբերի 2-ին Հայֆիլհարմոնիայի համերգային զահլիճում տեղի ունեցավ նորաստեղծ քառաձայն երգեցիկ կապելլայի առաջին համերգը:

Կապելլան ղեկավարում է ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Թ. Ալթունյանը, իսումբը բաղկացած է 80 մարդուց: Առաջին համարում խումբը կատարեց Ալեքսանդրովի «Կանտատա Ստալինի մասին» Այնու-

հետև կատարվեց սովետահայ կոմպոզիտորների նոր գործերը՝ Կ. Զաքարյանի «Տար շատ բարե», Արտ. Խաչատրյանի «Կոմերիտական», Ա. Տեր-Ղևոնդյանի «Երգ Մոսկվայի մասին», Բացի այդ կապելլան կատարեց նաև Հայ երաժշտության կլասիկների ստեղծագործություններին:

Կապելլայի առաջին ելույթը բնորոշվեց չեմոններով:

ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Սկսվել են Լենինի հրապարակի ընդարձակման աշխատանքները Երևանում: Վերացվում են փոստի հին շենքը և նրան կից բնակելի տունը: Այդ շենքերի վերաբնակեց հետո հրապարակի ազատված մասը ասֆալտապատվելու և վերջնական ձևավորում

է ընդունելու:

Կառավարական Տան և կապի տան միջև անցնելու է Միկոյանի պողոտայի կառուցվող շարունակությունը, որը այսպիսով Լենինի հրապարակը կկապի երկաթուղային կայարանի հետ:

ԳՈՐԾՈՂ ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՆ ԱՆՑԱՎ ՀԱԽԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հայկական ՍՍՌ արդյունաբերության գործող ձեռնարկությունների շարքն անցավ ստալինյան նոր հնկամյակի նորակառույց երևանի Հախճապակու գործարանը:

Փորձարկումը տվեց հիանալի արդյունք, ստացվեցին առաջին հախճապակյա իրերը, որոնք իրենց որակով չեն զիջում Միության

առաջավոր գործարանների արտադրանքին: Գործարանում արտադրվելու են տարեկան 800 հազար տնտեսական իրեր՝ թելի և ճաշի ափսեներ, բաժակներ, ջրի գավաթներ, թեյամասներ և այլն: Բացի այդ, արտադրվելու են մեծ քանակությամբ սահմանափակ և տեխնիկական գործածության իրեր:

ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆ

Վե՛րի.— Դեկտեմբերի վերջերին Կիրովի անվան սովխոզում շահագործման հանձնվեց Երևանից Նախիջևան տանող խճուղու եզրին կառուցված նոր աղբյուր-հուշարձանը: Աղ-

բյուրը կառուցված է բազալտից և կարմիր տուֆից ու զարդարված է հայկական կլասիկ ճարտարապետության ոճով և օրնամենտներով:





ԳԱՂՈՒԹԱՅ ԱՅ ԿՅԱՆՔ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ Գ. ԱԼԵՄՇԱՀԻ ՀԵՏ



բր խմացա, որ կոմպոզիտոր Դուրգեն Ալեմշահը Փարիզին նյու-Յորք ժամանած է և առաջին անգամ ըլլալով, հոկտեմբերի 3-ին, Քառու Շուի մեջ իր երգահանդեսը պիտի տա՝ հատուկ խնամքով պատրաստված հայտադրով մը, որ կը բաղկանա մեծ մասամբ իր սիմֆոնիկ ստեղծագործություններին, մեկ խմբական երգ և տալանդավոր երգչուհի Նորմա Գաղանճյանի կողմն երգվելիք փունջ մը մեներգներ, ինչպես նաև սովետահայ մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի երկու հոյակապ սիմֆոնիկ ստեղծագործություններն, բոլորն ցանկություն ունեցա զինքը ներկայացնելու «Լրաբեր»-ի ընթերցողներուն և տեսակցություն մը խնդրեցի հարգելի կոմպոզիտորին, օգտվելով իմ անակակալ մեկ հանդիպումն անոր հետ՝ ընկ. Պատրիկ Սելյանի թնակարանին մեջ:

Հայ երգահանը մեծապես հուզվեցավ, երբ ընկեր Սելյանը հետևյալ պատմությունն արավ:—

«Երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կապակցությամբ Սովետական Հայաստան կդռնվեինք, Նրեանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Պետական օֆերայի և պալեթի թատրոնի մեջ համերգ մը տրվեցավ ի պատիվ արտասահմանյան պատգամավորներուն: Այդ համերգին կմասնակցեին օֆերայի երգիչներն ու երգչուհիները, ինչպես նաև Կոմիտասի անվան լարային քառյակը և Պետական թատրոնի ճարտար արտասանողները: Կիրաք Սազլյան, երիտասարդ երգիչ մը Ռումանիայեն, նույնպես կը մասնակցեր հայտադրին: Սազլյանը, ի միջի այլոց, երգեց Ալեմշահեն մեկ քանի երգեր, որոնք մեծ ոգևորությամբ ընդունվեցան Հայաստանի բժախղիք երաժշտասեր հանդիսականներու կողմեն: Սազլյանը այնպիսի արվեստով և անթերի կատարեց այդ եր-

գերը, որ ևս առաջին անգամ ըլլալով լիովին կրթողիչնեի Ալեմշահի երգերը և կրնայի լրիվ կերպով զնահատել զանոնք: Հետագային, Սովետական Հայաստանն վերագործիս, երկու անգամ առիթն ունեցա յսելու Նորմա Գաղանճյանի կատարումները Ալեմշահեն, որոնք պետք է ըսեմ հիասքանչ էին: Կոմպոզիտոր Ալեմշահը մեր հարցումնուրուն պատասխանելով՝ տվավ հետևյալ ծանոթությունները:—

1. Ունեցած եմ երկու տեսակ գործունեություն, իբր երգահան, կոմպոզիտոր, և իբր խմբավար:

Իբր հայ կոմպոզիտոր, ես եղած եմ արտասահմանի մեջ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը:

Անտարակույս Ալեքսանդր Սպենդիարյանը կհանդիսանա հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրն ու հայրը և մեծագույն սիմֆոնիկ գրողը: Այժմ արդեն Ամերիկայի մեջ հռչակված սովետահայ անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի գործերուն հետ զեռ նոր կծանոթանամ, Փարիզի մեջ բացարձակապես զրկված ըլլալով անոր ստեղծագործությունները ունենալու բախտավորությունն:

Առաջին գործս դրած եմ 1931 թվին, — «Արեւիյան գիշերներ»: Այս գործս, որ Քառու Շուի համերգիս հայտադրի վրա է, տմբուջությամբ հայկական չէ, այլ կրնդորկե ամբողջ Արեւելքը:

Հաջորդ տարին, 1932 թվին, տված եմ երկու զխավոր գործեր — «Էլֆյաք» և «Լարիլավառ»: Առաջինը Քառու Շուի հայտադրի վրա է: Երկրորդ սիմֆոնիան, «Լարիլավառ», հիմնված է մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի քերթվածի վրա: Այս սիմֆոնիան ամբողջապես կառուցված է հայկական երաժշտության ոճով, «Լարիլավառ»-ի կատարման կընկերանան երգ և պար, զազմելով տեսակ մը երաժշտական պատկեր: Դժբախտաբար կարելի չեղավ «Լարիլավառ»-ն ևս զինել հայտադրի վրա:

Ապա դրած եմ «Տեղիքը», ուրիշ սիմֆոնիկ ստեղծագործություն մը, բաղկացած հրեք մասերի:

«Ավարայրի պատերազմը» սիմֆոնիան, որ Թառն Հովի հայտագրի վրա է, կնկատեմ իմ գործերու լավագույնը: Հայրենասիրական այդ նյութը զիս անհունապես խանդավառած է: Նյութը վերցուցած եմ Ղևոնդ Ալիշանի «Յուշիլ շայեհնեսաց»-են: Սիմֆոնիայի կրփական մասերը կառուցված են հայ եկեղեցական երաժշտության ոճով, իսկ մնացած մասը նկարագրական երաժշտություն է:

Գրած եմ նաև երկու սիմֆոնիաներ, որոնց նյութերը առնված են «Հաղար և մեկ զիշերներ»-ին: Այս սիմֆոնիաներու երաժշտությունը արեւելյան է:

Ամենավերջին գործս հայկական ռուսկոտի մըն է: Հայ ժողովրդական երաժշտության ոճով կառուցված:

Բացի սիմֆոնիկ գործերեն, դրի առած եմ նաև քաղմաթիվ երգեր, որոնք ըլլալով ինքնատիպ գործեր, հայկական են իրենց ոճով, առանց ժողովրդական երգի մշակումներ ըլլալու:



2. Իբրև խմբավար, վարած եմ երգչախումբեր և սիմֆոնիկ նվագախմբեր, տալով համերգներ ոչ միայն Ֆրանսայի, այլ ուրիշ երկրներու մեջ ալ, իմ գործունեությունը, նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը, 1936—38 թվերուն, ընդգրկած է Ֆրանսան, Իտալիան, Նիդալտսը, Սուրիան, Լիբանանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, առաջին անգամ ըլլալով Ֆրանսայեն դուրս կուգամ համերգներ տալու համար: Այս անգամ համերգային շրջադաշտությունս կոկսիմ Ամերիկայի Միացյալ Նահանգներէն:

Նպատակ ունիմ այս տարի նաև այցելելու Քեհրանը և անկից անցնելու Երեան, մեր հայրենիքի մայրաքաղաքը:

Պատերազմէն հետո իմ ամբողջ գործունեությունը, որպես խմբավարի, սահմանափակվեցավ Փարիզի և Մարսելի մեջ իմ ղեկավարությամբ տրված համերգներով:

Զորս տարիս ի վեր, Զատկվա հաջորդող ամսվա մեկ կիրակին, ղեկավարած եմ Հայկական Պատարագի երաժշտությունն ու երգեցողությունը՝ Փարիզի նշանավոր Նոթրը համ Մայր եկեղեցիի մեջ, քառաձայնված ըստ Եկմայանի երաժշտության: Այս տարի Նոթրը համի մեջ Հայկական Պատարագի կատարումը ռատիոյով հաղորդվեցաւ, մեկ ու կես ժամ տևողությամբ, առանց ընդմիջումի: Պետք է ըսեմ, որ Հայ եկեղեցական

երաժշտությունը մեծ ընդունելություն գտաւ Ֆրանսական ժողովուրդի կողմէ: Երաժշտական շրջանակներն անկապես սքանչացած և հիացած են մեր եկեղեցական երգեցողությունը:

Իբր հետեանք այս հաջողության. ռատիոկայանի հրավերով երեք անգամ տվինք երգի ռատիոհամերգներ: Հաճախ Փարիզի ռատիոկայանն նաև ղեկավարած եմ իտալական ժողովրդական երգերու համերգներ: Պետք չէ մոռնալ, որ Պ. Ալեմշահը երաժշտական իր բարձրագույն դաստիարակությունը ստացած է Իտալիայի մեջ և ամբողջապես կտիրապետե իտալական երաժշտության և լեզվին: Ան տեսակցության ընթացքին խանդավառությամբ կիսուներ այն մասին, թե ինչպիսի անսպասելի ընդունելության արժանացած են Հոսմի Սուրը Պետրոսի հրապարակի վրա, ուրիշ ազգություններու կարգին, Հայկական սիմֆոնիկ օրգեսթրայի և երգչախումբի կատարումները: Հայկական խումբերը ղեկավարած է ինքը, Ալեմշահը:

3. Իս ունիմ երրորդ տեսակի գործունեություն ևս, որ նույնպես կապված է երաժշտության հետ, անտարակույս: Տնորենի եմ Ֆրանսական երաժշտական հրատարակչական ընկերության մը, որ հիմնված է 50 տարի առաջ: Մեր ընկերությունը կհրատարակե դասական կոմպոզիցիաներ, կհրատարակեցինք նաև Կոմիտասի գործերն ալ:

Տպագրված են համարյա իմ բոլոր երգերս: Վերջերս հրատարակեցի պրակ մը, բաղկացած իմ իննը երգերէն:

Արտագրած եմ 12 սկավառակներ: Անոնց մեջ կան մեներգներ և սիմֆոնիկ գործեր: Անոնց մեջ կան Կոմիտասէն հինգ խմբերգ, սովետահայ երգահան Դանիել Ղազարյանի «Անուշ զարուհը», Սպենդիարյանի «Երեւանի էտյուդները», իսկ մնացածը իմ երգերն են:



4. Առիթնն օգտվելով ես ձեզ կուգնի ծանոթացնել նաև Ֆրանսայի մեջ մեր ունեցած երաժշտական մյուս ուժերու հետ ալ:

Ունինք երգահաններ. — Օննիկ Պերպրյանը, Արա Պարթևյանը, Մեսոմենց՝ Փարիզի մեջ, և Վարդան Սարգիսյանը՝ Մարսելի մեջ: Սարգիսյանը մեկն է Կոմիտասի լավագույն աշակերտներէն: Կոմիտասի մյուս լավագույն աշակերտը՝ Կանաչյան կգտնվի Սուրիա:

Ունինք շատ նշանավոր դաշնակահար մը, հանձինս երիտասարդ Բաֆֆի Պետրոսյանի, որ ներկայիս կգտնվի Հարավային Ամերիկայի, ուր համերգներ կուտա: (Բաֆֆի Պետրոսյան

նր թոռնիկն է շուր հատորյա «Հայերէն բայատրական բառարան»-ի հեղինակ, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի)։

Ունիմք ջութակահար Յիլիսյ Աղաղարյանը։

Ունինք նաև երգչուհիներ. Մարգարիտ Բարայանը վաստակավոր երգչուհի է, այժմ արդեն քաջիված ասպարեղին։ Բարայանը հիշած է մտերիմը Կոմիտաս վարդապետին։ Տարաբախտ Կոմիտասը ամեն Փարիզ զարուհյուրահարմար է Բարայաններու տան մեջ։ Մարգարիտ Բարայանի շնորհիվ փրկված են Կոմիտասի շատ մը արժեքավոր պրոֆյուներները։ Մեր մյուս երգչուհիներն են՝ օրիորդ Աստղիկ Առաքելյանը, որ երգած է իմ երգերը սկավառակներու համար, և օրիորդ Հայկանուշ Թորոսյանը։ Հայ եկեղեցական երաժշտության մասնագետ երգիչն է նշան Սեկոյանը։

Փարիզի մեջ ունինք շատ լավ երգչախումբ մը, բաղկացած 80 հոգիի։ Այս երգչախումբը կազմված է միացումովը նախապես գոյություն ունեցող երեք խումբերու։

5. Սովետական Հայաստանի երաժշտության, դժբախտաբար, լավ ծանոթ չեմ։ Փարիզի մեջ մենք զրկված ենք Սովետական Հայաստանի հրգեքներն ու երաժշտութենեն։ Ամերիկահայությունը բախտավոր է, որքան ևս կտեսնիմ, Սովետական Հայաստանի հետ մշակութային շատ սերտ կապով մը կապված ըլլալու տեսակետին։ Իմ այս այցելությունը ևս շատ բարեպաշտե՛հ կհամարեմ հատկապես այն տեսակետին, որ վերադարձիս շատ նյութեր պիտի տանիմ Սովետական Հայաստանի երգեքներն և երաժշտութենին և պիտի սարքեմ համերգ մը, որ բացառապես կազմված պիտի ըլլա սովետահայ երգչուհիներու դորձերին։

Մեր ձեռքն անցած է ընդամենը մեկ քանի սովետահայ երգեր, Ալեքսանդր Սպենգիարյանի «Ալմաստ» օպերային, «Պարսկական բայերը»-ը և Անուշավան Տեր-Ղեոնդյանի «Սեղան օպերայի նախերգանքը։ Երևակայեցե՛ք մեր լիճակը։ Արամ Խաչատրյանէն կտոր մը իսկ չունինք։

6. Կարելի՞ է Ձերանասյնն հոս գալ և հայրենադարձի մասին լիսոսիլ։ Փարիզի մեջ ահագին եռուղեւ կար ներգաղթի շուրջ, երբ կապտորաստովի գալ Ամերիկայի Բայց, պետք է ըսեմ, Մարսելի մեջ խանդավառությունը շատ ավելի մեծ է, նույնիսկ իմ այն լուսնոր ազգականները, որոնք կոչիկի գործարաններ ունին և որոնք կրնան անաշխատ կյանք վայելել Ձերանասյի մէջ, իրենց ամբողջ գործարանները քակեցին և դաքին Հայաստան։ Պատերազմէն հետո մեր հրիտաւարողությունը հայտնաբերեց զարմանալի

հայրենասիրություն։ Չէ՞ որ մեր ժողովրդի կենսունակության ակն ու ազդարար միտ ալ եղած է հայրենասիրությունը։



Մինչդեռ մեր մտերմիկ տեսակցությունը տեղի կունենար Ալեմշահի հետ, հետզհետե



Գ. Ալեմշահ

մեզի միացան Տեր և Տիկ. Հազարյաններ։ Պ. Ապրոսյան, երգչուհի Սիրուն Մանկրյան, որ տակավին անցյալ կիրակի օրը Թաուն Հոլի մեջ իր զմայլելի կատարումներով արժանացավ հանդիսականներու շնորհակալություններուն։

Երբ տեսակցությունը վերացաւ, ընկեր Պատրիկ Սիլվանը հարգելի հյուրին ներկայացուց Արամ Խաչատրյանի «Երջանկություն» պոլեմիկ մեկ և «Գայանե» պոլեմիկ չորս պրակներ, հատկապես պատրաստված չորս ձեռքով՝ դաշնակահարության համար։ Ան ըսավ, թե երբ Մոսկվա կգտնվի 1947 թվի օգոստոսին, Արտասահմանի հետ կուտորական կապի ընկերության դահլիճի մեջ հանդիպում մը ունեցած էր ճարտարապետ Կարո Հաչատրյանի և երգչուհի Արամ Խաչատրյանի հետ։ Այդ ժամանակ էր, որ Արամ Խաչատրյանը իրեն նվիրած էր այս պրակները, ստորագրված անվանի հեղինակի կողմէն։

Խաչատրյանի գործերու հետ ծանոթանալու ծարավն տոշորող մեր քաղաքացիական հասարակարգի հրաշքն էր անմիջապես անցավ պաշտամուրի առջև և սկսավ արտակարգ վարպետությամբ նվազել կտորներ, մոտավորապես երեք քառորդ ժամ։ Մեր հանդիպումը վերածվեցավ Խաչատրյանի երեկոյին, անմուռանալի երեկո մը իրավամբու։

Ապա մենք բաժնիկցանք, դարձյալ իրարու հանդիպելու և անգամ մը Կո Արամ Խաչատրյանի «Նրջանկություն» և «Գայանե» պոեմներու կտորները Ալեմշահի ճարտար կատարումով վայելելու որոշումով։

Ա. ԳՈՒՐԳՆ

(«Լուսին» 30 սեպտեմբեր, 1947 թ.)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐՑԱՆԻ ՀԱՍԵՐԳՆԵՐԸ ՅԱՖԱՅԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԵՋ

ՆՐՈՒՍԱՂԵՍ, 21 հոկտեմբերի.— Ասկե առաջ դրած էի արդեն տաղանդավոր արվեստագետ Պ. Համբարձում Պերպերյանի ծրուսողն ժամանումին և տեղվույս ու Յաֆայի մեջ տալիք համերգներու մասին։

Առաջին համերգը տրվեցավ Յաֆայի մեջ, հոկտեմբերի 2-ին, միայն երգչախումբով, որ կազմված էր երուսաղեմի մեջ և արժանացավ մեծ հաջողության։ Տասը խմբերգն հինգը ներկաներու որոտընդոտ ծափերուն մեջ կրկնվեցան։

Երկրորդ համերգը տրվեցավ հոկտեմբերի 19-ին երուսաղեմի Սինեմա Ռեքսի սրահին մեջ՝ մասնակցություն և նվազախումբի Կհովանավորներ Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրը։

Հայտագիրը նման էր նախորդին, միայն ավելացած էր Համբարձում Պերպերյանի հորինած «նկեղեցի» Հայկական—ը (բանաստեղծություն՝ Վահան Թեքեյանի), որ իսկապես դժվարին կտոր մըն էր և որ հրամցուեցավ մեծ հաջողությամբ։ Սույն երգին իրենց սուրներով մասնակցեցան օրիորդ Շաքե Սեմերճյան (սոբրանո), օրիորդ Նզիսաբեյ Գասպարյան (ալթո), Պ. Ժիրայր Խուսափերտյան (թենոր) և Պ. Սահակ Գալաթյան (պասո)։ Ասոնցմե զատ դաշնակի ընկերակ-

ցությունը մեներգեցին օրիորդ Արուսյակ Պաստաճյան (սոբրանո), օրիորդ Ա. Սողոմոնյան (սոբրանո), Պ. Վարդան Գաթիկոսյան (թենոր) և Պ. Մ. Գրիգորյան (թենոր)։ Խմբերգերն կրկնվեցան Կոմիտաս վարդապետի «Նուբա» բաղ նմ արել» և Պերպերյանի գործերն «Տո Լավո», «Դառնում է կովից իշխան Թարսուր», «Մեկ ճանապարհ» և «Հայոց Համբարձումը»։ Համերգի ընթացքին, որ մեծ ընդունելություն գտավ, լուր երգերն ալ առնվեցան սկավառակներու վրա։

Երգահան ղեկավարը համերգին օրը կուրանախոսություն մը րրավ Հ. Մ. Ը. Մ-ի անկումին մեջ, նյութ ունենալով հայ երաժշտությունը և խոր տպավորություն թողուց ներկաներուն վրա։

Հավանական է, որ Պ. Հ. Պերպերյան հառաջիկա շաբթու մեկնի Լիբանան, ուր, ինչպես հայտնի է, ուսուցչության պաշտոն կվարե (Լեթիաիասի դպրեմանքին մեջ)։ Այսուհանդերձ պաղեստինահայությունը շպիտի մոռանա դինքը և պիտի սպասե զայն վայելելու նոր առիթներու։

Գ. ԱՎԱԳՅԱՆ

(«Արաբ» 25 հոկտեմբեր 1947 թ.)

ՕՐ. ՊԱՊԻԿՅԱՆ ՍՍԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ

Պոլսեն Ամերիկա ժամանած է հայտնի երգչուհի օր. Արաքսի Պապիկյան, որ ամենեն սիրված երգչուհին է պոլսահայության։

Ան ծանոթ է Խուսեֆի հայության ալ իր սարքած երգահանդեսներով, որոնք մեծ ոգևորություն ու շահագրգռվածություն առաքեցին հայ և օտար շրջանակներու մեջ։

Օր. Արաքսի Պապիկյան ծանոթ է նաև պոլսահայության իրր շնորհալի բանաստեղծուհի, ու հաճույքով կկարդացվին իր գրությունները ամեն առիթով։

Անիկա Լոզանի համալսարանին պատկավորի տիտղոսը կմիացնե իսթանպուլի պետական երաժշտանոցի վկայալ երգչուհի

տիտղոսին։ Տարիներն ի վեր ձեռնհասություններ կդասավանդե հայերեն ու ֆրանսերեն լեզուներու։

Օր. Պապիկյան աշակերտուհին ըլլալով ողբացյալ Կոմիտասին, բացառիկ հարազատությամբ կմեկնաբանե անոր երգերը, հայացի տաքուկ շնչու ու շունչը դնելով ամեն մեկ բառին մեջ։



Վերջին գեղարվեստական եղանակի ընթացքին ամերիկյան բեմերու վրա փայլող աստղերու կարգին հիշատակության արժանի դարձան նաև շատ հայ արվեստագետներ,

որոնցմե Նուեր Ճորճորյան մասնավորաբար մեծ հաջողություն ձեռք բերեց: Այս երիտասարդ սովորաճ հայուհին, առաջին անգամ հայտնություն մը եղավ Սան Ֆրանցիսկոյի Միջազգային ցուցահանդեսի երաժշտական շաբթվան ընթացքին, ուր հաջողությամբ երևաց «Մատամ Պրեմերֆայ»-ի և «Լա Պո-հեմա»-ի մեջ: Նուեր Ճորճորյան յեմի իս սյս հաղթանակներին հետո սկսավ շարք մտ նվագահանդեսներ տալ, որոնց մեջ մասնավոր դուրսդուրանքով մտնեցավ հայկական երգերուն: Այսպես Ռաուն Հոլի մեջ իր տված

ամենավերջին նվագահանդեսի հայտագրին մեջ Պրաֆաի, Ճիորտանի, Պերկուելի և Հենարի կողքին տեղ գրավեց նաև Կոմիտասը (Միքանի ծառ), Գալֆայանը (Կոուեն), Սպենդիարյանը (Այ վարդ) և Սրուանցույանը (Այ պինկո):

Գեղարվեստական հասարակության և քննադատներու անվերապահ դնահատանքին կարծանան Նուեր Ճորճորյանի այս նվագահանդեսները:

(«Ժողովուրդ» 3 հոկտեմբեր, 1947 թ.)

ԶԱՄՊԱԲՅԱՆ ՔՆՆԳԱՐԱՆԻ ԲՍՑՈՒՍԸ ՊՈՒՔՐԵՇԻ ՄԵՋ

Մայիս 19-ին Պուքրեշի մեջ բացումը կատարվեցավ Գր. Զամպաքճյանի թանգարանին ուսմանական իր թանկագին յուղանկարներով, զորս նվիրած է պետության: Ներկա էին սումին մտավորականությունը, Ռումանիո վարչապետը՝ Տոքթոր Պետրու Գրուզա, Սովետական դեսպան Քավթարաձեն, Խորհրդարանի նախագահ Սոստոյանու, սպարապետ Տոմպրովսքի և բազմաթիվ պրագետներ:

Իոն Բաժ բացման խոսքը արտասանելուց ըսավ թե Պ. Զամպաքճյան ուսման գիտնական պետության նվիրած է իր նկարներու հավաքածուն, և թե ինչ տմբողջ կյանքը նվիրած է գեղեցիկին: Խոսք առին նաև ուրիշներ:

Պատասխանելով բոլորին Պ. Զամպաքճյան վեր հանեց այն նշանակությունը, զոր կենդանյալն մարդկային մշակույթին համար գեղարվեստական ստեղծագործությունը:

Ի վերջո խոսք առավ վարչապետ Կրուզա, զոր չիրմագին շնորհակալություն հայտնեց Պ. Զամպաքճյանի, իր և կառավարության անունով, և ըսավ.

— Դուք, Պ. Զամպաքճյան, երկրին աշխատավարձերուն հետ զուգընթաց կելնար և կաշխատեք նոր լեկերության հիմնոր զարացնելու համար:

Հետո Պուքրեշի քաղաքապետը՝ ուղարկւեալ Տոմպրովսքի հանդիսականներուն ի դիտություն հայտնեց թե Քաղաքապետությունը, իբր երախտագիտության հավաստիք, որոշած է Պ. Զամպաքճյանի լեկերո փողոցը այսուհետև անվանել «Ռուզեա Զամպաքճյան (Զամպաքճյան թանգարան)» փողոցա: Այս ծանուցումը որոտընդոտ ձափերով ընդունվեցավ:

(«Միուրիւն» 13 սեպտեմբեր, 1947 թ.)

ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆՍԱՄԸ

Պուկարիս հայ դպրոցները պետականացած ըլլալով, 1946-1947 ուսումնական տարեշրջանի ավարտական կարգերեն բարձրագույն չիլ ստացող աշակերտները գերծ պիտի մնան ավարտական քննություններեն, ինչպես պետական վարժարաններու մեջ: Նախորդ տարիներուն հայ վարժարան ավարտողները պուկարական կիմնազիկները ընդունվելու համար քննություն պիտի անցնեն պետական պատվիրակ-քննիչներուն առջև:

Հայ վարժարաններու պետականացումով այս կարգը կշնչվի այլևս:

Ուրիշ կարգադրությամբ մը, պուկար կառավարությունը որոշած է, որ հայ մանուկներու կրթությունն ու դաստիարակությունը պարտավորի կերպով տեղի պիտի ունենան հայ դպրոցներու մեջ և այլևս արգիլված է անոնց ֆրանսական, իտալական և այլ օտար վարժարաններ հաճախելը:

(«Միուրիւն» 20 սեպտեմբեր 1947 թ.)

ՆԿԱՐԻՉ ԱՐՇԱԿ ՖԵՅՎԱՅՅԱՆԻ ՄԱՇԸ

Հոկտեմբերի 7-ին Մետֆուրա Մեսսի մեջ մեռած է նշանավոր նկարիչ Արշակ Ֆեյվաճյան, որ կպատրաստվեր Հայաստան մեկնելու Ամերիկայեն ներգաղթողներու ա-

ռաջին քարավանով: Հայրենասեր նկարիչը իր բոլոր գործերը կտակած է Հայաստանի թանկարանին:

(«Կոստենկ» հոկտեմբեր 10, 1947 թ.)

„ԷԶՄԻՆԵՐՆ“ ԱՄՍԱԳՐՈՒՄ 1947 ԹՎԻ ԸՆԹԱՑՈՒՄ ՏՊԱԳՐՎԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

(Հստ համադրերի)

1. ՀՈՒՆՎԱՐ—ՓԵՏՐՎԱՐ

1. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի կոնգրակը՝ Տաճն Կիլիկիո Կաթողիկոս Գառեգին Ա-ին վեղարի վրա աղաժանդյա խաշ կրելու իրավունք շնորհելու մասին:

2. Նոր տարի:

3. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի շնորհավորական հեռագիրը Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Գառեգին Ա-ի ֆանաժայություն 50-ամյա, եկեղեցական, գրական-գիտական գործունեության 80-ամյա և ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ:

4. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի հեռագիրը Տաճն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Գառեգին Ա-ի ֆանաժայության 50-ամյա, եկեղեցական, գրական-գիտական գործունեության 80-ամյա և ծննդյան 80-ամյա հոբելյանական տոնակատարությունը հետաձգելու մասին:

5. Բյուր ողջույն, երկար կյանք, առգուգական եկեղեցական, թեմ հայրենասեր, բազմավաստակ գիտնական ավագանի հոբելյանին:

6. Տաճն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գառեգին Ա-ի համառոտ կենսագրությունը:

7. ՄՏ. ՄԱԼԽԱՍՏԱՆԻ.— Տաճն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գառեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը:

8. ՀՈՒՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ.— Հիօդոսություններ Տաճն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գառեգին Հովսեփյանի մասին:

9. Մայր Աթոռ.— Հայրապետական հանդիսավոր մաղթանք Ամանորի առթիվ, Զորահայաց հանդեսի արարողությունը, Ամանորի և Մենդյան տոնի առթիվ շնորհավորական հեռագրերի ստացում, Հանդիսավոր Պատարագ Վարդանանց տոնի առթիվ Վարդանանց տոնի առթիվ գրական-գեղարվեստական երկույթ ճամբարանում, Շիկագոյի եկեղեցու հովիվ Վահրամ Ժ. վրդ. Նազարեթյանի նամակը եկեղեցու կողմից ներգաղթի գործին հինգ հարյուր տալեր տրամադրելու մասին, Վ. Էջմիածնի Հիմնադրամի կոնգրանի Կեդրոնական Հանձնաժողով-ի նախագահ Տ. Կարապետ Գիլյանին Ս. Լուսավորչի Ա. կարգի շքանշանով

պարգևատրելու մասին, Վ. Էջմիածնի Հիմնադրամի կոնգրանի Կեդրոնական Հանձնաժողի Գործադիր Մարմին-ի նախագահ Տ. Հ. Մելքոնյան Ս. Լուսավորչի Ա. կարգի շքանշանով պարգևատրելու մասին, Պ. Բ. Բաքալյանի այցելությունը Մայր Աթոռ:

10. ՀԵՄԱՐԱՆՏԻ.— Պողոս առաքյալի ողբերը:

11. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Ցաղագս վերանորոգութեան տաճարին Ար. Էջմիածնայ» գեկուցագիրը:

12. ՎԱՐԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ.— Սր. Էջմիածնա վերաշինության խնդիրը:

13. Վ. ԲԴՈՏԱՆ.— Սուեփան Լիսիցյան:

14. Գ. ՄԸՍՈՅԱՆ.— Հայ գորարանական երկույթուսի մեջ:

15. Պրոֆ. Ա. Արաքսյան.— Ստեփանոս Դաշտեցու հանելուկները:

16. Շ. ԷԴ.— Մեսրոպ Փաղիադյան:

17. ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ.— Գևորգ Դոդոյանը և երա «Միծեռնակ»-ը:

18. Վ.— Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի քննությունները:

19. Վ. ՄԻՐԱՔՅԱՆ.— Նամակներ Երևանի:

20. Օտարները ճայերի և Հայաստանի մասին.— Ֆրանսիայի հայտնի անձնավորությանց դիմումը ի նպաստ Հայաստանի վերջնական սահմաններում, Հելլեն Ազգային Ազատագրական ժակատի (ԷԱՄ) օրկան Էդվին Ֆիլիպի լիյատաճ-ն հայերի ներգաղթի մասին, Հայ դատին համար ծերակուտական Սմիթի խոստումը:

21. Սովետական Հայաստանում.— Հայկական ՍՍՌ Ակադեմիայում, Կոմիտասի անվան Երևանի կոնսերվատորիան, Նոր օպերաներ, Կոմպոզիտոր Երվանդ Սարգսյանի ստեղծագործություններին նվիրված համերգ, Հայաստանի Սովետական կոմպոզիտորների Միությունում, Ժողովրդական ստեղծագործության տանը, Քանդակագործուհի Ա. Ուրարտուի արվեստանոցում, Քանդակագործ Գ. Ահարոնյանի աշխատանքները, Զինական գրող Պ. Մառ-Գունը Երևանում, Հայկական ՍՍՌ Պետական արխիվի ուղեցույցը, Հայաստանի կոլտոշների էլեկտրիֆիկացիան, Արագածյանի ճահճուտների օգտագործումը:

22. Գաղութանայ կյանք.— ԱՐՏԱՎԱԶԴ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Հաղար բարե, հաղար
արե ե. Հայաստանի 26-րդ տարեդարձի.
վերժին էՔՍԵՐԵՅԱՆ.— «Էջմիածին» Ս.
2. Թ.— «Լուսավորչի կանթեզ» ԱՍՏՂԻԿ

ՍՈՒՐՅԱՆ.— Ամիս Ժի Հայաստան. Դ.
Պատմագրյան Պաղեստինի մեջ, Գնահատե-
լի նվիրատվություն. Հնարամիտ եգիպտա-
հայտ մր լորինած մեքենան, Մորիս Սար-
գիսոֆ մեռած, Հնդկաստանի հայ գաղութը.

2. ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

1. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ
Զ-ի Կոնդակը ուղղված Համաշխարհային
Հայկական Կոնգրեսին:

2. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ
Զ-ի հեռագիրը Համաշխարհային Հայկա-
կան Կոնգրեսին:

3. Ամեն ինչ Հայրենիքի ու ներգաղթի հա-
մար:

4. Պաշտոնական Կոչ Համաշխարհային
Հայկական կոնգրեսին:

5. Հայկական ՍՍԻ Միեկստրեների Սովե-
տին կից արտասահմանից ներգաղթող հա-
յերի ընդունման և տեղավորման կոմիտեի
նախագահ Բ. Աստվածատրյանի գրություն-
ը:

6. Մայր Աթոռ.— Հանդիսավոր Պատարագ
Մաղկազարդի տոնի առթիվ. Հանդիսավոր
Պատարագ Ավագ Հինգշաբթի օրը. Հանդի-
սավոր Պատարագ Զատիկական տոնի օրը.
Շնորհավորական հեռագրեր Զատիկական
տոնի առթիվ. Սուրեն Նպիսկոպոսի ժամա-
նումը Մայր Աթոռ Ս. Գարեգին քահանա
Տեր-Հակոբյանին արեղայի կոչում շնոր-
հելու մասին:

7. Ներգաղթը և մեր բնական առաջնորդե-
րը.— ԿԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Ներ-
գաղթ կամ վերագարձ դեպի տուն, Հոնաս-
տանի թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Արք-
եպիսկոպոս Մաղլումյանը ներգաղթի մա-
սին, եգիպտոսի թեմի Առաջնորդ Տ. Սամբրե
Արքեպիսկոպոսի նամակը Ամենայն Հայոց
Կաթողիկոսին:

8. ԱՐՇԱԿ ԱՆՊՈՑԱՋՅԱՆ.— Հայադավա-
նության տարածման շրջանակը:

9. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Նորահայտ եյու-
րեր Սեսրապ Թաղիադյանի մասին:

10. ԵՐԱՆԻՇ ԾԱՆԱԶԻԶ.— Գևորգ Դեղա-
յանը և նրա «Միծեռնակ»-ը (շարունակու-
թյուն):

11. Պրոֆ Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ.— Գառնիի
նախարհն արձանագրությունը:

3. ՄԱՅԻՍ—ՀՈՒՆԻՍ

1. ԱՐՍԵՆ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ.— Էջմիածին:

2. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ
Տ. Տ. Գևորգ Զ-ի գահակալության երկրորդ
տարեդարձը:

12. Հայրենի Հողի վրա.— Ս. ԱՌԱՔԵՆԻ-
ՅԱՆ.— Թարմ հուշեր:

13. Օտարները հայերի և Հայաստանի
մասին.— ՍՍԻՄ-ի հետ կոպտության կա-
պի Դանիական ընկերության նախագահ Պ.
Օլսենը Երևանում, Պրոֆեսոր Ֆրեդերիկ
Մակլեր:

14. Սովետական Հայաստանում.— 13
Հաղար սենյակ, Նոր ավան, Նախապա-
րաստվում են հայրենադարձների նոր խում-
բերի ընդունման, Անհատական քնակաբա-
նային շինարարություն կենսականում, Նոր
քնակարաններ հայրենադարձ հայերի հա-
մար Ստեփանավանում, Տներ արտասահ-
մանյան հայերի համար, Բնակելի ավան
հայրենադարձ հայերի համար, Հայրենա-
դարձ հայերը արտագրության մեջ, Հայրե-
նադարձ բազմազավակ մոր խոսքը, Երևան
քաղաքի հայրենադարձ հայերի ժողովը,
Հայրենադարձ հայ նկարիչների գործերի
ցուցահանդեսը, Հորեյանական երեկո նը-
վիրված կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանի
ծննդյան 60-ամյակին, Սարգիս Ասլամազ-
յանի երեկոն, Գիտական սեսիա կենսագրագի
Պետական էրմիտաժում, Միութենական
ռեսպուբլիկաների Գիտությունների Ակա-
դեմիաների գիտական գործունեությունը
համաձայնեցնող հորհրդի պլենումում, Հա-
մամլիի շաքարի գործարանը, Սոցիալիստա-
կան Աշխատանքի Հերոսի կոչման շնոր-
հում, Գյուղատնտեսության առաջավորների
սյարգևատրումը:

15. Գաղութանայ կյանք.— Հայ կյանքը
Եգիպտոսի մեջ, Մարսելահայ կյանք, Լուրեր
Գահիրեին, Նամակ Կալկաթայից, Շքեղ ըն-
դունելություն, հորհրդային Հայաստանի
26-րդ տարեդարձի պերճաշուք տոնակատա-
րությունը Փարիզի մեջ, Լեոն Սյուրմեյանի
նամակը սովետահայ գրողների երկրորդ
համագումարին, Էտկար Շահինի մահը:

3. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ
Զ-ի կոնդակը գոթոռ Հյուսիս Զանոնին:

4. Հեռագրերի փոխանակությունը Վեհա-

փառ Հայրապետի և Համայն Ռուսիո Պատ-
րիարք Ալեքսիի միջև:

5. Մայր Աթոռ.— Հանդիսավոր Պատա-
րագ Վեհափառ Հայրապետի Օծման ու Գա-
հակալության երկրորդ տարեդարձի առթիվ:
Հանդիսավոր Պատարագ Կաթողիկոս Ս. Էջ-
միածնի տոնի օրը: Հանդիսավոր Պատարագ
Սշականի եկեղեցում Թարգմանչաց տոնի
օրը: Հանդիսավոր Պատարագներ Ս. Հռիփ-
սիմեի, Ս. Գայիանեի և Ս. Շողակաթի վան-
քերում: Պատարագ և հոգեհանգիստ և.
Պոլսի նախկին Պատրիարք Տ. Զավեն Արք-
եպիսկոպոս Տեր-Նղիայանի հիշատակին:
Հոգևոր հեմարանի ուսանողության տարե-
վերջի քննությունները:

6. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ.— Զավեն Արքեպիս-
կոպոս Տեր-Նղիայան:

7. Ռուսաց եկեղեցի.— Մոսկվայի և Հա-
մայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի մեկնումը
Ռուսիայի Ճաշկերպի Միխայ Թագավորի
մոտ ի պատիվ Պատրիարք Ալեքսիի: Մոսկ-
վայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի
վերադարձը Մոսկվա:

8. Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ.— Տեղեկագիր:

9. ԱՐՇԱԿ ԱԼՊԻՑԱՅՑԱՆ.— Հայաղավա-
նության տարածման շրջանակը (շարունա-
կություն):

10. ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ.— Կաթողիկոսա-
կան կոնդակներ և օրհներվան թղթեր:

11. ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ.— Մագաղաթ:

12. ՍՏ. ՄԱԼԻԱՅԱՆՑ.— Գրիգոր Նառե-
կացի:

13. Պրոֆ. Ա. ԱՐԱՆՎԱՄՅԱՆ.— Մադրասի
հայ գաղութի դերը ճայ ժողովրդի ազատա-
գրական պայքարում:

14. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Սայաթ Նո-
վայի շինելու չորսընթաց խաղի մի նոր վա-
րիանտը:

15. ՆՈՐԱՅՐ ՎՐԴ. ՇՈՎԱԿԱՆ.— Միջնա-
դարյան տաղասացներ.— Քոթանե խաթեցի:

16. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Կոմիտասի
երկու նամակը:

17. «Հայ եկեղեցական ժողովը եմիած-
նում» կինոնկարի մեծ հաջողությունը հայ-
կական գաղութներում:

18. Օտարները հայերի և Հայաստանի
մասին.— Գոթտոր ՀՅՈՒԼԵՏ ԶՈՆՍՈՆ.— Երի-
տասարդ նորհրդային Հայաստանը: Թղթակ-
ցություն լոնտոնեն: Զինական գրող Մառ-
Դուր հայ ժողովրդի մասին:

19. Սովետական Հայաստանում.— Բնա-

կարանների կառուցում հայրենադարձ հայե-
րի համար: Նոր տներ: Հայրենադարձները
արտադրության առաջավորներ: Նպաստ
հայրենադարձ բազմազավակ մայրերին:
Հայրենադարձ կոմպոզիտորի ստեղծագոր-
ծությունները: Ժողովրդական գործիքների
նոր անսամբլ: Հայրենադարձ հայերի եր-
գեցիկ կապելլա: Շնորհալի մասնագետը:
Մեր պանդուխտ եղբայրների նամակներից:
ՍՍՌՄ Մինիստրների Սովետում: Կերպար-
վեստի թանգարանում: Կերպարվեստագետ-
ների քնակարան-արվեստանոց: Նոր երգե-
ցիկ կապելլա: Ա. Սպենդիարովի անվան
կենինի շքանշանակիր: Օպերայի և բալետի
պետական թատրոնում: Շիրվանզադեի «Իշ-
խանուհի» դրաման: 2. Աճառյանի նոր աշ-
խատությունները: Կոմիտասի ձեռագրերը:
Նոր գիտա-հետազոտական հիմնարկություն-
ներ: Ազրոթիմիական լաբորատորիա: Պատ-
մական հուշարձանների պահպանությունը:
Կարմիր Բլուզի հնագիտական պեղումները:
Դասագրքերի հրատարակությունը: Գործ-
արկվեց Ալավերդու Սուպերֆոսֆատի գոր-
ծարանը: Հեծանիվների գործարան: Պահա-
ծողների գործարան Սեանում: Էլեկտրալու-
սավորության արմատության գործարան:
Պղնձի և մոլիբդենի հարստացման նոր
գործարան: Լավարի բարիտը:

20. Գաղութահայ կյանք.— Նյու—Յորքի
Հայկական Համաշխարհային կոնգրեսում:
Մասնաշաղկան միտինգ Նյու—Յորքում: Եր-
վիրված Հայկական Համաշխարհային կոն-
գրեսի օւսիային: Բրազիլիայում ապրող
հայերը պահանջում են Թուրքիայի զավթած
հողերը միակցել Սովետական Հայաստա-
նին: Հուշագիր արտաքին գործոց նախա-
րարներու ժողովին: Թրքահայաստանի դատի
պաշտպանության կոմիտեի նամակը հաս-
ցեագրված Մոսկվա համախմբված Արտա-
քին Գործոց նախարարներին: Բ. ՏՅՈՒԼԿԵՐ-
ՅԱՆ.— Հայ և եգիպտական եղբայրակցու-
թյան փառահեղ ցույց մը Գահիրեի մեջ:
Հայերի ներգաղթը Եթովպիայից: ՀՈՎՀ.
ՊԱՂԱՍՅԱՆ.— Նկարիչ Սարգիս Խաչատուր-
յան: Հայկական լուրեր: Հայկական կյանքը
Անգր—Հորդանանի մեջ: Հայկական լուրեր
Ուրուկվայեն: Նամակ Տիարպաքրեն: Պե-
ղրատի հայերը: Հուլանտայի հայ գաղութը:
Խորհրդահայ արվեստագիտուհիներ Պուրբըշի
մեջ:

21. Նամակ խմբագրության:

ՀՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

1. Հայրենադարձության և հառակից խըն-
դիրների մասին:

2. Հայրենի երկնակամարի տակ.— Հայ-
րենադարձ հայերի 1947 թվի քարավանների

ժամանումը հայրենիք: ԳեղՈՐԳ ՍՈՒՐՄԵՆ-
ՅԱՆ.— Գեպի վերջին հանգրվանը: ԿԱՐԱ-
ՊԵՏ ԲԱՆԱՐԱՅԱՆ.— Մենք ՍՍՌՄ-ի քա-
ղաքացիներ ենք: Ջերմ հանդիպում: Հայրե-
նադարձ հայերը շրջապատված են հոգատա-
րությամբ: Բնակարանային շինարարություն
հայրենադարձ հայերի համար: Հայրենի հո-
ղի վրա: Գտնված երջանկությունը: Էնտու-
զիստների ընտանիքը: Ժ. ՏՈՂՄԱՋՅԱՆ.—
Աշխատում ենք կրկնապատիկ եռանդով:
Հայրենադարձ կառուցողների երիտասար-
դական ըրիզադուն: Հայրենադարձ հայերի
երկույթ-գրոսանքը:

3. Մայր Արոս.— Վեհափառ Հայրապետ
բուժման մեկնեց: Հանգիսավոր Պատարագ
Վարդավառի տոնի առթիվ: Հանգիսավոր
Պատարագ Վերափոխման տոնի առթիվ: Վե-
րափոխման տոնը Բազմի եկեղեցում: Գա-
րեպին վրդ. նշանակվեց Շիրակի թեմի ժա-
մանակավոր փոխթեմակալ: Հոգևոր ճեմա-
րանի ուսանողության էքսկուրսիան ներա-
նում: Հայկ Գալուսեյանի նամակից:

4. Ստեփան Մալխասյանց:

5. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ.— Էջմիածնի Էդգոր
նեմաբանը ուսման երկրորդ տարում:

6. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռնի
մեջ.— ՏԻԳՐԱՆ ՄԵՍՐՈՊԵՅԱՆ.— Գերաշնորհ
Արտավազդ Արքեպիսկոպոսի Կրքնույլ ա-
յցելությունը: Կիլիկիո թեմը հինգ նոր եպիս-
կոպոսներ ունեցավ:

7. Համաշխարհային Հայկական կոնգրե-
սում.— Համառոտ օրագրություն: Համաշ-
խարհային Հայկական կոնգրեսի: Համաշ-
խարհային Հայկական կոնգրեսի արձագան-
քը ամերիկյան մամուլի և ռադիոյի մեջ:
Ռեխնագիտություն մը դեպի Հայտ Փարթ:
Ազգային երգչուհի կառաջարկե Ալբերտին
հայաց հողային պահանջը դնել Միացյալ
Ազգաց օրակարգի վրա: ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈ-
ՊՈՍ ԳԱՍՊԱՐԱՅԱՆ.— Բռնագրաված հողե-
րը դարձնել մեզի: ԱՐՄԵՆ ՄԻՐԻՃԱՆՅԱՆ.—
Պիտի շարտոններ երբեք, որ մեր իրավունք-
ները մոռացվին: ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՆ-
ԹՈՅԱՆ.— Արևը պիտի ծագի, արևը արդեն
ծագած է երրորդային Հայաստանի գոյու-

թյամբ: ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆ. ԳԱՆՅԱՆ.— Հրա-
ժեշտի խոսք:

8. Վ. ԲՆՈՅԱՆ.— Հայկական ՍՍՐ Պետա-
կան Պատմական րանգաբանը:

9. ՃԵՄԱՐԱՆՅԻ.— Սիմեոն կարողիկոս
Նրեանցի:

10. Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Խ. Արզյան:
և Ս. Նազարյանի կենսագրության շուրջը
ստեղծված մի առեղծվածի լուծումը:

11. ՆՐԱՆԴ ԵՄԱՆՅԱՆ.— Ռաճաստեղծ
Երանգիզի և երաճված հետ կառված առ-
տիպ նամակներից:

12. Ոտարները հայերի և Հայաստանի
մասին.— ՍՍՐՄ-ի հետ կուլտուրական կա-
պի Ալբանական ընկերության ղեկագահան
Նրեանում:

13. Ստեփանյան Հայաստանում.— Հա-
յաստանի գոյնավոր մետալուրգիայի հետա-
գա զարգացման մասին: Պղնձա-մուրդե-
նային նոր հանքավայր: Հայկական ՍՍՐ
Գիտությունների ակադեմիայում: Ներկերի և
լաքի գործարանը գործարկման նախօրյա-
կին: Էլեկտրակայանների շինարարություն:
Միկրոգէներերը շահագործման հանձնվեցին:
Հայաստանի քաղաքների պլանավորումը:
Ջրմուղի: մագիստրալ նրեանում: Նոր ջրմուղ
Էջմիածնում: Պետական համալսարանի նոր
կորպուսի կառուցումը: Բժշկական գործը
Էջմիածնի շրջանում: Հնադարյան իրեր կար-
միր Րլուրում: Հայաստանի կոմպոզիտորնե-
րը Հոկտեմբերի 30-ամյակին: Ենթապրի
կատակերգությունների հայերեն հրատարա-
կությունը ուղարկված է Բիրմինգհամի գրա-
դարանին:

14. Գաղութաճայ կյանք.— ԳԱՐԵԳՐԵ ԿԱ-
ԹՈՂԻՆՍ.— ռուսապետություն ի Հա-
յաստան գրքի առաջարանը: Գեղեցիկ ժեսթ
մը: Ա. ՅԵԹՎԱՃՅԱՆ.— Իմ նվիրաբերու-
թյունները հայ ազգին: Արտասահմանից Սո-
վետական Հայաստանին նվեր ուղարկված
ՌԱԹԻ Տովլաթի բժշկարանի ձեռագրի մա-
սին: Հայերը Վիեննայի և Լինցի մեջ: Զ. ՄԱ-
ՆՈՒԿՅԱՆ.— Զվիցերիո հայ դադուր երեկ և
ուշաօր: Վիեննական Միաթարյան միաբա-
նության կյանքն:

15. Եմիտասարդ Հայաստան—ը «Էջ-
միածին» ամսագրի խմբագրականի մասին:

5. ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. Մայրագույն Պատրիարք և Ամենայն
Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի ղեկավարի ճե-
ռագիրը Մոսկվայի 800-ամյակի տոնակա-
տարությունը առթիվ:

2. Մոսկվայի 800-ամյակը:

3. Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— 1812 թվի Հայ-

րենական պատերազմին հայերի մասնակ-
ցությանը վերաբերող փաստաթղթեր:

4. Նվերում կաթողիկոսի կոնգրեսը:

5. Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց Ս. Ս. Գևորգ Զ-ի անվանա-
կառույցը տալը:

6. Մայր Աթոռ.— Հանդիսավոր նիստ Հոգևոր ճեմարանում երրորդ ուսումնական տարվա սկսվելու առթիվ։ Վերաբույժների երրորդ Անդրկովկասյան համագումարի մի խումբ մասնակիցների այցելությունը Մայր Աթոռ Գրական-գեղարվեստական երեկույթ Հոգևոր ճեմարանում Թարգմանչաց տոնի առթիվ։ Հայկական ՍՍՌ մուսուլմանների կրոնական պետի այցելությունը Մայր Աթոռ։

7. Եղիշե վարդապետ Հարությունյան։

8. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ.— Պոյսո նախկին Պատրիարք Տ. Զավեն Արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի թաղումը։ Մահ և հուղարկավորություն Երուսաղեմի Պատրիարքական Փոխանորդ Գեորգ վարդապետ Ճանսըղյանի։ Փարիզի հայ եկեղեցվո վարչության ընտրությունները։ Գաճառ Ուրֆայանի նամակը Փարիզի Եկեղեցական թերթի խմբագրին։ Արտավազդ Արքեպիսկոպոս կրնդունի Գերապայժառ Ուլուհեյան Արքեպիսկոպոսի այցելությունը։ Արտավազդ Սրբազան Հոլանտայի մեջ։

9. Ռուսաց եկեղեցի.— Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Սրբազանը Պոլսերջի հայոց եկեղեցին կայցելել։

10. Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Ս. Մեսրոպի շիրիմին առջև։

11. ԵՐԱՆԿ ԵԱՀԱԶԻԶ.— Խմ հուշերից։

12. Գարեգին Լեւոյան։

13. Համաշխարհային Հայկական կոնգրեսը.— Կոնգրեսի դիմումը Միացյալ Ազգերուն։ Հայկական Քոնկրեսի դիմումագիրը կենդակացվի Միացյալ Ազգերուն։ Համաշխարհային Հայկական Քոնկրեսի որոշումը կհանձնվի Միացյալ Ազգերու և Ամերիկայի պաշտոնական ներկայացուցիչներուն։ Համաշխարհային Հայկական Քոնկրեսը պանծալի մեկ էջը Սփյուռքի հայության պատմության։

14. Շարունակվում է հայրենադարձ հայերի 1947 թվի քաղաքականների ժամանումը հայրենիք.— Հայերի և վրացիների վերա-

դարձը Ֆրանսիայից։ Մի խումբ հայրենադարձների խոսքը։

15. Ոտարները հայերի և Հայաստանի մասին.— Նորվեգա-սովետական բարեկամության ընկերության դեկագոգիան Երևանում։

16. Եսվետական Հայաստանում.— Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Հրամանագիրը։ Մոսկվայի 800-ամյակի տոնակատարությունը։ Հայաստանում, Բնակարաններ հայրենադարձ հայերի համար։ Հայրենադարձ հայերը կոլխոզային արտադրության մեջ աշխատում են օրինակելի։ Հաղթանակի հուշարձանը։ Արժեքավոր նվեր։ Արամ Խաչատրյանի Գայանեն քաղաքի բնադրությունը։ Կիևի թատրոնում։ Եսվետական գրողը հրատարակություն։ Լեոյի Հայոց պատմությունը։ Հայ մեծագույն Լուսավորչի հիշատակին։ Երդի ու պարի անսամբլ։ Երիտասարդության միջազգային ֆեստիվալ։ Պրագայում։ Լատվիական գրողները Երևանում։ Ազգրբեշանական մեծ բանաստեղծ Նիզամի Դյանշևիի ծննդյան 800-ամյակը։ Անտառատնկումը Կիրովականում։ Կիրովականի բուսաբանական այգին։ Նոր հողերի յուրացում։ Զրամբարների կառուցում կոլխոզներում։ Հզոր սառցարան։ Նոր գործարաններ։ Խոշոր տպարան։ Ավտոմատ հեռախոսակայանի շինարարություն Երևանում։ Նոր սանատորիաներ։

17. Գաղութային կյանք.— Կիլիկիոն վեհափառ Կաթողիկոս Գարեգին Ա. կորհնե հայրենիք մեկնողները։ Հ. ՄԱՐՄԱՐՅԱՆ.— Տպավորություններ Զվիցբերգայից։ Ռումանիո հայ գաղութը։ Ռումանիո առողջապահական նախարարուհին հայուհի մըն է։ Պելճիքայի հայ գաղութին կյանքը։ Հ. ՌՇՏՈՒՆԻ.— Պոստաբեշտի հայ գաղութը։ Պելկրատի հայ գաղութը։ Ցուպուսլաններուն սիրելի հայ հերոսը։ ԲՅՈՒԶԱՆԴ ՎԱՂԻՆԱԿ.— Եթրհար-ի համերգը Մարսելյի օփերային մեջ։ Հայերու թիվը Անատոլիոյ մեջ։ Եկարատաշաքաթաթերթ։

18. Նամակ խմբագրության.— ԱՐՇԱԿ ԱԼ-ՊՈՅԱԶՅԱՆ.— Ճշտում մը։

6. ՆՈՑԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

1. Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ա-ի ողբույնի հեռագիրը ժողովուրդների մեծ առաջնորդ Գեներալիսսիմուս Ստալինին Հոկտեմբերյան Ինտուցիայի 30-ամյակի առթիվ։

2. Համաժողովրդական ցնծության օրեր։

3. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԿԱՅ.— Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-

հակներ։ Հոգևոր Գասին, Սրբազան եղբարցի Քրիստոս։

4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեպուբլիկայի 30-ամյակի տոնակատարությունը Հայաստանում։

5. Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնակատարությունը.— Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը նվիր-

ված Սովետական Հայաստանի 27-րդ տարեգարձին, Սովետական Հայաստանի 27-րդ տարեգարձի տոնակատարությունը արտասահմանում:

6. Մայր Արոտ. — Պատաշաղ և մազիաներ Հոկտեմբերյան Ռեզոլուցիայի 30-ամյակի առթիվ Հոկտեմբերյան Ռեզոլուցիայի 30-ամյակի առթիվ ողջույնի հեռագրի հղում Գնեքայի սահման Ստալինին, Հոկտեմբերյան Ռեզոլուցիայի 30-ամյակի առթիվ ողջույնի հեռագրի հղում Սովետական Հայաստանի կառավարության անունով, Հոկտեմբերյան Ռեզոլուցիայի 30-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ Հոգևոր ճեմարանում, Պատաշաղ և մազիաներ Սովետական Հայաստանի 27-րդ տարեգարձի առթիվ, 27-րդ տարեգարձի առթիվ ողջույնի հեռագրի հղում Սովետական Հայաստանի կառավարության անունով, Սովետական Հայաստանի 27-րդ տարեգարձին նվիրված հանդիսավոր նիստ Հոգևոր ճեմարանում, Հանդիսավոր տեղական Սովետների դեպուտատության թեկնածուների հետ, Մայրաքույն վարդապետության աստիճանի շնորհում Մայր Աթոռի լուսարարապետ Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանին, Մայր Աթոռի ներկայացուցիչների ներկայությունը մուսուլմանների «Մահադումա»-ի սգո արարողությունը:

7. Հայրապետական Արժուր Սսից Լեմիսին փոխադրելու 500-ամյա ճոքելյանի նշումը Հոգևոր ճեմարանում:

8. Հ. ԱՐԱՄՅԱՆ. — Զեղլիպում Սմեթայն Հայոց Հայրապետի հետ:

9. Հայաստանյայց եկեղեցիք Սփյուռքի մեջ. — Պ. Բ. Պաշայանը իր էմիգրանտ կատարած այցելության մասին: Նվիրակի կաթողիկոսական նվիրակ Գեր. Արտավազ Արքեպիսկոպոս Սյուրմեյանը Իտալիայում, Հոգևոր հովիվ Պելեգրայի Հայոց, Հայկական մարդահամար Նյու-Յորքի մեջ, Սան Ֆրանսիսկոյի ազգային կյանքին, Ամենայն Հայոց Հայրապետության Սյանն էմիգրանտ փոխադրության 500-ամյա հոբելյանը, Գոհարական մազիաներ 500-ամյակի առթիվ Ֆոթյանում:

10. Ներգաղթը և մեր քննական առաջնորդները. — ԱՐՏԱՎԱԶԳ. ԱՐԹԵՊԻՍԿԱՊՈՍ. — Երթար բարյակ, սիրտս ձեր սրտերուն հետ: ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Կու հայրենադարձության:

11. Հայրենադարձության ուղիով. — Հայրենի հայրենադարձությունը ԱՄՆ-ից, Հայրենադարձների նոր խմբերի ժամանում, Հայրենադարձությունը Հունաստանից, Ֆրանսիական իշխանությունների նոր կամայականությունը:

12. Վ. — Հայկական ՍՍՌ-ի տեղական Սովետների բնութագրություններ:

13. ՆՐԱՆԳ. ՇԱՀԱԶԻԳ. — Գիտնական Մկրտիչ էմինի նամակները՝ հասցեագրված Սարգիս Խոբասանյանին: Պատանի Մ. էմինի ճանապարհորդությունը Կալիֆորնիա:

14. Գ. ՀԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ. — Բանաստեղծ Սմրաա Շանազիզի անտիպ նամակները:

15. Օտարներ հայերի և Հայաստանի մուսիկ. — ՌԸՆԵ ՊԱՐՈՒ. — Զ. Մուսաֆյան, ձկնորս նկարիչ, Պորթլանդի մեջ դառած է իր Հայաստանի երանգները: Հ. ՌԵՏՈՒՆԻ. — Հայկական հարցը հունգար հասարակության առջև:

16. Սովետական Հայաստանում. — Հարատվություն սովետական հոր քաղաքացիների նկատմամբ, Հայրենադարձ ստախանովականները, Հայրենադարձ հայերի բրդադան, ՀՍՍՌ Մինիստրների Սովետում, Խ. Աբովյանի պորտրեն, Հոբելյանական փոստանիշներ Խ. Աբովյանի 100-ամյակի առթիվ: Հայկական ՄՍՌ Գիտությունների Ակադեմիայում, Հոկտեմբերյան Ռեզոլուցիայի 30-ամյակին նվիրված ցուցահանդես, Հայաստանի կերպարվեստագետների Միությունում, ՄՍՌ Գեղարվեստից Ակադեմիայի ընդհանուր ժողովի առաջին սեսիան, Շահադործման են հանձնվում կոլետգային հոր տկումրենի, Սրբեցիկ կապելայի ելույթը, Լեհիկի հրապարակի ընդարձակումը, Գործույձեռնարկությունների շարքն անցավ Հախճապակու դործարանը, Աղբյուր-հուշարձան:

17. Գաղութաճայ կյանք. — Հանդիպում մր Գ. Ալեմշահի հետ, Համբարձում Պերպեյանի համերգները Ցաֆայի և Սրուսաղեմի մեջ, Օր. Պապիկյան Ամբերիայի մեջ, Զամպաճյան Թանգարանի բացումը Պուրբեշի մեջ, Հայ դպրոցները պետականացած, Նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի մահը:

18. «Էմիգրանտ» ամսագրում 1947 թվականից մինչև 1947 թվականից մինչև:

